Այդ է պատճառը, որ աշխարհի լեզուների նկարագրության խնդիրն ընդհանուր լեզվաբնության ամենաարդիական ու հրատապ խնդիրներից մեկն է, որի ուսումնասիրությունն իրականացվում է միասնական սկզբունքով։ Եվ վերջինիս բարդությունն առաջին հերթին պայմանավորված է նրանով, որ այն իրենից ներկայացնում է ոչ թե մեկ, այլ մի շարք խնդիրների մի ամբողջական համակարգ՝ պայմանավորված աշխարհի ամենատարբեր լեզուների տարբեր կառուցվածքային-տիպարանական յուրահատկություններով։

Հայտնի է, որ յուրաքանչյուր լեզվի նկարագրությունն անպայմանորեն պահանջում է տվյալ լեզվին բնորոշ յուրահատկությունների վերհանում։ Սակայն, այսուհանդերձ, լեզուների օբյեկտիվ ու միասնական սկզբունքներով նկարագրության ուղղությամբ, տեսական հիմունքների մշակման ու իրականացման, ուսումնասիրության նոր մերողների որոնման հարցում զգալի նվաճումներ կան։ Այս կարևորագույն նախաձեռնության մեջ իր ուրույն տեղն ունի տիպարանական լեզվաբնությունը, որն ընդհանուր լեզվաբնության կարևոր բաղկացուցիչ բաժիններից մեկն է։

Տիպարանական լեզվաբնությունը զբաղվում է միասնական սկզբունքների նկարագրությամբ, հիմնական, էական հատկանիշների

բացահայտմամբ ու խմբավորմամբ, ընդհանուր օրինաչափությունների սահմանմամբ:

Ինչպես հայտնի է, տիպարանական լեզվաբանության սկզբունքներով հաճախ է կատարվում երկու կամ ավելի լեզուների՝ որևէ քերականական կարգի համեմատական քննություն: Քերականական կարգերի տիպարանական բնութագրությունն ունի գործնական կիրառման մեջ նշանակություն հատկապես օտար լեզուների ուսուցման բնագավառում: Սույն հոդվածի նայատակն է ուսումնասիրել հայերենում և իսպաներենում սահմանական եղանակի ներկա ժամանակի իմաստային նրբերանգները, որոնց վերլուծությունը կնպաստի ոչ միայն իսպաներենի ուսուցմանը, այլև հայերենին և իսպաներենին բնորոշ առանձնակատկություններն ավելի լավ ընկալելուն և նրանց կառուցվածքային յուրահատկությունների մեջ ավելի խորամուխ լինելուն:

Հարկ է նշել, որ թե՛ հայերենում, թե՛ իսպաներենում խոսքի մասերի մեջ բայն աչքի է ընկնում իր քերականական կարգերի բազմազանությամբ: Բային հատուկ են եղանակի, ժամանակի, դեմքի ու բվի քերականական կարգերը, որոնք ել իրենց հերթին ունեն իրենց բնորոշ առանձնահատկությունները:

Սահմանական եղանակի ներկա ժամանակը թե՛ հայերենի, և թե՛ իսպաներենի քերականություններում բնորոշվում է նրանով, որ ցույց է տալիս խոսելու պահին ստուգորեն կատարվող գործողություն, որն էլ կոչվում է բուն ներկա և լայնորեն է գործածվում լեզվում: Սա այդ ժամանակի գլխավոր իմաստն է: Սակայն այստեղ դիտարկվող երկու լեզուներում էլ ներկա ժամանակը իմաստային տարբեր գործածություններ ունի: Ավելի առարկայական լինելու համար ներկայացնենք այն ավելի մանրամասնորեն:

Հարկ է նշել, որ հայերենում սահմանական եղանակի ներկա ժամանակի կիրառության նրբերանգները ուսումնասիրել են Հ. Խ. Բարսեղյանը /Բարսեղյան, 1953: 181-183/, Պ.Պողոսյանը /Պողոսյան, 1959: 37-57/, Մ. Ե. Ասատրյանը /Ասատրյան 2002, 289-290/:

Հայտնի փաստ է, որ սահմանական եղանակի ներկայի բայաձևերով են արտահայտվում բոլոր ժամանակների համար ընդունելի ճշմարտությունները, բնորոշումները, սահմանումները: Դա այսպես կոչված մշտական ներկան է, որով արտահայտված եղելությունները մշտական բնույթ են կրում: Մշտական ներկայով արտահայտվում են իրական, բացարձակ ճշմարտություններ, մնայուն ընդհանուր հատկություններ:

Օրինակ՝ *Աշնանն օրերը կարծ եմ լինում:*

Իսկ կիրակի օրերը ժակը աղոթատանն է: (Դերենիկ Դեմիրճյան, էջ 50)

Տե՛ր, թեզ մի՛շտ եմ հավատարիմ: (Դերենիկ Դեմիրճյան, էջ 51)

- *Այո՛, հաճախ մարդ մտածում է, թե մեր կյանքը մի անվերջ խարխափումն է խավարի մեջ, ուր որոնում ենք մեր բախտը, բայց չենք գտնում: Եվ հաճախ ի աշ է լինում մեր այդ բախտը. մի հասարակ բան: Այո՛, հասարակ, ինչպես դաշտային համեստ ծաղիկ, բայց, որը բանկ է ու հազվագյուտ, որովհետև նա մեր որոնածն է: (Դերենիկ Դեմիրճյան, էջ 71)*

«Ընդհանուր ներկա», որով արտահայտվում է ոչ թե խոսելու պահին, այլ ներկա ժամանակակետի համեմատությամբ ընդհանրապես կատարվող գործողություն:

Առավոտից մինչ կես զիշեր նա շրջում է թատրոնում, կուլիսների միջին նկարում է, սարդում: Հետևում է պիեսների պատրաստությամբ, քննում է մակետները, լսում է ամեն նկատողություն: (Դերենիկ Դեմիրճյան, էջ 403)

«Անինելք մարդիկ են շարունակ տիրում, իսկ խելոքները հնար են փնտրում»: (*Ղազարոս Աղայան*, երկ. 453)

«Առաջական ներկա», որի միջոցով արտահայտվում են ընդհանուր կարծիքներ, առածներ, ճշմարիտ համարվող խոսքներ, աֆորիզմներ, իմաստություններ:

Օրինակ՝ Սայի ոտքը կարճ է: Մերը սնվում ու ապրում է նաև երազներով: Ճտերը աշնանն են հաշվում:

«Պատմական ներկա», որով արտահայտվում են այնպիսի եղելություններ, որոնք ավարտվել են անցյալում, և տվյալ գործողությունն ավելի տպավորիչ դարձնելու համար այն արտահայտվում է ներկայով:

Օրինակ՝ Այս եղելությունից երկու տարի հետո խազիրները հարձակվում են Աղվանքի վրա՝ առ ու ավարի: Այդ ժամանակ Աղվանքի իշխանը զինվում և ներկայանում է ամենահաղթ խաչի առջև. ծնկի զալով երգում է Իսրայելի արքայի երգը (Մովսես Կաղանկատվացի, էջ 145):

Երկրորդ ընդհարումը միմյանց տեղի է ունենում մի լեռնոտ վայրում: (*Մովսես Կաղանկատվացի, էջ 138*):

«Տառնացած արագ անցնում է իրեն ենքակա իր հայրենիքի սահմաններից Կուր գետի այն կողմը զոնվող Կապիհան զավառ և այնտեղ նրանց դեմ ճակատամարտում է (Մովսես Կաղանկատվացի, էջ 138):

Այդ ժամանակ խաղաղ ու անքակտելի դաշինք են կապում միմյանց հետ, ու Զվանշիրը օգնական զորք է վերցնում վրացիներից, աճապարում ամենից առաջ արշավել Ուտիք. այստեղ պարսից զորքից, ում որ զոնում է, տեղն ու տեղը սրի ճարակ է դարձնում (Մովսես Կաղանկատվացի, էջ 139):

Պարսից արքա *Մեծ Խոսրովի մահից* չորս տարի հետո թագավոր է դառնում նրա որդի Հազկերտը (Մովսես Կաղանկատվացի, էջ 134):

Այդ ժամանակ հազարացիների ցեղը, միացնելով մոտ տաս ցեղեր, ուժեղանում է. համբուզն ու ահավոր բազմությամբ հեռավոր երկրից մրրիկի նման ուղղվում, զալիս են անապատով, անցնում *Ասորեստանի* կողմերով ու արագ թափով հարձակվում են պարսից տերության վրա (Մովսես Կաղանկատվացի, էջ 134):

Եվ, ահա, մի դժբախտ օր նամակ եմ ստանում իմ դստեր դայակից, թե քաղուին մերձիմահ հիվանդ է Տավոշ բերդում և կամենում է ինձ տեսնել (Մուրացան, 110 էջ):

«Կրկնության ներկա», որով արտահայտվում են այնպիսի եղելություններ, որոնք ոչ թե մի անգամ խոսողի ներկայում կամ մի անցյալ ժամանակակետում կատարվում են հարաձիգ, այլ կատարվում կամ կատարվել

են, խոսողի ներկայում կամ մի անցյալ ժամանակետում իբրև սովորություն, օրեցօր, տարեցտարի կրկնվում են:

Օրինակ՝ Նա առավոտները վեր է կենում վաղ, գնում է զրունելու, ապա գալիս, նախաճաշում և անմիջապես նստում է իր գործին:

Զգոյշ է միրիավը, քոչոց ամելիս ձգում է վիզը, աջ ու ձախ կռամում է և ապա երկարում վիզը, չորս կողմը նայում (Ալսել Բակունց, էջ 78):

Նկատելի է, որ վառ, կենդանի պատկեր ստեղծելու համար սահմանական եղանակի ներկա ժամանակը կիրառվում է ոչ միայն ներկայի այլազան իմաստներով, այլև երբեմն նաև ապառնի ժամանակի իմաստով և ցույց է տալիս այնպիսի գործողություն, որը պետք է տեղի ունենա:

Օրինակ՝ Իսկ շոտո վ պետք է նվիրի, - սրապիւեց այրին (Ալսել Բակունց, էջ 627):

- Հազարաստեղծ Աստված, քո խեղճն ենք... Մեծ գետի ճանապարհը մեծ է լինում (Ալսել Բակունց, էջ 516):

Հայտնի է, որ սահմանական եղանակի ներկա ժամանակը կարող է արտահայտել նաև հրամայական եղանակի իմաստ:

Օրինակ՝ Հանում ես էս սիարին քսան մանեթը, թե չէ, տեսնում ե՞ս էս մարրախը, կորմ էլ հետք կկոտրեմ վրեդ, - զոռաց նաև աշքերը կրակ կորած (Նար-Դու, էջ 235):

- Աղջի, ի՞նչ եք փետացել, գնում ես ու քաց ես անում դուռը, սպանեց, է՛, սպանեց էն խեղճ աղջկան (Նար-Դու, էջ 232):

Հայերենում սահմանական եղանակի ներկա ժամանակը կարող է փոխարինել այլ եղանակային ձևերի, հատկապես ըղձական եղանակին: Այս իմաստներով կիրառվելիս, ինչպես կտեսնենք, սահմանական ներկա ժամանակով արտահայտված բայաձևը ավելի շատ նրբիմաստ է արտահայտում:

Սահմանական եղանակի ներկա ժամանակը փոխարինում է ըղձականին, սակայն եթե գործողությունը պայմանի հետ է կապվում, թեկուզ և ձևականորեն, սահմանական եղանակի արտահայտած գործողությունը ոչ պայմանական գործողություն է:

Օրինակ՝ Մտնում ես Սալրա զյուղ: Փողոցների մեջ խաղում է երեխաների բազմությունը: Մտածում ես, թե ամրող աշխարհի երեխաներից մի-մի հատ այստեղ է բերված (Բաֆֆի, էջ 308):

Եթե ընդգծված բայաձևերը փոխարինենք ըղձական եղանակով, ապա կփոխվի թե՝ խոսքի կառուցվածքը (եթե մտնեն... կտեսնեն և այլն), թե՝ նրա արտահայտած իմաստը: Սահմանական ներկայով արտահայտվում է անհերքելի մի գործողություն:

Ուշագրավ է այն փաստը, որ բարդ նախադասության մեջ, երբ գլխավոր նախադասության բայը հրամայական եղանակով է դրված, երկրորդական նախադասության՝ սահմանական ներկայով դրված բայը ոչ թե ստույգ կատարվող գործողություն է արտահայտում, այլ՝ թեական, պայմանական:

Օրինակ՝ Դեղ ունիս, քո զիսին արա, եղ ունիս, ձեր բղդումը պահիր (Խաշատուր Արովյան, էջ 36):

Իսպաներենում սահմանական եղանակի ներկա ժամանակի նրբերանգային առանձնահատկությունները ընդհանուր առմամբ արտահայտում են միևնույն երանգները, որոնք բնորոշ են հայերենին: Դիտարկենք մի շարք օրինակներ:

Ինչպես հայերենում, այնպես էլ իսպաներենում, առկա է ներկա սահմանական եղանակի կրկնության ներկայի նրբերանգային կիրառությունը (presente habitual), որը արտահայտում է սովորաբար, մշտապես կատարվող մի գործողություն:

Oրինակ՝ Cada mañana salgo a la terraza y miro a los árboles del parque (Jorge Edwards, p. 5). (*Ամեն առավոտ դուրս եմ զայխ պատշաճ և ճայում եմ գրուայզու ծառերին:*)

Celestino siempre me deja los nombres en una libreta de apuntes, al lado del teléfono (Jorge Edwards, p. 5). (*Նորատետրի մեջ՝ հեռախոսի կողքին, Սելեստինն միշտ հնձ համար գրում է անուները:*)

Después de almorzar, mientras descanso y medito en la penumbra de mi dormitorio, con las persianas bajas, suena el teléfono. Descuelgo el fono. "Soy un periodista sueco" (Jorge Edwards, p. 6). (*Ճաշից հետո, մինչ հանգստանում և մտածում եմ շերտավարագույրով ծածկված ննջասենյակին կիսախավարում, զանգում է հեռախոսը: Վերցնում եմ լսափողը. «-Ես շեն լրագրող եմ»:)*

Անշուշտ, իսպաներենում սահմանական եղանակի ներկա ժամանակը գրական ստեղծագործություններում ունի պատմական ներկայի լայն կիրառություն, որի միջոցով ավելի վառ և պատկերավոր են դառնում արդեն անցյալի գիրկն անցած փաստեր:

Oրինակ՝ El hombre llega a la luna en 1969. (Անրոյ ուոր է դնում Լուսին մոլորակ 1969 թվականին:)

Decidido a atacar a Roma, Aníbal reúne su ejército, pasa, los Pirineos vadea el Ródano, escala los Alpes cae sobre las llanuras italianas. (Հոռմը գրոհելու վճռականությամբ՝ Հանիքալը հավաքում է իր զորքը, անցնում Պիրինեյան բերակղզին, անցնում է Ոռն գետը, բարձրանում Ալպեր և ընկնում է խոպական հարթավայրեր:)

Cristóbal Colón descubre América. (Քրիստափոր Կոլոմբոսը հայտնագրում է Ամերիկան:)

La agricultura se desenvuelve más en la época romana y visigoda. (Գյուղատնտեսությունը ավելի մեծ զարգացում է ապրում հռոմեական և վեստորական դարաշրջանում):

Napoleón invade a España y el dos de mayo de 1808 se levanta el pueblo de Madrid contra las tropas napoleónicas. (Նապոլեոնը ներխուժում է Իսպանիա, և 1808 թվականին՝ մայիսի երկուսին, Մադրիդի բնակչությունը սովոր են կանգնում ընդդեմ Նապոլեոնի զորքերի):

Այժմ անդրադառնանք սահմանական եղանակի ներկա ժամանակի նրբերանգային մեկ այլ կիրառության, որն արտահայտում է արտածամանակյա ներկա գործողություն: Սա կիրառվում է ասացվածքներում

(Presente atemporal), որն էլ համապատասխանում է հայերենի առածական ներկային:

Oրինակ՝ A quien madruga Dios le ayuda. (refrán) Մեկ վաղ արքմացողն է շահում, մեկ շուտ ամուսնացողը:

Quien siembra vientos recoge tempestades. (refrán) Իմ ցանես՝ այն էլ կհնձես:

Սահմանական եղանակի ներկա ժամանակին բնորդ է հրամայական եղանակի նրբերանգ և (presente de mandato), որը սովորաբար հանդիպում է խոսակցական մակարդակում:

Oրինակ՝ Ahora cierras el libro. (Հիմա փակում ես զիրքը):

- *Tú te vas de mi casa. (Գնում ես իմ տնից):*

- *Tú te callas- le corto Dolores. Nadie te ha pedido la opinión (Juan Goytisolo, p. 98). (- Լոռում ես, - նրան ընդհատեց Դոլորես: - Ոչ ոք չի հարցրել կարծիքը:)*

Նշենք, որ սահմանական եղանակի ներկա ժամանակն իսպաներենում նույնական ունի ապառնի ժամանակի նրբերանգային լայն կիրառություն (presente pro futuro), որը արտահայտում է ապագայում կատարվելիք գործողություն:

Luego le tomó el pulso, miró al reloj, y dijo: - Esto se acaba...a la madrugada ya está con Dios. (Juan Goytisolo, p. 85) (Հետո ստուգեց նրա զարկերակը, ճայից ժամացոյցին և ասաց, - նա մահանում է վաղ առավոտյան արդեն Աստծո մոտ է:)

Pronto después de una leve discusión quedamos todos sinceramente de acuerdo. (Jorge Edwards, p.98) (Շուտով ստուգեց նրա զարկերակը, ճայից համաձայնության ենք զայլիս:)

- *Dentro de una hora estoy en tu casa- le dije mi hermana. (G. Márquez, p. 24).*

(- *Մեկ ժամից քո տանն եմ, - նրան ասաց իմ քույրը:)*

El lunes embarcamos para Buenos Aires (Jorge Edwards, p 64). (Երկուշարքի մավով գնում ենք Բուենոս Այրես:)

- *Me cambio de ropa y te alcanzo - dijo ella. (García. Márquez, p.24)(- Փոխում եմ հագուստ և հասնում քեզ, - ասաց նա:)*

Pero en todo caso, ahora no te quedan sino dos caminos: o te escondes aquí porque es tu casa, o sales con rifle (García Márquez, p. 120). (Քայլ ամեն դեպքում այժմ երկու ճանապարհ ունեն. կամ քարմակում ես այստեղ, որովհետև սա քո տունն է, կամ դուրս ես զայիս հրացանով:)

Այսպիսով, ամփոփելով կարող ենք եզրահանգել, որ սահմանական եղանակի ներկա ժամանակի նրբերանգային առանձնահատկությունները միանգամայն նույնն են թե՝ հայերենում, և թե՝ իսպաներենում. սահմանական եղանակի ներկայի զանազան նրբիմաստները լիովին համապատասխանում են միմյանց:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Արքահամյան Ս. Գ., Պառնասյան Ն. Ա., Օհանյան Հ. Ա. Ժամանակակից հայոց լեզու, Երևան, ՀՍՍՀ. գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, 1974:
2. Աբովյան Խ. Վերք Հայաստանի, Երևան, «Սովետական գրող» հրատարակչություն, 1858:
3. Ասատրյան Մ.Ե. Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանություն, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 2002:
4. Աղայան Դ. Ընտիր Երկեր, Երևան, «Արևիկ» հրատարակչություն, 1956:
5. Բարսեղյան Հ. Խ. Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, Երևան, ՀՍՍՌ պետական մանկավարժական ինստիտուտի հրատարակչություն, 1953:
6. Բակունց Ա. Երկեր, Երևան, «Սովետական գրող» հրատարակչություն, 1986:
7. Դեմիրճյան Դ. Երկերի ժողովածու, հատոր 2-րդ, Երևան, ՀՍՍՀ. Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, 1977:
8. Մուրացան, Գևորգ Մարգարեանի, Երևան, «Սովետական գրող» հրատարակչություն, 1977:
9. Կաղանկատվացի Մ. Պատմություն Աղվանից աշխարհի, Երևան, Հայաստանի հրատարակություն, 1969:
10. Նար-Դոս, Սպանված աղավնին, Երևան, «Արևիկ» հրատարակչություն, 1989:
11. Պողոսյան Պ.Ս. Բայի եղանակային ձևերի ոճային կիրառությունները արդի հայերենում, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1959:
12. Բաֆֆի, Երկերի ժողովածու, հատոր 3, Երևան, Հայպետհրատ, 1950:
13. Alonso A., Ureña H. Gramática Castellana. La Habana: Instituto del libro, 1968.
14. Bosque I., Demonte V. Gramática Descriptiva de la lengua española. Madrid: Espasa. Colección Nebrija y Bello, 1999.
15. Márquez G.G. Crónica de una muerte anunciada. Barcelona: Grupo Editorial Random House Mondadori, 2014.
16. Edwards J. El regalo. Barcelona: Grupo Editorial Random House Mondadori, 1990.
17. Historia de España. Barcelona: Editorial Ramón Sopena, 1994.
18. Goytisolo J. Juegos de manos. Barcelona: Editorial Destino, 1954.
19. Real Academia Española Esbozo de una nueva gramática de la lengua española. Madrid: Editorial Espas Calpe, 1973.
20. Menéndez R. Pidal Manual de Gramática Histórica Española. Habana: Instituto del libro, 1962.

А. АЗРОЯН – Смыловые оттенки настоящего времени изъявительного наклонения в современном восточноармянском и испанском языках. – Целью данной статьи является исследование смысловых оттенков настоящего времени изъявительного наклонения в армянском и испанском языках, научно обоснованное описание которых поможет не только в процессе обучения испанскому языку, но и будет способствовать лучшему восприятию и углубленному изучению структурных особенностей армянского языка. Следует отметить, что смысловые оттенки настоящего времени изъявительного наклонения в армянском и испанском языках полностью совпадают.

Ключевые слова: настоящее историческое, изъявительное наклонение глагола, настоящее время, оттенок смысла, типологическое описание

A. AZROYAN – The Characteristic Features of the Use of the Present Indicative in Modern Armenian and Spanish. – The present paper seeks to study the characteristic features of the use of the Present Indicative in modern Armenian and Spanish. The study of these characteristic features cannot only aid the Spanish language instruction, but can also encourage the reader to study the characteristic features of the Armenian language and perceive its structural aspects. It is worth mentioning that the use of the Present Indicative both in modern Armenian and Spanish correlate.

Kew words: historical present, Indicative Mood, Present Tense, shades of meaning, typological description

Սիրարքի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Երևանի պետական համալսարան

**ԳՈՅՑԱԿԱՆ ՀԻՄԱՎԲԱՌՈՎ ԴԱՐՁՎԱԾՎԻՆ
ԿԱՊԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅՐԵՆՈՒՄԵՎ
ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ**

Դարձվածքները կարևոր նշանակություն ունեն բոլոր լեզուներում. դրանք խոսքին հաղորդում են պատկերավորություն, արտահայտչականություն ու հոգականություն, միաժամանակ նպաստում խոսքի հակիրճության ու սեղմությանը:

Հոդվածում ներկայացվում են անվանական դարձվածքները հայերենում և անգլերենում, իսկ ավելի կոնկրետ՝ գոյական հիմնարառով դարձվածային կապակցությունները երկու լեզուներում: Քննության են առնվազագույն գոյական հիմնարառով անվանական դարձվածային կապակցությունների ամենատարածված կատապարտները: Դարձվածքների բաղադրիչներն առանձին քննվում են խոսքի մասային պատկանելության տեսանկյունից, ոչաղբության են արժանանում նաև դարձվածքների իմաստային և ոճական-կիրառական առանձնահատկությունները:

Բանափառ. դարձվածային կապակցություն, գոյական, հիմնարառ, կաղապար, բաղադրիչ, խոսքիմասային պատկանելություն, իմաստային հարաբերություններ, ոճական առանձնահատկություններ, զուգադրական քննություն

Դարձվածքների իմացությունն ու գործածությունը էական նշանակություն ունի այս կամ այն լեզվով խոսող հանրության համար: Դրանց ճիշտ ու տեղին կիրառությունը հարստացնում է լեզուն զանազան իմաստային ու ոճական նրբերանգներով, և այդ է պատճառը, որ դարձվածային կապակցությունները նշանակալից տեղ են զբաղեցնում բոլոր լեզուներում:

Հայ լեզվաբանության մեջ դարձվածքներն ուսումնասիրվել են սկսած 30-ական թվականներից: Դրանց ուսումնասիրությամբ զբաղվել են բազմաթիվ հայտնի հայ լեզվաբաններ՝ Մ. Աբեղյանը, Ա. Մուրվալյանը, Ե. Գևորգյանը, Պ. Բեդիրյանը, Խ. Բաղդիկյանը և այլք:

Ինչպես նշում է Մ. Աբեղյանը, դժվար է որոշել, թե բառի սկզբնական կամ խսկական նշանակությունը որն է, և թե ինչպիսի զուգորդություններով է բառը նոր իմաստներ ստանում: Եվ դա վերաբերում է նաև բառերի կապակցություններին, որոնք նախ պատահաբար են առնվազագույն նշանակությամբ, ապա կրկնվելով՝ դառնում սովորական: «Բառերի այսպիսի նորիմաստ կապակցությունները սովորաբար կոչվում են դարձվածներ, որոնք, սակայն, մի բառի նշանակություն են ստանում և կարող են նաև մի բարդ բառ համարվել» /Աբեղյան, 1974: 123-124/:

Դարձվածային կապակցություններին ընդհանուր առմամբ բնորոշ է այն, որ դրանք հիմնականում արդեն պատրաստի կայուն կապակցություններ են, այսինքն՝ չեն ստեղծվում խոսելու պահին՝ այս կամ այն իրադրությամբ պայմանավորված, աչքի են ընկնում բաղադրիչների թույլ կամ ուժեղ սերտաճումով, արտահայտում են ամբողջացած նոր զարգացած, ունենալու համար անհնարինական պատճենագործությունները:

փոխարերական իմաստ, դրանց կազմի մեջ մտնող բաղադրիչ բառերը (կամ դրանցից գոնե նեկը) անփոխարինելի են: ‘Դարձվածքը «կարող է ձևականորեն համընկնել ազատ բառակապակցությանը, բայց էապես տարրերվում է նրանից. հմնտ. **Ճեռքերը լվաճակ** (ազատ բառակապակցություն) և **Ճեռքերը լվաճակ** (դարձվածք՝ «մի կողմ քաշվել» վերափակառությունով») /Պետրոսյան, 1987: 175/:

Ա. Մարգարյանը գրում է. «...Բառերի այն կայուն կապակցությունը, որի բաղադրիչները միասնաբար մի նոր՝ փոխարերական-այլարերական իմաստ են արտահայտում, կոչվում է դարձվածք» /Մարգարյան, 1990: 301/:

Մեր հոդվածի նպատակն է քննել անվանական դարձվածային կապակցությունները հայերենում և անգլերենում, իսկ ավելի կոմլեքտ՝ նրանք, որոնց գոյական բաղադրիչը կապակցության հիմնաբառն է, վեր հանել երկու լեզուներում դրանց միջև եղած ընդհանրություններն ու տարրերությունները, իմաստային և ոճական կիրառությունները, որոշել դրանց բաղադրիչների խոսքիմասային պատկանելությունը:

Հայերենի դարձվածքները տեղ են գտել հայերենի բացատրական և դարձվածաբանական բառարաններում: Անգլերենի դարձվածաբանությունը մանրամասն ուսումնասիրության են ենթարկել տարրեր լեզվաբաններ, այդ թվում նաև ռուս հեղինակներ Ա. Միխոնիցիկն, Ն. Ամոսովան, Ա. Կունինը, Ի. Ալեքսեյը և այլք: Սույն հոդվածում ընդգրկված օրինակները քաղել ենք այն դարձվածաբանական և բացատրական բառարաններից, որոնք նշված են գրականության ցանկում:

Հայերենում սովորաբար դարձվածքի վերջին բաղադրիչն է հանդես գալիս որպես դրա առանցքային բառ՝ հիմնաբառ, որը կարող է արտահայտված լինել տարրեր խոսքի մասերով: Ըստ այդմ՝ դարձվածքները լինում են երկու տեսակի՝ անվանական և բայական: Գոյական վերջնաբաղադրիչ են ունենում անվանական դարձվածքները, որոնց կազմությանը մասնակցում են նաև ածականը, թվականը, դերանունը, որոշ դերայներ և կապեր:

Գոյականը որպես դարձվածքի հիմնաբառ է հանդես գալիս նախ և առաջ գոյականի հետ՝ այսինքն **գոյական + գոյական** կապակցության մեջ, որոնցում առաջին գոյականը կարող է հանդես գալ տարրեր հոլովներով /Մարգարյան, 1990: 315/.

ա) Ուղղական հոլովով՝ բառ-բաղադրիչների համագոր հարաբերությամբ, օրինակ՝ *բուր ու մուր, քուն ու դադար, քար ու քացախ, ծակ ու ծուկ, կրակ ու պատիժ, հաց ու պանիր, հող ու ջուր, հորի-փերի, ճակատ առ ճակատ, ճար ու ճամփա, ճար ու ճրագ, պեծ ու կրակ, վարք ու քարք, ցալ ու չոր, միս ու արյուն, շոն ու գեղ, ցուպ ու մախսաղ, սողոմ-գոմոր, ուխտ ու պայման, փուշ ու տատասկ և այլն:*

բ) Սեռականով և բառի ուղիղ ձևով, ինչպես՝ *բերանի համ, դառնության բաժակ, բաժակի ընկեր, զայթակղության քար, քարափի զայլ, զայլի ծուտ, էշի հարսանիք, օճի ծուտ, աչքի լույս, աչքի գրող, ծոփի խելք, կյանքի անիվ, կյանքի դպրոց, հոգու դեղ, հոգու պարտք, հորրի հրճվանք, Հուղայի համբույր, ծիրենու*

ճյուղ, Դովտի կիմ, մածնի մերամ, մեխի գլուխ, մկների ժողով, սարի արջ, սատանի կծիկ, քրի մազ և այլն:

գ) Հայցականով և տրականով՝ ծայրը ծայրիմ, ծունկ ծնկի, ճակատ ճակատի, խոտը բերանիմ, հացը ծնկիմ, խելքը գլխիմ, ձեռքը ծոցիմ, փրփուրը բերանիմ և այլն:

դ) Գործիականներով՝ ձեռքով-ոտքով, համով-հոտով, քրով-մորով, տնով-տեղով, պողով-պոչով և այլն:

ե) Գործիականով և բարի ուղիղ ձևով՝ պոչով սուտ, պողով սուտ, հացով մարդ և այլն:

Իհարկե, հայերենում դարձվածքներ կազմվում են նաև այլ հոլովներով արտահայտված գոյականներով, օրինակ՝ բացառականով ու բարի ուղիղ ձևով, ներգոյականով և բարի ուղիղ ձևով, ինչպես՝ *ոտքից գլուխ*, *ծուտը ձվում* և այլն:

Անգլերենում ևս բազմազան են **գոյական + գոյական** կապակցությամբ դարձվածքները, որոնք բաժանվում են հետևյալ ենթատեսակների /Արնոլդ, 1986: 170-173/:

ա) N + N (**գոյ.+ գոյ.**) տիպի կառույցներ՝ *calf-love* «պատանեկան սեր», *table talk* «զրույց ճաշասեղանի շորջ», *swan-song* «կարապի երգ»՝ կյանքի վերջին գործը/երկը», *museum piece* «1. դարն անցած առարկա 2. բանզարանային մարդ», *soap opera* «քազմասերիանոց ֆիլմ, սերիալ», *ghost town* «քաղաք-ուրվական» վաղուց արդեմ անմարդաբնակ քաղաք», *crocodile tears* «կոկորդիլոսի արցունքներ», *mother tongue* «մայրենի լեզու», *Vanity fair* «սնափառության տոնավաճառ (աշխարհի մասին)» և այլն:

բ) N's + N կամ Ns' + N (պատկանելություն ցույց թվող գոյականական կապակցություններ), ինչպես՝ *Hobson's choice* «սկանա/հարկադրված ընտրություն (XVII դարում Քեմբրիջում վճարովի ծիանոցի տեր Հոբսոնը ստիպում էր իր հաճախորդներին ընտրել ելքի մոտ կանգնած ծին)», *gentleman's gentleman* «սանձնական սպասավոր. սենեկապասավոր», *mother's boy/darling* «մայրիկի քաղաք», *dog's life* «շան կյանք», *ladies' man* «մեկը, ով ջանք չի խնայում կանանց գրավելու համար» և այլն: Սրանք համարժեք են հայերենի՝ սեռականով և բարի ուղիղ ձևով կազմված կառույցներին, որոնց անդրադանք վերևում: Տարբերությունն այն է, որ հայերենում ապաթարց չկա, և պատկանելության իմաստն արտահայտվում է հոլովական վերջավորությամբ, ինչպես՝ թշնի կաթ (չճարվող, հազվագյուտ ապաթարց), օջախի ծովիս, ջրի ճամփա և այլն: Սեռականի իմաստն անգլերենում, ինչպես հայտնի է, արտահայտվում է նաև *of* նախորդ, որով կազմված դարձվածքները պատկանում են N + prep. + N (**գոյ. + նախորդ + գոյ.**) կադապարին:

գ) N + and + N (**գոյ. + և + գոյ.**)՝ իրար հետ **և** շաղկապով կապված կապակցություններ՝ *coffee and cakes* (ամեր. խոց.) «համեստ աշխատավարձ», *flesh and blood* «մսից ու արյունից կազմված, մարդկային զգացմունքներ և բուլություններ ունեցող էսկը», *root and branch* «հիմնովին, ամբողջովին, արմատապես», *neck and neck* «մարզ. հավասար, կողք կողքի (վազքի ժամանակ)», *body and soul* «ամրող հոգով, ողջ էությամբ», *bread and butter* «գոյության միջոց, հանապազօրյա հաց», *skin and bone* «հյուծված, նիհար

մարդ», alpha and omega «1. հիմնականը, զիսավորը, հավատամբը, ալֆան և օմեգան (հունական այրութենի առաջին և վերջին տառերը) 2. սկիզբն ու վերջը», the life and soul «քննկերախմբի հոգին՝ ամենակենսուրախ մարդը» և այլն: Այս տիպի կառույցները կառուցվածքային տեսանկյունից համարժեք են հայերենի՝ գոյական + գոյական կաղապարով վերոնշյալ այն կառույցներին, որոնք կապվում են ու շաղկապով և գոնվում են համազոր հարաբերության մեջ, ինչպես՝ ծակ ու ծուկ, կրակ ու պատիժ, հաց ու պանիր, հող ու ջուր և այլն:

η) N + prep. + N (գոյ. + ճախտիր + գոյ.)՝ a child of shame/sin «ապօրինածին երեխս, ապօրինի զավակ», face-to-face «անձամբ, առանձին», a question of time «զուգող հարց՝ ժամանակի հարց», manna from heaven «երկնային մանանա՝ համեստարծահաս բախտավորություն», hand in hand «միաժամանակ. զուգահեռ. համատեղ», a heart of gold «ոսկի սիրտ. հրաշալի մարդ», a heart of stone «քար սիրտ», the wheel of Fortune «քախտի անիվ», a bag of nerves «եյարդերի կծիկ», the brain of a pigeon «հավի ուղեղ (անխելք մարդու մասին)», a way of life «կենսակերպ», a bird of passage «փոփոխական մարդ», the dove of peace «խաղաղության աղավնի», a bolt from the blue «ամսպրոց երկնիք, անսպասելի իրադարձություն կամ լուր», a flight of fancy «մտքի, երևակայության բոլշը» և այլն: Քանի որ ժամանակակից անգլերենի հոլովական համակարգը հայերենի հոլովական համակարգի նման հարուստ չէ, անգլերենում ամենատարբեր հոլովական իմաստներն արտահայտվում են նախդիրների օգնությամբ, ինչն ակնհայտ է բերված օրինակներից:

Գոյական հիմնաբառով դարձվածքներ են նաև **ածական + գոյական** կառույցները: Ինչպես հայերենում, այնպես էլ անգլերենում ածականի ու գոյականի կապակցությանը բազմաթիվ դարձվածքներ կան, օրինակ հայերենում՝ դատարկ կարս (դատարկախոս, դատարկամիտ մարդ), ծակ բերան (բացբերան, զաղոնիք շպահող), կանաչ լույս, կանաչ արև, ծերմակ քամի, մազե կամուրջ (վտանգավոր փորձություն), մարմանդ ջուր, սև ցուցակ, սև սիրտ, սև ուժ (ուժեր), տրոյական ծի, փափուկ սիրտ, քաղցր աչք և այլն: Այսպիսի կապակցությունների շարքում շատ են նաև շրջասությունները: «Ծրջասությունները շրջուն արտահայտություններ են, բառեր կամ կապակցություններ, որոնցով առարկան կամ գործողությունը անուղղակիորեն ենք անվանում» /Բեղիրյան, 2002: 5/: **Ածական + գոյական** կաղապարով շրջասությունների օրինակներ են՝ ամիսադր դյուցազն = Ամիսամիկ, ամնահ մահկանացու = Հովհաննես Այվազովսկի, մեծ լոռեցի = Հովհաննես Թումանյան, դեղին ջարդ = մշակութային արժեքների անխնա վաճառք, կանաչ սատանա = դոլար, մառախչապատ Ալբին = Անգլիա. Լույրոն, սև ոսկի = նավթ, քննուշ սեռ = կիճ, չաղ կատու = նորաքրու հարուստ և այլն:

Անգլերենում **A + N (ածական + գոյական)** կաղապարով դարձվածքների օրինակներ են՝ blind alley «փակուղի, նրանցք/նրբուղի», cold comfort «քոյլ միսիթարություն», black/dark comedy «քատր.՝ սև կատակերգություն (իիմքում ընկած է մոայլ/սև հումոր/սուր ծաղր)», ugly duckling «անճոռնի ճուտիկ (սկզբում անխոստումնալից, բայց հետագայում մեծ հաջողությունների հասած մարդ)», bitter pill «դառնություն, վիրավորանք, ստորացում», blue blood «կապույտ

արյուն (ազնվական ծագում ունեցող մարդկանց մասին), *high life* «քարձրաշխարհիկ, արխոնոկրատական հասարակություն», *honeymoon* «մեղրամիս», *dead language* «մեռած՝ այլև չգործածվող լեզու», *lame excuse* «անհիմն, անհաջող պատրիակ, կաղացող պատճառաբանություն», *sore spot* «ցավոտ տեղը», *the Golden Age* «ոսկեդար», *a royal welcome* «թագավորներին վայել ճոխ ընդունելություն» և այլն:

Գոյական հիմնաբառով դարձվածների հաջորդ տեսակը **թվականի** և **գոյականի** կապակցությամբ կառույցներն են, որոնք կազմվում են քանակական և դասական թվականներով, ինչպես՝ *առաջին քայլ, առաջին ջութակ* (որևէ գործի մեջ առաջին, զիսավոր դեմքը), *երկու բառ (խոսք), երրորդ աչք, չորս պատ, մի թիզ, մի բերան, մի բուռ, յոթերորդ երկինք, յոթ պորտ, յոթ ծովի մերան, հազար բերան, ութերորդ հրաշալիք* և այլն: Անգլերենում (*Num. + N*) կապակցության օրինակներ են՝ *second nature* «խառնվածք, բնափորության բնորոշ գիծ, որ արդեն արմատավորվել է մարդու մեջ», *second hand* «երկորդ ձեռքից, ոչ անմիջականորեն», *two-faced* «երկերեսանի», *a nine-days' wonder* «զգայացունց մի բան, որ արագ է մոռացվում», *first hand* «սկզբնադրյուրից, անմիջականորեն», *first fruit* «աշխատանքի առաջին պտուղները», *the fifth column* «հինգերորդ շարասյուն՝ դավաճան, մատնիչ խմբավորում (երկրի ներսում)» և այլն:

Կան նաև **դերանվան** և **գոյականի** կապակցությամբ դարձվածներ, ինչպես՝ այն աշխարհ, մյուս աշխարհ, ի՞նչ սրտով, ո՞ր օրվա և այլն: Անգլերենում **դերանուն + գոյական** (*Pron. + N*) կապակցության օրինակներ են՝ *to one's heart's content* «որքան սիրուն ուզի», *My aunt* «այդ քեզ բան, անհավատալի է», *nobody home* «ժայռ/խելքը պակաս» և այլն:

Հաջորդը երկու լեզուներում **դերքայ + գոյական** կապակցությունն է: Հայերենում այդպիսիք կազմվում են հարակատար և ենթակայական դերքայներով, ինչպես օրինակ՝ *փշած տիկ* (*quizzed, հպարտ, ամբարտավան մարդու մասին*), *փորձած բան* (*ծանոթ մարդ, առարկա*), *սատկած (եփած) հավ, տաշած բար, մեռած հոզի* (*ներ*), *ծագող աստղ, հաշող շուն* և այլն: Անգլերենում դրանք կազմվում են **Participle 1 (ներկա)** ու **Participle 2 (անցյալ)** **դերքայների** և **գոյականի** օգնությամբ, ինչպես՝ *sucked orange* «հալից ընկած, ուժասպառ մարդ», *trained eye* «սուր աչք», *mixed train* «ապրանքամարդատար գնացք», *the rotten apple* «գիտած խնձոր (վատ, ամայսար մարդու մասին)», *lost sheep* «մոլորված զառ», *stolen/forbidden fruit* «արգելված պտուղ», *an unwritten law* «զգրված օրենք», *crying shame* «խայտառակություն, ամորալի երևոյթ», *a nagging doubt* «ուանցող կասկած» և այլն:

Եվ վերջապես գոյական հիմնաբառով դարձվածային կապակցություններ են կազմվում նաև կապի (նախորդության) և գոյականի համադրությամբ, այսինքն՝ ստացվում է **կապ (նախորդություն) + գոյական** կաղապարը: Օրինակ՝ հայերենում ունենք՝ *մինչև ականջները, մինչև երտսաղեմ (շատ հեռու), մինչև եղունգների ծայրը, մինչև ատամները, մինչև աշխարհի ծայրը, առանց հետին մտքի, առանց մնացորդի* և այլն: Կապի և գոյականի կապակցությամբ այս դարձվածները կարելի է համեմատել անգլերենում ամենատարբեր նախորդ-

ների և գոյականներիի կապակցությունների հետ, քանի որ հայերենի կապերը խմաստով նման են անգլերենի նախդիրներին: Անգլերենում ունենք **նախդիր + զոյական** (prep. + N) կապակցությամբ հետևյալ կառույցները՝ *under the counter* «ծածովկ, զաղտագողի, սուսուփուս», *by heart* «անզիր», *on the edge* «անհամբեր, զրգոված, լարված», *at odds* «անհամերաշխ, զժոված», *out of place* «անտեղի, ոչ տեղին, անհարկի», *in a word* «մի խորով», *in grain* «էուրյամբ, բնույթով», *against the grain* «մեկի կամքին հակառակ», *on the spot* «անմիջապես, տեղում, տեղմոտտեղը» և այլն:

Ինչ վերաբերում է դարձվածքների կիրառությանը, դրանք «քեն կարող են օգտագործվել խորի տարբեր տեսակներում (գիտական, հրապարակախոսական և այլն), բայց դրանց գործածության ամենահիմնական, հարազատ ոլորտը գեղարվեստական գրականությունն է: Պատահական չէ, որ հատկապես գրողներն ու բանաստեղծներն են անշափ բարձր գնահատում դրանց դերը» /Մելքոնյան, 1984: 200-201/: Հետևաբար, դրանց ոճական արժեքը դրսերվում է հատկապես գեղարվեստական գրականության մեջ: «Անձ է ու բազմաբնույթ դարձվածքի ոճական արժեքը գեղարվեստական խորություն. այն նախ և առաջ պատկերավոր ու տպավորիչ է դարձնում խորը, նպաստում նրա հակիրճությանն ու սեղմությանը, ազգային երանգավորում հաղորդում և՛ հեղինակի, և՛ կերպարների խորին, բացահայտում նրանցից յուրաքանչյուրին քննորոշ լեզվամտածողությունը» /Եղելյան, 2003: 183-184/:

Հայերենում դարձվածքների՝ խորին պատկերավորություն, հակիրճություն, բնականակորթյուն հաղորդելու օրինակ կարող է հանդիսանալ Հ. Թումանյանի հետևյալ հատվածը.

Ասին ու **խելք խելքի տվիճ**,
Հավան կացան, պայման դրին.
 Բայց՝ արի տես...որ փող չունեն:
 Ծատ **միտք արին**, թե ինչ անեն.
 Վերջը եկան փրչի մոտը,
Ընկան նըրա ձեռն ու ոսք... (Թումանյան, 1950, էջ 268)

Անգլերենում ևս դժվար է պատկերացնել թե՛ չափածո և թե՛ արձակ ստեղծագործություններն առանց դարձվածքների, որոնք յուրահատուկ համ ու հոտ են հաղորդում այս կամ այն ստեղծագործությանը: «Դա ցայտում երևում է հետևյալ օրինակներում.

“Kitty’s **heart sank**. The Mother Superior’s tone admitted of no reply; she knew her well enough to know that she would be insensible to entreaty” (Maugham, 1981, էջ 195).

“It had always seemed perfectly natural that he should **lead a dog’s life** in order to provide them with board and lodging, clothes, holidays and money for **odds and ends...**” (Maugham, 1981, էջ 25).

Այս օրինակները երևի թե այդքան արտահայտիչ ու բնական չլինեին, եթե դրանցում հեղինակի օգտագործած դարձվածքները փոխարինվեին այլ բառերով:

Դարձվածքների իմաստային առանձնահատկություններին անդրադառնալով՝ նշենք, որ դարձվածային կապակցությունների մեր քննած օրինակներում երկու լեզուներում էլ շատ կան այնպիսիք, որոնք կազմված են մարդու մարմնի մասերի անուններով՝ *գլոխ, ականջ, աչք, թև, ձեռք, երես, սիրտ, վիզ, ոտք* և այլն: «Մարդու մարմնի մասերի անուններով կազմված դարձվածքները կոչվում են նաև **սոմատիկ** դարձվածքներ» /Եզեկյան, 2003: 190/:

Հայերենում մեծ թիվ են կազմում մարդու մարմնի մասերի անուններով կազմված հատկապես բայական դարձվածքները, ինչպես՝ *գլխին նստել, գլոխը բերել, ականջ դնել, ականջը տանել, աչք զցել, աչքով տալ, աչքի ընկնել, ձեռք զցել, ձեռք մեկնել, ձեռքը սեղմել, թևերը փոել, թևերը թափվել, երես առնել, երեսը պատռել, սիրտը բույանալ, սիրտը կոտրվել, սիրտը պայթել, վիզ ծռել, վիզը ոլորել, ոտքերը լիզել, ոտքը խաղաղվել, ոտքը կոտրվել և այլն: Անգլերենում ունենք՝ *hide one's head* «քարճվել, ամաչել մարդկանց աչքին երևալուց», *keep one's head above ground* «ապրել, գոյություն ունենալ, գոյությունը քարշ տալ», *fall upon sb's ear* «ականջին հասնել», *give a good eye* «հոգալ. մեծ ուշադրության արժանացնել մեկին», *fall under sb's eye* «իր վրա ուշադրություն հրավիրել», *burst upon the eye* «աչքի ընկնել», *have a long arm* «ի վիճակի լինել հեռվից վնասելու», *keep at arm's length* «պաշտոնական հարաբերությունների մեջ լինել», *grind the face of sb* «կեղեքել, ճնշել, հարստահարել», *lose face* «ստորանալ, նվաստացման ենթարկվել, հեղինակագրկվել», *be sick at heart* «քախծել, կարտուել, սիրտը ճնշվել», *break one's heart* «սիրտը կոտրել», *fall upon sb's neck* «ինչ-որ մեկի վզովն ընկնել», *save one's neck* «կախաղանց խուսափել», *break the neck of* «գործի մեջքը կոտրել, մեծ մասը կատարել», *get one's foot on the ladder* «սենել հաջողության առաջին քայլը», *carry smb off his feet* «ոգևորել, խանդավառել» և այլն:*

Թվարկված բայական դարձվածքները կարելի է անվերջ շարունակել սակայն սույն հոդվածի սահմաններում մեր նպատակն է ուսումնասիրել ոչ թե բայական, այլ **գոյական** վերջնաբաղադրիչով (հիմնարառու) **անվանական** դարձվածքները: Գոյական հիմնարառով անվանական դարձվածքների մեջ ևս կան այնպիսիք, որոնց բաղադրիչներից մեկը մարդու մարմնի որևէ մասի անվանում է: Սրանք թեև թվով շատ չեն, սակայն կարևոր տեղ են զբաղեցնում երկու լեզուներում:

«Եթե դարձվածքների համար այլքան հատկանշական է հուզաարտահայտչական երանգով օժտված լինելը, խոսողի վերաբերմունք արտահայտելը, նշանակում է, որպես իմաստային բնորոշ յուրահատկություն, դա պիտի դառնա դարձվածքների դասակարգման հիմունք» /Անլրոնյան, 1984: 195/: «Իրանից ելնելով՝ ըստ դարձվածքների արտահայտած իմաստների՝ երկու լեզուներում դրանք կարելի է բաժանել երկու խմբի՝ ա) դրական իմաստներ (կապեր, հարաբերություններ) արտահայտող դարձվածքներ, բ) բացասական իմաստներ (կապեր, հարաբերություններ) արտահայտող դարձվածքներ:

Դրական իմաստներ են արտահայտում մարդու մարմնի մասերի անվանումներով կազմված գոյական վերջնաբաղադրիչով հետևյալ դարձվածային կապակցությունները հայերենում՝ *արթում գլոխ* (*սրակի մտածող մարդ*),

ծանր գլուխ (ծանրախտ), սառը գլուխ (հավասարակշիռ դատող մարդ), աշխարհի աչք (բոլորի կողմից սիրված մարդ), բարձր աչք (արժանապատիվ կեցվածք), կռունկի աչք (շատ պարզ, մարուր), բաղցր աչք (բարեհաճորյուն), բաց ձեռք (շոայլ), օրինյալ ձեռք (ազնիվ գործեր կատարող մարդ), թերև ձեռք (լավ բուժող, ոտքի կանգնեցնող բժշկի մասին), ոտեղ ձեռք (հասարակության կյանքին խստիվ հետևող, դեկավարություն ապահովող ձեռք), աջ թև (հավատարիմ օգնական, նեցուկ), ձերմակ երես (արդար), փափուկ երես (բոյլ, չփնտապող, մերժել չկարողացող), բարի ոտք, թերեւ ոտք (բախտաբեր մուտք), թև ու թիկունք (օգնական ու հենարան) և այլն: *Անգլերենում ունենք՝ long head/long-headed* «խորարափանց, հեռատես, շրջահայաց», *clear head/ clear-headed* «պայծառ գլուխ, խելացի», *wise head* «խելոք, խելացի», *quick eye* «սուր աչք, զննող, դիտունակ», *straight eye* «անվրեա աչք, ճիշտ աչքաշափ», *easy on the eyes* «հաճելի դեմքով», *sharp eye* «սուր, ուշադիր աչք», *an open hand* «շոայլ, ձեռքը բաց», *an old hand* «վիորձառու մարդ», *firm hand* «ուժեղ, խստորեն վերահսկող ձեռք», *sea legs* «հավասարակշորյունը, իրեն պահելու կարողությունը (նավի վրա)», *light-footed* «արագաշարժ, ճարապիկ, ժիր» և այլն:

Դարձվածների ոճական արժեքներից մեկն էլ դրանց հեգնական, արհամարհական, հաճախ նաև հանդիմանական վերաբերմունք արտահայտելն է: Այդպիսի դարձվածները նպաստում են խոսքի համապատասխան երանգավորմանը: Դրանք դասվում են բացասական իմաստներ ունեցող դարձվածների շարքին:

Բացասական իմաստ արտահայտող գոյական վերջնաբաղդրիչով դարձվածային կապակցությունների թվին են պատկանում մարդու մարմնի մասերի անուններով կազմված հետևյալ դարձվածքները հայերենում՝ ամպրագլուխ (անխելք, դատարկագլուխ), անգլակ գլուխ (սեփական կարծիք չունեցող մարդ), դդում գլուխ (դատարկագլուխ), բարձր գլուխ (զորոգամիտ), գունդ գլուխ (համառ), դատարկ գլուխ (դատարկամիտ, բրամիտ), կախ գլուխ (խորամանկ), կոր գլուխ (ընկճված մարդ), խող ականջ (ասածք բանի տեղ չդնող), պիճն ականջ (անուշադիր), ծակ ականջ (լսածք իրեն չպահող), ծակ աչք (ազահ), նեղ աչք (ժատ), քոռ աչք (չկամ, նախանձու մարդ), բաց աչք (արտասկող, ոլլացող, սպացող մարդ), օտար աչք (կողմնակի նայող, տեսնող, ոչ ցանկալի), կոսկիտ ձեռք (քոնի ուժ, քոնություն, խստություն գործադրող մարդ), պիճն ձեռք (ժատ), սև ձեռք (շարագրծ), ծուռ երես (տիհաճորյուն պատճառող մարդ), կախ երես (մոայլ, խոժոռ), կաշի երես (պնդերես, աներես մարդ), բար սիրտ, բաց սիրտ, ծուռ վիզ, հաստ վիզ, ծախ ոտք (շարագուշակ, ճախողաբեր նշան է համարվում), ծանր ոտք (մի տեղ չարագուշակ մուտք) և այլն:

Անգլերենում հանդիպում են հետևյալ օրինակները՝ *wooden head* «հիմար, սպուզ մարդ», *feather-head/feather-brained* «քերևամիտ, դատարկ, մակերեսային, անլուրջ», *addle-head* «ցրված, չկենտրոնացող մարդ», *big head* «պարծենկոտ, գլուխգովան», *evil eyes* «1. անքարյացակամ հայացք, 2. շար աչք», *rovine eyes* «աչքաշոռ մարդ», *green eyes* «նախանձ», *pumt hand* «անծոռնի/ապիկար/անծարակ մարդ», *fresh/green hand* «անփորձ, սկսնակ», *a baby in arms* «ոչ հասուն մարդ/ անփորձ», *light-fingered* «ձեռքից բոյլ,

զողարարո, զող», pudding face «զեր/ անիմաստ դեմք», long face «ախտոր, մուայլ, դժգոհ դեմք», poker face «անարտահայտիչ, անշարժ դեմք», frog face «ջշկվող, ձանձրալի դեմքով մարդ», stiff neck «հաստակող, համառ», hard heart «դաժան, անզգացմունք սիրու», trench foot «տոտրի հիվանդություն (խոնավ խրամատմերում մնալու հետևանքով)», all legs and wings «անհարմար զգացող բարձրահասակ երիտասարդ, որ չգիտե՝ ուր բարցնի ծեռքերն ու ոտքերը» և այլն:

Վերոնշյալ օրինակներում թեև դարձվածքների իմաստն ուղղակիորեն չի բխում դրանց բաղադրիչների բուն կամ հիմնական իմաստներից, բայց նաև լիովին տարանցատված չէ և կապվում է դրանց արտահայտած այս կամ այն հատկանիշի հետ՝ ստանալով այլարերական-փոխարերական իմաստ: Հետևաբար, երկու լեզուներում էլ իրենց ինչպես «ձևաբանական, այնպես էլ իմաստաբանական-իմաստային կառուցվածքով դարձվածքները բառ-բաղադրիչների ոչ թե վայրիվերո, տարերային կամ մեխանիկական, այլ միանգամայն տրամաբանական ու օրինաչափական համադրությունն են կազմում» /Մարգարյան, 1990: 329/:

Դարձվածքներ են կազմվում ոչ միայն մարդու մարմնի մասերի անուններով, այլև երկու լեզուների հիմնական բառաֆոնի այլ բառերով, որոնց, սակայն, հնարավոր չէ լիովին անդրադառնալ մեկ հոդվածի սահմաններում: Եվ ինչպես իրավացիորեն նշում է Ա. Մուրվալյանը. «Բայց եթե նայենք դարձվածքին արտահայտություններով ու ոճերով հարուստ հայոց լեզվի բացատրական բառարանը, կտեսնենք, թե դարձվածքային ինչպիսի և որքան արտահայտություններ ու ոճեր են խմբավորված բառային հիմնական ֆոնի այնպիսի բառերի շուրջ, ինչպիսիք են՝ մարմնի անդամների, արտաքին աշխարհի առարկաների, երկնային մոլորակների, կենդանիների, բույսերի, հանքերի և նման ուրիշ առարկաների անունները» /Մուրվալյան, 1955: 163/:

Առօրյա խոսակցական լեզվում, օրինակ, շատ են կենդանիների անվանն առնչվող դարձվածքներ, ինչպես՝ շան լակոտ, շան բուլա, շան ծագ, a dead dog «անպիտան մարդ», a dirty dog «ստոր, անասուն, հիմար»: Գործածվելով խոսակցական լեզվում՝ սրանք ոճավորում են խոսքն ու դրան ամենատարբեր արտահայտչական երանգներ հաղորդում:

Այսպիսով, հայերենի և անգլերենի դարձվածային կապակցությունների թվնությունը ցույց է տալիս, որ երկու լեզուներում շատ են ընդհանրությունները թե՛ դարձվածքների կառուցվածքային կաղապարների առումով, թե՛ դրանց արտահայտած իմաստների տեսանկյունից: Ուշադրության են արժանի գուգադրվող լեզուներում դարձվածքների իմաստային առանձնահատկությունները, որոնցով էլ պայմանավորված է դրանց ունեցած ոճական արժեքը: Թե՛ հայերենի և թե՛ անգլերենի խոսակցական լեզվում, ինչպես նաև գեղարվեստական խոսքում անգնահատելի է դարձվածքների դերն ու նշանակությունը, քանզի դրանք «կարևոր են ոչ միայն իբրև լեզվական շինանյոթ, ալև որպես մտքի արտահայտման ազգային ձևեր» /Մելքոնյան, 1984: 200/:

Ավելորդ չենք համարում նշել, որ երկու լեզուներում էլ կան այնպիսի դարձվածքներ, որոնք թե՛ ձևով, թե բովանդակությամբ լիովին համարժեք են, ինչպես *sharp eye* «սուր աչք», *open hand* «բաց ձեռք, շռայլ», *evil eye* «չար աչք» և այլն, սակայն «կան դարձվածքներ, որոնք խիստ ազգային երանգավորում ունեն և նույնությամբ, բառացի կամ համարժեք եղանակով չեն կարող թարգմանվել մեկ այլ լեզվով» /Եզեկյան, 2003: 193/, ինչպես՝ *ծակ աչք, քոռ աչք, ծուռ վիզ և այլն*:

Դարձվածային կապակցությունների զուգադրական քննությունը երկու լեզուներում կարևոր նշանակություն ունի դրանց միջև տիպարանական ընդհանրությունների որոշման տեսանկյունից: Այն նաև կարևորվում է անգլերենի և հայերենի ուսուցման, այդ լեզուների դասավանդման հարցում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբեղյան Մ. Խ. Հայոց լեզվի տեսություն, Երկեր, հ. Զ, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1974;
2. Բաղիկյան Խ. Գ. Ուսումնական դարձվածաբանական բառարան, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 2002:
3. Բեղիրյան Պ. Ս. Դարձվածաբանական բացատրական բառարան, Երևան, «Լույս» հրատ., 1971:
4. Բեղիրյան Պ. Ս. Հայերեն շրջասությունների բառարան, Սբ. Էջմիածին-ՈՒԾԱ, 2002:
5. Եզեկյան Լ. Կ. Ոճագիտություն, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 2003:
6. Մալխասեանց Ս. Ս. Հայերէն բացատրական բառարան, հ. 1-4, Երևան, Հայկական ՍՍՌ պետական հրատ., 1944-1945:
7. Մարգարյան Ա. Ս. Ժամանակից հայոց լեզու, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1990:
8. Մելքոնյան Ս. Ս. Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Երևան, «Լույս» հրատ., 1984:
9. Մուրգալյան Ա. Ա. Հայոց լեզվի բառային կազմը, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1955:
10. Պետրոսյան Հ. Զ. Հայերենագիտական բառարան, Երևան, «Հայատան» հրատ., 1987:
11. Սեֆերյան Ս. Ս., Լազարյան Ա.Ա. Անգլերեն-հայերեն դարձվածաբանական բառարան, Երևան, Անկյունաքար, 2005:
12. Սուրբիայան Ա. Մ., Գալստյան Ս. Ա. Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1975:
13. Արնոլդ Ի. Վ. Լексикология современного английского языка. Москва: Высшая школа, 1986.
14. Կунин Ա. Վ. Большой англо-русский фразеологический словарь. Москва: Русский язык, 1984.

15. Пархамович Т. В. Англо-русский, русско-английский словарь фразеологизмов. Минск: Попурри, 2011.
16. Թումանյան Հ. Թ. Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1950:
17. Maugham W. S. The Painted Veil. Москва: «Международные отношения», 1981.

С. КАРАПЕТЯН – *Фразеологические сочетания с доминирующим существительным в армянском и английском языках.* – Фразеологизмы имеют важное значение во всех языках: они придают речи индивидуальность, выразительность и эмоциональность, в то же время способствуют ее краткости и сжатости. Целью данной статьи является рассмотрение особенностей именных фразеологизмов с доминирующим существительным в армянском и английском языках. Анализируются наиболее распространенные модели фразеологических оборотов с доминирующим существительным, рассматриваются компоненты фразеологизмов с точки зрения частеречной принадлежности, а также смысловые и стилистические особенности функционирования фразеологизмов.

Ключевые слова: фразеологические сочетания, существительное, доминирующее слово, модель, компонент, частеречная принадлежность, смысловые отношения, стилистические особенности, сопоставительный анализ

S. KARAPETYAN – *Phraseological Units with a Noun as the Head Word in Armenian and English.* – Phraseological units play an important role in all languages; they make our speech more impressive and emotional, at the same time contributing to its brevity and conciseness. The aim of the given paper is to study the nominal phraseological units in English and Armenian, particularly the constructions which have a noun component as a head word. The components of the phraseological units are studied from the point of view of their part of speech meaning. The semantic and stylistic peculiarities of the usage of phraseological units are also considered.

Key words: phraseological units, noun, head word, pattern, component, part of speech meaning, semantic relations, stylistic features, contrastive analysis

ԱՅՆԱ ԿՈՒԲԱՆՅԱՆ
Երևանի պետական համալսարան

**ՔԱԶՄԻՍՎԱՏՈՒԹՅԱՆ, ՏԱՐԲԵՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ՀՈՄԱՆԻՇՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ «ԱՍՏՎԱԾ» ԵՎ
«ՍԱՏԱՆԱ» ՔԱՂԱԴԻՉՆԵՐՈՎ ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ
ՀԱՍՏԱՐԳԵՐՈՒՄ**

Հողվածում ներկայացվում է «Աստված» և «սատանա» բաղադրիչներով դարձվածային միավորների բազմիմաստության, հոմանիշության և տարբերակայնության խնդիրը: Հողվածի նպատակը համադրական-համեմատական վերլուծության միջոցով տվյալ լեզվական երևոյթների միջև գոյություն ունեցող տարբերությունների բացահայտումն է:

Քանայի բառեր. դարձվածային բազմիմաստություն, բառային անփոփոխակ, տարբերակայնություն, իմաստային լայն ծավալ, սիգնիֆիկատ, դարձվածային հոմանիշություն, դիրքային տարբերակ, բանակական տարբերակ

Ընդունված է կարծել, որ բազմիմաստությունն իրեն լեզվական երևույթ, այնքան էլ բնորոշ չէ դարձվածային միավորներին, այլ ավելի ներհատուկ է բառին, քանի որ տրամաբանորեն անսահմանափակ թվով բառերի ստեղծումը կրարդացներ լեզվի յուրացումը: Ինչպես նշում են Ա. Նազարյանը, Վ. Ժուկովը և այլ լեզվաբաններ, դարձվածքները կարող են լինել բազմիմաստ, քանի որ «յուրաքանչյուր դարձվածային միավորի՝ նույնիսկ մենիմաստների առաջացումը վերջինիս նախատիպի, այն է՝ տվյալ դարձվածքի շարահյուսորեն ձևավորված ազատ հարաբերակցի նոր իմաստ ձեռք բերելու արդյունքն է» /Հազարյան, 1987: 212/: Ա. Եֆիմովն ու Յ. Ռ. Գեպները պնդում են տրամաբանորեն հակառակը՝ նշելով, որ «դարձվածային միավորի իմաստային ծավալը շատ լայն է, որը կարող է հանգեցնել վերջինիս շատ լայն կիրառմանը և ոչ թե մի քանի իմաստների առաջացմանը» /Գեղեր, 1959: 159/:

Մեր օրերում դարձվածային բազմիմաստությունը լեզվաբանական գրականության մեջ արդեն ընդունված լեզվական երևույթ է համարվում:

Ինչպես բառային միավորներին, այնպես էլ դարձվածքներին բնորոշ են ոչ միայն բազմիմաստությունը, այլ նաև մենիմաստությունը, տարբերակայնությունը, հոմանիշությունը, հականիշությունը, հարանունությունը և համանունությունը, որոնք արտացոլում են նրանց համակարգային հարաբերությունները ինչպես բառային, այնպես էլ դարձվածային մակարդակում:

Դարձվածային բազմիմաստությունը համարվում է լեզվի հարստացման միջոց: Համաձայն որոշ գիտնականների՝ լեզվի հարստության մասին կարելի է դաստել ոչ թե ըստ բառերի քանակի, այլ ըստ տվյալ բառի ունեցած իմաստների քանակի. մի քանի տարբեր իմաստ ունեցող բառը համարժեք է մի քանի տարբեր բառերի:

Դարձվածային միավորների բազմիմաստության խնդիրը գտնվել է լեզվաբանների ուշադրության կենտրոնում դեռևս դարձվածաբանության

գարգացման ակունքներից, այն է՝ քսաներորդ դարի սկզբից, երբ որոշ լեզվաբաններ սկսեցին քննության առնել դարձվածային իմաստի, այդ թվում նաև դարձվածքի բազմիմաստության խնդիրը:

Ավելի ուշ՝ մասնավորապես քսաներորդ դարի կեսերին, բազմիմաստության խնդիրը ավելի կենտրոնացավ հետևյալ հարցերի շուրջ:

ա) գոյություն ունի՝ «դարձվածային միավորի բազմիմաստություն» հասկացությունը, թե՝, համաձայն ավանդական մոտեցման, դարձվածքն այնուամենայնիվ օժտված է մեկ ընդհանուր իմաստով,

բ) ինչո՞վ են տարրերվում բազմիմաստ դարձվածային միավորները իմաստային լայն ծավալ ունեցող դարձվածքներից,

գ) ի՞նչ գործոններով է պայմանավորված դարձվածային միավորների բազմիմաստության զարգացումը:

Հստ լեզվաբանների մեծամասնության տեսակետի, յուրաքանչյուր դարձվածք կարելի է ուսումնասիրել որպես բազմիմաստության գործընթացի արդյունք: S. Չերդանցևան նույնպես հարում է տվյալ տեսակետին՝ նշելով, որ բազմիմաստությունը (հուն.՝ polysemy) լեզվական նշանի՝ մեկից ավելի իմաստ ունենալու արդյունք է, և եթե մենահաստությունը ենթադրում է նշանակիչի և նշանակյալի ամբողջական համընկնում, այսինքն՝ տարրական իմաստների այնպիսի խմբավորում, որն անփոփոխ կերպով կամ չնշին վերապահումներով քննորոշ է այս կամ այն լեզվական միավորին, ապա բազմիմաստությունն ենթադրում է, որ մի նշանակիչին հատուկ են մի քանի տարրական իմաստների խմբավորումներ /Վերданցևա, 2007: 111-112:/

Օրինակ՝ Աստծու եզ – 1. թշվառ, խեղճ; 2. ապուշ

Սատանի ձագ – 1. խարդախ, խարերա մարդ; 2. չարաճճի

Երկրորդ խնդիրը բազմիմաստ և իմաստային լայն ծավալ ունեցող դարձվածքների ուսումնասիրությունն է: Լայն իմաստային ծավալ ունեցող դարձվածային միավորները հարաբերակցվում են մեկ ընդհանուր, սակայն բավականին ծավալուն սիզնիֆիկատի հետ, որը դարձվածային իմաստի անփոփոխակն է /Ալեֆիրենկո, 1990: 27-28/: Այսինքն՝ երկու դարձվածային միավորներ, որոնց իմաստները միավորվում են մեկ ընդհանուր սիզնիֆիկատով, համարվում են ավելի շուտ իմաստային լայն ծավալ ունեցող, քան բազմիմաստ դարձվածքներ:

Նոր իմաստների առաջացումը արդեն գոյություն ունեցող դարձվածային միավորների մոտ պայմանավորված է ինչպես լեզվական, այնպես էլ արտա-լեզվական՝ սոցիալ-քաղաքական, տնտեսական և այլ գործոններով, սակայն դարձվածային բազմիմաստությունը հիմնականում որոշվում է լեզվական գործոնով: Ա. Նազարյանը դարձվածային բազմիմաստությունը համարում է երկրորդային իմաստային վերափոխման արդյունք, ինչպես վերափոխման արդյունքը, գեղչումը, հնարանությունը, իմաստի իրադրային ընդլայնումը, ժողովրդաստուգարանական աղճատումը և այլն /Նազարյան, 1987: 210/: Դարձվածային բազմիմաստությունը գուգահետ և հաջորդական վերափոխման արդյունք է, այսինքն՝ դարձվածային միավորի յուրաքանչյուր նոր իմաստի առաջացումը իրականանում է ելակետային, ազատ կապակցության հիման վրա, որի

դեպքում վերջիններիս իմաստային կապը միջնորդավորված է, այն է՝ տվյալ դարձվածքի իմաստը կարելի է վերականգնել միայն նշված ազատ կապակցության իմաստի միջոցով: Ըստ Վ. Ժուկովի, դարձվածային յուրաքանչյուր առանձին իմաստ ստեղծվում է միևնույն ազատ կապակցության հաջորդական փոխաբերականացման արդյունքում՝ առանձին իմաստների համար ծառայելով որպես փոխաբերականացման ընդհանուր աղբյուր: Սա է պատճառը, որ նրա առանձին իմաստների միջև կա սերտ իմաստային կապ /Ժյուկով, 1978: 132/:

Եթե դարձվածքը ձեռք է բերում նոր իմաստ միևնույն ազատ կապակցության հիման վրա, ապա տվյալ կապակցությունը պիտի ունենա կենդանի ներքին ձև: Թերևս դա յուրաքանչյուր զուգահեռ վերահմատավորման նախապայմանն է, սակայն շատ դեպքերում դարձվածային միավորները ձեռք են բերում նոր իմաստ նույնիսկ իրենց պատկերավորությունը կորցնելուց հետո:

Դարձվածային բազմիմաստությունն ուսումնասիրելիս հարկ է նաև մանրամասն քննության առնել «դարձվածային հոմանիշ» և «դարձվածային տարբերակ» հասկացությունները, քանի որ վերջիններս սերտորեն փոխկապակցված են:

Դարձվածային տարբերակները լեզվաբանական գրականության մեջ հայտնի են նաև որպես նույնիմաստ դարձվածային միավորներ, որոնք տարբերվում են բազմիմաստներից այն տարբերակից հատկանիշով, որ նույն դարձվածքի տարբեր ձևերն են և արտահայտում են միևնույն իմաստը: Դարձվածային տարբերակը, ինչպես նաև դարձվածային բազմիմաստությունը, լեզվի դարձվածային ֆոնդի հարստացման կարևոր միջոցներ են: Ըստ Շանսկու, «դարձվածային միավորների տարբերակները նրա բառաբերականական տեսակներն են, որոնք նույնն են իրենց իմաստով և իմաստային ձոլվածության աստիճանով» /Շանսկոյ 1985: 50/:

Ա. Գ. Նազարյանն /Հազարյան 1987: 225/ առանձնացրել է դարձվածային տարբերակի հետևյալ տարբերակից հատկանիշները՝

1. պատկերի միասնականություն,
2. նշողական-նշանակողական իմաստի ընդհանրացում,
3. լեզվում կատարած գործառույթի և կարգային (բառաբերականական) իմաստի համընկնում,
4. իմաստների քանակի համընկնում,
5. բառային անփոխխակի առկայություն:

Առաջին երեք հատկանիշները դասվում են պարտադիր հատկանիշների շարքում, իսկ վերջին երկուսը՝ կամընտրականների: Վերջին տարբերակից հատկանիշն ընդգծում է այն կարևոր հանգամանքը, որ դարձվածային տարբերակների կազմում, ի տարբերություն տվյալ տարբերակների կրած կառուցվածքային փոփոխությունների, գոնե մեկ բաղադրիչը պետք է մնա անփոխիս:

Օրինակ՝ Աստված հեռու անի
Աստված հեռու պահի
Աստված հետ ու հեռու անի
Աստված զերծ պահի

{
Աստված չանի}

Día de dios { Աստծուն նվիրված տոն
Día del Señor

Սուազին օրինակում «Աստված»-ն է տվյալ անփոփոխակ բաղադրիչը, իսկ երկրորդում՝ “día”-ն:

Ինչպես նշում է Ա. Նազարյանը, «ըստ նշողական-նշանակողական իմաստի ընդհանրության, դարձվածային տարբերակները նույնն են իմաստով, սակայն տարբերվում են իրենց հուգարտահայտչականությամբ և ոճական երանգավորմամբ» /Հազարյան, 1987: 226/:

Օրինակ՝

Աստված բարին կատարի – մեկի նպատակի բարեհաջող իրականացման ցանկություն

Աստված բարին հիշե – բարեմաղթանք մի մարդու համար, ում մասին խոսում կամ հիշում են

Երկու դարձվածային միավորներն ել արտահայտում են բարեմաղթանք, սակայն տարբերվում են ոճական նրբերանգներով:

Դարձվածային տարբերակների հարցը անզերենի լեզվանյութի հիման վրա գիտական ուսումնասիրության առարկա է դարձել Ա. Վ. Կունինի աշխատություններում, ըստ որի «Դարձվածային տարբերակները դարձվածային միացությունների տարատեսակներ են, որոնք նույնական են իրենց իմաստների որակով ու քանակով, ոճական ու շարահյուսական գործառույթներով, որիշ բառերի հետ կապակցելիությամբ, ունեն բառային ընդհանուր անփոփոխակ մասսամբ տարբեր բառային կազմի առկայությամբ, կամ ել բառաձների կամ շարադրասության տարբերակումով» /Կոնսի, 1970: 62/:

Համաձայն Սովորազյահ, «Որպեսզի երկու տարբեր դարձվածային միավորներ համարվեն դարձվածային տարբերակներ, պետք է գտնվեն միևնույն գործառական լեզվի սահմաններում, չպիտի տարբերվեն իրենց իմաստներով, լինեն ազատ և անկախ այն համատեքստից, որում կիրառվում են, իրենց կառուցվածքով և բաղադրիչների կազմությամբ մասնակիորեն համընկնեն և լինեն կայուն (ֆիքսված), այն իմաստով, որ մի սահմանակակ և կայուն շարքի մաս են կազմում /Zuluaga, 1980: 225/»:

Չնայած այն փաստին, որ դարձվածային տարբերակները սովորաբար ունեն նույն իմաստը, նույն պատկերը և լեզվում կատարում են նույն գործառույթը, այնուամենայնիվ, շատ հազվադեպ լեզվի պատմական զարգացման տարբեր փուլերում դարձվածային տարբերակներից մեկը կարող է ձեռք բերել մի նոր իմաստ, որը չի տարածվում այդ շարքին պատկանող մյուս տարբերակների վրա՝ զարկ տալով դարձվածային բազմիմաստությանը:

Օրինակ՝	{	Խարդախ, խարերա մարդ
Սատանի ձագ		
Սատանի ճուտ		
Սատանի լակոտ		
Սատանի պիանել		

«Սատանի ձագ» դարձվածային տարբերակը հետազայում ձեռք է բերել նաև երկրորդ (անարգական արտ.) և երրորդ (չարաճճի) իմաստները՝ մտնելով բազմիմասության դաշտ, որի դեպքում դարձվածային այս տարբերակի մեկ նշանակիչին համապատասխանում են երկու և ավելի նշանակյալներ: Այն նաև ունի իր համանուն տարբերակը (սատանի ձագ-սևուկ), որը, լինելով համագիր համանուն և պատկանելով միևնույն քերականական կարգին, վերջիններից տարբերվում է իր արտահայտած իմաստով:

Հարկ է նշել, որ տարբերակայնությունը հիմնականում բնորոշ է պատկերավոր դարձվածքներին, թեև շատ հազվադեպ կարելի է հանդիպել նաև ոչ պատկերավոր դարձվածքներում, և գրեթե չի դիտարկվում դարձվածային հմարանություններում:

Տարբերակայնության ամենակարևոր գործոններից մեկն այն է, որ անփոփոխակը միևնույն երևույթի վերացարկված նշանակությունն է, ի տարբերություն իր կոնկրետ ձևափոխման/տարբերակման (մողիֆիկացիա) կամ ձևափոխիչի, այն է՝ փոփոխակի: Անփոփոխակը որպես առանձին առարկա հանդես չի գալիս, ոչ էլ ներկայացնում է մի ամբողջ դաս, այլ, ավելի շուտ, միասեռ առարկաներին վերաբերող դասի անվանումն է:

Տարբերակայնությունը լեզվի անկայունության, ներքին փոփոխության ու շարժի դրսորումն է, ինչպես նաև վերջինիս պատմական փոփոխության խանը:

Ն. Կուրչատկինան և Ա. Սուպրունը առաջարկում են դարձվածային տարբերակների հետևյալ դասակարգումը /Կրչատկինա, Սուպրուն 2008: 39-52/

1. իմաստային տարբերակներ,
2. բառային տարբերակներ,
3. ձևաբանական տարբերակներ,
4. շարահյուսական տարբերակներ,
5. քանակական տարբերակներ:

Ելնելով դարձվածային տարբերակների դասակարգման այն սկզբունքներից, որ առաջադրել է Ա. Նազարյանը /Նազարյան, 1987: 228-231/, «աստված» և «սատանա» բաղադրիչներով դարձվածքների իմաստային դաշտերում առանձնացրել ենք դարձվածային տարբերակների հետևյալ սիպերը.

I. Կառուցվածքային-քերականական տարբերակներ

Այս շարքի մեջ են մտնում այն դարձվածային միավորները, որոնք ունեն միևնույն բառային կազմը, բայց տարբերվում են իրենց քերականական առանձնահատկություններով:

Այս շարքում առանձնանում են հետևյալ ենթատեսակները.

ա) Զևսանական տարբերակներ, որոնք առանձնանում են իրենց ձևաբանական առանձնահատկություններով: Այս կարգի տարբերակայնությունը կարող է արտահայտվել հետևյալ կերպ՝

1. գոյականական բաղադրիչի եզակի և հոգնակի կիրառության ճանապարհով.

Օրինակ՝ qué diablo/ qué demonio/ qué diablos/diantres/demonios (գրողը տանի)

2. հոդի զեղման ճանապարհով.

Օրինակ՝ el demonio cargue contigo/demonio cargue contigo, el demonio que le aguante/ demonio que le aguante, por amor de Dios/ por el amor de Dios, Ustananıն ճվերը կոտրեցի/ Ustananıն ճվերը կոտրեցի

3. տարբեր նախդիրների կիրառության ճանապարհով.

Օրինակ՝ como arte de diablo/ por arte de Diablo

4. նախդիրի զեղման ճանապարհով.

Օրինակ՝ de la piel de demonio/ la piel de demonio

5. գյականական բաղադրիչի իգական և արական սեռի կիրառության ճանապարհով.

Օրինակ՝ Nuestro Señor/ Nuestra Señora (Virgen María)

բ) Չարահյուսական տարբերակներ, որոնք առանձնանում են իրենց շարահյուսական կառուցվածքով, մասնավորապես՝ բաղադրիչների շարահյուսական հարաբերություններով և գործառույթներով:

Մեր կատարած ուսումնասիրության շրջանակներում երկու լեզվում էլ նմանատիպ տարբերակներ չենք հայտնաբերել:

գ) Դիմացին տարբերակներ, որոնք տարբերվում են զիսավորապես իրենց շարադասությամբ՝ շազդելով բաղադրիչների շարահյուսական հարաբերությունների վրա: Օրինակ՝ Dios sabe/Sabe Dios, Փառք Աստծոն/ Աստծուն փառք, Աստված առաջ/ Առաջ Աստված

II. Բառային տարբերակներ

Այս խմբին պատկանող դարձվածքները տարբերվում են իրենց բառային կազմով: Փոփոխվող բաղադրիչ կարող են լինել զաղափարանիշ հոմանիշները: Օրինակ՝ Idear con el demonio/ Inventar con el demonio, Demonio que le aguante/ Demonio que le resista, Hijo/varón de Dios, Que diablos/diantres, Vicario de Dios/ Jesucristo, Como Cristo/Dios es mi padre, Al diablo/demonio, (de) La piel de Satanás/Barrabás/diablo, Dar cada golpe que Dios trita/Dar cada golpe que Dios tiembla, Աստծոն/Քրիստոսի մոտ/քով ուղարկել/դրկել, Աստծոն/Քրիստոսի/Երկնի սիրուն, Սատանան/Սաղայելը զիտե, Սատանի պես/նման, Աստված/Տեր մի արասցե, Սատանի գիրկն/գոգն լընկել, Սատանի ծին թամբել/թամբել/հեծնել/նստել՝ ցած չգալ, Աստված ողջ/սաղ պահե, Սատանայի գիրկը գլորել/Սատանայի գիրկն ուղարկել:

Այս խմբին են դասվում նաև այն դարձվածային միավորները, որոնց փոփոխվող բաղադրիչները հոմանիշ են միայն տվյալ դարձվածքներում: Օրինակ՝ Dar al diablo/ Mandar al diablo, Dejar a alguien hecho un Cristo/ Poner a alguien hecho un Cristo, Más grande/largo que la voluntad de Dios, Por esas calles/esos mundos/esos trigos de Dios, Donde Cristo dio/pegó las tres voces, Que de Dios goce/haya, Estarle/sentarse/venirle (a alguien) como un par de pistolas a un Santo, Սատանա խարող/խաղանող, Աստված այն օրը չանե/չտա/չցուցանե, Աստծու տվածով կերակրել/հյուրասիրել:

Տվյալ խմբին պատկանող դարձվածքների փոփոխվող բաղադրիչները կարող են արտահայտվել նաև տարբեր քանակական և դասական թվականներով: Խաղաներենում այն կարող է արտահայտվել նաև դերանուններով: Օրինակ՝ Al diablo/ A todos (անորոշ դերանուն) los diablos/ A mil (քանակական թվական) diablos:

Տվյալ դարձվածային տարբերակին պատկանող դարձվածքներում փոփոխվել կարող են միանգամից մի քանի բաղադրիչ (Ser uno como Dios quiere/ha hecho/que todo lo sabe/adivina, Llamarle Dios a su seno/para sí), որոնք կարող են մեկնաբանվել իրենց ներքին ձևով կամ շատ հազվադեպ փոփոխվում են նաև բոլոր բաղադրիչները, սակայն մեր կատարած ուսումնասիրության մեջ չենք հանդիպել նմանատիպ դեպքերի:

III. Ոճական տարբերակներ

Տվյալ խմբին են պատկանում այն դարձվածային միավորները, որոնց փոփոխվող բաղադրիչները ոճական հոմանիշներ են: Օրինակ՝ Entregar el alma a Dios/ Entrgar la osamenta a Dios (հոգին ավանդել, մահանալ): Հայերենում նմանատիպ օրինակ չի դիտարկվել:

IV. Քանակական տարբերակներ

Այս դարձվածային միավորները աչքի են ընկնում առաջադաս, միջադաս կամ հետադաս մեկ կամ մի քանի բաղադրիչների գեղշմանք, շատ հազվադեպ նաև որոշ բաղադրիչների ավելացմանք: Ըստ Π. Ρեդիրյանի, տվյալ դարձվածային միավորները կազմվում են բաղադրիչների հավելադրումով կամ գեղշումով (համառոտումով) /Քեդիրյան 1973:215/: Վերջիններս նոյն դարձվածքի ամբողջական կամ կրծատ ձևերն են, որոնք երբեմն որոշ դարձվածաբանների կողմից նույնացվում են դարձվածային հոմանիշի հետ: Օրինակ՝ Աստծու բարել կտրել- բարել կտրել (բարելել), Աստծու բարել մոռանալ/բարել մոռանալ: Շատ հազվադեպ դեպքերում որոշ բաղադրիչներ ավելանում են: Օրինակ՝ No es Dios viejo/ No se ha muerto Dios de viejo (ոչինչ կորած չէ, ամեն ինչ դեռ առջևում է), Armar un Cristo/ Armar la de Dios es Cristo, A la de Dios/ A la buena de Dios (թեթևամտորեն), Irse uno con Dios/ Irse uno mucho con Dios (հրաժեշտ տալ), Աստված հեռու/հետ ու հեռու անի, Աստծո կրակը թափվել/Աստծո կրակը գլխին թափվել, Աստված տա/Աստված բարի վայելում տա և այլն:

V. Ուղղագրական տարբերակներ

Տվյալ խմբին պատկանող դարձվածային միավորները տարբերվում են միանցից իրենց ուղղագրությամբ, որը չի ազդում ո՞չ վերջիններին կառուցվածքի, ո՞չ էլ իմաստի վրա: Օրինակ՝ Սադայելի հետ խնամություն անել/ Սադոնի հետ խնամություն անել:

Ըստ Α. Սուքիասյանի և Ο. Գալստյանի, դարձվածային տարբերակ չի կարելի համարել միևնույն դարձվածքի կազմի մեջ մտնող բաղադրիչների ուղղագրական և բառային աննշան տարբերությունները, օրինակ՝ Աստված (կամ Աստծո) հեռու անի: Դարձվածային տարբերակը բաղադրիչների

միևնույն, հաստատուն կազմի առկայությամբ այս կամ այն բառ-բաղադրիչի քերականական փոփոխական է, ինչպես նաև դարձվածքի բաղադրիչը հանդիսացող բարբառային և փոխառյալ բառերն ու բառաձևերը գրականով փոխարինելու դեպքերը: Դարձվածային տարբերակ կարող են համարվել այն տեսակները, որոնց բաղադրիչը կամ բաղադրիչներն ունեն քերականական տարբերակ (դարձվածային միավորի որևէ կոնկրետ բաղադրիչի կիրառություն, ինչպես եզակի, այնպես էլ հոգնակի թվում, երբեմն տվյալ բաղադրիչը կամ բաղադրիչները կարող են հանդես գալ տարբեր հոլովաճակներում և այլն):

Հայերենում դարձվածային տարբերակ է համարվում նաև արևմտահայերեն տարբերակը արևելահայերենով փոխարինելու դեպքը կամ գրաբարյան բարացած ձևերով կազմված դարձվածքը և վերջինիս ժամանակակից հայերենի համարժեքը, օրինակ՝ Աստված ընդ քեզ և Աստված քեզ հետ, Աստված այսինչին վերու և Աստված այսինչին վերցնի:

Դարձվածքի բաղադրիչներից մեկը կամ մեկից ավելին կարելի է փոխարինել նոյն նշանակությունն ունեցող բառով կամ բառերով, սակայն բայի դեպքում հայերենում այն կարող է փոխարինվել նոյն իմաստությունով մեկ այլ հարադրավոր բայով, օրինակ՝ Աստված կյանքիդ օրերը երկարի կամ Աստված կյանքիդ օրերը երկար անի:

Դարձվածային ֆոնդի հարստացման երրորդ միջոցը դարձվածային հոմանիշությունն է, որը երբեմն նոյնացվում է նաև դարձվածային տարբերակի հետ: Սակայն, եթե դարձվածային տարբերակ են համարվում միևնույն դարձվածքի տարբեր ձևերը, ապա դարձվածային հոմանիշները հանդես են գալիս որպես լեզվի առանձին և անկախ միավորներ /Հազարյան 1987: 226/: Դարձվածային տարբերակի և դարձվածային հոմանիշի գլխավոր տարբերակից հատկանիշն այն է, որ դարձվածային հոմանիշները կառուցվում են տարբեր պատկերների հիման վրա, այսինքն՝ առաջանում են տարբեր աղբյուրներից: Հոմանիշ դարձվածքների ներքին ձևի բառահմաստային կազմը պետք է տարբեր լինի: Եթե այն համընկնում է կամ գրեթե համընկնում է, ապա տվյալ դարձվածքները չեն գիտակցվում որպես հոմանիշներ, այլ միևնույն դարձվածքի տարբերակներ են:

Վ. Մոկիենկոն նոյնպես ուսումնասիրել է դարձվածային հոմանիշության խնդիրը և փաստում է, որ դարձվածքի բաղադրիչների բառային փոփոխությունը ոչ միշտ է փոխում դարձվածային միավորի պատկերը կամ բնույթը: Ըստ նրա, հաճախ բառ-հոմանիշները կարող են փոփոխվել, որոնք ապահովում են պատկերավոր ներկայացման կայունությունը: Այդ բառերի շրջանակը կենդանի խոսքում շատ լայն է /Մոկիենկո, 1989: 31/:

Ի տարբերություն բառային հոմանիշի, որն ավելի վերացարկված և ընդհանուր ձևով է արտահայտում հասկացություններ, հատկանիշներ ու երևույթներ, դարձվածային հոմանիշն ավելի կոնկրետ է արտահայտում հասկացություններ (հատկանիշներ ու երևույթներ), որը բացատրվում է դարձվածային միավորի յուրահատկությամբ: Լինելով լեզվի արտահայտչականության կարևորագույն միջոց և լեզվառական անհրաժեշտ տարր,

դարձվածքները հանդես են գալիս բանավոր և գրավոր խոսքի բոլոր ոճերում՝ խոսքը դարձնելով պատկերավոր, կուռ և արտահայտիչ՝ նրան հաղորդելով դիպուկություն ու սեղմություն։ Այս առանձնահատկությամբ է որոշվում դարձվածային միավորի բարդ իմաստային կառուցվածքը, այդ թվում նաև դարձվածային հոմանիշներինը, որոնք, լինելով փոխկապակցված ընդհանուր իմակով (գերիմակով), աչքի են ընկնում իրենց ուրույն իմաստային և ոճական առանձնահատկություններով, որոնք զգալիորեն բուլացնում են հոմանիշային շարքի անդամների միջև իմաստային կապը։

Ինչպես արդեն նշվեց, դարձվածային հոմանիշները բնորոշվում են իմաստների մերձափորությամբ և ընդհանուրությամբ։ Իրենց քերականական կառուցվածքով, ըստ Վ. Ս. Վինօգրադովի, հոմանիշ դարձվածքները կարող են լինել երեք տեսակ /Վինօգրադով, 2000: 156/։

Ամենաքոյլ իմաստային կապը սովորաբար ունենում են տարակառույց դարձվածային հոմանիշները, որոնք տարբերվում են ոչ միայն իրենց բառային կազմով, այլ նաև քերականական կառուցվածքով։ Օրինակ՝ A Dios y a dicha/ A la buena de Dios (Աստծո կամոք); Dios nos asista/Dios nos la depare buena/Dios nos coja confesados/Dios nos tenga de su mano (Պահպանի՛ր մեզ, Տե՛ր Աստված); Սատանայի հետ սխու ու սխտոր ուտող/ Սատանային քնից հանող (Խորամանկ, խարդախ); Աստծո ձեռքը մեկի վրա ծանրանալ/ Աստծո կրակը թափել (Աստված մեկին պատժել)։

Որոշակիորեն ավելի սերտ կապով են փոխկապակցված այն դարձվածային հոմանիշները, որոնք ունեն մերձավոր կառուցվածք և մասնակիորեն նման բառային կազմ։ Օրինակ՝ No nos oiga Dios/Sea sordo el diablo (սատանի ականջը խուլ); Tan amigos como Dios y el diablo/ como la cruz y el diablo (շուն ու կատու լինել); Աստծու մոտ գնալ/Աստծու փայ դառնալ (մահանալ)։

Ամենասերտ կապով փոխկապակցված են այն դարձվածային հոմանիշները, որոնք ունեն ընդհանուր բաղադրիչ կամ բաղադրիչներ և միևնույն շարահյուսական կառուցվածքը։ Օրինակ՝ A la mano de Dios/A la paz de Dios (Աստված քեզ հետո); Llevárselle a uno los demonios/revestírsele a uno el demonio (զայրանալ); Սատանայի ծիծ կերած/Սատանայի կաթ ծծած (շարաբար, խորամանկ); Վարագույրի վրայի սատանա/Ձարե ծորի սատանա (շատ տգեղ մարդ): Սակայն այս դեպքում էլ խոսքը չի գնում բացարձակ հոմանիշության մասին, քանի որ պատկերների տարբերությունը որոշակիորեն ազդում է դարձվածային միավորների իմաստների վրա։

Լեզվաբանական գրականության մեջ հստակորեն առանձնացնում են դարձվածային տարբերակայնությունը դարձվածային հոմանիշությունից։ Ըստ Վ. Շուկովի, «դարձվածային հոմանիշները՝ չափազանց մոտ իմաստ ունեցող դարձվածային միավորներն են, որոնք, որպես կանոն, վերաբերում են միևնույն խոսքի մասին և աչքի են ընկնում մասնակի կամ միևնույն բառադարձվածային համադրությամբ, առկայն տարբերվում են իրարից իմաստային կամ ոճական նրբերանգներով, երբեմն որոշ դարձվածքներում երկու հատկանիշները հանդես են գալիս միասին» /Ժյոկով, 1986:178/։

Իսկ հայտնի իսպանացի դարձվածաբան Կորպաս Պաստորի սահմանմամբ, «Դարձվածային հոմանիշներն առանձնանում են ամբողջական կառուցվածքային համապատասխանությամբ և բառ-բաղադրիչի մասնակի նույնությամբ» /Pastor, 1996: 28/:

Հոմանիշ դարձվածքներով հարուստ են հատկապես խոսակցական լեզուն, բարբառները, որտեղից էլ հաճախ անցնում են գրական լեզվին:

Հոմանիշ դարձվածքները հատուկ քննության առարկա են Ա Սուրբիասյանի աշխատություններում, որն առանձնահատուկ ուշադրություն է դարձնում բառային արժեք ունեցող հոմանիշ դարձվածքներին, քանի որ հոմանիշ դարձվածքների սահմանման համար Սուրբիասյանը ելակետ է ընդունել բառային հոմանիշությունը: Ըստ նրա, հոմանիշ դարձվածքների շարքում իրենց կիրառությամբ և կառուցվածքային առանձնահատկությամբ մեծ թիվ են կազմում բառային արժեք ունեցող կամ այսպես կոչված տրամաբանական հասկացություն արտահայտող դարձվածային միավորները, որոնք օժտված են բառային միավորին ներհատուկ բոլոր առանձնահատկություններով՝ բառահմաստային, քերականական և ոճական: Տվյալ դարձվածային միավորների հիմնական տարրերակի առանձնահատկությունն այն է, որ դրանք հոմանիշների շարքեր կարող են կազմել ինչպես իրար հետ, այնպես էլ իրենց համարժեք բառերի հետ:

Մյուս կողմից բառային հոմանիշության և դարձվածային հոմանիշության տարրերակման հարցը շարունակում է մնալ վիճահարույց: Համաձայն մեկ այլ տեսակետի, հիմնական տարրերակիշ հատկանիշն այն է, որ եթե բառային հոմանիշությունը մեծապես կախված է բառի փոխարերական իմաստից, ապա փոխարերականությունն ու պատկերավորությունը հանդիսանում են դարձվածքի հիմնական հատկանիշը: Ա. Աբրահամյանը նույնպես քննել է տվյալ թեման, նշելով, որ «դարձվածքներին հատուկ է հոմանիշությունը, որով արտահայտվում են իմաստային և ոճական նրբերանգներ: Այդ տարրերություններն երբեմն հասնում են այնպիսի նրբության, որ դժվար են զգացվում՝ մոտենալով այսպիսով նույնանիշության, սակայն բոլոր դեպքերում դրանց միջև որևէ տարրերություն լինում է (եթե ոչ իմաստային, ապա գոնե կիրառական)» /Աբրահամյան, 1978: 158/:

Այսպիսով, ուսումնասիրելով նյութը, կարելի է հանգել հետևյալ եզրահանգումներին:

Դարձվածային բազմիմաստությունը ենթադրում է դարձվածային միավորի նախատիպի նոր իմաստների ձեռքբերում:

Դարձվածային տարրերակմանը միևնույն դարձվածքի տարրեր ձևերն են, որոնք ունեն զրեթե նույն բառարերականական կազմը, արտահայտում են նույն իմաստը և հայտնի են նաև որպես նույնանիշության, սակայն բոլոր դեպքերում տարրերվելով մեկ կամ երկու բաղադրիչով, երբեմն էլ նաև որոշ բաղադրիչների գեղչումով:

Դարձվածային հոմանիշները արտահայտում են միևնույն իմաստը, սակայն տարրերվում են իրենց բառարերականական կազմով. հոմանիշ դարձվածային միավորների կառուցվածքները կարող են համընկնել, տար-

թերվել կամ լինել մերձավոր: Վերջիններս կարող են առաջանալ տարբեր աղբյուրներից՝ տարբեր պատկերների հիման վրա: Հոմանիշ դարձվածքները փոխվազգված են մեկ ընդհանուր իմակով (գերիմակով), սակայն տարբերվում են միմյանցից ոճական առանձնահատկություններով:

Դարձվածքների իմաստային կառուցվածքի համակարգային հարաբերությունները արտացոլող այս երեք տեսակներն ել ծառայում են լեզվի դարձվածային ֆոնդի հարստացմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Corpus Pastor G. Manual de fraseología española // Biblioteca Románica Hispánica. Manuales, 76, Madrid, Gredos, 1996.
2. Zuluaga A. Introducción al estudio de las expresiones fijas // Studia Románica et Linguistica 10. Francfort-Berna-Cirencester, 1980.
3. Արքահանյան Ս. Հայոց լեզու (Բառ և խոր), Երևան, 1978:
4. Բենիդյան Պ. Ս. Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Երևան, Լույս, 1973:
5. Սուրբիասյան Ա. Մ., Գալստյան Ս. Ա. Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Երևան, ԵՊՀ Հայտարակչություն, 1975:
6. Алефиренко Н. Ф., Валюх З. О. Проблемы русской и общей фразеологии. Новгород: Наука, 1990.
7. Алефиренко Н. Ф., Семененко Н. Н. Фразеология и паремиология. М.: Наука, 2009.
8. Виноградов В. С. Грамматика испанского языка (Практический курс). М.: Наука, 2000.
9. Гепнер Ю. Р. Очерки по общему и русскому языкознанию. Харьков: Харьк. гос. пед. ин-т им. Г. С. Сковороды, 1959.
10. Жуков В. П. Русская фразеология. М.: Пед. ин-т, 1986.
11. Жуков В. П. Семантика фразеологических оборотов. М.: Пед. ин-т, 1978.
12. Кунин А. В. Английская фразеология. М.: Высшая школа, 1970.
13. Курчаткина Н. Н., Супрун А. В. Фразеология испанского языка. М.: Либроком, 2008.
14. Мокиенко В. М. Славянская фразеология. М.: Высшая школа, 1989.
15. Назарян А. Г. Фразеология современного французского языка. М.: Высшая школа, 1987.
16. Шанский Н. М. Фразеология современного русского языка. М.: Спец. лит., Рус. яз. и лит., 1985.
17. Черданцева Т. З. Проблемы идиоэтнической фразеологии. М.: URSS: ЛКИ, 2007.

А. КУБАНЯН – *Проблемы полисемии, вариантности и синонимии систем фразеологических единиц с компонентами «бог» и «черт».* – В статье представлены результаты полисемантических, синонимических и вариантных фразеологических единиц с компонентами «бог» и «черт» в испанском и армянском языках. Целью статьи является детальное изучение и выявление различий между тремя лингвистическими феноменами в двух изучаемых языках, исходя из сопоставительно-сравнительного анализа.

Ключевые слова: фразеологическая полисемия, лексический вариант, вариантность, широкозначность, сигнификат, фразеологическая синонимия, позиционный вариант, квантивативный вариант

A. KUBANYAN – *The Problems of Polysemy, Variance and Synonymy of the Systems of the Phraseological Units with the Components “God” and “Devil”.* – The present paper is devoted to the study of polysemy, synonymy and variance of phraseological units with the components “god” and “devil” in Spanish and Armenian. The aim of the paper is to reveal the differences between the above mentioned linguistic phenomena, based on the contrastive-comparative analysis.

Key words: phraseological polysemy, lexical invariant, variance, wide meaning, significant, phraseological synonymy, positional variant, quantitative variant

Նոճա ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Երևանի պետական համալսարան

ԿԱՆԱՑ ԵՎ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԽՈՍՔԱՅԻՆ ԱՌԱՋԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ԹԵՐԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆՐԱՆՑ ԽՈՍՔՈՒՄ

Գենդերի և լեզվի վերաբերյալ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տղամարդիկ և կանայք խոսում են տարրեր կերպ, այսինքն նրանք նախընտրում են լեզվական տարրեր միջոցներ և ոճեր իրենց միտքն արտահայտելու համար: Սույն հոդվածի նպատակն է ուսումնասիրել տղամարդկանց և կանանց խոսքը, բացահայտել երկու սեռերի ներկայացուցիչների խոսքային առանձնահատկությունները: Հոդվածում ուսումնասիրվում են թերասուրյունները տղամարդկանց և կանանց խոսքում, պարզաբանվում, թե որ սեռին է ավելի բնորոշ կիրառելու այդ լեզվական ռազմավարությունը:

Բանայի բառեր. հաղորդակցային տարրերություններ, տարրեր լեզվական միջոցներ, բնդիհատում, թերասուրյուններ, արական և իգական սեռ, տղամարդիկ և կանայք, գենդեր

Կանանց և տղամարդկանց հաղորդակցային տարրերությունները երկար ժամանակ գտնվել են գիտնականների ուսումնասիրության կենտրոնում /Lakoff, 1975; Coates, 1986; Aries, 1976/: Հիմնվելով երկու սեռերի խոսքային առանձնահատկությունների վերաբերյալ իրենց կատարած հետազոտությունների վրա՝ գիտնականները պնդում են, որ լեզվի միջոցով մատնանշվում է տղամարդկանց խոսքի գերակայությունը կանանց խոսքի նկատմամբ, և տղամարդկանց լեզուն համարվում է նորմա, իսկ կանանց լեզուն դիտարկվում է որպես նորմայից շեղված՝ համարվելով ստորադրյալ (inferior): Տղամարդիկ նախընտրում են հաղորդակցման «մրցակցային» ոճը (competitive style of discourse). Արանք հակված են հակառակվելու խոսակցի կարծիքն և առաջ քաշելու իրենց սեփական նորմերը: Կանայք նախապատվություն են տալիս դիսկուրսի այսպես կոչվող «համագործակցական» ոճին (cooperative style of discourse)՝ խոսակցի հետ կիսելով միևնույն կարծիքը և այդպիսով գրուցակիցների միջև հաստատելով համերաշխություն /Aries, 1976; Coates, 1996; Coates, 1998/:

Սկած մանկությունից՝ արական և իգական սեռերի երեխաներին վերաբերում են տարրեր կերպ, նրանց հետ գրուցում են տարրեր լեզվական միջոցների կիրառությամբ: Դա հանգեցնում է նրան, որ տղա և աղջիկ երեխաները ձևավորում են իրենց խոսքը տարրեր լեզվական միջոցներով: Կարելի է ասել, որ նրանք մեծանում են տարրեր աշխարհներում, նույնիսկ եթե ապրում են միևնույն ընտանիքում: Տարրեր սեռի երեխաների համար նախատեսված խաղերը իրենց հերթին առաջնորդում են տղաներին և աղջիկներին կիրառելու խոսքային տարրեր կանոնները. տղաների մոտ զարգանում է մրցակցային (competitive) խոսքը, իսկ աղջիկների խոսքը առանձնանում է խոսակցի հետ համագործակցելու ձգտումով /Maltz and Borker, 1982/:

Վերջին քսան տարիների ընթացքում գենդերի վերաբերյալ կատարված ուսումնասիրությունները ցոյց են տալիս, որ խոսքում գերիշխողը արական սեռն է: Իզական սեռի ներկայացուցիչները լեզվի միջոցով փորձում են հաղթահարել իրենց խոսքի նկատմամբ կիրառվող գերակայությունը: Կանաց խոսքը արտացոլում է իրենց անվճռականությունը, համերաշխորթյուն հաստատելու հակվածությունը, խոսակցի նկատմամբ հարգանք դրսնորելու ձգտումը, խոսակիցներին համախմբելու ցանկությունը: Տղամարդկանց խոսքը մատնանշում է նրանց անկախությունը, խոսակցությունը վերահսկելու ձգտումը:

Ուսումնասիրելով տղամարդկանց և կանանց լեզվական տարրերությունները՝ գիտնականները առանձնացնում են երեք հիմնական մոտեցում՝ այսպես կոչվող **նվազեցնող** (deficit model - /Lakoff, 1975/), **գերիշխող** (dominance model - /Fishman, 1983/) և **տարրերություն մատնանշող** (difference model - /Coates, 1986; Tannen 1990/): Ըստ նվազեցնող մոդելի՝ կանանց խոսքը համարվում է ոչ լիարժեք իրենց սեռային դերի պատճառով: Գերիշխող մոդելի համաձայն՝ հաղորդակցության ընթացքում մատնանշվում է արական սեռի առավելությունը իզական սեռի նկատմամբ: Տարրերություն մատնանշող մոդելը առաջ է քաշում այն միտքը, որ տղամարդիկ և կանայք, ապրելով նույնիսկ միևնույն միջավայրում, ունեն միմյանցից տարրերվող մշակութային աշխարհներ: Սա բացատրվում է այն հանգամանքով, որ սեռերի տարանջատումը նաևկության տարիներից հանգեցնում է տղամարդկանց և կանանց խոսքային ոճերի և հաղորդակցական նպատելի տարրերությունների:

Վերջին տարիներին կանանց դերը հասարակության մեջ փոխվել է: Մեծ թվով կանայք ձգտում են աշխատելու, և նրանց նկատմամբ խտրականությունը նվազում է: Ավելին, խրախուսվում է կանանց առաջխաղացումը աշխատաշուկայում. նրանք գրադարձնում են բարձր պաշտոններ, հաջողությունների հասնում: Այսպես, օրինակ, ինչպես նշում են Դ. Գրեդոլը և Զ. Սվանը, կանանց բնորոշ միջանձնային համերաշխություն ստեղծելու ռազմավարության շնորհիվ հեռուստահաղորդավարութիւններին հաջողվում է ավելի բաց և արդյունավետ քննարկումներ անցկացնել /Graddol and Swann, 1989/:

Տղամարդկանց և կանանց խոսքում լեզվական միջոցների և ոճի ընտրությունը պայմանավորված է տվյալ համատեքստով, տվյալ խոսքային իրադրությամբ, սակայն գոյություն ունեն խոսքային առանձնահատկություններ, որոնք ավելի հաճախ նկատելի են տղամարդկանց խոսքում, ինչպես նաև լեզվական առանձնահատուկ ծներ, որոնք բնորոշ են կանանց խոսքին: Քննարկենք դրանք՝ վեր հանելով երկու տարրեր սեռերին բնորոշ լեզվական միջոցները և ոճերը:

Ուսումնասիրելով կանանց և տղամարդկանց խոսքը՝ մի շարք գիտնականներ գալիս են այն եզրահանգմանը, որ խառը գենդերային հաղորդակցության ընթացքում տղամարդիկ ավելի հաճախ են ընդհատում կանանց /McMillan et al., 1977; West and Zimmerman, 1983/: Ըստ գիտնականների՝ հաղորդակցության ընթացքում տղամարդիկ լեզվահատում են կանանց խոսքը՝ առանց հաշվի առնելու նրանց սոցիալական դիրքը: Խոսքն ընդհատում են զրոյցի

ուժեղ մասնակիցները՝ փորձելով խոսակցին զրկել խոսքի իրավունքից և դեկապարելով զրոյցը:

Արական սեռի ներկայացուցիչներն ավելի հաճախ են կիրառում արտահայտություններ, որոնց միջոցով հնարավոր է ուղղողել զրոյցը /Zimmerman and West, 1975; Zimmerman and West, 1987/: Օրինակ՝ My personal view is..., I have a good idea...: Տղամարդիկ հակված են ուղիղ հայտարարություններ անելու /Fishman, 1983/, «ինչպես նաև հակառակվելու խոսակցի կարծիքին» /Hirschman 1973: 11/: Արական սեռին բնորոշ է նաև խոսակցի մեկնաբանությունները արհամարհելը՝ կամ ընդհանրապես չպատասխանելով /Hirschman, 1973/ կամ տալով «ուշացած կարճ պատասխան» (delayed minimal response) /Zimmerman and West, 1975/: Այս ամենից կարելի է հետևություն անել, որ իգական սեռի հետ հաղորդակցվելիս տղամարդիկ մատնանշում են իրենց իշխանությունը կանաց նկատմամբ հատկապես դեմ առ դեմ հաղորդակցության ժամանակ:

Տղաները կիրառում են այսպես կոչվող զրոյցը սրող ուղեցույց բառեր (aggravated directives), այսինքն բառեր, որոնք ակնհայտ կերպով մատնանշում են զրոյցակիցների միջև կարգավիճակային տարրերություններ: Նրանք հաճախ կիրառում են այսպիսի արտահայտություններ՝ you shut up your big lips, stand away և այլն: Ըստ Չ. Գուրվինի՝ տղաների խոսքում առկա ուղեցույց բառերը մատնանշում են զրոյցակիցների տարրերությունները և շեշտում անհատական իրավունքները /Goodwin, 1992/:

Վերը նշված առանձնահատկությունները ցույց են տալիս, որ արական սեռի ներկայացուցիչները նախընտրում են լեզվական այնպիսի միջոցներ և ոճեր, որոնք ցույց են տալիս նրանց գերակայությունը հակառակ սեռի նկատմամբ:

Այժմ անդրադառնանք կանաց խոսքին:

Գենդերի վերաբերյալ գրականությունը հանգեցնում է այն մտքին, որ կանաց խոսքն ավելի մեղմ է: Իգական սեռի ներկայացուցիչները հատկապես խառը գենդերային քննարկումներում խոսափում են բախումներից և տարածայնություններից: Նրանք հակված են ստեղծելու միասնություն՝ խոսակցի հետ կիսելով ընդհանուր կարծիքներ և այլն:

Տարբեր համատեքստերում դիտարկելով կանաց խոսքը՝ Փ. Ֆիշմանը գալիս է այն եզրահանգմանը, որ խոսակցի հետ հաղորդակցվելիս կանայք հակված են հարցեր տալու: Գիտնականը սա բացատրում է այն հանգամանքով, որ հարցերի միջոցով նրանց հաջողվում է ներգրավել խոսակցին զրոյցի մեջ /Fishman, 1978/: Ինչպես նշում է Ա. Հիրշմանը, «կին-տղամարդ խոսակցությունները հաճախ վերածվում են հարց ու պատասխանի, որտեղ կանաց դերը հարցեր տալիս է, իսկ տղամարդկանցը՝ պատասխանները» /Hirschman, 1973:10/: Օրինակ՝

Woman: “Say, when a cow’s laying down, which end of her gets up first?”

George: “The hind end, mum.”

Woman: “Well, then a horse?”

George: “The for’ard end, mum.”

Woman: “Which side of tree does the moss grow on?”

George: “North side.”

Woman: “Well, I reckon you have lived in the country. What's your real name now?”

George: “George Peters, mum.” (Mark Twain)

Վերը նշված երկխոսության մեջ, ինչպես տեսնում ենք, կնոջ դերը հարցեր տալն է, տղայինը՝ պատասխանելու: Այս հարց ու պատասխանի վերածված երկխոսության մեջ կնոջ հարցադրումներն ուղղված են տղային խոսակցության մեջ ներգրավելուն և նպատակ ունեն պարզելու նրա անունը:

Խոսակցին գրույցի մեջ ներգրավելու այլ միջոց են կանանց խոսքում հաճախ նկատվող **մենք, դուք** դերանունները /Hirschman, 1973/: Սա կարելի է բացատրել այն հանգամանքով, որ կանայք հակված են բանակցելու և մտերմություն ստեղծելու խոսակցի հետ՝ փորձելով նրա համաձայնությունն ստանալ քննակցող թեմայի շուրջ:

Աղջիկները, ի հակադրություն տղաների, նախընտրում են այնպիսի ուղեցույց բառեր, որոնց միջոցով նրանք արտահայտում են խնդրանքներ, առաջարկ անում: Նրանք նախապատվություն են տալիս նաև այնպիսի ուղեցույց բառերի կիրառությանը, որոնք ցույց են տալիս խոսակցի հետ համատեղ գործողություն /Labov and Fanshel, 1977/: Կանանց խոսքում հաճախ նկատվում է “*let us*” արտահայտությունը, որի միջոցով ակնհայտորեն ակնկալվում է խոսակցի մասնակցությունը տվյալ գործողության մեջ:

Հիմնվելով վերոհիշյալ գիտնականների կողմից կատարված հետազոտությունների վրա՝ կարելի է ենթադրել, որ հաղորդակցության ընթացքում կանայք մեծ նշանակություն են տալիս խոսակցի դերին և ջանք են գործադրում լավ հարաբերություններ ստեղծելու նրա հետ:

Իգական սեղի ներկայացուցիչները հաճախ ընդունում են այսպես կոչվող «զուր բողոքի ռազմավարություն» (strategy of silent protest), երբ նրանց խոսքն ընդհատում են կամ երբ նրանք ստանում են ուշացած կարծ պատասխան /Zimmerman and West, 1975; West and Zimmerman, 1987/: Զգտելով ներդաշնակության՝ կանայք հակված են լուր հանդուրժելու հակառակ սեղի կողմից իրենց խոսքի նկատմամբ ցուցաբերվող խտրականությունները:

Կանայք ավելի հաճախ են կիրառում լեզվի գրական ձևեր, քան տղամարդիկ /Holmes, 1990/: Քանի որ գրական լեզուն կիրառվում է բարձր սոցիալական դիրք ունեցող անձանց կողմից, ուստի, կարելի է ենթադրել, որ հաղորդակցման ընթացքում կանայք ավելի շատ են ձգուում երևալ սոցիալական բարձր դիրքի տեր, քան տղամարդիկ:

Այժմ անդրադառնանք հողվածի բուն թեմային՝ թերատություններին, և վերլուծենք դրանք ստղամարդկանց և կանանց խոսքում:

Ինչպես հայտնի է, թերատությունները հաղորդակցական ռազմավարություններ են, որոնց միջոցով խոսողը մեղմացնում է իր խոսքը, ներկայացնում իր պահանջները զգուշությամբ՝ դրանք դարձնելով ավելի ընդունելի միջանձնային հարաբերություններում: Օրինակ՝ Teacher: *If I may say so*, you did your task wrongly. նախադասությունում ուսուցիչը If I may say so արտահայտության միջոցով փորձում է կտրուկ կերպով չբարձրաձայնել աշակերտի սխալը՝ նախընտրելով ավելի մեղմ խոսքը:

Թերասությունները խոսքին հաղորդում են նաև անորոշություն, անվճռականություն, կասկած: Օրինակ՝ Woman: *As long as I know, I would have passed you your tea first* (Mark Twain). Այս նախադասության մեջ կինը թերասության միջոցով խոսքը դարձնում է անորոշ և կասկած է արտահայտում՝ արդյոք պիտի սկզբում թեյը մատուցեր, թե ոչ:

Թերասությունների միջոցով խոսողը կարող է դրսնորել քաղաքավարություն, ինչպես օրինակ՝

Pupil: *Can I have a scissors to cut it down?*

Teacher: No, you make your own rat. (Sylvia Ashton-Warner)

Ուղիղ կերպով խոսքը կազմելու փոխարեն (Give me scissors to cut it down) աշակերտը նախընտրում է քաղաքավարությամբ արտահայտել իր միտքը՝ միևնույն ժամանակ քույլտվություն խնդրելով ուսուցչից մկրատ վերցնելու համար:

Թերասությունների միջոցով կարելի է նվազեցնել պատասխանատվությունը հաղորդվող տեղեկության նկատմամբ: Օրինակ՝ Woman: To his estimates, the experiment did not work out (Mark Twain) նախադասությունում տեղեկության հավաստի լինելու վերաբերյալ պատասխանատվությունը վերագրում է 3-րդ անձին:

Տարբեր գիտնականների կողմից կատարված հետազոտությունները ցույց են տալիս, որ թերասությունները կանաց խոսքում ավելի հաճախ են հանդիպում /Lakoff, 1975; Preisler, 1986; Holmes, 1990; Coates, 1986; Tannen, 1990/: Սակայն կանաց և տղամարդկանց խոսքում թերասությունների դերի և հաճախականության վերաբերյալ կան նաև այլ կարծիքներ: Այսպես՝ Ս. Մյուլերի հետազոտությունները ցույց են տալիս, որ թերասությունները կանաց և տղամարդկանց խոսքում կիրառվում են գրեթե նույն հաճախականությամբ: Ըստ գիտնականի՝ այս լեզվական ռազմավարությունը չի համարվում որպես արական կամ իգական սեռի ներկայացուցիչների խոսքը բնորոշող միջոց /Mulac et al., 1986; Mulac et al., 1986/:

Զ. Դիքսոնի և Դ. Ֆոնտերի կարծիքով թերասությունների կիրառումը պայմանավորված է տվյալ համատեքստով և գրուցակիցներով, նրանց սեռով, սոցիալական կարգավիճակով, տարիքով և այլն /Dixon and Foster, 1997/: Վերլուծենք մեկ օրինակ, որտեղ, ելնելով գրուցակիցների սոցիալական կարգավիճակի տարբերություններից, տղայի խոսքը ավելի մեղմ և անվճռական է, քան ուսուցչությունը: Աշակերտի խոսքային ոճի նման ընտրությունը պայմանավորված է այն հանգամանով, որ նա գրուցում է իր ուսուցչուն հետ, որն իրենից վերադաս է:

Student: “Mrs. Henderson, *I’m sick of writing.*”

Teacher: “Well, go and write, ‘I am sick of writing.’”

Student: “Mrs. Henderson, *You said I could play the piano when we come in.*”

Teacher: “That’s right.”

Student: “*Can I play it now?*”

Teacher: “Have you finished your writing?”

Student: “No.” (Sylvia Ashton-Warner)

Առաջին նախադասության մեջ աշակերտը իր ցանկությունն ուղղակի արտահայտելու փոխարեն՝ մեղմացնում է խոսքը, այսինքն՝ “I do not want to

write” ձեի փոխարեն, նա նախընտրում է “I’m sick of writing” ձեր: Այսուհետև, նա իր խոսքում մատնանշում է ուսուցի կողմից ասվածը, որի միջոցով զերծ է մնում որոշակի պատասխանատվությունից (You said I could...): Երկխոսության ավարտին աշակերտը, քաղաքավարություն դրսերելով, բույլտվություն է խնդրում ուսուցչունից դաշնամուր նվազելու համար:

Լեզվաբանության մեջ տղամարդկանց և կանանց խոսքի ուսումնասիրությունների համար եսկան դերակատարություն ունեցան Ռ. Լեյկոֆի կողմից գենդերի և լեզվի վերաբերյալ կատարված դիտարկումները, որոնք նաև խրան հանդիսացան լեզվի և գենդերի վերաբերյալ այլ բնագավառներում ուսումնասիրությունների համար, ինչպես օրինակ՝ մարդաբանություն, հոգեբանություն, սոցիոլոգիա և այլն:

Վերլուծելով կանանց խոսքը՝ Ռ. Լեյկոֆը հանգում է այն մտքին, որ «կանացի» երևալու համար իգական սեռի ներկայացուցիչները պետք է կիրառեն խոսքային ոչ հաստատուն, անվճռական ոճը: Գիտնականը առանձնացնում է մի շարք լեզվական միջոցներ և ոճեր, որոնք առավել հաճախ են նկատվում իգական սեռի ներկայացուցիչների խոսքում, ինչպես օրինակ, պոչափոր հարցեր, հարցական տոնայնություն հաստատական նախադասություններում, ճշգրիտ քերականական ձևերի կիրառում և այլն: Կանանց խոսքը բնորոշող լեզվական միջոցների բվում են նաև քերասությունները /Lakoff, 1975/: Վերլուծենք մեկ օրինակ՝

Chairman: “I was on my way to town. I met Matawherto coming home again. He said that when he got to school this morning, Mrs. Henderson sent him home and told him not to come back again.”

Teacher: “That’s only a child’s tale Peter. Mrs. Henderson said no such thing.”

Chairman: “Well, that’s what he told me.”

Teacher: “But Peter, he is only a baby. Surely, you are not going to go by the story of a baby.” (Sylvia Ashton-Warner)

Տնօրենի և ուսուցի երկխոսության մեջ ուսուցիչը ոնչ քերասության միջոցով փորձում է մեղմացնել իրադրությունը, այնուհետև կրկին ոնչ բառի միջոցով նաև աշակերտի խոսքի նկատմամբ քերահավասություն է հաղորդում, ինչպես նաև մատնանշում է իր վերաբերնունքը (Surely...) ասվածի վերաբերյալ:

Զ. Հոլմսը, ուսումնասիրելով քերասությունները առօրյա խոսքում, պնդում է, որ դրանք կարող են կատարել տարբեր գործառույթներ: Նա առանձնացնում է քերասությունների երկու գործառույթ՝ այսպես կոչվող ազդեցիկ (affective) և էպիստեմիկ (epistemic): Թերասությունների ազդեցիկ գործառույթի միջոցով արտահայտվում է խոսողի ցանկությունը՝ միջանձնային համերաշխություն ստեղծելու: Էպիստեմիկ գործառույթի կիրառելիության դեպքում դրամբ արտահայտում են խոսողի անորոշությունը տվյալ տեղեկության վերաբերյալ: Ուսումնասիրելով կանանց և տղամարդկանց խոսքը՝ Զ. Հոլմսը եզրահանգում է, որ երկու սեռերը կիրառում են քերասությունները տարբեր կերպ: Կանայք քերասությունները կիրառում են որպես «դրական քաղաքավարության» ուազմավարություններ: Օրինակ, ըստ գիտնականի, իգական սեռի ներկայացուցիչները կիրառում են *sorcery* քերասությունը՝ խոսք մեղմացնելու և խոսակցի նկատմամբ հոգատարություն դրսերելու նպատակով: Նմանապես, կանայք կիրառում են *you*

know թերասությունը որպես խոսակցին զրույցի մեջ ներգրավելու միջոց: Սինչեալ տղամարդիկ կիրառում են ***sort of*** և ***you know*** թերասությունները էափառեմիկ իմաստով՝ արտահայտելով կասկած և անորոշություն տվյալ տեղեկության վերաբերյալ /Holmes, 1990/: Օրինակ՝ Woman: You are ***sort of***pale (Mark Twain). Այս նախադասության մեջ sort of թերասության միջոցով կինը իր հոգատարությունն է արտահայտում խոսակցի նկատմամբ, մինչդեռ Man: This is ***sort of***a metal (Mark Twain). նախադասության մեջ տղամարդը անորոշությունն է ցուցաբերում այն բանի նկատմամբ, թե տվյալ իրը կոնկրետ որ մետաղն է:

Զ. Քոռուքը առաջարկում է թերասությունների այլ գործառույթներ. կանայք կիրառում են թերասություններ՝ հաշվի առնելով խոսակցի զգացմունքները, երբ խոսողը վատահ չէ, թե ինչպես կարծանանքի խոսակիցը տվյալ տեղեկությանը: Նմանատիպ թերասությունների օրինակներ են՝ ***sort of, kind of, really***. Գիտնականի կարծիքով իգական սեռի խոսքում թերասություններ կարող են կիրառվել նաև որպես տվյալ համատեքսում ճշգրիտ բառը գտնելու միջոց /Coates, 1986/:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ տղամարդկանց և կանանց խոսքը եապես տարրերվում է միմյանցից: Ուսումնասիրության ենթարկելով գենդերի և լեզվի վերաբերյալ տարրեր գիտնականների կողմից կատարված հետազոտությունները՝ հանգում ենք այն մտքին, որ խոսքում գերիշխողը արական սեռն է: Առաջնորդվելով հասարակության մեջ իրենց գերակայությամբ՝ արական սեռի ներկայացուցիչները փորձում են լեզվի միջոցով ցույց տալ իրենց վերադասությունը հակառակ սեռի նկատմամբ: Մյուս կողմից, կանայք փորձում են խոսակցին ներգրավել զրույցի մեջ՝ խոսակցի հետ կիսելով ընդհանուր կարծիքներ, հաստատելով համերաշխություն: Նրանք խուսափում են բախումներից և տարածայնություններից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Aries E. Interaction patterns and themes of male, female and mixed groups // *Small Group Behaviour*, v. 1, Sage Publication, 1976.
2. Coates J. Women, men and language. New York: Longman, 1986.
3. Coates J. Women talk, conversation between women friends. Oxford: Blackwell, 1996.
4. Coates J. Language and gender, a reader. Oxford: Blackwell, 1998.
5. Dixon J., Foster D. Gender and hedging: from sex differences to situated practice // *Journal of Psycholinguistic Research*, v. 26 (1), 1997.
6. Fishman P. Interaction: the work women do // Thorne B., Kramarae Ch., Henley N. (eds.) *Language, gender and society*. Rowley, MA: Newbury House, 1983.
7. Goodwin C. Assessments and the construction of context // Duarnti A., Goodwin C. (eds.) *Rethinking Context: Language as an interactive phenomenon*. Cambridge: Cambridge University Press, 1992.
8. Graddol D., Swann J. Gender voices. Oxford: Basil Blackwell, 1989.
9. Hirschman A. The changing tolerance for income inequality in the course of economic development // *The Quarterly Journal of Economics*, v. 87, 1973.

10. Labov W., Fanshel D. Therapeutic discourse: psychology as conversation. New York: Academic Press, 1977.
11. Lakoff R. Language and woman's place. Harper and Row, 1975.
12. Holmes J. Hedges and boosters in women's and men's speech // *Language and communication*, v. 10, 1990.
13. Maltz D., Borker R. A cultural approach to male-female miscommunication // *Language and social identity*. Cambridge: Cambridge University Press, 1982.
14. McMillan J. et al. Women's language: uncertainty or interpersonal sensitivity and emotionality // *Sex Roles*, v. 3, 1977.
15. Mulac A. et al. Male/female language differences and attributional consequences in a public speaking situation: toward an explanation of the gender-linked language effect. *Communication Monographs*, 1986.
16. Mulac A. et al. Male/female language differences and effects in same-sex and mixed-sex dyads: the gender-linked language effect // *Communication Monographs*, 1988.
17. Preisler B. Linguistic sex roles in conversation: social variation in the expression of tentativeness. Amsterdam: Mouton de Gruyter, 1986.
18. Tannen D. You just don't understand, women and men in conversation. New York: Ballantine Books, 1990.
19. West C., Zimmerman D. Sex roles, interruptions, and silences in conversation // *Language and sex: difference and dominance*. Rowley, MA: Newbury House Publishers, 1975.
20. West C., Zimmerman D. Small insults: a study of interruptions in cross-sex conversations between unacquainted persons // Thorne B., Kramarae C., Henley N. (eds.) *Language, gender and society*. Cambridge, MA: Newbury House, 1983.
21. West C., Zimmerman D. Doing gender // *Gender and society*, v. 1, 1987.

Н. АРУТЮНЯН – Хеджирования в речи женщин и мужчин. – Исследования по гендерным вопросам и языку показывают, что мужчины и женщины «говорят» на разных языках, то есть, они предпочитают различные языковые средства для выражения своих мыслей. Целью данной статьи является изучение языковых различий между представителями двух разных полов, в частности, роли хеджирования в их речи.

Ключевые слова: различные языковые средства, прерывание, хеджирование, мужской и женский пол, мужчины и женщины, гендер

N. HARUTYUNYAN – The Role of Hedges in the Speech of Women and Men. – Studies on gender and language show that men and women speak in different ways, that is, they prefer different linguistic means to express their thoughts. The aim of the paper is to explore the language differences between the representatives of the two sexes with special reference to the role of hedges in male and female speech.

Key words: communication differences, different linguistic means, interruption, hedges, male and female sexes, men and women, gender

ՍԻՐԱՆՈՂ ՂԱԼԹԱԽՉՅԱՆ Երևանի պետական համալսարան

ՓԱՍՏԱՐԿՈՂ ԵՎ ՊԵՐՍՈՒԱԶԻՎ ԴԻՍԿՈՒՐՍՆԵՐԻ ՓՈԽՆԵՐԹԱՓԱՆՑԵԼԻՌՅԱՆ ԽՆԴԻՐԸ ԱՌՅԱՆՑ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԽՆԴՐԱԳՐՈՒՄ

Սույն հոդվածի նպատակն է ուսումնասիրել պերսուազիվ և փաստարկող դիսկուրսների հաղորդակցական առանձնահատկությունները, քննել դիսկուրսի այս երկու տարատեսակների փոխկազմակցվածության հարցը էլեկտրոնային դիսկուրսի տարատեսակ հանդիսացող առցանց էլ. խնդրագրում։ Փորձ է արվում յուսաբանել այն հանգամանքը, որ դիսկուրսի այս տարատեսակների տարանջատումը միանշանակ չէ, և որոշ դեպքերում դրանք փոխներթափանցում են՝ կախված հաղորդակցական պայմաններից և նպատակներից, ինչը մեծապես նպաստում է համոզման գործառությի իրացման արդյունավետությանը։

Քանայի բառեր. դիսկուրսի վերրուծություն, պերսուազիվ հաղորդակցություն, փաստարկում, փաստարկող դիսկուրս, դիսկուրսի փոխներթափանցելիություն, պերսուազիվ դիսկուրս, առցանց էլ. խնդրագրի, էլեկտրոնային դիսկուրս

Գործարանության մեջ կապակցված խոսքը՝ դիսկուրսը, ուսումնասիրվում է որպես խոսքային գործունեություն, որի ընթացքում կիրառվում են կոնկրետ իրադրությամբ ձևավորված և խոսակիցների առջև դրված խնդիրներով պայմանավորված հաղորդակցական միջոցներ (Brown, Yule, 1983; van Dijk, 1997; Παρούնյան, 2011): Խոսքային հաղորդակցման ընթացքում փաստարկումն ընկալվում է որպես մարդկային գործունեության տեսակ, որում առաջին պլան են մղվում բանական մարդու առանձնահատկությունները, հաղորդակցվող կողմերի շահերը, նրանց փոխհարաբերությունները, միջյանց հասկանալու ունակությունները, այսինքն՝ մարդկային գործունը։ Որպես պերսուազիվ հաղորդակցության տարատեսակ՝ փաստարկման գործընթացին նույնպես բնորոշ է համոզման գործառությունը։ Այն համարվում է տրամաբանական խոսքի միջոցով մարդկանց վրա ներազբելու արվեստ, երբ խոսընկերներից մեկը ստիպում կամ համոզում է մյուսին հավատալ և ընդունել ներկայացվող կարծիքի ճշմարտացիությունը (O'Neill, 1925; Rottenberg, 1997; Johnson et al., 2002):

Փաստարկող դիսկուրսի գաղափարը առաջադրվում է Ֆ. Վան Էեմերենի, Ո.Գրոտենդորստի մշակած փաստարկման պրագմատիալեկտիկական տեսության մեջ։ Նրանք նշում են, որ խոսքային հաղորդակցության այն տեսակը, որին բնորոշ է լեզվական միջոցներով հաղորդակցվող կողմերի միջև ծագած տարակարծություններ հարթելու գործընթաց, պետք է ուսումնասիրվի որպես դիսկուրսի հատուկ տեսակ։ Ուստի, փաստարկում ասելով՝ նրանք հասկանում են խոսքային, սոցիալական և տրամաբանական այն գործընթացը, որի նպատակն է համոզել մտածող և խոսքն արմերող մարդուն՝ ընդունելու ներկայացված տեսակետը։ Այս գործընթացը տեղի է ունենում իրար հաջորդող

փաստարկների առաջադրմամբ, որոնք միտված են հաստատելու և ապացուցելու ներկայացված տեսակետը (van Eemeren et al., 2002; van Eemeren, Grootendorst, 2004, վաճ Էնմերեն և այլք, 2004):

Պերսուազիան սահմանվում է որպես խոսքնկերներից մեկի կողմից մյուսի դիրքորոշման և գործողությունների վրա ներազդելու կանխանտածված և նպատակադրված փորձ (Zanden, 1977: 11): Ռ. Լակոֆը պերսուազիան սահմանում է որպես հաղորդակցման գործընթացի մասնակիցներից մեկի կողմից մյուսի վարքը, զգացմունքները, կարծիքը կամ նպատակները փոխելու փորձ կամ մտադրություն (Lakoff, 1982: 28): Վ. Բրեմբեքը Վ. Հոուելը համոզում համարում են հաղորդակցության տեսակ, որի նպատակն է ազդել անհատի ընտրության վրա: Սակայն, հարկ է նշել, որ պերսուազիկ հաղորդակցության ժամանակ համաձայնությունը շեշտակիորեն անհամաշափ է, քանի որ դա տեղի է ունենում հաղորդակցվող կողմերից մեկի հաշվին, հօգուտ մյուսի. համոզվողն ընդունում է համոզողի տեսակետը (Brembeck, Howell, 1976: 11-19):

Պետք է նշել, որ համոզման և փաստարկման փոխկապակցվածության վերաբերյալ բավականին հակասական կարծիքներ կան: Մի դեպքում դրանք խոսքային գործունեության առանձին ձևեր են դիտվում: Այսպես, Ռ. Հյութերը և Ա. Սնայդերը գտնում են, որ պերսուազիայի հիմքում ընկած է խաղարկային միջոցներով կատարվող կառավարումը, այն ուղղված է ազդելու խոսքնկերոց զգացմունքների վրա, մինչդեռ փաստարկումը ռացիոնալ ձևով համոզելու գործընթաց է (Huber, Snider, 2006: 3): Ս. Բերնեթը և Հ. Բիդաուն ևս հստակորեն տարանջատում են պերսուազիան փաստարկումից՝ վերջինս դիտելով որպես համոզման ձև, որը հենցում է բանականության վրա. այն առաջարկում է պնդումներ, որոնք հիմք են հանդիսանում այլ պնդումների համար: Մինչդեռ, պերսուազիան ունի ավելի լայն իմաստ. դրա նպատակն է առավելություն ձեռք բերել հասցեատիրոջ նկատմամբ՝ հիմնավորումներ բերելով և զգացմունքներին դիմելով: Այդուհանդերձ, որպեսզի փաստարկումն արդյունավետ լինի, այն պետք է համոզիչ կերպով ներկայացվի, այսինքն՝ հասցեատիրոջ վրա համոզման գործառույթ իրացնելու համար պետք է համապատասխան խոսելածն կիրառվի (Bernet, Bedau, 2005: 68):

Մեկ այլ տեսակետի համաձայն պերսուազիան մեծ մասամբ հիմնված է փաստարկման վրա, քանի որ կիրառվում են ոչ միայն տրամարանական փաստարկներ, այլև գնահատողական դատողություններ՝ ազդեցություն գործելով հասցեատիրոջ զգացմունքների վրա: Թ. Շնայդելը նշում է, որ պերսուազիան այն գործընթացն է, որտեղ խոսողը և լսողը միավորվում են, և խոսողը որոշակի լսելի և տեսանելի խորհրդանշական նշաններ հաղորդելու միջոցով փորձում է զիտակցաբար ազդել լսողի տեսակետի կամ գործողությունների վրա (Scheidel, 1967: 9): Խ.Պերելմանի կարծիքով, փաստարկման նպատակն է ձեռք բերել հասցեատիրոջ համաձայնությունը և մտովի սերտ կապ ստեղծել փաստարկող կողմերի միջև (Perelman, Oubrechts-Tytela, 1969): Գ. Բրուտյանը ևս մոտեցնում է պերսուազիայի և փաստարկման սահմանները՝ փաստարկումը բնորոշելով որպես համոզիչ խոսք, կամ խոսք, որը համոզում է:

Նրա պնդմամբ փաստարկումը դատողության ձև է, մտածողական գործընթացի քանական ակտ կամ այնպիսի կշռադատություն, որի ընթացքում կողմերից մեկը որևէ պնդում է առաջադրում և փորձում հակառակորդի հետաքրքրությունն առաջացնել և համոզել նրան առաջադրված դրույթի ճշմարտության ու նպատակահարմարության մեջ՝ ապացուցներ բերելով պնդման ճշմարտացիության օգտին: Այդպիսով՝ փաստարկողը փորձում է հակառակորդին իր համախոհը և առաջադրված թեզի իրականացման համամասնակիցը դարձնել (Բրուտյան, 1997):

Ключевые слова: журналистский дискурс, информационное поле, сообщения, коммуникация, газета, пресса, персуазивность, пресуппозиция, факты

A. MELKONYAN – *The Main Characteristics of the Journalistic Discourse.* – The subject matter of the present paper is the peculiarities of the journalistic discourse. To describe the journalistic discourse first of all means to define its efficiency in terms of effectiveness, optimality and its normative nature. The newspaper discourse can be characterized by summarizing the factual and invariable features typical of it.

The most significant characteristic of the newspaper discourse is the category of the information field, under which the information continuum is understood covering various spheres of facts and events of the real world.

Key words: journalistic discourse, information field, communication, newspaper, press, message, persuasion, presupposition, facts

Նախա ՄԿՐՅԱՆ
Երևանի պետական համալսարան

**ԱՆԳԼԵՐԵՆԻ ԳՈՅՉԱԿԱՆԱԿԱՆ
ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՍԱՍՏԱԳՈՐԾԱՌԱԿԱՆ
ԱՌԱՋԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հողվածում քննության եմ առնվում անգլերենի գոյականական բառակապակցությունների, մասնավորապես՝ $N+N$ և $N+of+N$ տիպի բառակապակցությունների գործառական (շարահյուսական) առանձնահատկությունները՝ իիմք ընդունելով նրանց բաղադրիչների միջև գոյություն ունեցող իմաստային հարաբերությունները։ Նշված կառույցները բազմիմասն են, քանի որ նրանց բաղադրիչները ձևաբանորեն նշուրափորված չեն։ Այս իրողության արդյունքում խնդրությունը առարկա կառույցներից՝ յուրաքանչյուրը կարող է լինել որոշապես և բացահայտական, և այսուհանդերձ կարևորություն է նրանց իմաստային կողմը։

Բանալի բառեր. շարահյուսական կապի տեսակ, շարահյուսական բազմիմաստություն, շարահյուսական համանունություն, որոշապես և բացահայտական կառույցներ, իմաստային հարաբերություններ

Անգլերենի գոյականական բառակապակցությունների ուսումնասիրությունը որոշակի հետաքրքրություն է ներկայացնում մի շարք պատճառներով։ Նախ այդ բառակապակցությունների բաղադրիչները հաճախ ձևաբանորեն նշուրափորված չեն, ինչն առաջ է բերում նրանց միջև շարահյուսական կապի տեսակի և իմաստային հարաբերությունների տարրմբունում։ Որպես այս իրողության հետևանք՝ գոյականական բառակապակցությունները ցայտում օրինակ են շարահյուսական բազմիմաստության և համանունության, որոնց վերլուծությունը հետազոտական արժեք է ներկայացնում շարահյուսական իմաստաբանության տեսակետից։

Քերականական երևույթների հետազոտությունը իմաստաբանական տեսանկյունից իր հաստատում տեղի ունի լեզվաբանական աշխատություններում։ Այս ոլորտում ձեռք բերված նվաճումներն արդյունք են հանգամանալից ուսումնասիրությունների այնպիսի երևույթների շուրջ, ինչպիսիք են լեզվական ձևի և բովանդակության, կառույցի և նրանով ներմուծվող իմաստի փոխհարթերությունները։

Լեզվի և հատկապես՝ քերականության իմաստային կողմի ուսումնասիրությունը մեծ ուշադրության է արժանի հատկապես վերլուծական տիպի լեզուներում, ինչպիսին անգլերենն է, որ պայմանավորված է քերականական ձևույթների սակավությամբ, փոխակարգությամբ և այլն։

Այս առումով առավել մեծ հետաքրքրություն են ներկայացնում անգլերենի $N+N$ և $N+of+N$ տիպի կառույցները, որոնք կարող են լինել ինչպես որոշապես, այնպես էլ բացահայտական։ Այսինքն՝ մեկ կադապարը ներկայացնում է երկու տարբեր գործառական և իմաստաբանական հարաբերություններ։ Ե. Ս. Միսի-

բարյանը, քննության առնելով խնդրո առարկա կառույցների բաղադրիչների միջև դիտվող իմաստաբանական հարաբերությունները, դրանք ներկայացնում է հետևյալ կերպ. որոշային կառույցներում (Lake District) N1≠N2, մինչդեռ բացահայտական կառույցներում (Lake Ontario) N1=N2 /Մխիթարյան, 1995: 81/: Այս և նման դեպքերում որոշչի և բացահայտչի գործառական սահմանների տարրորոշումը հիմնվում է իմաստային գործոնի վրա և պայմանավորված է բաղադրիչների առարկայական վերաբերությունների տարբերությամբ կամ նույնությամբ: Ըստ որում՝ գոյականով արտահայտված որոշիչը կարող է արտահայտել տեղի (village school), ժամանակի (summer holidays), նապատակի (sugar bowl) և այլ իմաստներ, մինչդեռ բացահայտչն իր իմաստով միշտ նույնական է բացահայտյալի հետ (Lake Sevan, Professor Brown): Բերված օրինակներից կարող է այնպիսի կարծիք ստեղծվել, որ որոշային կառույցների բաղադրիչները հասարակ անուններ են, իսկ բացահայտական կառույցների բաղադրիչներից մեկը հատուկ անուն: Սակայն եթե քննության առնենք Miss Robinson և Miss America օրինակները, կարող ենք տեսնել, որ գոյականների հատուկ կամ հասարակ անվամբ արտահայտվելու շափանիշը բավարար չէ նրանց միջև դիտվող շարահյուսական կապի տեսակը, հետևաբար և բաղադրիչների շարահյուսական գործառույթները որոշելու համար (Miss Robinson – բացահայտական բառակապակցություն, Miss America – որոշային բառակապակցություն):

Այստեղ տեղին է մեջքերել Ա. Սալկովայի կարծիքն առ այն, որ պեսք չէ նույնականացնել «շարահյուսական գործառույթ» և «շարահյուսական իմաստ» հասկացությունները: «Շարահյուսական իմաստ» ասելով, ըստ հեղինակի, պետք է հասկանալ տեղի, ժամանակի, պատճառի և այլ իմաստները, որոնք կարող են չհամընկնել շարահյուսական գործառույթների հետ /Салькова, 1967: 26-27/: Վերը բերված օրինակում, մասնավորապես, Miss America բառակապակցության America որոշային բաղադրիչն արտահայտում է տեղային իմաստ, իսկ Miss Robinson բառակապակցության մեջ գտնում ենք բաղադրիչների առարկայական վերաբերությունների նույնականություն: Կարծում ենք, որ բերված և նման կառույցներում առաջին պլան է մղվում հենց շարահյուսական իմաստը:

Եթե քննության առնենք N+of+N տիպի գոյականական բառակապակցությունները, դժվար չէ եզրակացնել, որ նրանց բաղադրիչների միջև նույնական դիտվում են տարբեր որոշային և բացահայտական հարաբերություններ: Այսպես օրինակ՝ the murmur of London բառակապակցությունը որոշային է, քանի որ իմաստաբանորեն բաղադրիչները նույնական չեն (N1≠N2), մինչդեռ the city of Yerevan բառակապակցության դեպքում N1=N2, հետևաբար սա բացահայտական բառակապակցություն է:

Այստեղ հավելենք նաև, որ N+of+N տիպի կառույցը կարող է ներկայանալ ոչ միայն որոշային և բացահայտական բառակապակցությունների տեսքով, այլև դարձվածաբանական միավորների, ինչպես devil of a woman, idiot of a doctor, flower of a girl և այլն: Նման բառակապակցություններն, ինչպես հայտնի են, քննութագրվում են ոճական գործառույթով, ուստի նրանց բաղադրիչ-

ների միջև գոյություն ունեցող կապի ուսումնասիրությունը դուրս է շարահյուսության շրջանակներից:

Վերը շարադրվածն ամփոփելով՝ կարող ենք եզրակացնել, որ N+N և N+of+N տիպի բառակապակցություններում դիտվում են շարահյուսական կապի տարրեր որոշային և ներակա ստորոգական կապեր: Այսինքն նրանցից յուրաքանչյուրում գործ ունենք լեզվական նշանի ձևի և բովանդակության ասիմետրիայի հետ: Հարց է առաջանում. արդյոք խնդրո առարկա կառույցները շարահյուսական բազմիմաստության, թե՞ շարահյուսական համանունության օրինակներ են,քանի որ այս երկու երևույթներն անմիջականորեն կապված են լեզվական նշանի, տվյալ դեպքում՝ կառույցի ձևի և բովանդակության ոչ լիակատար համապատասխանության (ասիմետրիկ դրամիզմի, ինչպես այս երևույթն անվանում է U. O. Կարցևսկին) հետ: Հայտնի է, որ շարահյուսական բազմիմաստությունը լեզվաբանության մեջ սահմանվում է որպես մեկ շարահյուսական ձևին համապատասխանող մեկից ավելի շարահյուսական իմաստների առկայություն: Իսկ շարահյուսական համանունությունը դիտվում է որպես մեկից ավելի իմաստների արտահայտում միևնույն շարահյուսական ձևով:

Այսուհետերձ՝ բավականին դժվար է խնդրո առարկա գոյականական բառակապակցությունները միանշանակորեն համարել շարահյուսական բազմիմաստության կամ համանունության օրինակներ: Տարրեր լեզվաբանական ուսումնասիրություններում շարահյուսական բազմիմաստությունը դիտարկվում է կամ լեզվի, կամ խոսքի մակարդակում, և այստեղ է, որ ի հայտ են գալիս շարահյուսական ձևի և բովանդակության մեկնարանման տարրերությունները:

Վ. Գ. Նովիկովը, մասնավորապես, լեզվի մակարդակը դիտարկում է որպես անփոփոխակների մակարդակ, համապատասխանաբար քերականական ձևերը համարելով անփոփոխակներ /Նովիկով, 1963: 19/: Եթե նշված գոյականական կառույցները դիտարկելու լինենք այս տեսանկյունից, ապա պետք է ընդունել, որ N+N և N+of+N կառույցներից յուրաքանչյուրը բազմիմաստ է, և շարահյուսական մեկ ձևին համապատասխանում են երկու շարահյուսական իմաստներ: Մինչդեռ եթե նշված բառակապակցությունները դիտարկենք խոսքի մակարդակում, ապա, օրինակ, the city of Yerevan և the centre of Yerevan բառակապակցությունները տարրեր բառային արտահայտությամբ խոսքային կառույցներ են, որոնք համընկնում են լեզվական ձևով: Այսինքն եթե խնդրին մոտենանք այս դիտանկյունից, ապա պետք է այս կառույցները համարել շարահյուսական համանուններ:

Որոշ լեզվաբանական ուսումնասիրություններում «շարահյուսական բազմիմաստություն» և «շարահյուսական համանունություն» եզրույթները գործածվում են փոխարինաբար, և նրանց միջև հստակ տարանջատում չենք գտնում /Ա.Գ. Շենքին,Ֆ. Դանեշ և այլոք/: Ֆ. Դանեշն առաջարկում է շարահյուսական բազմիմաստությունը դիտարկել լայն և նեղ իմաստներով: Ըստ Դանեշի՝ լայն իմաստով բազմիմաստ պետք է համարել ցանկացած լեզվական կառույց, որը կարող է ստանալ մեկից ավելի մեկնարանություն: Նույն տեղում հեղինակը շարունակում է. «Շարահյուսական համանությունը նեղ իմաստով

հետևանք է լեզվում երկու (կամ ավելի) կառույցների գոյության, որոնց համապատասխանում է միևնույն ասույթը որպես նրանցից յուրաքանչյուրի արտահայտություն»/Դանեշ, 1964: 3/:

Սա ևս մեկ անգամ գալիս է ապացուցելու, որ այս երկու շարահյուսական հասկացությունները շատ մոտ են միմյանց, և հաճախ՝ դժվար տարբերակելի: Ավելին՝ նրանք միևնույն երևույթի տարբեր կողմերն են, տարբեր մեկնարանումները:

Անփոփելով մեր հետազոտության արդյունքները՝ նշենք, որ անգլերենի N+N և N+of+N կառույցները շարահյուսական բազմինաստության և համանունության օրինակներ են: Վերջիններին հատակ սահմանազատումը բավականին դժվար է, քանի որ նրանք միևնույն երևույթի երկու կողմերն են: N+N և N+of+N տիպի բառակապակցությունների բաղադրիչների միջև դիտվում են տարբեր իմաստային հարաբերություններ և շարահյուսական կապի տարբեր տեսակներ, որոնք պայմանավորված են ոչ թե բաղադրիչների ձևաբանական հատկանիշներով, այլ նրանց արտահայտման բառային միջոցներով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Данеш Ф. Опыт теоретической интерпретации синтаксической омонимии // Вопросы языкоznания, N 6. М.: Изд. АН СССР, 1964.
2. Карцевский С. О. Об асимметричном дуализме лингвистического знака // Project.phil.spbu.ru/lib/data/ru
3. Мхитарян Е. С. К вопросу о природе приложения // Отишը լեզուները րարարագույն դպրոցում (զիտ. աշխ. ժողովածու). Ереван, 1995.
4. Новиков В. Г. К исследованию грамматической омонимии // Сборник трудов по языкоznанию, N 3. М.: Изд. АН СССР, 1963.
5. Салькова Д. А. Некоторые вопросы омонимии и многозначности синтаксических конструкций (на материале немецких придаточных предложений). Л.: Изд. ЛГУ, 1967.
6. Щепин А.Г. Контекстная омонимия в русском языке. Иркутск: Изд. Новосиб. гос. унт-а, 1983.

Н. МКРЯН – Функционально-семантические особенности номинативных словосочетаний в английском языке. – В статье рассматриваются функциональные особенности компонентов номинативных словосочетаний английского языка типов N + N и N + of + N на основе семантических связей между ними. Компоненты данных словосочетаний морфологически не маркированы, что приводит к возникновению синтаксической многозначности и омонимии. Рассматривая словосочетания типов N + N и N + of + N в этом контексте, автор выявляет семантические и функциональные различия между определительными и аппозитивными словосочетаниями.

Ключевые слова: тип синтаксической связи, синтаксическая многозначность, синтаксическая омонимия, определительные и appositive конструкции, семантические отношения

N. MKRYAN – *The Functional and Semantic Peculiarities of English Noun Phrases.* – The paper deals with the functional characteristics of English noun phrases, namely those of N + N and N + of + N types. The components of these phrases are morphologically unmarked, therefore the functional differences between them can be revealed on the semantic level. Each of the phrases under study can be attributive and appositive, hence these phrases are viewed in the context of syntactical polysemy and homonymy.

Key words: type of syntactical connection, syntactic polysemy, syntactic homonymy, attributive phrases, appositive phrases, semantic relations

Դիմա ՍՈՎԱԽՍՅԱՆ
Արցախի պետական համալսարան

**ՀԱՍԿԱՑՈՒՄԸ ճԱՆԱԳՈՂԱԿԱՆ
ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴԻՏԱՆԿՅՈՒՆԻՑ**

Հողվածում դիտարկվում է հասկացման երևոյթը ճանաչողական լեզվամտքյան հայեցակերպությունը: Հասկացում արտահայտող բայերի օրինակով ցույց է տրվում, որ հասկացումը վերացական այլ հասկացույթների պես նյութականացված է և հիմնված է ֆիզիկական փորձի վրա: Հողվածի շրջանակներում փորձը է արդում ասհմանել հասկացումը՝ ընդգծելով հասկացման գործընթացի որևէ մի կողմէ: Հասկացումը ներկայացվում է որպես պարբերաբար միմյանց հաջորդող մտավոր գործունեությունների ամրողություն:

Քանակի բառեր. ճանաչողական լեզվաբանություն, հասկացում, հասկացողական փիլիսոփերություն, գիտելիք, նյութականացում, երկխոսություն, հարց ու պատասխան

Վերջին տարիներին հասկացման երևոյթն ուսումնասիրության առարկա է դարձել գիտության տարբեր ճյուղերի՝ լեզվաբանության, փիլիսոփայության, հոգեբանության, տրամաբանության, մշակութաբանության, մանկավարժության, տեքստի մեկնաբանության և սոցիոլոգիայի կողմից:

Սույն հողվածում ուսումնասիրության առարկա է գրավոր և բանավոր խոսքի հասկացումը ճանաչողական լեզվաբանության լույսի ներքո: Խոսքի հասկացման նկատմամբ հետաքրքրությունն աճել է 20-րդ դարի երկրորդ կեսին՝ պայմանավորված տեքստի կապակցվածության խնդրի վերաբերյալ հետազոտությունների ընդացննամբ:

Խոսքի հասկացումը բոլոր հասարակություններում տարբեր հարցերի լուծման, միջանձնային հարաբերությունների կարգավորման, ինչպես նաև հաջողված հաղորդակցության ցուցիչ է: Հասկացման օբյեկտ են տարաբնույթ առարկաներ, երևոյթներ, հասկացություններ և այլն: Հետևաբար այդ ամենի հասկացումը ներառյամ է տարբեր մտավոր գործընթացների պարբերական հաջորդականություն: Հասկացման գործընթացի բաղկացուցիչ մասերը լեզվաբանության մեջ ունեն տարբեր անվանումներ՝ «հասկացման մոդուլ» («модуль понимания» – В. Զ. Դեմյանկով), «հասկացման հիմք» («основание понимания» – Թ.Ա. Վան Դեյք, Վ. Զինչ), «հասկացման մակարդակ» («уровень понимания» – Ա. Ե. Լեվինտով):

Ուսումնասիրելով ճանաչողական լեզվաբանության տարբեր տեսություններ հասկացման վերաբերյալ՝ նշենք, որ չնայած բազմաթիվ սահմանումների, հասկացման գործընթացի տարաբնույթ նկարագրությունների՝ այնուամենայնիվ, գոյություն ունեն որոշ դրույթներ, որոնք լեզվաբանների մեծ մասը կիսում են: Այդ դրույթներն ամփոփված են ստորև:

Սի շարք հեղինակներ (Զ. Լեյբով, Մ. Չոնսոն, Ա. Վեժբիցկա, Ի. Սվիրսեր, Փ. Ֆեյբեր, Ռ. Յուսոն, Ս. Սյութրոն, Մ. Վանիոնով, Բ. Լ. Իոնդին) իրենց

աշխատություններում անդրադարձել են հասկացման գործընթացին՝ այն ուսումնասիրելով որպես «հասկացողական» փոխաբերության արդյունք:

Հասկացում արտահայտող բայերը, լինելով հասկացման նշորդներ, տարբեր տեսանկյուններից «նկարագրում» են հասկացման գործընթացն՝ ընդգծելով հասկացման որևէ մի կողմ: Այսպես, լստ Բ. Լ. Իոնդինի՝ հասկացումը տարբեր մտավոր գործողությունների ամրողություն է՝ բացատրություն, ըմբռնում, յուրացում, գիտակցում, կռահում, խորաթափանցություն /Իօմдин, 2002/: Եթե ուսումնասիրենք *understand* բայի հոնանիշային շարքը, ապա կարելի է նկատել, որ հասկացում արտահայտող այդ բայերի հիմքում ֆիզիկական փորձն է: Այսպես, հաշվի առնելով բայերի իմաստային հատկանիշներն ու ստուգարանությունը, հասկացման բայերի համար առանձնացնենք հետևյալ փոխաբերությունները՝ **հասկացումը տեսնել է** (*see, look, view, envision, read*), **հասկացումը բռնել է** (*catch, grasp, seize, comprehend*), **հասկացումը վերցնել է** (*perceive, conceive, take in, presume, assume, accept*), **հասկացումն ուղղահայց շարժում է** (*fathom, penetrate, get to the bottom of*), **հասկացումը հորիզոնական շարժում է** (*follow, tumble, get, draw*), **հասկացումը փոխակերպում է** (*interpret, translate*), **հասկացումը համակարգում է** (*discern, gather, make head or tail of, make out, suppose*):

Քննարկենք հասկացման երեսույթն ավելի մանրամասնորեն՝ սկզբից հասկացումը նկարագրելով «հասկացողական» փոխաբերության տեսանկյունից, այնուհետև առանձնացնելով ճանաչողական համակարգում հասկացման գործընթացը կազմող բաղադրիչները և փուլերը:

Հասկացումը տեսողության ունակություն է

Խոսքում հասկացումը հաճախ սահմանվում է որպես «տեսողության ունակության» և «լույսի առկայության» համարդություն: Լույսի և տեսողության փոխաբերությունները կազմում են հասկացման գաղափարի հիմքը, այդ իսկ պատճառով Բ.Լ. Իոնդինը հասկացումը մի կողմից սահմանում է լույսի միջոցով (*see the light, see daylight, dawn, flash*), մյուս կողմից տեսողության միջոցով (*see, discern, insight, become evident*) /Իօմдин, 2002/: Տեսողության և հասկացման միջև գոյություն ունեցող այս օրինաչափությունն Ի. Սվիթսերը բացատրում է այն հանգամանքով, որ տեսողությունը գիտելիքի ձեռքբերման հիմնական միջոցն է: Հետևաբար, տեսողություն արտահայտող բայերը լավագույնն են ծառայում գիտելիք և նտավոր տեսողություն (հասկացում) արտահայտելու համար /Sweetser, 2001: 23-45/: Նմանատիպ տեսակետ հայտնում է նաև Ն.Դ. Արուտյունովան. լստ նրա՝ տեսողական ընկալումն ուղեկցվում է այնպիսի գործողություններով, ինչպիսիք են դասակարգումը, նոյնականացումը, մեկնաբանությունը և այլն: Ահա թե ինչո՞ւ *see* բայն անցնում է ճանաչողական դաշտ՝ զգայականից անցում կատարելով դեպի մտավորը *Я вижу* (=понимаю), *что то не прав.* /Արյունովա, 1988: 114, 118-119/: Հատկանշական է, որ կիրառվում է ոչ թե *լսել* բայը, այլ *տեսնել* բայը:

Հասկացումը նկարագրելու համար լեզվում առավել հաճախ կիրառվում է տեսնելու գաղափարն արտահայտող բառապաշարը՝ *I see what you mean, I view/look at this matter quite differently*: Շարունակելով միտքը՝ նշենք, որ *discern* բայը, որն ի սկզբանե նշանակում էր *separate*, այժմ նշանակում է *catch sight of* և *mentally realize* /Vanhove, 2008: 341-342, 363/: Այսպիսով, տվյալ դեպքում կատարվել է ան-

ցում՝ ֆիզիկական շփման իմաստային դաշտից տեսողության իմաստային դաշտ, այնուհետև տեսողության իմաստային դաշտից հասկացման իմաստային դաշտ:

Մ. Չոնսոնը հասկացումը նկարագրելու համար առանձնացնում է հետևյալ փոխաբերությունը՝ *Understanding is seeing* /Johnson, 2007: 166/: Հետևյարար, հասկացումը հավասարեցվում է տեսնելու ֆիզիկական փորձին: Ինչպես նշում է Ս. Սյութրոնը, հասկացումը կապված է տեսնելու հետ: Օրինակ՝ *see* բայն ունի *realize, understand, comprehend, grasp, consider, think, observe, behold, watch, witness* իմաստները: Այստեղից նա գալիս է այն եզրակացության, որ չտեսնելը չհասկանալ է, օրինակ՝ *I cannot see how this fits in with what you are saying* /Sjoström, 1999: 73-74/:

Հասկացման գործընթացում լույսի առկայության կարևորությանը անդրադարձել են մի շարք գիտնականներ: *Enlighten* բայն արտահայտում է *spread physical light on something* և *cause somebody to understand (see) something better as if shining light on it* /Faber, Usón, 1999: 214-248/: Ավելի շատ «լույս» սփոելով գաղափարի վրա՝ խոսակիցը հանգում է հասկացման /Johnson, 2007: 166/: Կարելի է եզրակացնել, որ ավելի շատ լույսի դեպքում, ավելի շատ ենք տեսնում, հետևյարար ավելի շատ ենք հասկանում:

Հասկացումը բռնելու է

Հասկացումը ճանաչողական լեզվաբանության մեջ սահմանվում է նաև շոշափման ֆիզիկական փորձի միջոցով: Այսպես, Բ. Լ. Իոնդինի համաձայն՝ հասկացումը ձեռքբերում (որությունը) է: Այդ քեզը նա հաստատում է հասկացում արտահայտող որոշ բայերի օրինակով *have, take, grasp, grip, seize, catch, absorb* /Իոմдин, 2002/: Նմանատիպ մեկնաբանություն հասկացման երևոյթին տալիս են Զ. Լեյբովի և Մ. Չոնսոնը. նրանք հասկացումը սահմանում են հետևյալ կերպ՝ *Understanding is grasping*: Ըստ նրանց՝ շոշափման ֆիզիկական փորձն ավելի հասանելի է դարձնում հասկացումը /Lakoff, Johnson, 2003: 20-21; Johnson, 2007: 166/: Շոշափման ֆիզիկական փորձի և հասկացման իմաստային դաշտերի փոխկապակցվածությանն անդրադարձել է նաև Մ. Վանինովը՝ նշելով, որ դրանց միջև կապը առկա է տարրեր լեզուներում: Անգլերեն *comprehend* բայը ծագում է լատիներեն *comprehendere* բայից, որը նշանակում է *seize together, seize through intelligence, thought*: Նշենք նաև, որ նկարագրվող երևոյթն արտահայտված է նաև գերմաներենում՝ *greifen, fassen (վերցնել)* – *begreifen, erfassen (հասկանալ)* /Vanhove, 2008: 341-342, 363/, նույն կերպ հայերենում *լոյրնել (հասկանալ)* բայի հիմքում բռնել բառն է: Այսպիսով, ֆիզիկական շփում արտահայտող բայերը ձեռք են քերում այնպիսի իմաստներ, որոնք առնչվում են հասկացմանը: Քննարկվող օրինակներում շոշափման իմաստային դաշտից անցում է կատարվել դեպի հասկացման իմաստային դաշտ:

Հասկացումը շարժում է

Սի խումք լեզվաբաններ հասկացումը համեմատում են շարժման հետ: Բ.Լ. Իոնդինը հասկացման և շարժման փոխկապակցվածությունը հիմնավորում է հասկացում արտահայտող որոշ բայերի օրինակով: Այսպես, հասկացում արտահայտող մի շարք բայեր իրենց մեջ պարունակում են նաև շարժման գաղափարը՝ *get, reach, bottom, fathom, enter one's mind, go in, get through, occur, come in, rush* /Իոմдин, 2002/: Գիտնականների մեջ այլ խումք (Ֆ. Շլյայեր-

մախերը, Հ.Գ. Գաղամերը, Ա.Ե. Լեվինտովը, Պ. Ոհկյորը, Լ.Գ. Յոնինը) հասկացման ողջ գործընթացն են բնութագրում որպես շարժում: Հասկացումը մի դեպքում բացատրվում է մեկնության շրջանի (hermeneutic circle) հայեցակերպով՝ այն դիտարկելով որպես շարունակական շարժում՝ մասից դեպի ամբողջը և հակառակը /տես ս <http://iph.ras.ru/elib/0762.html>; Gadamer, 2005: 235/: Մեկ այլ դեպքում հասկացումը ձևից դեպի բովանդակություն, իմաստ, իմաստներից դեպի հասկացություններ, հասկացություններից դեպի մտածողություն շարժումն է /Լևինտօս, 2009/: Հասկացումը բնութագրվում է նաև որպես ուղղակի իմաստից դեպի անուղղակի իմաստ շարժում: Նշված երևոյթը Պ. Ոհկյորը բացատրում է հետևյալ կերպ՝ հասկացման առաջին փուլը ենթադրում է ուղղակի իմաստի հասկացումը, երկրորդ փուլը ենթադրում է ներակայակած իմաստի հասկացումը: Լիարժեք հասկացումը տեղի է ունենում հեղինակի կողմից ակնարկված կամ նկատի ունեցած իմաստի «աղեկվատ» հասկացման դեպքում, որն իր հերթին հասկացման առանձին մակարդակ է /Ricoeur, 1976: 71-75, 87-88; Յոնին, 2000/:

Ինչպես երևում է քննարկվող տեսություններից՝ ամբողջական հասկացումը հասկացման ավելի պարզ մակարդակից ավելի բարդ մակարդակ շարժումն է: Հետևյարար, հաշվի առնելով այն փաստը, որ գոյություն ունեն հասկացման տարրեր մակարդակներ, կարող ենք եզրակացնել, որ հասկացումը շարունակական շարժում է՝ մի մակարդակից դեպի մյուսը, մակերեսայինից դեպի խորքայինը, ուղղակի իմաստից դեպի անուղղակի իմաստի ընկալումը:

Հասկացումը խոսք է երկխոսություն է

Խոսքը կարևոր դերակատարություն ունի հասկացման գործընթացում: Սույն հողվածում խոսքի և հասկացման փոխհարաբերությունները դիտարկվում են 3 տեսանկյունից: Առաջին դեպքում, առնչվում ենք հասկացողական փոխաբերության օրինակների, որտեղ հասկացումն արտահայտվում է «խոսքի» բայերի միջոցով: Երկրորդ դեպքում հասկացման գործընթացը նկարագրվում է խոսքի (երկխոսության) տեսքով: Երրորդ դեպքում խոսքը ներկայանում է որպես հասկացման փիզիկական միջավայր, հենց այդ միջավայրի առկայությունն է հնարավոր դարձնում անել տարրեր հետևողաբար հետևողաբար: Ավելի մանրամասն անդրադասնանք խոսքի այս երեք դերակատարություններին:

ա. «Միտքը որպես լեզու» հասկացողական փոխաբերությունը վերաբերում է բոլոր տեսակի մտավոր գործողություններին, այդ թվում հասկացմանը՝ *Liberals and conservatives don't speak the same language (= don't understand each other)* /Johnson, 2008: 45-51/:

Նման ձևով *accept, reason, guess, persuade, deceive, foresee, remind* բայերը գործածվում են որպես ներքին մտավոր գործունեություն արտահայտող և խոսք արտահայտող բայեր, ընդ որում՝ առաջին դեպքում դրանք արտահայտում են զուտ մտավոր գործունեություն, երկրորդ դեպքում՝ մտավոր գործունեության բովանդակությունը նյութականացվում է, հնչեղություն է ստանում /Faber, Usón, 1999: 248/: Նկարագրվող երևոյթը հիմնավորենք *accept* բայի օրինակով.

“A large number of bishops do not accept the ideas of openness, but few know that,” Cardinal Burke told *Il Foglio* (= do not think something is true). (New York Times, Oct 13, 2014)

"Though I disagree with the findings made by the War College, I accept its decision," Walsh said in a statement (=I say I accept something is true). (Reuters, Oct 10, 2014)

թ. Խոսքը մեծամասամբ արտահայտվում է երկխոսության տեսքով, որի բաղկացուցիչ մասերն են հարցերը և պատասխանները: Յուրաքանչյուր նոր հարց պահանջում է նոր պատասխան, որն իր հերթին պահանջում է հասկացում խոսակցի կողմից:

Հասկացմանը որպես երկխոսական երևույթի անդրադարձել են մի շարք լեզվաբաններ (Ա.Ա. Պոտերնյա, Հ.Գ. Գաղամեր, Բ. Բեյլի, Մ. Զոնսոն, Թ. Ռոհրեր, Վ. Քինչ, Մ. Դայեր, Վ.Զ. Դեմյանկով, Գ.Պ. Շերռովիցլի): Մատուցված նյութի ամփոփումն ու վերաշարադրումը, դրա վերաբերյալ հարցեր տալու և դրանց ճիշտ պատասխաններու ունակությունը հասկացման ցուցանիշներ են:

Այս գաղափարն առավել մանրամասնորեն արտացոլված է Մ. Դայերի աշխատության մեջ: Նրա կողմից կատարված հետազոտության արդյունքների համաձայն՝ ընդհանուր հասկացումը հնարավոր է դառնում տարրեր դեպքերի, փաստերի, գործողությունների միջև տրամաբանական կապերի կոսահման շնորհիվ /Dyer, 1983: 1-11/: Այդ կապի առկայությունն ապահովում է հարցերի ճիշտ պատասխանը, հետևաբար նաև հասկացումը: Հասկացման ժամանակ որևէ տեղեկություն հավասարապես պատկանում է ինչպես խոսողին, այնպես էլ խոսակցին, ինչպես ընթերցողին, այնպես էլ տեքստի հեղինակին:

գ. Հասկացումը տեղի է ունենում խոսքին զուգահեռ (Մ. Զասթ, Փ. Քափըն-թեր, Ա. Գրեյսներ, Ս. Սվեյներ, Վ. Բազգեր, Մ. Սել, Մ. Դայեր, Վ.Զ. Դեմյանկով, Թ.Ա. վան Դեյք, Վ. Քինչ): Միաժամանակ տարրեր հետևություններ են արվում նախադասության շարահյուսական կառուցվածքի, խոսքի մեջ նշված անձանց արտաքինի, տարրեր առարկաների դասավորվածության, նկարագրվող գործողությունների պատճառների, նպատակների, հետևանքների մասին և այլն: Խոսքին զուգահեռ ակտիվանում է նաև հիմնարար գիտելիքների համակարգը: Ուստի խոսքն այն միջավայրն է, որի շնորհիվ հնարավոր են դառնում հետևությունները:

Հասկացումը գիտելիքների վոլուսանցում է

Գոյություն ունի շարունակական փոխկապակցվածություն հասկացման գործընթացի և գիտելիքների միջև (Մ. Զոնսոն, Վ. Քինչ, Ա. Ռամ, Բ. Յու. Գորոդեցլի, Գ.Ի. Խսենբաև, Ա.Ե. Լեվինսոն): Հասկացման ժամանակ անհրաժեշտ է խմանալ խոսքում հիշատակված երևույթները, հասկացությունների սցենարները (script), շրջանակները (frame), պարզունակ/անթերի/կատարյալ/հենքային ճանաչողական մոդելները (idealized cognitive model), փոխաբերություններին, որոնք հատուկ են տվյալ լեզվին ու մշակույթին՝ լինելով ընդհանուր գիտելիքների անբաժանելի մաս /Johnson, 1993: 175-176/:

Հասկացումը կարելի է սահմանել որպես տեղեկությունից անցում գիտելիքի, որն առնվազն պատկանում է երկու հոգու: Նախնական փուլում նոր տեղեկությունը համադրվում է հիմն տեղեկությանը: Այնուհետև հասկացման դեպքում հաղորդակցության մասնակիցների կողմից տարրեր մտքեր, գաղափարներ, կարծիքներ, մոտեցումներ և այլն ձեռք են բերում ընդհանուր բովանդակություն:

Նրանք ստանում են կայուն կարգավիճակ, դառնում են կապակցված, համակարգված փոխակերպվում են գիտելիքի: Արդյունքում ճանաչողական համակարգում տեղի է ունենում «հին» և «նոր» գիտելիքների դասակարգումը: Հստակեցվում է «նոր» գիտելիքի նմանությունը, տարբերությունը, առանձնահատկությունը, կապը «հին» գիտելիքի հետ, ինչպես նաև որոշվում է «նոր» գիտելիքի տեղը և դերը ընդհանուր գիտելիքների համակարգում:

Այլ կերպ ասած հասկացման գործընթացը բաղկացած է գիտելիքի փոխանցումից, դրան հաջորդում է այդ նույն գիտելիքի իմաստավորումը (interpretation) լսողի, խոսակցի կամ ընթերցողի կողմից: Իմաստավորումը հասկացման բարձրագույն մակարդակն է, այն հասկացման բաղկացուցիչ մասն է, որը որոշակի «անվանում» է տալիս երևույթին: Նշեմք նաև, որ իմաստավորման փուլը մի կողմից անհատական է հաղորդակցության յուրաքանչյուր մասնակցի համար, մյուս կողմից այն սահմանում է հասկացման խորությունը՝ աստիճանը:

Հասկացումը կառուցման, զուգորդման, ակտիվացման և ինտեգրման ամբողջությունն է

Հասկացումը չորս հիմնական գործողությունների՝ մատուցվող նյութի վերաբերյալ մտապատկերի կառուցման, համապատասխան գիտելիքների ակտիվացման և դրանց զուգորդման, ինչպես նաև ինտեգրման պարբերական հաջորդումն է (Մ. Զասք, Փ. Քափընթեր, Վ. Քինչ, Թ.Ա. վան Դեյք, Ս. Դայեր):

Այսպիսով, հասկացման մեջ սկզբնական փուլում ընդգրկված է կառուցման գործընթացը, դրան հաջորդում են զուգորդումը և ակտիվացման մեխանիզմների տարածումը, որոնց շնորհիվ հասկացումը դառնում է կանոնավոր և հաջորդական: Դա կոչվում է կառուցման-ինտեգրման (construction-integration) մոդել: Համաձայն այս մոդելի՝ *The earthquake destroyed all the buildings in town except mint* նախադասությունը «կառուցելու» է *mint* բառի երկու իմաստները, և այն իմաստը, որն այնքան էլ կարևոր չէ տվյալ համատեքստում դուրս է մղվելու /Kintsch, 1998: 93-95/:

Հասկացման համար կարևորվում է ոչ միայն գիտելիքը, այլև այդ նույն գիտելիքի կիրառության բնույթը: Որպես կանոն, ինտեգրվում է այն ակտիվացման գիտելիքը, որն առավելագույնս համապատասխանում է տվյալ համատեքստին:

Գիտելիքը համատեքստի մաս է կազմում, որի լույսի ներքո մեկնաբանվում է խոսքը: Փոխարերար արտահայտվելով՝ գիտելիքը «զուգորդումների վրա հիմնված ցանց» է (associative net), որի հիմնական «համագույցները» (nodes) հասկացություններն են: Յուրաքանչյուր խոսք ակտիվացնում է համապատասխան հասկացությունը ընդհանուր գիտելիքների համակարգում: Հետևաբար, հասկացումը մեծապես կախված է գիտելիքի ակտիվացումից /Kintsch, 2002: 5-19/: Յուրաքանչյուր ներկայացվող միավոր (բառ, բառակապակցություն, նախադասություն, քերականական կառույց և այլն) ունի ակտիվացման իր զուգորդական հարթակը (associative level) /Just, Carpenter, 2002: 132/:

Հասկացումը «բացերի» լրացում է

Հասկացումը ենթադրում է «բացերի» լրացում (Ա. Ռամ, Ռ. Շանք, Ռ. Աբելսոն, Թ.Ա. վան Դեյք, Ս. Զոնտոն, Ա.Վ. Լազարի): Հասկացման վերջնական

նպատակը հնարավորինս շատ բացեր գիտելիքներով լրացնելն է: Նշենք, սակայն, որ բացերի լրացումը տեղի է ունենում տարբեր աստիճանի մոտավորությամբ և ճշգրտությամբ, հետևաբար հասկացումը սուբյեկտիվ է: Նման տեսակետ է առաջադրում Գ.Պ. Շերպովիցին: Նա գրում է, որ հասկացումը շատ հազվադեպ է վերականգնում ու փոխանցում այն իմաստն ու բովանդակությունը, որն ի սկզբանե հեղինակն արտահայտել էր իր խորում: Նշվածը բացատրվում է յուրաքանչյուր անհատի մտածելակերպի յուրահատկությամբ /Շեծրօնական, 1995: 481, 483/: Որևէ մեկի խորի իմաստի հասկացումը տեղի է ունենում որոշակի մոտավորությամբ /Soeffner, 2004: 96/:

Խոսքի մոտավոր հասկացման, այսինքն՝ բացերի մոտավոր լրացման վրա ազդում են նաև այնպիսի գործոններ, ինչպիսիք են մարդկանց համոզմունքները, կարծիքները, վերաբերմունքն այս կամ այն հարցի շուրջ, արժեքները, տրամադրությունը, ավանդույթները, ֆիզիկական ընդունակություններն ու հմտությունները և այլն: «Բացերի» լրացման գործընթացում կարևորվում է ավելի լայն համատեքստը: Խոսքը մեկնաբանվում է իրավիճակի տվյալ համատեքստում: Հասկացման նպատակը անուղղակիորեն արտահայտված, ներակայած տեղեկության ընկալումն է: Ամեն անգամ հղում է կատարվում համատեքստին: Խոսքի գործարանական կողմը՝ սուբյեկտիվ և օբյեկտիվ պայմանների հաշվառումը, խոսողի մտադրությունը, նրա դիրքորոշումը, հոգեբանությունը, խոսքի ստեղծման սոցիալ-մշակութային պայմանները, այստեղ, հիմա, տվյալ համատեքստում փաստի կարևորությունը, դեմքի արտահայտության և մարմնի շարժուձևերի իմաստի ընկալումն ապահովում են ամբողջական հասկացումը: Այսպիսով, համաձայն վերոնշյալ լեզվաբանների՝ հասկացումը խոսքի բոլոր կողմերի ընդգրկումն է /Gallagher, 2008: 446, 449; Schutz, 1967: 107; Gadamer, 2005: 236; Դիլտեյ, 2001: 512, 515/: Հակիրճ արտահայտվելով՝ որևէ երևոյթի հասկացումը «ամրողի» լույսի ներքո դրա քննությունն է:

Ի մի բերելով սույն հովվածում շարադրված զաղափարները՝ գալիս ենք այն եզրակացության, որ հասկացումը մտավոր գործունեություն է, որը ենթադրում է առնվազն երկու մասնակից: Այն յուրաքանչյուր հաղորդակցության հիմքն է: Հասկացման գործընթացը բաղկացած է տարբեր փուլերից, որոնք չունեն սահմանված հաջորդականություն, և կախված լեզվական արտահայտության բարդությունից կամ հաղորդակցության մասնակիցների հիմնարար գիտելիքներից՝ դրսնորվում են տարբեր հաջորդականությամբ, արտահայտում հասկացման տարբեր աստիճաններ: Հասկացումը ճանաչողական լեզվաբանության արդիական հիմնախնդիրներից է: Ընդհանրացնելով տարբեր լեզվաբանների տեսակետները՝ կարող ենք եզրակացնել, որ տեսողության և լույսի, բռնելու և վերցնելու, շարժման (ուղղահայց և հորիզոնական), խոսքի և հաղորդակցության գաղափարն արտահայտող իմաստային դաշտերը սերտորեն կապակցված են հասկացման իմաստային դաշտին: Այլ կերպ ասած՝ հասկացումը, լինելով վերացական հասկացություն, սահմանվում է կոնկրետ հասկացությունների միջոցով: Հետևաբար, մարդկային հասկացումը, ինչպես նաև հասկացում արտահայտող բայերը նյութականացված են: Հասկացման դեպքում ֆիզիկական փորձառությունը դառնում է մտավոր փորձառության հիմքը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Bailey B. Misunderstanding // Duranti A. (ed.) *A Companion to Linguistic Anthropology*. Oxford, UK: Blackwell Publishing Ltd, 2004.
2. Dijk van T.A. Opinions and Attitudes in Discourse Comprehension // Le Ny J.-F., Kintsch W.A. (eds.) *Advances in Psychology*, v. 9: *Language and Comprehension*. The Netherlands: North Holland Publishing Company, 1982.
3. Dyer M.G. In-Depth Understanding: A Computer Model of Integrated Processes for Narrative Comprehension (Artificial Intelligence). Cambridge, MA: MIT Press, 1983.
4. Faber P.B., Usón R.M. Constructing a Lexicon of English Verbs. Berlin, Germany: Walter de Gruyter, 1999.
5. Gadamer H.-G. The Hermeneutic Significance of Temporal Distance // Stehr N., Grundmann R. (eds.) *Knowledge: Critical Concepts*, v. 2: *Knowledge and Society: Forms of Knowledge*. Abingdon, Oxon, UK: Routledge, 2005.
6. Gadamer H.-G. Philosophical Hermeneutics. Berkeley and Los Angeles, California, USA: University of California Press, 2008.
7. Gallagher Sh. Understanding Others: Embodied Social Cognition // Calvo P., Gomola T. (eds.) *Handbook of Cognitive Science: An Embodied Approach*. Amsterdam. The Netherlands: Elsevier Ltd, 2008.
8. Graesser A.C., Swaner S.S., Baggett W.B., Sell M.A. New Models of Deep Comprehensions // Britton B.K., Graesser A.C. (eds.) *Models of Understanding Text*. New-York: Psychology Press, 2014.
9. Johnson M. Moral Imagination: Implications of Cognitive Science for Ethics. Chicago, the USA: the University of Chicago Press, 1993.
10. Johnson M. The Meaning of the Body: Aesthetics of Human Understanding. Chicago, the USA: The University of Chicago Press, 2007.
11. Johnson M. Philosophy's Debt to Metaphor // Gibbs R.W. (ed.) *The Cambridge Handbook of Metaphor and Thought*. Cambridge: Cambridge Univ. Press, 2008.
12. Johnson M., Rohrer T. We are Live Creatures: Embodiment, American Pragmatism and the Cognitive Organism // Ziemke T., Zlatev J., Frank R.M. (eds.) *Body, Language and Mind: Embodiment*, v. 1. Berlin, Germany: Walter de Gruyter, 2007.
13. Just M.A., Carpenter P.A. A Capacity Theory of Comprehension: Individual Differences in Working Memory // Polk Th.A., Seifert C.M. (eds.) *Cognitive Modeling*. Massachusetts Institute of Technology. USA: MIT Press, 2002.
14. Kintsch W. Comprehension: A Paradigm for Cognition. Cambridge, United Kingdom: Cambridge University Press, 1998.
15. Kintsch W.A. The Role of Knowledge in Discourse Comprehension: A Construction-Integration Model // Polk Th.A., Seifert C.M. (eds.) *Cognitive Modeling*. Massachusetts Institute of Technology, USA: MIT Press, 2002.
16. Lakoff G., Johnson M. Metaphors We Live by. London: The University of Chicago Press, 2003.

17. Ram A., Moorman K. (eds.) *Understanding Language Understanding: Computational Models of Reading*. USA: MIT Press, 1999.
18. Ricoeur P. *Interpretation Theory: Discourse and the Surplus of Meaning*. Fort Worth, Texas, USA: Texas Christian University Press, 1976.
19. Schank R.C., Abelson R.P. *Scripts, Plans, Goals, and Understanding*. Psychology Press, 1977.
20. Schutz A. *The Phenomenology of the Social World*. Evanston, Illinois, USA: Northwestern University Press, 1967.
21. Sjöström S. From Vision to Cognition // Allwood J., Gärdenfors P. (eds.) *Cognitive Semantics: Meaning and Cognition*. Amsterdam, the Netherlands: John Benjamins Publishing Company, 1999.
22. Soeffner H.-G. Social Scientific Hermeneutics // Flick U., Kardoff von E., Steinke I. (eds.) *A Companion to Qualitative Research*. London, UK: SAGE Publications Ltd, 2004.
23. Sweetser E.E. From Etymology to Pragmatics. Metaphorical and Cultural Aspects of Semantic Structure. Cambridge: Cambridge University Press, 2001.
24. Vanhove M. Semantic Associations between Sensory Modalities, Prehension and Mental Perceptions // Vanhove M. (ed.) *From Polysemy to Semantic Change: Towards a Typology of Lexical Semantic Associations*. Amsterdam, the Netherlands: John Benjamins Publishing Company, 2008.
25. Wiezbicka A. Semantics: Primes and Universals. New York: Oxford Univ. Press, 1996.
26. Арутюнова Н.Д. Типы языковых значений: оценка, событие, факт. Москва: Наука, 1988.
27. Городецкий Б.Ю. Компьютерная лингвистика: моделирование языкового общения // Оборина М.А. (ред.) *Новое в зарубежной лингвистике: компьютерная лингвистика*. Москва: Прогресс, 1989, № 24.
28. Дейк ван Т.А., Кинч В. Стратегии понимания связного текста // *Новое в зарубежной лингвистике: когнитивные аспекты языка*. Москва, 1988, № 23 // <http://philologos.narod.ru/ling/dijk.htm>
29. Демьянков В.З. Понимание как интерпретирующая деятельность // *Вопросы языкоznания*. Москва: Наука, 1983, № 6.
30. Демьянков В.З. Интерпретация, понимание и лингвистические аспекты их моделирования на ЭВМ. Москва: Издательство Московского университета, 1989 // <http://www.infolex.ru/Int0.html>
31. Демьянков В.З. Когниция и понимание текста // *Вопросы когнитивной лингвистики*. Тамбов: Тамбовский государственный университет им. Г. Р. Державина, 2005, № 3.
32. Дильтей В. Герменевтика и теория литературы (собр. соч., т. 4) // Михайлова А. В., Плотникова Н. С. (ред.) Москва: Дом интеллектуальной книги, 2001.
33. Иомдин Б.Л. Лексика иррационального понимания. Москва, 2002 // <http://www.dissercat.com/content/leksika-irratsionalnogo-ponimaniya/>

34. Исенбаева Г.И. Понимание и возможность его рационального осуществления // *Вестник Челябинского государственного университета: филология, искусствоведение*, 2008, № 37 (138).
35. Йонин Л. Г. Социология культуры: путь в новое тысячелетие. (Учебное пособие для студентов вузов). Москва: Логос, 2000 // http://www.gumer.info/bibliotek_Buks/Sociolog/Ionin/_Index.php //
36. Лазарев А.В. Прямономинативные и косвенномоминативные средства выражения понимания и непонимания (на материале английского и русского языков) // *Известия Российского государственного педагогического университета им. А.И. Герцена*, том 22, 2007, № 53 //<http://cyberleninka.ru/article/n/pryamonominativnye-i-kosvennonominativnye-sredstva-vyrazheniya-pomimaniya-i-neponimaniya-na-materiale-angliyskogo-i-russkogo-yazykov/>
37. Левинтов А.Е. Непонимание как ресурс коммуникации. 2009 // <http://www.redshift.com/~alevintov/> //
38. Левинтов А.Е. Герменевтический круг // <http://www.port-folio.org/part272.htm> //
39. Потебня А.А. Мысль и язык. Харьков: Типография Адольфа Дарре, 1892.
40. Щедровицкий Г.П. Избранные труды. Москва: Школа культурной политики, 1995.
41. Герменевтический круг. Новая философская энциклопедия. Институт Философии Российской Академии Наук // <http://iph.ras.ru/elib/0762.html> //
42. <http://www.vocabulary.com/dictionary/accept>

Д. МОВСИСЯН – Понимание в контексте когнитивной лингвистики. – В статье на примере глаголов понимания, показано, что подобно другим абстрактным концептам понимание материализуется и основано на физическом опыте. Через выявление характерных сторон сложного процесса понимания в рамках статьи сделана попытка дать его определение. Процесс понимания представлен как совокупность различных ментальных процессов, регулярно чередующихся друг с другом.

Ключевые слова: когнитивная лингвистика, концептуальная метафора, знание, материализация, диалог, вопросы и ответы

D. MOVSISYAN – Understanding in the Context of Cognitive Linguistics. – The paper touches upon the phenomenon of understanding in the context of cognitive linguistics. On the example of verbs of understanding it is shown that, similar to other abstract concepts, understanding is embodied and based upon physical experience. An attempt is made to define the process of understanding by emphasizing one of its aspects. Understanding is presented as a complex of various mental processes regularly following one another.

Key words: cognitive linguistics, understanding, conceptual metaphor, knowledge, embodiment dialogue, questions and answers

Զարուի ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ
Երևանի պետական համալսարան

**ՈԾԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻԾՆԵՐԻ ՈԾԱՏԱՐԲԵՐԱԿԻՉ ԴԵՐՆ
ԱՆԳԼԵՐԵՆ ԳՈՐԾԱՐԱՐ ՆԱՍԱԿՆԵՐՈՒՄ**

Տվյալ հոդվածում քննարկվում է պաշտոնական-գործարար փաստաթղթերի ոճի տարատեսակ հանդիսացող գործարար նամակագրության ոճական հատկանիշները որպես իմաստակառուցվածքային առանձնահատկությունների առավել ամբողջական և արդյունավետ ներկայացման պայման։ Հոդվածում հատկություն են առավելագույն ներգործություն ապահովող լեզվամիավորները, որոնցով հաղորդվում և շեշտվում է անհրաժեշտ բովանդակությունը։ Լեզվանձական հնարների գործածնան հիմնական միտումները բոլով են տալիս սահմանել գործարար նամակները բնուրագրող հետևյալ ոճական հատկանիշները՝ պաշտոնականություն, հատկապես, ճշգրտություն և արտահայտչականություն։

Բանափի բառեր. գործարար նամակագրություն, քերականական կառույցներ, կաղապարային բառակապակցություններ, ոճական հատկանիշներ, պաշտոնականություն, հատկություն, ճշգրտություն, արտահայտչականություն, հուզարտահայտչական ներգործություն

Լեզվական նյութի գիտական ուսումնասիրության շրջանակում զգալիորեն մեծ է տարբեր գործառական ոճերի նկատմամբ ցուցաբերվող հետաքրքրությունը՝ տեքստերի իմաստակառուցվածքային առանձնահատկությունների սահմանման, բովանդակության արտահայտման լեզվանձական հնարների և ոճական հատկանիշների բացահայտման ուղղությամբ։ Գործառական ոճերի համակարգում գործարար նամակագրությունը հանդիսանում է պաշտոնական գործարար փաստաթղթերի ոճի տարատեսակ և արտահայտվում է գործարար ոճին հատուկ լեզվամիավորների ամբողջությամբ։

Լեզվի գործառական կողմի հետ է առնչվում ոճը, որը խոսքին ավարտուն տեսք է հաղորդում՝ միացնելով և ամբողջացնելով խոսքը կազմող միջոցները /Гауզենբլազ, 1978: 61/։ Պաշտոնական ոճի շրջանակում՝ գիտական և պաշտոնական փաստաթղթերի ոճերը հակառակելով գեղարվեստական և հրապարակախոսական ոճերին, առանձնանում են իրենց ոճատարբերակիչ հատկություններով ու ոճական հատկանիշներով /Сиротинина, 1982: 12/։ Ուստի յուրաքանչյուր գործառական ոճ բնորոշվում է ոչ միայն այդ ոճին հատուկ լեզվամիավորների գործածությամբ, այլև ոճական հատկանիշների ամբողջությամբ։ Տասնամյակների ընթացքում գործառական ոճերից յուրաքանչյուրի ուսումնասիրությունը, ինչպես և համարումը հանգեցրել են ոճական հատկանիշների խմբավորմանը։ Ըստ Է. Ռիգելի ոճական հատկանիշը խոսքի /տեքստի/ կազմակերպման որակական սկզբունք է՝ պայմանավորված հաղորդակցման ոլորտով, խոսքի գործառությամբ, պայմաններով և բովանդակությամբ /Բիզել, 1978: 79/։ Ներկայումս լեզվաբանները գրադարձում են ոչ թե պարզապես գործառական ոճը բնորոշող լեզվական միջոցների թվարկմամբ, այլ ոճական

հատկանիշների ամբողջական և մանրակրկիտ նկարագրմամբ՝ իր բազմատեսակ դրսնորումներով /Հայր, 1981: 3/: Այնպիսի ոճական հատկանիշներ, ինչպիսիք են՝ արտահայտչականությունը, հուզականությունը, տրամարանականությունը, կարող են բնորոշ լինել թե՝ գեղարվեստական և թե՝ գիտական և պաշտոնական փաստաթղթերի ոճերին: Թեև տեսականորեն առաջադրվում է որոշակի սահմանափակում. արտահայտչականությունն ու հուզականությունը վերագրելով գեղարվեստական ոճին, տրամարանականությունը՝ գիտական ու պաշտոնական փաստաթղթերի ոճերին: Այնուամենայնիվ այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են՝ շարադրանքի հստակությունը, փաստերի ճշգրտությունը, մտքերի տրամարանական հաջորդականությունը, անկանած, պաշտոնական-գործարար ոճի ամբաժանելի մասն են կազմում: Պաշտոնական-գործարար ոճին ավանդաբար վերագրվող բոլոր այս հատկանիշները սովորաբար գիտական ուսումնասիրությունների ելակետ են համարվում: Սակայն մասնավոր դեպքերի, այսինքն՝ գործարար նամակների առանձին խմբերի և տեսակների քննությամբ է հնարավոր դառնում բացահայտել լեզվառնական առանձնահատկություններն ու բնորոշ ոճական հատկանիշները:

Հոդվածում քննարկվելու են առևտրային ոլորտի գործարար նամակներին հատուկ բառային ենթաշերտերի, քերականական կառույցների, կաղապարային բառակապակցությունների գործածման հիմնական միտումները և այն ոճական հատկանիշները, որոնք ոճակազմին և ոճատարքերակից դեր են կատարում: Գործարար նամակագրությանն առաջադրվող հիմնական ոճական պահանջն արտահայտման ճշգրտությունն ու հստակությունը, տերմինների ու նրանցով կազմվող կառույցների, կայուն և կաղապարային բառակապակցությունների գերակշռությունը և այդ խոսքում: Սակայն նամակի ընդհանուր իմաստային բովանդակությունից ու նամակագրի նպատակներից կախված, որոշ լեզվամիավորներ կարող են ձեռք բերել լրացուցիչ իմաստներ և հուզարտահայտչական նրբերանգներ: Որոշ դեպքերում պաշտոնականություն ոճական հատկանիշը կարող է առավել կամ պակաս շեշտված լինել, այսինքն՝ ժամանակի ընթացքում հաղորդակցվողների փոխազդեցությունը կարող է փոփոխվել, հանգեցնելով առավել կամ պակաս պաշտոնականության, որն իր առնիշական արտացոլումն է գտնում խոսքում, արտահայտվելով հաղորդակցական նոր հատկանիշներով /Yule, 2002: 59/: Այս առումով կարևորվում է արտալեզվական գործուների դերը և այդ փաստը հաստատվում է նրանով, որ ոճը մշտապես հանդես է գալիս բովանդակության և արտահայտման, լեզվականի և արտալեզվականի միասնությամբ /Сердобинцев, 1982: 63/:

Առևտրային ոլորտն արտացոլող նամակների իմաստակառուցվածքային առանձնահատկությունների ուսումնասիրությունը մեզ թոյլ է տալիս առանձնացնել գործարար նամակագրությունը բնութագրող հետևյալ չորս ոճական հատկանիշները՝ պաշտոնականություն, հստակություն, ճշգրտություն և արտահայտչականություն: Այս հատկանիշների միջոցով գործարար նամակներում ներկայացվող բովանդակությունը հիմնավոր է և փաստարկված, անհրաժեշտության դեպքում պատկերավոր և արտահայտիչ, ինչպես նաև առավել կամ

պակաս պաշտոնական: Այս ոճական հատկանիշները հաճախ այնքան փոխված կապացված և միասնական են արտացոլվում նամակներում, որ դրանց տարանջատմամբ խախտվում է բռվանդակային ամբողջականությունը:

Պաշտոնականությունը կարևորագույն ոճական հատկանիշ է, որը յուրաքանչյուր գործարար նամակի բաղկացուցիչ մասն է կազմում: Այս նամակում կարող է առավել կամ պակաս արտահայտված լինել՝ պայմանավորված հաղորդակցվողների փոխհարաբերություններով: Գործարար նամակներին բնորոշ կաղապարային բառակապակցությունները՝ ապահովելով պարբերությունների միջև իմաստային կապը, մեծապես օժանդակում են նամակի պաշտոնականությանը: Այդ արտահայտությունների պարզեցված տարբերակները խոսքին հաճախ կարող են հաղորդել պակաս պաշտոնական և առավել մտերմիկ երանց: Նամակում պաշտոնականությունը ենթադրում է նաև երեսությների իրենց մասնագիտական անվանումներով կոչումը, լուրջ և կշռադատված մուտքեցման, քաղաքավարի և փաստարկված խոսքի արտահայտումը:

Հաղորդվող բռվանդակության *հստակության* համար վկայակոչվում է նախորդ նամակագրության ամսաթիվը, անհրաժեշտության դեպքում հարցում կամ հիշեցում է կատարվում նախորդ պատվերների գնային պայմանավորվածությունների կամ առկա շուկայական գների, պատվիրված ապրանքների ծավալների, մի շարք այլ հատկանիշների և առաքման պայմանների մասին: Հստակությունն արտահայտվում է գործարքներին առնչվող պայմանների, փաստերի ու զանազան գործընթացների շարադրմամբ, որոնք առավելագույնս կնպաստեն խնդրի արագ ընթացքին:

Նամակների հիմքում ընկած հստակություն հատկանիշի հետ անբաժանելիորեն կապված է *ճշգրտությունը*, որը ստույգ, հավասարի փաստերի ներկայացումն է: ճշգրտությունը բացառում է անհիմն ենթադրություններ, մոտավոր հաշվարկներ և չպատճառաբանված մեկնարանություններ:

Արտահայտչականությունը նպաստում է ուշադրության արժանի բռվանդակության հաղորդմանը: Այս նպատակին ծառայող հնարները տարանջատում, շեշտում են առանձին լեզվամիավորներ՝ խոսքն առավել հստակ, ցայտուն և պատկերավոր դարձնելով: Առաջարկի և վաճառքի նամակներն անհնարին է պատկերացնել առանց ոճական միջոցների, որոնք արտահայտիչ և պատկերավոր դարձնելով խոսքը՝ ներազդում են ընթերցողին: Սերժման նամակներում ևս տեղ է գտնում պատկերավորությունը, բարցնելու մերժման փաստը, սակայն նրանց բնորոշ է նաև անկանխատեսելիությունը, որը կստիպի մինչև վերջ ուշադրությամբ կարդալ նամակը:

Գործարար նամակներից քաղված օրինակների քննարկմամբ հիմնավորենք ոճական հատկանիշների մեր ընտրությունը:

Գործարար նամակների անբաժանելի մաս են կազմում զանազան առևտրային գործընթացներ բնութագրող քերականական կառույցները, կայուն և կաղապարային բառակապակցությունները: Հաղորդման և ներգործման գործառույթներ իրացնող այս լեզվամիավորները հանդիսանում են գործարար նամակագրության կարևորագույն ոճատարբերակից բաղկացուցիչներ և արտահայտում են պաշտոնականության որոշակի աստիճան:

Հարցում արտահայտող քերականական կառույցները քաղաքավարի դիմում-խնդրանքի ձևեր են: Հարցման նամակների նպատակն է պարզել անհրաժեշտ տվյալների ապրանքների տեսականու, գների, վճարման ու առաքման պայմանների վերաբերյալ՝

1. Will you please send us your catalogue and full details of your export prices and terms of payment, together with any samples you can let us have.

2. Will you please state your earliest delivery date, your terms of payment, and discounts for regular purchases.

Հարցումը որպես քաղաքավարի խնդրանք ընդունված է կատարել “will” եղանակավորող բայի և “please” բառի համակցմամբ՝ “Will you please send us ...?”, “Will you please state ...?”. Միևնույն արտահայտությունը կարելի է փոփոխել երկու հնարավոր տարրերակով: Սի դեպքում՝ խնդրանքին առավել շեշտված պաշտոնական նրբերանգ հաղորդելու նպատակով հարցումը կատարել “would” կամ “could” եղանակավորող բայերի միջոցով, իսկ մյուս դեպքում՝ հարցման մեջ պարզեցում կատարել՝ “Please send us...”: Արդի գործարար լեզվում նկատելի է երկար պաշտոնական արտահայտություններից ազատվելու միտում՝ փոխարենը օգտագործելով առավել պարզ արտահայտություններ ու կառույցներ: Ուստի նախադասության մեջ պարզեցումը չի հանգեցնում պաշտոնական քաղաքավարի ոճի կորստի: Նշված տարրերակներից յուրաքանչյուրն արտահայտում է պաշտոնականության որոշակի աստիճան և այդ տարրերակի ընտրությունը պայմանավորված է արտալեզվական հիմքով:

Գործարար նամակներում հասցեագրողը մշտապես հակված է նամակն ավարտել ակնկալիք, հարցի լուծում կամ համագործակցություն արտահայտող որևէ կաղապարային բառակապակցությամբ, որը կպահպանի նամակի պաշտոնականությունը և կառուցվածքային ամբողջականությունը: Հարկ է նաև նշել, որ նամակի պաշտոնական եզրափակումն առավելագույնս ներգործում է հասցեատիրոջը և լրացուցիչ անգամ մեծացնում նրա կողմից արագ արձագանքելու հավանականությունը: Այս կաղապարային բառակապակցությունների ընտրությունը կախված է նամակի ընդհանուր իմաստային բովանդակությունից՝

We look forward to your early reply.

We look forward to hearing from you soon.

Golf is a precision club and ball sport in which competing players (or golfers) use various clubs to hit balls into a series of holes on a course using as few strokes as possible. Golf is defined, in the rules of golf, as "playing a ball with a club from the teeing ground into the hole by a stroke or successive strokes in accordance with the Rules."


It is one of the few ball games that do not require a standardized playing area. Instead, the game is played on a course, in general consisting of an arranged progression of either nine or 18 holes. Each hole on the course must contain a tee box to start from, and a putting green containing the actual hole. There are various other standardized forms of terrain in between, such as the fairway, rough, and hazards, but each hole on a course, and indeed among virtually all courses, is unique in its specific layout and arrangement.

Golf competition is generally played for the lowest number of strokes by an individual, known simply as stroke play, or the lowest score on the most individual holes during a complete round by an individual or team, known as match play. Stroke play is the most commonly seen format at virtually all levels of play, although variations of match play, such as "skins" games, are also seen in televised events. Other forms of scoring also exist.

A golf course consists of a series of holes, each with a teeing ground that is set off by two markers showing the bounds of the legal tee area, fairway, rough and other hazards, and the putting green surrounded by the fringe with the pin (normally a flagstick) and cup.

The levels of grass are varied to increase difficulty, or to allow for putting in the case of the green. While many holes are designed with a

direct line-of-sight from the teeing area to the green, some holes may bend either to the left or to the right. This is commonly called a "dogleg", in reference to a dog's knee. The hole is called a "dogleg left" if the hole angles leftwards and "dogleg right" if it bends right. Sometimes, a hole's direction may bend twice; this is called a "double dogleg".



Հաջորդ փուլում ուսանողները թարգմանում են նշված եզրույթները, նպատակ հետապնդելով բացահայտել դրանց կիրարկման առանձնահատկությունները սպորտային-մասնագիտական և կենցաղային ոլորտներում: Օրինակ՝ to tee բառը գոլֆ խաղացողների բառապաշարում գործածվում է խփել առաջին հարվածը իմաստով, իսկ խոսակցական անգլերենում նշանակում է առաջին քայլն անել, սկսել: Նրանց հաջորդվում է նաև պարզել, որ եթե կրթության ոլորտում to tee off a course on some subject կիրառվում է ինչ-որ թեմայով դասախոսությունների շարք սկսել նշանակությամբ, ապա բռնցքամարտում tee off նշանակում է զյուին ուժեղ հարված հասցնել, մինչդեռ խոսակցական անգլերենում նույն բայական կապակցությունը to tee off on one's opponent արտահայտության մեջ հանդիսանում է զայիս հայինյել իմաստով: Թարգմանելիս բառարանային աշխատանք կատարելու ընթացքում ուսանողը ծանոթանում է նաև to tee off արտահայտության հոմանիշ միավորներին (reprimand, scold), դրանց այնպիսի կիրառություններին, ինչպիսիք են to tee off on one's son for wrecking the car (հանդիմանել, բարկանալ որդու վրա ավտոմեքենան ջարդելու համար), it teed me off (դա ինձ հունից հանեց) և այլն:

Հայերեն և անգլերեն տեքստերի ներմուծումը չի կարող տալ ցանկալի արդյունք այն առումով, որ ամեն մի եզրույթ ներկայացնում է որոշակի գործորդական գոտի, որի մեջ մտնում են տարբեր դարձվածքային միավորներ: Դրանք յուրացնելու համար անհրաժեշտ է տարրական գիտելքիներ ունենալ տվյալ մարզաձևի մասին: Օրինակ՝ որպեսզի ուսանողը կարողանա ճիշտ թարգմանել water hazard (ջրի պատճեց) եզրույթը, նրան անհրաժեշտ է տեղեկություն ունենալ այն մասին, թե ինչ պատիժ է նախատեսվում ջրի պատճեցն անցնելու դեպքում:

Ասվածից հետևում է, որ ապագա քարզմանիշը պետք է ճիշտ պատկերացում ունենա ոչ միայն գոլֆ խաղացողների, այլև երկրպագուների, սպորտային մեկնաբանների, տեսարանների խոսքային փառքազի մասին, հաշվի առնի այն հանգամանքը, որ գործարանական կարողունակությունը հաղորդակցական կարողունակության ամենակարևոր բաղադրիչներից է:

Այսպիսով, ձևավորվում է ոչ միայն թիրախային մշակույթի, այլև ենթամշակույթի՝ տվյալ դեպքում սպորտային ենթամշակույթի աստիճանական, փուլ առ փուլ յուրացման հիմնահարցը՝ պահանջվող թեմաների ընտրությամբ և կազմակերպվող դասընթացի բովանդակության շարունակական փոփոխմամբ:

Սպորտային հասկացույթների քարզմանությունը գործարանական մուտքաման տեսանկյունից ենթադրում է առաջին պլան մղել «հասարակական և հասարակական-հոգեբանական ոլորտների» ուսումնասիրությունը /Կարայլով, 1987: 18-19/:

Ինչ վերաբերում է սպորտային տարրեր բառակապակցությունների քարզմանությանը, ապա հաշվի առնելով գործարանական հայեցակերպը՝ կարելի է շեշտադրել երկու հարցադրում՝ 1. ի՞նչ տեղ է զբաղեցնում տվյալ բառակապակցությունը այս կամ այն սպորտային հասակացույթի գուգորդական գոտում, 2. ի՞նչ խոսքային իրադրություններում է դրսնորվում դրա անհամարժեքությունը: Կարևորվում է նաև այն, թե ինչ գործարանական արժեք ունի այս կամ այն սպորտային բառը կամ բառակապակցությունը:

Եթե հաշվի է առնվում այն հանգամանքը, որ գործարանությունը հաղորդական գործունեության ուսումնասիրություն է դրա հասարակական-մշակութային համատեքստում, ապա հասկանալի է դառնում նախարարզմանական վերլուծության ժամանակ սպորտի ոլորտին առնչվող խոսքային ակտերի բովանդակային և գործառական բնութագրերի ուսումնասիրությունը առաջին պլան մղելու անհրաժեշտությունը:

Դրա հետ մեկտեղ, կարևորվում է նաև միջանձնային հարաբերությունների շարժներացի բացահայտումը: Ակնհայտ է, որ մարզիկները, մարզիչները, սպորտային մեկնաբանները և երկրպագուները հաղորդակցական-գործարանական տարրեր ուսումնավարություններ են կիրառում:

Սպորտային հաղորդակցման գործարանական հայեցակերպը շեշտադրվում է նաև սպորտային գովազդների ստեղծման, ներկայացման, հասկացման տեսանկյուններից: Քանի որ սպորտային գովազդի լեզուն ստեղծվում է կրոնկրետ լարանի կամ երկրպագուների համար, կարելի է պնդել, որ առանց նրանց խոսքային-հաղորդակցական վարքազի ճիշտ մոդելավորման՝ հնարավոր չէ հասնել ցանկալի արդյունքի՝ համոզել, հորդորել, անձին մասնակցել այս կամ այն մրցմանը կամ հանդիպմանը:

Սպորտային քարզմանիշը պետք է կարողանա քարզմանել երկխոսական կարծ և երկար տեքստեր, գովազդային սլաստառներ, տարրեր ուսումնական հումորային և մահախոսական ժանրերի տեքստեր:

Թարգմանչի գործարանական կարողունակության ձևավորման տեսանկյունից կարևորվում են սպորտային խոսույթի հատկապես հետևյալ բաղադրիչները՝ մասնակիցները, ժամանակացույցը, նպատակները, արժեքները, ուսումնական կամ հանդիպմանը:

վարությունները, ժամրերը, ոճը, նախադեպային տեքստերը և խոսույթային բանաձևերը: Այդ առումով մեծ ուշադրության է արժանի նաև սպորտի հասկացութային ոլորտը (կոնցեպտոլորտը): Առանձնապես հարկ է կարևորել սպորտային տեքստերի ազգամշակութային յուրահատկությունները, մասնավորապես՝ ազգային նշութավորում ունեցող բառապաշարի առանձնահատկությունները:

Բառի մակարդակում գործարանական լեզվաբանությունը ներկայանում է որպես գործառական բառագիտություն, որի հիմնական խնդիրներից է բացահայտել ընտրության և համարժեք կիրառման ներքին օրինաչափությունները կոնկրետ հաղորդակցական ակտի ժամանակ /Բոնդարկո, 1996: 89/: Այլ կերպ՝ գործարանական լեզվաբանության շրջանակներում ձևավորված գործառական բառագիտությունը փորձում է բացահայտել բառերի կիրառման օրինաչափ սահմանափակումները, որը ենթադրում է գործարանական իրադրությունների տիպարանության նշակում և այնպիսի չափանիշների հաշվառում, ինչպիսիք են տեղը, ժամանակը, նպատակը, խոսողի դիտավորությունը, նրա սոցիալական կարգավիճակը, մասնագիտությունը, սեղը, տարիքը /Ազնաւորա, 1988: 76/:

Մարզմանության գործարանական հայեցակերպը ենթադրում է անցում կատարել սպորտային տեքստից դեպի սպորտային խոսույթը: Վերջինս, ներկայանալով պաշտոնական-վավերագրական և առօրյա-գործարարական ձևաչափերով, առանձնանում է նախ և առաջ նոր բառապաշարով, նորակազմություններով և նորաբանություններով, դիպվածային բառերով և ներզոր բառապաշարով: Հաշվի առնելով տնտեսական, գիտական և այլ ոլորտներում համաշխարհայնացման՝ օրեցօր առավել մեծ բափով ձևավորվող միտումները՝ կարելի է պնդել, որ սպորտային անգլերենը միջազգային բազում փոխառությունների սկզբնաղբյուր է: Օրինակ՝ out, badminton, basketball, boxing, volleyball, jockey, ping-pong, sports, sportsman, start, coach, train, finish, football, champion outsider, butterfly, bobsleigh, boots, water polo, handball, handicap, goal, cards, go-karting, crawl, cross, knockout, knockdown, round, rugby, wrestling, rally, ring, sparring, sprinter stayer, time, tandem, forward, track, hockey, yacht, yachtsman:

Ինչ վերաբերում է բանավոր սպորտային խոսույթի բարգամանությանը, գործարանական մոտեցումը օգնում է բարգմանչին հատակեցնել ազգամշակութային նշութավորում ունեցող բառապաշարի ընտրության սկզբունքները:

Սպորտային բարգմանիցը պետք է կարողանա իրավանացնել սպորտային խոսույթի ընդհանուր լեզվաբանական, նախաբարգմանական և հետքարգմանական վերլուծություն, որը պահանջում է համապատասխան հենքային գիտելիքներ սպորտի ոլորտում հաղորդակցություն ծավալող սուրյեկտների մասին: Դրա համար անհրաժեշտ է ուսումնասիրել սպորտային խոսույթի համակարգը, որի հիմնական բաղադրիչներն են սպորտ, խաղ, մրցում հասկացույթները: Կարևոր է նշել, որ տվյալ հասկացույթների իմաստային դաշտերում առաջին պլան են մովում ուժ, խիզախություն, ճարպկություն, մարդկային մարմնի գեղեցկություն և այլ հասկացությունները համապատասխան արտահայտություններով:

Սպորտային խոսույթի շրջանակներում, հաշվի առնելով խոսքային վարքագծի առանձնահատկությունները կամ գործարանական հայեցակերպը, գիտ-

նականներն առաջնացնում են մարմնամարզիկներին և նրանց անմիջական շրջապատը՝ մարզիչներին, մրցավարներին, վարչարարաներին: Երկրորդ խումբը ներառում է երկրպագուները և հանդիսատեսը: Նրանց խոսքը կարելի է կաղապարել այլ խոսույթների շրջանակներում: Երրորդ խմբին վերաբերում են սպորտային մեկնարանները և սպորտային լրագրողները, որոնց խոսքը առավելապես վերաբերում է վիրտուալ խոսույթին:

Սպորտային խոսույթի բարգմանուրյան ընթացքում բարգմանիչը հաղթահարում է այսպես կոչված գործարանական բնույթի փոխներթափակնեցումը, երբ նրանք առնչվում են լեզվակրի խոսքում առկա ազգամշակութային բնույթի սպորտային լակունաների հետ: Ինչպես արդեն վերը նշվեց, հայերեն և անգլերեն սպորտային ենթաեզրուների հասկացութային դաշտերը գուգորդական մակարդակում տարբերվում են, այսինքն՝ նույն բառը կամ եզրույթը գուգակցվում է տարբեր բառերի կամ բառապակացությունների հետ:

Սպորտային տերմինների, հասկացությունների, հասկացությունների անհամարժեքության հիմնախնդիրը նույնպես դիտարկվում է լեզվամշակութային, մշակութարանական, գործարանական հարթության վրա: Հայալեզու մարզիկները, մարզիչները գործում են հասկացութային միանգամայն այլ ոլորտում, քանի որ մենք գործ ունենք սպորտային անհամարժեք եզրույթ-իրակությունների հետ, երբ տարբեր մարզաձևեր հայերենի համար մշակութային, ենթամշակութային ակնիայտ լակունա են: Օրինակ գոլֆ, կրիկետ և այլն: Ավելին, հայալեզու բարգմանիչն առնչվում է նաև անգլալեզու մարզիկների, մարզիչների, մեկնարանների անհամարժեք խոսքային վարքագծի հետ, որն էլ անհրաժեշտություն է ստեղծում հաղթահարելու ոչ միայն մշակութային, գործարանական, այլև խոսույթային փոխներթանցման դրսերումները խոսքի մակարդակում:

Ծանոթագրություններ

1. Հարցումն իրականացվել է ԵՊՀ բարգմանչական բաժնի III կուրսում:
2. Գոլֆի խաղադաշտը բաժանված է 18 հավասար մասերի՝ մրցուղիների, որոնց վերջում գտնվում են փոսիկները: Այդ 18 փոսիկների գրավումը կազմում է խաղի առաջին փուլը: Յուրաքանչյուր փոսիկի արդյունքի հաշվման միավորը փարս է՝ հարվածների այն թիվը, որը հաջող խաղի դեպքում գոլֆ խաղացողը պետք է ապահովի յուրաքանչյուր կոնկրետ փոսիկի համար կամ ամբողջ դաշտում: Յուրաքանչյուր փոսիկի համար տրվում է 3–5 հարված: Բոլոր փոսիկների փարերի գումարը կազմում է դաշտի ընդհանուր փարը: 18 փոսիկով ստանդարտ խաղադաշտի համար, որպես կանոն, այն հավասար է 70–72-ի:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Акопянц А. М. Лингвопрагматика и методика обучения иностранным языкам// *Иностранные языки в школе*, 2006, № 2.
2. Азнаурова Э. С. Прагматика художественного текста. Ташкент, 1988.

3. Бондарко А.В. Теория функциональной грамматики. Качественность. Качественность. Наука, 1996.
4. Карапулов Ю. Н. Русский язык и языковая личность. М.: Наука, 1987.
5. Милосердова Е. В. Национально-культурные стереотипы и проблемы межкультурной коммуникации // *Иностранные языки в школе*, 2004, № 3.
6. www.thegolfpandit.com/what-is-golf/

Г. БАРСЕГЯН – *Прагматический аспект обучения переведу спортивного дискурса.* – В процессе обучения переводу спортивного дискурса переводчикам приходится преодолевать трудности, связанные с прагматической интерференцией, так как они имеют дело не только с национально- или культурно-маркированной иноязычной лексикой, со спортивными лакунами, но и с «неизвестным», «неадекватным» коммуникативным поведением тех людей, которые прямо или косвенно имеют отношение к спорту.

Представляется важным, что концептосфера спорта армянского и английского языков отличаются. Проблема безэквивалентности спортивных терминов и концептов рассматривается в прагматической плоскости. Участие армяноязычных спортсменов, тренеров в спортивном дискурсе происходит в «иной» концептосфере, в результате чего они вынуждены преодолевать проявления не только культурной, прагматической, но и дискурсивной интерференции на уровне речи.

Ключевые слова: спортивный дискурс, обучение переводу, национально-культурно-маркированные слова, коммуникативное поведение, прагматическая интерференция, спортивная лакуна

G. BARSEGHYAN – *The Pragmatic Aspect of Teaching Translation of Sport Discourse.* – While translating sport discourse translators overcome difficulties connected with pragmatic interference as they deal with not only national or culturally marked foreign words, sport lacunae but also with “unknown”, “non-adequate” communicative behaviour of those people who directly or indirectly deal with sport. In the present paper the problem of non-equivalence of sport terms and concepts is considered from a pragmatic point of view. Armenian speaking sportsmen, as well as coaches “participate” in sport discourse in an “alien” conceptual sphere. As a result, they have to overcome the manifestations of not only cultural, pragmatic, but also discourse interference in speech.

Key words: sport discourse, teaching translation, national and culture marked words, communicative behaviour, pragmatic interference, sport lacuna, conceptual sphere

Գոհար ՀՈՎՍԵՓՅԱՆ

Երևանի Վ. Բյուտովի անվան
լեզվահասարակագիտական համալսարան

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ՈՒԽՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԻՋՈՑ

Սույն հոդվածի նպատակն է հակիրճ անդրադարձ կատարել այն լեզվահոգերանական խնդիրներին, որոնց քննությունը անմիջականորեն առնչվում է օտար լեզուների դասավանդման արդյունավետության բարձրացմանը՝ մերողարանական տիպարանության մշակման սկզբունքների տեսանկյունից: Դասավանդման գործընթացում լեզվական միավորների ընդհանուր և տարրերակիշ հատկանիշների առանձնացումը միջնեզվական հարորդակցության համատեքսում և դրանց խմբավորումը ըստ յուրացման դժվարությունների դիտարկում է որպես կարևոր մերողական և լեզվահոգերանական խնդիր:

Բանափառ. մերողարանական տիպարանություն, տարրերակված մոտեցում, յուրացման դժվարություն, յուրացման հեշտություն, ներլեզվային / միջնեզվային փոխնմութրափանցում, լեզվական սխալների կանխարգելում

Լեզվական նյութի արդյունավետ յուրացումն ապահովելու համար անհրաժեշտ է ձևավորել խոսքային գործունեության տվյալ տեսակին համապատասխան կարողություններ: Դրա համար բավարար չէ նյութի ծավալի կրճատումը, լեզվական մինիմումների ստեղծումը: Անհրաժեշտ է նաև մշակել լեզվական մինիմումի ուսուցման տարրերակված մոտեցում, որն էլ իր հերթին կնպաստի սովորողների յուրացմանն ուղղված ուսումնական ժամանակի խնայողությանը, ինչպես նաև աշխատանքի արդյունավետության բարձրացմանը:

Ուսուցանվող լեզվական երևույթին տարրերակված մոտեցման առաջին նախապայմանը լեզվական նյութի մերողական մշակումն է: Լեզվական նյութի նման մշակումը մերողիկայում անվանում են մերողական տիպարանություն: «Տիպ» եզրույթը ընթանվում է որպես «ընդհանրացված ձև, առարկաների, երևույթների տարատեսակություն, իսկ տիպարանությունը՝ որպես առարկաների դասակարգում կամ վերլուծություն ըստ որոշ հատկանիշների ընդհանության» /Տակ, 2013/:

Այսպիսով հարկ է պնդել, որ մերողական տիպարանությունը լեզվական տարրերի դասակարգումն է կամ խմբավորումը խոսքի ընկալման կամ վերարտադրման դժվարությունների տեսանկյունից:

Լեզվական նյութի մերողական տիպարանության նշանակության նման ընթանումը հատուկ է տվյալ խնդրի համարյա բոլոր հետազոտողներին /Բազմաթիվ 1970, Աղելին, 1984, Զահկով, 1999, Krashen, 1982, Fisiak, 1985, Richards, 2002/: Մերողական տիպարանության հիմնական նպատակն է լեզվական փաստերի տիպերի առանձնացումը՝ ելմելով այն դժվարություններից, որոնք առաջանում են յուրացման ընթացքում, ինչպես նաև բարենպաստ պայմանների ստեղծունքը հանված դժվարությունների կանխարգելման համար: Նման տիպարանու-

քյան ուսումնասիրության օբյեկտը ընդհանուր դժվարությունների սկզբունքով նիստավորված լեզվական երևոյթների խմբերն են: Այս էապես տարբերվում է լեզվականից նրանով, որ չի սահմանափակվում լեզվական նյութի վերլուծությամբ: Այդ վերլուծությունը կատարվում է լեզվական այս կամ այն չափանիշով (չափանիշներով) լեզվական երևոյթների դասակարգումով՝ ըստ երևոյթների միանման հատկանիշների: Հենվելով լեզվաբանության և հոգեբանության տվյալների վրա՝ մերողական տիպարանությունը ոչ միայն ցույց է տալիս լեզվական երևոյթների տարրեր տիպերի հատկությունները և դասակարգում է այդ տիպերը ըստ դրանց յուրացման դժվարությունների աստիճանի, այլև բացահայտում է այդ դժվարությունների պատճառները, որոնք ել իրենց հերթին բույլ են տալիս մշակելու այդ դժվարությունների վերացման մեթոդական ձևերը: Սա հատկապես կարևոր է սահմանափակ ժամաքանակի դեպքում, քանի որ բարձրացվում է, ինչպես արդեն նշել ենք ուսուցման արդյունավետությունը և դյուրին է դարձնում լեզվական երևոյթների մի ամբողջ խմբին հատուկ դժվարությունների հաղթահարումը:

Պետք է նշել, որ ըստ համասեր դժվարությունների լեզվական երևոյթների խմբավորումը մեթոդական տիպարանության ստեղծման հիմնական սկզբունքներից մեկն է: Այս առումով անհրաժեշտություն է առաջանաւ հստակեցնել դժվարություն/հեշտություն հասկացությունները և դրանց տարրության ուղիները:

Համապատասխան գրականության ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ «դժվար» / «հեշտ» հասկացությունները գիտականորեն վերջնականացնեն հստակեցված չեն: Դժվար յուրացվող լեզվական նյութի առանձնացումը մեծ մասամբ հիմնված է հետազոտողների և դասավանդողների էմպիրիկ պատկերացումների և փորձի վրա: Այս խնդիրը դեռևս չի ստացել իր վերջնական լուծումը, այդուհանդերձ որոշ հետազոտողների դիքորոշումն արժանի է ուշադրության:

Այսպես, իր աշխատանքներից մեկում Վ. Ցետլինը գրում է՝ «Ամենաընդհանուր առումով, դժվարությունը՝ խզում է սովորողների ուսուցման գործընթացի նախնական փուլի և այդ գործընթացի ներկայացված պահանջների միջև» / Պետլին, 1984:6/: Դժվարությունը ուսումնական գործընթացի հիմնական հասկացության արտահայտությունն է – դժվարություն այն նորի, որ պետք է յուրացնի սովորողը, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ տարբերությունը, որը առկա է սովորողի գիտելիքների պաշարի և ուսուցանվող նյութի միջև:

Ժամանակակից մեթոդիկան մեծ ուշադրություն է դարձնում նյութի յուրացման ընթացքում դժվարությունների հաղթահարմանն ուղիների որոնմանը՝ այն համարելով սովորողների ընդհանուր զարգացման կարևորագույն գործոններից մեկը: Այս հարցում նշանակալից ներդրում է արել հոգեբան և մանկավարժ Լ. Զանկովը: Նա առաջ է քաշել այն գաղափարը, որ ուսուցումը պետք է ներառնի առավելագույն դժվարություն, սակայն այն պետք է հաղթահարելի լինի սովորողի կողմից / Զանկով, 1999/:

Այսպիսով, համաձայն վերոնշյալ հետազոտողների կարծիքի, ուսուցման ընթացքում դժվարություններն անխուսափելի և միաժամանակ մանկավարժութեան անհրաժեշտ են, քանի որ դրանց հաղթահարումն առաջ է մղում

ուսուցման գործընթացը, նպաստում սովորողների մտավոր զարգացմանը: Հետևապես, խնդիրն այն է, որ ճշգրտորեն որոշվի լեզվական նյութի յուրացման դժվարության աստիճանը և միաժամանակ ապահովվի դրա հաղթահարման մատչելիությունը:

Ինչպես տեսնում ենք, «դժվարություն» հասկացության դիրքակտիկական սահմանումները և այս հարցում առանձին հետազոտողների դիրքորոշումները ընդհանուր բնույթ ունեն և կարող են փոխվել այս կամ այն առարկայի ուսուցման տեսության մեջ՝ հաշվի առնելով տվյալ առարկայի յուրահատկությունը:

Օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի բնագավառում մեզ հետաքրքրող պրոբլեմն վերաբերող բազմաթիվ հետազոտությունների վերլուծությունը քոյլ տվյալ առանձնացնել լեզվական երևույթների չորս խումբ, որոնցում ներառված լեզվական երևույթների յուրացման գործընթացում կարելի է դժվար համարել.

1. Լեզվական նյութի յուրացման դժվարությունը կապված է այնպիսի օբյեկտիվ լեզվական հատկանիշների հետ ինչպիսիք են՝ բառի / բառակապակցության երկարությունը, հնչյունային և տառային կազմի բնույթը, իմաստի վերացականությունը և այլն: Ուսումնասիրողները լեզվական այս ցուցանիշներն անվանում են բացարձակ դժվարություններ: Սրանք դժվարացնում են նյութի յուրացումը որպես օբյեկտիվ իրողություն:

2. Նյութի յուրացման դժվարությունը բխում է այն իրողությունից, որ ուսուցանվող օտար լեզվի որոշ լեզվական երևույթներ համարժեքներ չունեն սովորողների մայրենի լեզվում: Օտարալեզու խոսքի յուրացման հոգեբանական մեխանիզմի տեսանկյունից սա այն դեպքն է, եթե հմտությունները պետք է ձևավորվեն նորով՝ մայրենի լեզվում դրանց բացակայության պատճառով:

3. Նյութի յուրացման դժվարությունը կախված է ուսուցանվող օտար լեզվում գոյություն ունեցող հակադիր լեզվական երևույթներից, որոնք ունեն համընդհանրական և տարրերակիշ հատկանիշներ (ներկեզվական տարրերություններ): Հմտությունների փոխադրման հոգեբանական մեխանիզմի գործելու ուժով այսպիսի լեզվական երևույթները ենթարկվում են ներկեզվային փոխներքափանցման: Արդյունքում սովորողների խոսքային արտահայտություններում հայտնվում են լեզվական սխալներ՝ որպես ուսումնասիրվող օտար լեզվի նորմերի խախտման փաստ:

4. Նյութի յուրացման դժվարությունը կախված է մայրենի և ուսուցանվող օտար լեզուներում գոյություն ունեցող լեզվական հակադրություններից, որոնք ունեն համընդհանուր և տարրերակիշ հատկանիշներ (միջլեզվային տարրերություններ): Հմտությունների փոխադրման հոգեբանական մեխանիզմի ազդեցությամբ նմանատիպ հակադրությունները ենթարկվում են միջլեզվական փոխներքափանցման, ինչ էլ առաջացնում է ուսումնասիրվող օտար լեզվի նորմերի խախտում (լեզվական սխալներ):

Վերը շարադրածից պարզ է դառնում, որ օտարալեզու նյութի յուրացման դժվարություններն առանձնացնելիս, հետազոտողները ելնում են փոխակապակցված և փոխապահմանավորված լեզվահոգեբանական բնույթի երկու փաստից.

դրանք են՝ ուսուցանվող լեզվական երևոյթների օբյեկտիվ լեզվական առանձ-նահատկություն-ները և իրական խոսքային գործունեության մեջ առկա հոգեբանական օրինաչափությունները։ Դժվար լեզվական երևոյթների յուրացման համար վերը նկարագրված չորս խմբերը վկայում են «դժվարություն» երևոյթի երկու առանձնահատկությունների մասին։ Այսպես, լեզվական երևոյթների յուրացման առաջին երկու խմբերի դժվարությունն այն է, որ սովորողները նույն ժամանակահատվածում չեն կարող յուրացնել լեզվական երևոյթներ, որոնք իրենց բնույթով ամբողջովին հակառակ են նայրենի լեզվի համապատասխան երևոյթներին (երկար բառեր, մայրենի լեզվում համարժեքները չունեցող բառեր, դարձվածքներ և այլն)։ Տվյալ դեպքում դժվարությունը որոշվում է տվյալ լեզվական տարրերի յուրացման համար նախատեսված ժամանակի սղությամբ։

Վերջին երկու խմբերի լեզվական երևոյթների յուրացման դժվարությունն այն է, որ ներլեզվային և միջնեզվային փոխներթափանցման հոգեբանական մեխանիզմի շնորհիվ սովորողների խոսքային արտահայտություններում խախտվում են ուսումնասիրվող լեզվի նորմերը (լեզվական սխալներ)։ Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ 1 և 2, 3 և 4 խմբերի դժվարությունները տարբեր են իրենց էությամբ և ունեն դրանք ծնող տարրեր պատճառներ, ընդ որում առաջին երկու խմբերի դժվարությունները համեմատարար հեշտ կհաղթահարվեն դրանց յուրացման ժամանակի և վարժությունների քանակի մեծացման արդյունքում։ Վերջին երկու խմբերի դժվարություններն ավելի քարդ են, և դրանք կանխելու համար անհրաժեշտ է նպատակառուղղված մեթոդական աշխատանք, որի հիմքում պետք է ընկած լինի այդ դժվարությունների տիպաբանությունը։

«Դժվարություն» երևոյթը դիտարկելուց հետո անհրաժեշտ է նաև անդրդադարնալ լեզվական սխալների խնդրին։

Հարկ է նշել, որ լեզվական սխալների քննությունը մշտապես գտնվում է լեզվաբանների, հատկապես հոգելեզվաբանների, ուշադրության կենտրոնում։ Տվյալ պրոբլեմի հետազոտումն ունի ոչ միայն տեսական, այլև գործնական կարևորություն։ Այս առումով հետազոտողները առաջարկում են գործնական ուղղվածության խնդիրներ՝ ձգտելով հասնել խոսքակազմավորման «կառավարման»՝ գործներացի խորքային մեխանիզմների ուսումնասիրման ճանապարհով։ «Ծիշտ կամ սխալ խոսքային գործունեության նման մեխանիզմների ուսումնասիրությունը, որպես խորքային ազդակներ, անհրաժեշտ է դրանց կառավարման համապատասխան մեթոդիկայի մշակման համար» /Կյզնեցովա, 1983: 81/։ Ինչպես ցույց է տալիս համապատասխան գրականության վերլուծությունը, կատարված հետազոտություն-ների արդյունքները միշտ չեն, որ համարժեք են առաջադրված խնդիրներին։ Այսպես օրինակ՝ Յ. Կրասնիկովի «Խոսքային սխալների տեսություն» գրքում ցայտուն անհստակություն է նկատվում խնդրի տեսական մեկնաբանության և հետազոտվող հյութի օրինակների միջև։ Ակնհայտ է, որ գրաշարի գործունեությունը մասնագիտական է, այլ ոչ՝ խոսքային, քանի որ նա փաստորեն պատճենահանում է՝ հաճախ շիականալով տեքստը /Красников, 1980/։

S. Կուզնեցովայի հետազոտություններում երկեզու և եռալեզու բանավոր խոսքում սխալների հոգեբանական վերլուծության փորձ է արվել դիրքորոշման տեսության դիտակետից: Մեր կարծիքով հեղինակի կողմից լեզվական սխալների դասակարգման համար հաշվի է առնվում ոչ այնքան այդ երևոյթի հոգեբանական կողմը, որքան լեզվականը: Ավելին, սխալ խոսքակազմավորման գործընթացի մանրակրկիտ վերլուծության (հաճախ վարկածային) արդյունքում հեղինակը գալիս է բավականին պարզունակ մերժական եզրակացության առ այն, որ խոսքում սխալները կարելի են նվազեցնել, եթե լեզվական նյութին ծանրացնելիս նախազգուշացնել դրանց հայտնվելու մասին» /Կուզնեցովա, 1983: 118/:

Այսպիսով, նկատելի է, որ ժամանակակից լեզվահոգեբանության մեջ դեռևս բացակայում են սխալ խոսքակազմավորման մեխանիզմները բացատրող հիմնավորված փաստեր, որոնք բույլ կտան էական գործնական հետևողություններ առնել և հանձնարարականներ մշակել լեզվական սխալների բացառման համար: Ամենայն հավանականությամբ դա բացատրվում է նրանով, որ մենք կարող ենք անմիջապես դիտարկել ոչ թե հենց սխալ խոսքակազմավորման գործընթացը, այլ միայն դրա արդյունքը՝ լեզվական սխալները:

Վերը նշված նկատառումները վկայում են այս մասին, որ լեզվական սխալների ի հայտ գալու, դժվարությունների բացահայտման և կանխարգելման հարցերն ուսումնասիրելիս անհրաժեշտ է առաջին հերթին հաշվի առնել ինչպես սուբյեկտիվ, այնպես էլ օբյեկտիվ գործուներով պայմանավորված լեզվական դժվարությունները:

Հայտնի է, որ սխալների բազում պատճառների բվում առանձնահատուկ տեղ է գրավում միջլեզվային փոխներթափանցումը: Հետևապես, այդպիսի լեզվական սխալները կարող են կանխարգելվել, եթե վեր հանվեն կոնկրետ լեզվական նյութին վերաբերող միջլեզվային փոխներթափանցման տիրույթները: Այս տիրույթներում հնարավոր է կանխարգելել լեզվական սխալները, ի հայտ բերելով այն դժվարությունները, որոնք առաջանում են տվյալ լեզվական նյութի յուրացման գործընթացում:

Ներկայումս միջլեզվային տարրերությունները կամ մայրենի լեզվի առանձնահատկությունները հաշվի են առնվում համարյա բոլոր մերժական տիպարանություններում՝ անկախ խոսքային գործունեության տեսակից: Հ. Ռինգբոմի աշխատության մեջ նշվում է, որ մայրենի լեզվի հետ համընկնող երևոյթներն ավելի հեշտ են յուրացվում քան տարրերությունները /Ringbom, 2007/:

Հետազոտողների զգալի մասը նշում է, որ մայրենի լեզվի դերը կարող է լինել՝ դրական, բացասական և չեղոք: Նրանց կարծիքով ամենադժվարը՝ երրորդն է՝ չեղոքը: Այսպիսով, նման մոտեցման շրջանակներում առանձնացվում է դժվարությունների երեք աստիճան:

1. Ամբողջական համընկնում (ոչ մի դժվարություն),
2. Ամբողջական անհամապատասխանություն (սովորողներից սլահանջվում է հաղթահարել որոշակի դժվարությունները)
3. Մասնակի անհամապատասխանություն (ամենադժվար դեպքն է), եթե սովորողների մոտ առաջացնում է կեղծ պատկերացում լեզվական ձևի կամ նշանակության նույնության մասին:

Մենք միանում ենք այն հետազոտողների կարծիքին, ովքեր գտնում են, որ ամենադժվարը յուրացման համար մասնակի չհամընկնող լեզվական երևոյթներն են, քանի որ դրանք նպաստում են փոխներթափանցման ավելի երկարատև ու կայուն պահպանմանը /Реформатский, 1987, Вященко, 1980/: Այսպիսի եզրակացությունը հիմնավորվում է նաև հոգեբանական տեսանկյունից: Հայտնի է, որ փոխներթափանցման հոգեբանական հենքը գործողությունների կատարմանն ուղղված գիտելիքների և կարողությունների տարածակարդակությունն է: Այս գործոնը լեզվական փոխներթափանցման առաջացման հիմնական պատճառներից է, մասնավորապես բառային մակարդակում, քանի որ երկու հարաբերվող լեզուներում բառային միավորների խմասնի/ձևի մասնակի համընկնումը որպես «ընդհանուր բաղադրիչ» նպաստում է լեզվական երևոյթների ոչ նորմատիվ ներթափանցմանը՝ մայրենից՝ օտար լեզու:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ կարելի է հանգել այն եզրակացության, որ օտար լեզվի յուրացման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է մշակել համապատասխան լեզվական նյութի մեթոդական տիպաբանություն՝ նախև առաջ հաշվի առնելով մայրենի լեզվի ազդեցությունը՝ որպես լեզվահոգեբանական գործոն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Fisiak J. Contrastive linguistics and the language teacher. Oxford: Pergamon Press, 1985.
2. Krashen S.D. Principles and practices in second language acquisition. Oxford: Pergamon Press, 1982.
3. Richards J. C., Renandya W. A. Methodology in language teaching. Cambridge: Cambridge University Press, 2002.
4. Ringbom H. Cross-linguistic similarity in foreign language learning // *Multilingual Matters*. Bristol, 2007.
5. Гак Б. К. Сравнительная типология французского и русского языка. Москва: Либроком, 2013.
6. Вященко В. С. Психолингвистическая характеристика лексической интерференции // *Психолингвистические исследования развития речи в обучении второму языку*. Москва, 1980.
7. Занков Л. В. Обучение и развитие // *Избранные педагогические труды*, 3-е изд. Москва: Дом педагогики, 1999.
8. Красников Ю. В. Теория речевых ошибок. Москва: Наука, 1980.
9. Кузнецова Т.Д. Психолингвистический анализ ошибок внутриязыковой контаминации // *Психолингвистические исследования в области лексики и фонетики*. Калинин, 1983.
10. Разумеева Н. А. К вопросу о типологии языкового материала // Уч. записки МГПИИЯ, т. 53, 1970.

11. Реформатский А.А. О сопоставительном методе // *Лингвистика и поэтика*. Москва, 1987.
12. Цетлин В.С. Доступность и трудность в обучении. Москва: Знание, 1984.

Г. ОВСЕПЯН – Методологическая типология как эффективный способ обучения иностранному языку. – В данной статье рассматриваются лингвопсихологические задачи, непосредственно связанные с продуктивностью преподавания иностранных языков с точки зрения разработки принципов методологической типологии. В процессе преподавания дифференциация общих и различных признаков речевых единиц в контексте межъязыковой коммуникации и их группировании по трудности усвоения рассматривается как важная методическая и лингвопсихологическая задача.

Ключевые слова: методологическая типология, дифференцированный подход, легкость/трудность усвоения, внутриязыковая / межъязыковая интерференция, предупреждение языковых ошибок

G. HOVSEPYAN – Methodological Typology as an Efficient Way of Teaching Foreign Language. – The paper aims at a brief description to those lingual and psychological problems, the analysis of which is directly related to the efficiency of foreign language teaching from the standpoint of elaboration of methodological typology principles.

The diversification of common and differentiating features of linguistic units during the teaching process within the context of interlingual communication and their categorization due to their difficulty of acquisition is considered as a paramount methodological issue.

Keywords: methodological typology, differentiated approach, difficulty/ease (simplicity) of language acquisition, intralingual / interlingual interference, prevention of language errors

Ալիսա ՍԱՆՈՒԿՅԱՆ
Երևանի պետական համալսարան

**ԱՆԳԼԵՐԵՆԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ
ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՅՍԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԵՎ
ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ**


Սույն հոդվածում քննարկվում են անգլերենի նվազագույն քերականական կազմությունների տարրեղման խնդիրները՝ լեզուների դասավանդման ժամանակակից մերողաբանության և տիպարանական լեզվաբանության դրույթների հիման վրա: Ընդ որում այստեղ հեղինակը ելնում է գոյություն ունեցող այն կանխավարկածից, որ լեզուների տարրեղման ռազմավարությունը ինչպես տվյալ լեզուն կրողների վաղ փուլում և այն որպես օտար լեզու տարրեղմանափորող մեծահասակների խմբերում նոյնն է: Այդպիսով վերլուծության են ենթարկվում անգլերենի նվազագույն քերականական կառույցների կազմավորման տիպարանական կաղապարմանը լեզվական տարրեր խմբերում և սահմանվում են տարրեղման գործընթացում դրանց գործադրման սկզբունքները: Միևնույն ժամանակ հեղինակի կողմից բացահայտվում են տարրեղմանափորությունները անգլերենում և հայերենում:

Քանակի բառեր. քերականական միավոր, տիպարանական լեզվաբանություն, քննականության վարկած, տպալոգիական կաղապար, սերումնային քերականություն, փոխակերպական մերոդ, ճանաչողական վերլուծություն, անվանական դարձված, ճևարանական կառույցվածք

Վերջին տարիներին օտար լեզուների ուսուցման գործընթացի տիպարանական ուսումնասիրությունները հաջողությամբ կիրառվում են գործնականում և այդ առումով հետաքրքիր արդյունքներ են գրանցվում: Տվյալ դեպքում նկատի ունենք այն հանգամանքը, որ մերողաբան-լեզվաբանների կողմից համադրվում են նախադպրոցական տարիքի լեզվակիրների և նրանց լեզուն որպես օտար լեզու ուսումնասիրող շափականների կողմից կիրառվող ռազմավարությունները: Բնականաբար լեզվի յուրացման վաղ փուլում, տարիքային տարբերությունների պատճառով, այս կամ այն լեզվական ձևի ընկալումն ու վերարտադրումը տարբեր կերպ է ընթանում: Այստեղ կարևոր դեր ունի նաև լեզվական միջավայրը, որը յուրահատուկ ձևով է ազդում համապատասխան գործընթացի վրա: Միևնույն ժամանակ համապատասխան հետազոտություններում տիպարանական մեծ ընդհանրություններ ենք գտնում հիշյալ երկու լեզվական խմբերի միջև, որոնք առաջին հերթին ի հայտ են գալիս կոնկրետ լեզվի քերականական կառույցների յուրացման գործընթացում:

Այստեղ կառանձնացնեինք սովորողների կողմից լեզվի քերականական կառույցների յուրացման և գործադրման հոգեբանական և ճանաչողական կողմերի քննությունը, որն իրականացվում է Ն. Խոմսկու, այսպես կոչված, «հայեցակերպային կաղապարի» /տե՛ս Chomsky, 1975/ հիման վրա: Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ տվյալ կաղապարում լեզվի շարահյուսությունը համարվում է գերակա, քան, ասենք, իմաստաբանությունը, որը հնչույթաբանության հետ մեկտեղ համարվում է առավելապես մեկնաբանող: Այսպիսով,

սերող կաղապարի հիմքը ներկայացնող շարահյուսությունը բաղկացած է հենքային և փոխակերպվող մասերից: Վերջինս իր հերթին հանգում է կոնկրետ մակերեսային շարահյուսական կառուցվածքին: Հենքային մասում գործում են կարգային, ենթակարգային և բառագիտական օրինաչափություններ, իսկ հիշյալ մակերեսային կառուցվածքը ծառայում է հնչույթաբանական բաղադրիչների արտահայտմանը: Հարկ է նկատի ունենալ նաև, որ սերող քերականության համար լեզվի քերականությունն ըստ էության նրա շարահյուսությունն է: Այս դրույթների հիման վրա L. Բլումը նպատակ է դնում քննել սովորողների լեզվի այն յուրահատկությունները, որոնք հանգում են մակերեսային կառուցների ձևակորմանը, ինչպես նաև ներկայացնել դրանց իմաստային կողմի դրսերումները: Միևնույն ժամանակ, երեխայի կողմից գործադրվող ասույթները հասկանալու համար անհրաժեշտ է հաշվի առնել նրա համապատասխան համատեքստի արտալեզվական տեղեկույթը և դրա իրացման հանգանաքները: Այսպիսով, երեխայի լեզվում տարրեր խորքային կառուցներից, ինչպես՝ Kathryn picked up her mother's sock և Mommy putting, Kathryn's sock on Kathryn ասույթներից բխող և մակերեսային կառուցվածքը ներկայացնող Mommy sock կազմությունը կարելի է քննարկել ըստ վերոհիշյալ հայեցակերպային կաղապարի: Այդ դեպքում, եթե դիտարկենք երկրորդ նախադասությունը, ապա այստեղ ունենք գործողի և խնդրի փոխհարաբերության իրացում համապատասխանաբար Mommy և sock ձևերով, որի սերող կաղապարը կունենա հետևյալ տեսքը /հմմտ., Brown, 1991: 74/:



Ինչպես տեսնում ենք, համապատասխան սերող կաղապարում անվանական և բայական կազմություններից երկրորդն իր հերթին այլ անվանական կազմության հիմք է դառնում:

Նախորդ դարի 80-ական թվերին լեզվաբանության մեջ առաջ քաշվեց սովորողների լեզվում շարահյուսական կառուցվածքների ձևակորման, այսպես կոչված, «բնականության վարկածը» (naturalness hypothesis), ըստ որի, նախադասության մեջ ենթակա-բայ-խնդիր հաջորդականությունը բխում է «քինական» ռազմավարությունից, քանի որ գործողության կրող - գործողություն - գործողության խնդիր կաղապարը գոյություն ունի ուսուցանվողի գիտակցության մեջ՝ առանց լեզվի մասնակցության: Մակ Նեյլի կարծիքով, անգլերենը որպես մայրենի լեզու ավելի հեշտ է յուրացվում, քան, ասենք, քուրքերենը, որտեղ հիշյալ կաղապարի տարրերի իմաստային իրացումները պայմանավորված են թերական շարադասությամբ /McNeill, 1980: 57/:

Բնականության այս ընկալումն, անշուշտ, տարրերվում է հայտնի սկզբունքներից և բացի այդ, Դ. Սլոբինի և S. Բեկերի փորձառական հետազո-

տությունները ցույց են տալիս, որ անկախ լեզվի տիպաբանական բնութագրից, տարբեր լեզուներով խոսդները կիրառում են նախադասության կազմության այն ռազմավարությունը, որն անհրաժեշտ է կոնկրետ լեզվի կոնկրետ կառուցվածքները կազմելու համար /տես Slobin, Bever, 1982: 257/: Նույն հեղինակների կարծիքով, որպես ընդհանրական մոտեցում կարելի է համարել այն, որ ուսուցանվողը ընդամենը երկու ճանաչողական կարողություն պետք է ցուցաբերի. առաջինը, որ նա պետք է հասկանա բովանդակությունները, որոնք արտահայտում է և երկրորդ՝ պետք է ունենա համապատասխան գիտելիքներ իրեն շրջապատող աշխարհի մասին, որը կարող է արտահայտել լեզվական միջոցներով: Այդպիսով, գիտելիքը դառնում է անհրաժեշտ նախապայման լեզվական ձևերի համար: Հաջորդ կարևոր նախապայմանն այն է, որ սովորողը պետք է կարողանա մշակել լեզվական տեղեկույթը և մտապահել այն: Ճանաչողական նախապայմանի այս երկրորդ ձևը վերաբերում է տեղեկույթի մշակման ռազմավարությանը, որը հատկապես ակնառու է ձևական-լեզվական արտահայտությունները ձեռք բերելու ընթացքում: Այս նախապայմաններին ևս կանորադասունանք ստորև, իսկ այստեղ նշենք, որ վերոհիշյալ սերող փոխակերպական կաղապարը տարբեր տարիքային խմբերում կարող է ունենալ տարբեր իրացումներ: Մյուս կողմից ակնհայտ է, որ երկանդամ լեզվական ձևերի կազմումը, որն ընկած է նշված կաղապարի հիմքում, կարելի է դիտել որպես մարդու բնածին կարողություն՝ արտահայտված կոնկրետ լեզվին բնորոշ առանձնահատկություններով: Այս ամենի հաշվառումով, որոշ մեթոդաբան-լեզվաբաններ առաջարկում են լեզվական ձևերի իմաստային կողմին վերաբերող կաղապարներ, որտեղ շարահյուսությունն այլևս առաջնային չի համարվում, քանի որ խորքային կառուցվածքներն ավելի վերացական են քան մակերեսայինները:

Այդպիսով, առաջարկվում են վերլուծության հետևյալ մոտեցումները.

1. անհրաժեշտ է խորքային կառուցվածքի բնութագրման համար հրաժարվել ենթակայի և ստորոգյալի հասկացություններից:

2. «Հայեցակերպային կաղապարը» տարբեր լեզուներում տարբեր է և համապատասխան վերլուծությամբ նման արդյունքներ չենք կարող ունենալ:

3. «Իմաստային քերականությունը» հնարավորություն է տալիս սովորողի լեզվի ձևակիրման նախնական փուլում դիտարկել համապարփակ իրողություններ՝ դրանց էության բացահայտման հնարավորությամբ /Bowerman, 1993: 352/:

Այս մոտեցումը հետաքրքիր է այն առումով, որ առանձին ուշադրություն է հատկացնում իրերի և երևույթների բնական հատկանիշներին, որոնք սովորողի լեզվում իրացվում են համապատասխան միջոցներով արտահայտված հասկացություններ և հարաբերություններ: Ընդ որում հասկացություններն արտահայտվում են բառերով, իսկ հարաբերությունները քերականական միջոցներով, ինչպիսիք են շարադասությունը և թերումը: Հիշյալ հատկանիշները, որոնք կոչվում են «մերակա հատկանիշներ» բնութագրվում են ստորակարգայնությամբ, ինչպես, օրինակ՝ John catches the red ball նախադասությունում ունենում ենք հետևյալ պատկերը /տես Schlesinger, 1991: 88/.

a	Relates to	b	Notation
red	is attribute of	ball	Att (a,b)
the	determines	[red ball]	Det (a,b)
[the [red ball]]	is object of	catches	Ob (a,b)
John	is agent of	[catches [the [red ball]]]	Ag(a,b)


Զեւկան առումով ներակա հատկանիշները կարող են ներկայացվել նաև հետևյալ կերպ. Ag (John [ob / [Det /the) [Att / red, ball)]], catches)), որտեղ Ag, Ob, Att և Det նշանակումները համապատասխան իրացումներ են: Փակագծերը տարբերում են այն հասկացությունները, որոնց միջև կապ գոյություն ունի: Հետևաբար John catches the red ball նախադասության մեջ կարող ենք տարբերակել իրացման չորս իմաստային ձևեր՝ որոշիչ, դետերմինատիվ, խնդիր և գործող անձ: Այս կաղապարում կարևոր է այն հաճախանաքը, որ արտալեզ-վական իմաստներն ուղղակիորեն հանգում են նախադասության մակերեսային կառուցվածքին: Այլ կերպ՝ ներակա հատկանիշներն իրենց բովանդակությամբ ու ձևով իրացվում են նախադասության մեջ գրաված դիրքով և կարգայնացմամբ: Հարց է առաջանում, թե սովորողն ինչպես սէ յուրացնում իրացման այդ կանոնները: Վ. Շլեզինգերի կարծիքով, անզերենում կարևոր դեր ունի կոնկրետ ձևի գրաված դիրքը նախադասության մեջ, և եթե A-ն B-ի խնդիրն է, ապա ոչ անզախոս ուսուցանվողը պետք է սովորի, որ անզերենում առկա է b+a հաջորդականությունը: Այդպիսով, նաև, ենթելով անզախոս երեխաների վաղ շրջանում ձևավորվող լեզվում ի հայտ եկող երկազմ ձևերի յուրահատկություններից, սահմանում է հետևյալ հարաբերությունները (նույն տեղում էջ 125):

իմաստային հարաբերություն	դիրքային հաջորդականություն	օրինակներ
agent, action	agent+action	Bambi go
action, object	action+object	see sock
agent, object	agent+object	Eve lunch (=Eve is having lunch)
modifier, head	modifier+head	Big boat
negation, x	negation+x	no water
x, dative	x+dative	throw Daddy (=throw it to Daddy)
introducer, x	introducer+x	it ball
x, locative	x+locative	baby highchair (=baby is in the highchair)

Անշուշտ, բերված կազմությունների գործառական հաճախանությունը նույնը չէ, սակայն, դրանք կարող են հիմք ծառայել նաև նրանցում նշույթավորվածության և ոչ նշույթավորվածության հատկանիշների հետազա ուսումնասիրության համար: Այստեղ կարևոր է այն իրողության գիտակցումը, որ բովանդակություն - արտահայտություն փոխարարերության մեջ կոնկրետ լեզվում առկա են որոշակի օրինաչափություններ, որոնց հիման վրա էլ


ձևավորվում են համապատասխան կազմությունները: Այս կադապարը քննարկվել է նաև այլ լեզուների համար, սակայն, հիշյալ կազմությունները (առանձին բացառություններով) դրանց նույնությամբ չեն կրկնում /տե՛ս Clark, 1993/: Աղնիայտ է, որ այստեղ ևս գործ ունենք տարբեր աշխարհ-ընկալումների և լեզվանտածողությունների հետ:

Անդրադառնալով ճանաչողական կառույցների քերականական իրացման պայմաններին, նշենք, որ, ըստ Զ. Բայրիի տեսակետի, անգլերենում այս առումով առավել կայուն կապակցություններ են հանդես գալիս NP (noun phrase) տիպի կազմությունները, որոնք, ըստ սերող քերականության սկզբունքների, ներկայացվում են հետևյալ կերպ /տե՛ս Bybee, 1998:37/.




Այստեղ NP-ն ներկայացվում է առաջին աստիճանում հոդ (DET) + ածական (A) + N(անուն) կադապարով, իսկ երկրորդում այն իրացվում է նաև գոյականի(S) և նախորդային կազմության(PP) համակցմամբ, որոնք կազմում են, այսպես կրոված «ծագումնաբանական ծառը»: Առանձին դեպքերում կարող ենք ունենալ նաև զրո հոդ կամ հոդի բացակայություն, իսկ այլ խոսքի մասերի առկայությունը պարտադիր չէ: Այդ նպատակով կարելի է դիմել անգլերենի և հայերենի համապատասխան կառույցների վերլուծությանը՝ ելնելով սերող քերականության կողմից NP միավորների սկզբունքներից: Հմտ.


անգլերենում՝



հայերենում՝




Այստեղ տեսնում ենք, որ երկու լեզուներում էլ առարկայի (գոյականի) և հատկանիշի (ածականի) առավել սերտ կապը, հետևաբար նաև առավել ամբողջականությունը, իրացվում է կառույցի ձևավորման վերին մակարդակում՝ N' - DET (Determinative) հարաբերությամբ, իսկ ավելի ցածր մակարդակներում, այդ հարաբերության մեջ գտնվող տարրերի միջև հեռավորության աճի հետևանքով, նվազում է նաև համապատասխան սերտ կապը։ Ամենաստորին մակարդակում հիշյալ կապի սահմաններն աղոտանում են, քանի որ տեղի է ունենում համապատասխան կառույցի քերականացման աճ։ Երկու լեզուների միջև NP կազմությունների իրացման տիպարանական ընդհանուրություններ կարելի է տեսնել նաև ավելի բարդ N - PP հարաբերություններում, ինչպես, օրինակ՝



Ներկայացված պատկերում համապատասխան կազմությունների իրացումը երկու լեզուներում տարրերվում է միայն դրանց բաղադրիչների շարադրասությամբ, ինչը, սակայն, տարրերի միջև բնույթը չի փոխում։


Ինչ վերաբերում է VP (verbal phrase) կազմություններին, ապա դրանքը ընդհանուր տիպաբանության տեսակետից դիտվում են առավել ամբողջական այն պատճառով, որ ըստ Էության ուղղակիորեն արտահայտում են հատկանիշ+առարկա բնական կադապարը, եթե բայց դիտում ենք որպես առարկայի փոփոխվող հատկանիշի ցուցիչ: Կոնկրետ լեզուների փաստերի հիման վրա, սակայն, ունենում ենք ոչ միանշանակ պատկեր՝ պայմանավորված այդ նվազագույն կադապարից բխող տարրեր շարահյուսական կառուցվածքներով: Վերջինս էլ իր հերթին կախված է բայի ոչ միայն իմաստային, այլև ձևաբանական կառուցվածքից:

Այսպիսով, համապատասխան վերլուծություններից հետևում է, որ անզերենի շարահյուսական կառուցվածքում առավել բնութագրական են DET + N և NP կազմությունները: Վերջիններին մեկ գրյականով սահմանափակման դեպքում կիրառելի են արդեն բառակազմական օրինաչափություններ: Այստեղ կցանկանայինք անդրադասնալ նաև Է. Բրաունի և Զ. Միլլերի, այսպես կոչված, «մշտադիտարկ կարգերի» տեսությանը, որի հիմքում կրկին բնականության դրույթներ են /ուեն Brown, Miller, 1991: 101-104/: Ըստ հիշյալ լեզվաբանների, NP կազմությունները ծավալվելիս կրկին առաջացնում են նոր NP -ներ և գոնե անզերենում դրանք շրջափուլային բնույթ ունեն: Ասվածը ներկայացվում է հետևյալ կերպ.



Հետևաբար, ինչպես պնդում է նաև Զ. Բայրին, NP կառույցների առաջնայնությունն անզերենում ակնհայտ է: Միևնույն ժամանակ չենք կարծում, թե VP կազմություններին առհասարակ բնորոշ չէ հստակ սերտ կապը:

Ընդհանուր առմամբ, Յ. Տեստելեցի կարծիքով, անզերենն ինչպես NP, այնպես էլ VP սերտ կապակցությունների ներսում «լրացուցիչ» տարրերի առկայությունը դժվամությամբ է ընդունում և շատ հաճախ կառուցվածքային ամբողջականության անմիջական ընկալումը դժվար է լինում /Տեսլեց, 2001: 562/: Օրինակ, անզ. studies physics in Cambridge «ֆիզիկա է սովորում Քեմբրիջում» կառույցի կողքին բացառում է առավել իրական թվացող *studies in Cambridge physics կազմությունը: Այդուհանդերձ, լեզվաբանը, սերող քերականության հիմնադրույթներից ելնելով, հնարավոր է համարում աստիճանային իրացում նաև VP կազմությունների համար, ինչպես՝



Նշված կառույցը հայերենի հետ զուգադրելիս նկատվում են քիչ տարբերություններ (հիմնականում PP-ում), ինչը, սակայն, A (studies) + S (physics) վերոհիշյալ ձևակազմական կադապարի էությունը չի փոխվում:

Կարծում ենք նաև, որ սերող քերականության դրույթների ներառումը երկու և ավելի բաղադրիչներով ձևաբանական կազմությունների մերոդարանական վերլուծության մեջ հետաքրքրի արդյունքներ է տալիս այն առումով, որ դրանք դիտարկվում են հաղորդակցման գործընթացի դիրքերից և այդպիսով համարվում են առաջին հերթին շարահյուսական իրողություններ: Այլ կերպ՝ բարդ ձևաբանական կազմությունները քննարկվում են ըստ շարահյուսական կադապարների բնույթի: Նման մոտեցմամբ Ω. Լիզն անգլերենի բաղադրյալ ձևերի կազմությունը բիւցնում է ութ շարահյուսական տիպերից / տե՛ս Lees, 1976: 174-186/:

1. Ենթակա - ստորոգյալ, ինչպես` girlfriend / madman և այլն:
2. Ենթակա - «միջին խնդիր», ինչպես` doctor's office / arrowhead և այլն:
3. Ենթակա - բայ, ինչպես` flying machine, working man/blow torch, playboy / assembly plant - population growth / earthquake և այլն:
4. Ենթակա - խնդիր, ինչպես` steamboat - car thief, honey - bee և այլն:
5. Բայ - խնդիր, ինչպես` drawbridge / eatingapple - handshake / sightseeing / shoemaker / chimneysweeep և այլն:
6. Ենթակա - նախորդային խնդիր, ինչպես` gunpowder / garden party / eggplant / night owl - sugarloaf / corn belt և այլն:
7. Բայ - նախորդային խնդիր, ինչպես` dance hall, payday, scrub brush / smoking car, flying time, washing-machine / delivery room, recovery time, distillation-apparatus, playgoing / boat ride / sleepwalker և այլն:
8. Խնդիր - նախորդային խնդիր, ինչպես` bullring - football / wood alcohol և այլն:

Այս դասակարգումից նախ հետևում է, որ ըստ էության այստեղ առկա է L. Stenիերի և մյուսների կողմից սահմանված շարահյուսական նվազագույն կառուցվածքի (A+S) ծավալման սկզբունքը՝ հակառակ ուղղությամբ: Բացի այդ, եթե Stenիերի և նրա հետևողների դրույթներից ենթելով հիշյալ տարրերի ամբողջականություն տեսնում ենք լեզվում, ապա այս դեպքում խոսքում: Կարծում ենք, սակայն, որ տարրերությունն այնքան էլ մեծ չէ, քանի որ երկու մոտեցմամբ էլ ելավետ է հանդիսանում շարահյուսական կառույցը՝ որպես հաղորդակցական միավոր:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Bowerman M. Learning a semantic system: What role do cognitive predispositions play? // D.Slobin (ed.) *The cross-linguistic study*. Hillsdale, 1993.
2. Brown R., Miller J. A first language: The early stages. London: George Allen, 1991.
3. Bybee J. L. Regular morphology and the lexicon // *Language and Cognitive Processes*, 1998, 10.
4. Chomsky N. Syntactic Structures. The Hague: Mouton, 1975.
5. Clark E. Meanings and concepts // *Handbook of child psychology*, vol. III, 1993.
6. Lees R. The Grammar of English Nominalizations. The Hague: Mouton, 1976.
7. Mc Neill D. The acquisition of language. New York: Harper and Row, 1980.
8. Schlesinger W. Learning Grammar: from pivot to realization rule. Huxley, 1991.
9. Slobin D., Bever T. Children use canonical sentences schemas: A cross-linguistic study of word order and inflections // *Cognition*, 1982, 12.
10. Тестелец Я. Т. Введение в общий синтаксис. М.: Наука, 2001.

А. МАНУКЯН – Методические и лингвистические основы обучения минимальных грамматических единиц английского языка. – В данной статье рассматривается проблема обучения минимальных грамматических единиц английского на основе принципов современной методики преподавания языков и типологической лингвистики. При этом автор исходит из существующего положения о том, что стратегии на начальном этапе усвоения названных единиц как у носителей языка, так и у изучающих этот язык как иностранный, в основном, идентичны. Таким образом, в статье анализируются современные топологические модели образования минимальных грамматических структур английского языка в разных языковых группах и устанавливаются принципы их применения в процессе его преподавания. Одновременно автором выявляются синтаксические особенности изучаемых структур английского в сопоставлении с армянским.

Ключевые слова: грамматическая единица, типологическая лингвистика, гипотеза о естественности, топологическая модель, генеративная грамматика, метод трансформации, когнитивный анализ, nominative phrase, морфологическая структура

A. MANUKYAN – Teaching English Minimal Grammatical Units in the Light of Modern Foreign Language Methodology and Typological Linguistics. – The paper touches upon learning minimal grammatical units of English on the basis of modern methods of teaching languages and typological linguistics. The author proceeds from the fact, that the strategy in the initial stages of assimilation of the mentioned units both by native speakers and as well as the “foreign” learners, is essentially identical. Hence, the modern typological models of minimal grammatical structures in the English language are analysed not only in different language layers but also in the process of teaching. Also, the author reveals the syntactic features of the English structures in relation to Armenian.

Key words: grammatical unit, typological linguistics, naturalness hypothesis, topological model, generative grammar, transformational grammar, cognitive analysis, nominative phrase, morphological structure

Ելիզ ՈՍԿԱՆՅԱՆ Երևանի պետական համալսարան

ՎԵՐԻՑ ՎԱՐ, ԹԵ՛ ՎԱՐԻՑ ՎԵՐ

“We have two ears and only one tongue
in order that we may hear more and speak less.”

Diogenes Laertius

Լեզվի հիմնական գործառույթը հաղորդակցվելն է սակայն չպետք է մոռանանք, որ հաղորդակցությունը քերի կլինի եթե այն ինչ մենք ասում ենք շհասկացվի խոսակցի կողմից: Հոդվածը նվիրված է օտար լեզու ուսումնասիրողների ունկնդրելու հմտությունները զարգացնելու երկու հիմնական եղանակներին՝ վերից վար (*Top-down*) և վարից վեր (*Bottom-up*) և դրանց կիրառմանը լսարանում: Ինչպես նաև կառաջարկենք որոշ կայքեր, արտապարանային ինքնուրույն աշխատանքի համար:

Քանայի բառեր. մերողաբանություն, վերից վար եղանակ, վարից վեր եղանակ, ունկնդրում, հաղորդակցություն, օտար լեզվի ուսուցում

Մեր ժամանակներում արդյունավետ հաղորդակցման համար մեզ առաջին հերթին հարկավոր է ստվորել լսել դիմացինին, իզուր չե, որ անգիտախոսներն ասում են. “a good communicator is first of all a good listener”: Ինչնե, քչերն են լիարժեք տիրապետում լսելու արվեստին: Գործը բարդանում է, երբ բախվում ենք օտար լեզվի գեղեցիկ, բայց միևնույն ժամանակ բառիս ուղղիղ իմաստով «օտար» հնչյունների հետ: Որպեսզի այս գործընթացը հնարավորինս դյուրին և հաճելի լինի լեզու ուսումնասիրողների համար ուսուցիչը նախ և առաջ պետք է օգնի ուսանողներին մշակել որոշակի ուսումնական գործառություն, որը կնպաստի լսելու հմտությունների զարգացմանը:

Ի հակառակություն այն թյուր կարծիքի, թե ունկնդրումը պասիվ գործընաց է, որտեղ ունկնդիքն ունի փոքր դերակատարություն, իրականում մենք ականատես ենք լինում մի բարդ մեխանիզմի գործարկմանը: Յուրաքանչյուր ունկնդիք տարրերակոմ է հնչյունները, բառային և քերականական կառույցները, մեկնարանում հնչերանգը, շեշտը և, ի վերջո, կիրառելով բոլոր վերը նշված հմտությունները՝ դիտարկում խոսքը սոցիալ-մշակութային համատեքստում: Անգլերենը որպես օտար լեզու ուսումնասիրողները լսելիս առավելապես բախվում են հետևյալ խնդիրների հետ. մի կողմից նրանք չեն կարող վերահսկել խոսքի արագությունը և երբեմն դժվարանում են տարրերակել այն հնչյունները, որոնք առկա չեն իրենց մայրենի լեզվում: Մյուս կողմից, նույնիսկ եթե հաջողվոմ է ճիշտ լսել հնչյունները, նրանք ունենում են մեկնարաններու խնդիրներ, քանի որ չունեն բավականաչափ հեճքային բառապաշար, քերականական, հնչյունաբանական գիտելիքներ: Հարցը բարդանում է, երբ խոսքը լի է լինում խոսակցական բառերով, դարձվածներով, մեղմասություններով

Ունկնդրելու հմտությունները զարգացնելու հիմնական եղանակները երկուսն են՝ վերից վար (*Top-down*) և վարից վեր (*Bottom-up*): Այս եղանակների

ընտրությունը մասնավորապես կախված է լեզու ուսումնասիրողների լեզվի իմացության մակարդակից: Վերից վար եղանակի կիրառման դեպքում առանցքային է ունկնդրի դերը: Վերջինս կիրառում է իր հենքային գիտելիքները տվյալ թեմայի, իրադրության կամ համատեքստի մասին: Այս գիտելիքները հնարավորություն են տախ մեկնարամելու լսածը և կանխատեսելու հաջորդիվ եկող տեղեկատվությունը: Տվյալ մեթոդը ներառում է՝

- ունկնդրում՝ հիմնական գաղափարը ընկալելու նպատակով /listening for the main idea/
- կանխատեսում /predicting/
- եզրակացություններ /drawing inferences/
- ամփոփում /summarizing/

Վարից վեր մեթոդի հիմքում տերսուն է: Ունկնդիրը հիմնվում է արտաքերող խոսքի վրա որպես հնչյունների, բառերի և քերականության իմաստասեղծ համադրություն: Նախ տարրերակվում են ամենափոքր տարրերը՝ հնչյունները: Օրինակ [թ]-ն դիտարկվում որպես [թ] և ոչ [թ], [i:]-ն [i:] և ոչ [թ] [i] կամ [e] և այլն: Հնչյունները վերածվում են բառերի, հետո քերականական կառույցների և այսպես շարունակ մինչև հանգում ենք իմաստի: Այս եղանակը ներառում է՝

- ունկնդրում՝ նյութի հատուկ մանրամասներն ընկալելու նպատակով /listening for specific details/
- ազգակից բառերի տարրերակում /recognizing cognates/
- շարադասություն /recognizing word-order patterns/

Իրական կյանքում ունկնդրելիս մենք սովորաբար կիրառում ենք երկու եղանակները միաժամանակ: Լսելու ժամանակ վերից վար և վարից վեր եղանակները փոխազդում են և այս փոխազդեցության արդյունքը փոխընթացնումն է (Peterson, 1991): Չնայած նրան, որ այս գործընթացները մայրենի լեզվում ինքնին են ընթանում, ուսանողներին հարկավոր է սովորեցնել կիրառել այդ հմտությունները օտար լեզվով հաղորդակցվելու համար: Յուրաքանչյուր առաջադրանք պետք է ծառայի մեկ կամ մի քանի լսողական հմտությունների զարգացմանը: Այն կարող է ունենալ մեկից ավելի նպատակ կամ արդյունք, սակայն չափից ավելի շատ պետք չէ ծանրաբեռնել սկսնակ ուսանողների ուշադրությունը:

Վերից վար և վարից վեր եղանակները քննարկելիս Ուորերս Նորիսը պնդում է, որ երբեմն ուսուցիչները զերազնահատում են վերից վար եղանակի դերը լեզվի ուսուցման մեջ: “Many of the listening materials on the market today are concerned chiefly with helping learners become more adept at improving top-down skills by having them (identify relevant information while ignoring unnecessary details.) In order to simulate the knowledge that native speakers bring to listening, learners are often provided with vocabulary lists prior to the task and told who the speakers are, what the situation is, and what the topic is about. However, scant attention is paid to the phonological characteristics that mark informal. This seems a bit like putting the cart before the horse.” /Norris, 1995:47/: Ըստ Նորիսի առավելագույն արդյունավետության հասնելու համար ուսուցիչը պետք է

գուգակցի երկու եղանակները՝ համապատասխանեցնելով ընտրված հնարները իր լսարանի պահանջներին /Norris, 1995:47/:

Այսպիսով, պետք չէ անտեսել բառային, թերականական և հնչյունական առանձնահատկությունները օտար լեզվի դասավանդման ընթացքում և հնարավորինս զարգացնել այդ հմտությունները հատկապես լեզվի ուսուցման վաղ փուլերում։ Հայտնի է, որ լեզվակիրներն ել ոչ բոլոր հնչյուններն են լսում խոսքի ընթացքում, սակայն այս փաստը էապես չի անդրադառնում խոսքի ըմբռնման վրա։ Մյուս կողմից եթե խոսքը վերաբերվում է օտար լեզվին՝ նույնիսկ չնշին շեղումը դասական տարրերակից կարող է առաջացնել թերլմբնում։ Եկեք դիտարկենք հետևյալ օրինակները *umgernaseeyimlader* և *eelerbinsurprised*։ Անգլիախոս մարդու համար մեծ դժվարություն չի ներկայացնի վերծանել այս հնչյունների խումբը, «թարգմանել» դրանք՝ արդյունքում կունենանք հետևյալ տարրերակները՝ *I'm going to see him later* և *He'll have been surprised* (անկախ այն փաստից, որ *to, will, have* բառերը իրականում չեն արտասանվում)։ Լեզվակիր ունկնդիրների համար այս գործընացը մեծ դժվարություն չի ներկայացնում, քանի որ նրանք ենթագիտակցական մակարդակի վրա տիրապետում են լեզվի թե՛ թերականական, թե՛ հնչյունական առանձնահատկություններին և մեխանիկորեն լրացնում են բոլոր բացերը։

Օտար լեզվի ունկնդրման հմտությունների զարգացմանը ծառայող լավ մշակված առաջադրանքը պետք է բաղկացած լինի ճիշտ փոխկապակցված փուլերից։ Դրանք են՝ նախքան ունկնդրելը իրականացվող առաջադրանքները (*pre-listening activities*), ունկնդրելու ընթացքում կատարվող առաջադրանքները (*while-listening activities*) և ունկնդրելուց հետո կատարվող առաջադրանքները (*after-listening activities*)։

Այս համատերսուում շատ կարևոր է նախքան ունկնդրելը իրականացվող առաջադրանքների դերը ունկնդրելու հմտությունների զարգացման գործում։ Այսպիսի առաջադրանքները օգնում են ուսանողին ակտիվացնել իրենց հենքային գիտելիքները և հստակեցնել սպասելիքները լսվելիք տեքստի վերաբերյալ։ Ավելին, հմուտ ուսուցիչը խնամքով մշակված հարցերի շնորհիվ ակտիվացնում է ուսանողների հենքային գիտելիքները և լեզվի իմացությունը և օգնում է նրանց հասկանալ տեքստը առանց այդ տեղեկատվությունը ուղղակիորեն նրանց տալու։

Նախքան ունկնդրելը իրականացվող առաջադրանքները կարող են ծառայել մի շարք նպատակների։ Ուսուցիչը կարող է՝

- ստուգել ուսանողների հենքային գիտելիքները՝ ինչպես տվյալ թեմայի վերաբերյալ, այնպես էլ բառային և թերականական նյութի վերաբերյալ։
- անհրաժեշտության դեպքում տրամադրել ուսանողներին որոշակի տեղեկատվություն, որը կնպաստի նյութի ընկալմանը կամ ակտիվացնել ուսանողների մոտ առկա գիտելիքները։
- անհրաժեշտության դեպքում տրամադրել մշակութային տեղեկատվություն, որը կնպաստի նյութի ընկալմանը։
- ներկայացնել լսվելիք նյութի տեսակը և այն ունկնդրելու նպատակը։

Ոսումնասիրությունները ցույց են տալիս, որ այն մարդիկ, ովքեր ունեն կրահելու զարգացած հմտություններ ավելի լավ են զմբռնում արտաքերված խոսքը: Այսպիսով, կրահելու հմտությունները զարգացնելով՝ մենք զարգացնում ենք նաև ունկնդրելու հմտությունները: Դիտարկենք որոշ հնարներ, որոնք կնպաստեն ունկնդրող նյութի ավելի ոյուրին ընկալմանը:

1. Word Association – Չուզորդումը /Association/ հիշողության ամենահիմնական մեխանիզմն է: Գաղափարներն ու հակացությունները փոխկապակցված են մարդու հիշողության մեջ: Այս կապը հիմնված է մարդու նախորդ փորձառության վրա, և վերջնական վերլուծության ժամանակ հնարավորին ճշգրիտ ներկայացնում է իրական աշխարհում առկա երևույթների միջև օբյեկտիվորեն գոյություն ունեցող կապը: Որոշակի իրավիճակներում որևէ զաղափար կամ հասկացություն կարող է ուղեկցվել նրան առընչվող այլ զաղափարների կամ հասկացությունների շղթայի ի հայտ գալով: Այս երևույթը կոչվում է զուգորդում (եզրույթը առաջարկվել է XVIII դարում Զոն Լոկի կողմից): Նախքան լսելը ուսանողներին տրվում է ժամանակ մտածել այն բոլոր երևույթների մասին, որոնք որոշակի առընչություն ունեն դասի հիմնական թեմայի հետ: Գրատախտակին գովում է առանցքային բառը (key word), իսկ ուսանողներին առաջարկում են այդ երևույթի հետ կապված բառեր կամ բառակապակցություններ ասել: Որպես տարբերակ կարելի է զրատախտակին ավելացնել մի շարք բառեր, որոնք անմիջապես վերցված են տեքստից և առաջարկել ուսանողներին գուշակել թե ինչի մասին է լինելու նյութը: Այսպիսով հենքային գիտելիքները կիրառելով՝ նրանց նախապատրաստում ենք արդյունավետ ունկնդրման:

2. Որպես տարբերակ կարելի է առաջարկել «համը ֆիլմի» դիտումը: Ուսանողները դիտում են նախապատրաստված նյութը առանց ձայնի և փորձում են գուշակել թե ինչի մասին է լինելու տեքստը: Այստեղ մեծ է արտալեզվական բաղադրիչների դերը (մարմնի լեզուն, ժեստերը):

3. Ունկնդրում՝ հիմնական իմաստը հասկանալու համար (listening for the gist): Տվյալ առաջադրանքը ուսանողների մոտ զարգացնում է մի շատ կարևոր հմտություն՝ էականը անէականից սահմանազատելու հմտությունը: Իրական կյանքում նրանց դմքար թե հնարավորություն տրվի միևնույն բանը լսել մի քանի անգամ, այսպիսով նրանք պետք է մշակեն որոշակի մարտավարություն անձանոք բառերի, երևույթների հետ բախվելու իրավիճակներում երկիմաստությունից խուսափելու համար: Սովորեցնել, որ նրանք կարող են հասկանալ և այսպիսով սովորել նույնիսկ այն դեպքում, եթե որոշ բառերի իմաստը նրանց հայտնի չէ: Առաջադրանքն իրենից ներկայացնում է մի շարք հարցեր տեքստի հիմնական զաղափարի շուրջ, որոնց ուսանողը պետք է պատասխանի: Այստեղ հարկ է նշել, որ ուսանողը կարող է պատասխանել այս հարցերին անկախ այն հանգամանքից, որ որոշ բառեր և բառակապակցություններ այդպես էլ մնում են չվերծանված:

4. Հատուկ տեղեկատվության համար կատարվող ունկնդրում (Listening for specific information): Երբեմն իրական կյանքում մենք լսում ենք միայն որոշակի տեղեկություն՝ առանց հաշվի առնելու մնացածը: Օրինակ՝ եղանակի տեսությունը, եթե մեզ հետաքրքրում է միայն մեր բաղադրի ջերմաստիճանը, կամ

Երբ մենք նստած ենք մետրոյում և սպասում ենք մեր կանգառին, մենք չենք լսում մանրամասները, այլ միայն մեր կանգառի անունը: Դիցուք, մենք ցանկանում ենք լսել գնացքների շվացուցակի նասին տեղեկատվություն: Մայրենի լեզվի դեպքում մենք հստակ պատկերացնում ենք, թե ինչ բառապաշար է կիրառվելու: Եթե մեզ խնդրեն գուշակել, թե ինչ է ասելու հաղորդավարը, մեզանից շատերը կառաջարկեն հետևյալ տարրերակը գնացքը մեկնում է՝ ժամանում է հետևյալ հարթակից, այսինչ ժամին: Մենք արդեն պատկերացնում ունենք թե ինչ պետք է ասվի և ինչպիսի տեղեկատվության է պետք ուշադրություն դարձնել: Այլ խոսքերով ասած, մենք ունենք պատրաստի սցենար ցանկացած իրավիճակի համար, և այն օգնում է մեզ հասկանալ/վերծանել ստացվող տեղեկատվությունը (Richards, 1983; Morley, 1991): Այսպիսով, օտար լեզու դասավանող ուսուցիչը պետք է օգնի ուսանողներին նախ կազմել, այսուհետև՝ կիրառել պատրաստի սցենարներ՝ լսողական առաջադրանքները հաղթահարելու համար:

Ունկնդրելու ընթացքում կատարվող առաջադրանքներն ուղղակիորեն կապված են տեքստի հետ: Ուսանողները դրանք կատարում են ունկնդրելու ընթացքում, կամ անմիջապես հետո:

Այս փուլի ընթացքում նրանք պետք է լինեն առավել ուշադիր, որպեսզի ակտիվորեն մշակեն ստացվող նյութը և ճշգրիտ կատարեն հանձնարարությունը: Ինչևէ, եթե ուսուցիչը հստակ ներկայացնի առաջադրանքը, դրա նպատակը և պահանջները, ուսանողներին հեշտ կլինի կենտրոնանալ նյութի վրա: Լսելու ընթացքում կիրառվող առաջադրանքների մեծ մասը միտված է հետևյալ հմտությունների գարգացմանը

- Ունկնդրում՝ նյութի հիմնական իմաստը պարզելու համար (Listening for the gist)
- Ունկնդրում՝ հատուկ տեղեկատվության համար (Listening for specific information)
- Ունկնդրում խոսողի կարծիքը պարզելու նպատակով (Listening for the speaker's attitude or opinion)

Ներակայացնենք առաջադրանքների մի քանի օրինակ՝

1. Լսել և նշել: (Listen and tick.) Առաջադրանքի դյուրիմությունը կամ քարոզությունը կախված է նրանից, թե ուսուցիչն ինչ է պահանջում ուսանողներից: Եթե, օրինակ, ուսանողները պարզապես պետք է նշեն (tick) այն ամենը ինչ լսում են, ապա առաջադրանքը բավականին հեշտ կլինի իրականացնել: Այսպիսի առաջադրանքները հատկապես հարմար են սկսնակ ուսանողների համար:

2. Լսել և նշել հերթականությունը: (Listen and sequence.) Գոյություն ունեն բազմաթիվ նմանատիպ առաջադրանքներ: Ուսանողները պետք է պարզեն, թե ինչ հերթականությամբ են տեղի ունենում գործողությունները: Առաջադրանքը կարելի է կատարել հաջողությամբ նույնիսկ բազմաթիվ անձանոր բառերի առկայության դեպքում: Սա նպաստում է ուսանողների մոտ սեփական

լսողական գիտելիքների հաճողեավ վստահության ձևավորմանը, որը նրանք հաստատապես կկիրառեն հետազայում իրական կյանքում:

3. Լսել և լրացնել բացքողումները: (*Gap filling activities.*) Նմանօրինակ առաջադրանքները առավել հաճախ են կիրառվում լսարանում: Առաջադրանքի պահանջն է լսել և լրացնել բացքողումները: Առաջադրանքը կարող է ծառայել մի շարք նպատակների, որոնց թվում՝ ամրապնդել բառային, հնչյունային, քերականական նյութը:

4. ճիշտ կամ սխալ: (*True-false activities.*) Առաջադրանքի հիմնական նպատակն է պարզել արդյոք առաջադրանքում նշված երևոյթները կամ գործողությունները ճիշտ են, թե սխալ ըստ համատեքստի:

Ունկնդրելոց հետո կատարվող առաջադրանքները ստուգում են, թե որքան լավ է ուսանողը հասկացել խոսքը: Սակայն այստեղ պետք է նշել, որ եթե խոսքը չափից ավելի երկար է, ունկնդրները կարող են մոռանալ, թե ինչ են նրանք լսել, քանի որ նույնիսկ մայրենի լեզվում մենք սովորաբար հիշում ենք միտքը, սակայն չենք հիշում այն ճշգրիտ բառապաշարը, որը կիրառվել էր խոսքում: Ենքեք դիտարկենք այս տիպի մի քանի առաջադրանքը:

1. Բազմակի ընտրության առաջադրանքներ և բաց հարցեր: (*Multiple-choice և open-ended questions.*) Առաջին տարբերակի դեպքում ուսանողից պահանջվում է ընտրել յորաքանչյուր հարցին համապատասխան պատասխանի տարբերակը: Ի տարբերություն առաջին տարբերակի երկրորդ տարբերակը պահանջում է ավելի շատ ինքնուրույն աշխատանք՝ ուսանողը կամ պետք է պատասխանի հարցին ելնելով այն տեղեկատվությունից, որը նաև ստացել է լսելու ընթացքում, կամ արտահայտում է իր իսկ կարծիքը:

2. Նշումներ և բացքողումների լրացում: (*Note-taking և gap-filling.*) Այս առաջադրանքում շատ ակընհայտ կերպով միավորված են ինչպես ունկնդրելու ընթացքում կատարվող առաջադրանքները, այնպես էլ ունկնդրելոց հետո կատարվող առաջադրանքները: Ուսանողները նախ լսում են բավականին երկար խոսք՝ ընթացքում որոշ նշումներ անելով: Այնունետև ուսուցիչը նրանց տալիս է տերսուի թերի տարբերակ, որը նրանք պետք է լրացնեն՝ կիրառելով իրենց գրառումները:

Ամփոփելով նշենք, որ ունկնդրումը բարդ գործընթաց է, որի ժամանակ ունկնդրը բազմաթիվ գործառույթներ է իրականացնում: Սա մի յուրահատուկ մարտահրավեր է մի շարք պատճառներով:

1. Ունկնդրելու ժամանակ անձը ստանձնում է յուրահատուկ դեր, այն է՝ նա հանդես է գալիս կամ ակտիվ դերակատարությամբ՝ երես առ երես շվման ժամանակ, կամ պասիվ դերակատարությամբ՝ ունկնդրելով այլոց խոսքը:

2. Ունկնդրումը ներառում է լեզվի բոլոր շերտերը՝ ուսանողները լեզուն լսում, կիրառում են ոչմիայն ակադեմիական նպատակներով (դասախություններ, սեմինարներ, կոնֆերանսներ), այլև լսում/դիտում են նաև առօրյա խոսակցական բառապաշարով հարուստ ֆիլմեր, երգեր, և այլն:

3. Մեկ այլ մարտահրավեր է իրենից ներկայացնում քերականությունը, իր ձևափոխված, կրծատված տարբերակներով ("altered" and "reduced" language forms): Օրինակ՝ I wanna go, Just a sec:

4. Եվ վերջապես վերը նշված գործոններին գումարվում է հաղորդվող նյութի արտաքերման արագությունը: Ի տարբերություն ընթերցանությանը, ունկնդրելու գործընթացի արագությունը կախված չէ, չի կառավարվում ունկնդրի կողմից:

Ուսուցիչ դերը այստեղ չի սահմանափակվում միայն որևէ նյութ լսարան բերելով և անպատճառ ուսանողների համար խորթ առաջադրանքներ հանձնարարելով: Ուսուցիչը պետք է լսարանում կիրառի տվյալ ուսանողների լեզվի իմացությանը համապատասխանող լեզվական նյութ ունկնդրումը բաժանելով որոշակի փուլերի, որտեղ համապատասխան առաջադրանքների միջոցով կզարգացնենք վերից վար և վարից վեր հմտությունները: Պետք է հաշվի առնել մեր ուսանողների կարիքները և հետաքրքրությունները, և համապատասխանաբար պլանավորենք դասերը:

Եթե կիրառենք բոլոր վերը նշված կետերը, ապա հնարավորինս կկարողանանք տալ մեր ուսանողներին այն գիտելիքները, որոնք նրանք հետազոյն կկիրառեն իրական կյանքում հաղորդակցման ժամանակ:

Դժբախտաբար ունկնդրելու հմտությունները զարգացնելու համար հատկացվող լսարանային ժամանակը սահմանափակ է, այսպիսով ուսանողներին պետք է քաջալերել որքան հնարավոր է շատ զարգացնել այդ հմտությունները նաև արտալսարանային աշխատանքի միջոցով: Բարերախտաբար մեր օրերում համացանցը բավականին մեծ հնարավորություններ է ընձեռում տարատեսակ ուսուցողական ծրագրերի ձեռք բերման համար (www.bbc.co.uk, www.britishcouncils.com, www.breakingnewsenglish.com): Կիրառելով համացանց՝ ուսանողները կարող են գտնել իրենց լեզվի իմացությանը համապատասխան նյութեր և հնարավորինս հարստացնել գիտելիքները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Harmer J. *The Practice of English Language Teaching*. London: Longman, 1991.
2. Morley J. M. *Listening Comprehension in Second/Foreign Language Instruction* // M. Celce-Murcia (ed.) *Teaching English as a Second or Foreign Language (Second Edition)*. New York: Newbury House, 1991.
3. Nunan D. *Language Teaching Methodology*. London: Prentice Hall, 1998.
4. Peterson P.W. *A Synthesis of Methods for Interactive Listening* // M. Celce-Murcia (ed.), *Teaching English as a Second or Foreign Language (Second Edition)*. New York: Newbury House, 1991.
5. Porter D. & Roberts. *Authentic Listening Activities* // M.H. Long & J.C. Richards (eds.) *Methodology in TESOL*. Rowley, Mass.: Newbury House, 1981.
6. Richards J. C. *Listening Comprehension: Approach, Design, Procedure* // M.H. Long & J. C. Richards (eds.). *Methodology in TESOL*. Rowley, Mass.: Newbury House, 1983.

7. Ur P. Teaching Listening Comprehension. Cambridge: Cambridge University Press, 1984.
8. <http://www.teachingenglish.org.uk/article/listening-top-down-bottom>
9. <http://eltnotebook.blogspot.com/2007/02/teaching-listening-top-down-or-bottom.html>
10. <http://eltnotebook.blogspot.com/2006/12/why-dont-they-understand.html>
11. <http://languageinstinct.blogspot.com/2006/11/up-from-bottom-or-down-from-top.html>

Э. ВОСКАНЯН – *Нисходящий подход или восходящий подход?* – Основная функция языка – коммуникация, но мы не должны забывать, что общение будет неполным, если то, что мы говорим, будет непонятным слушателям. Одним из наиболее важных и фундаментальных навыков в изучении иностранных языков является аудирование, его важность для нашего повседневного общения трудно переоценить. Аудирование является наиболее распространенным видом коммуникативной деятельности, поэтому ученые пытаются найти соответствующие методы для его обучения. Статья посвящена двум основным подходам преподавания аудирования (нисходящий подход и восходящий подход) и особенностям их использования в учебном процессе.

Ключевые слова: методология, аудирование, нисходящий подход, восходящий подход, коммуникация, изучение иностранных языков

E. VOSKANYAN – *Top down or Bottom up?* – Communication is the main function of language but we must not forget that it will be incomplete if what we say is incomprehensible for the hearer. One of the most important and fundamental skills in language learning is listening, its importance for our daily communication cannot be overestimated. Listening is the most common type of communication, so scientists are trying to find appropriate methods for teaching it. The paper touches upon the two basic methods of foreign language teaching (top-down and bottom-up) and their use in classroom.

Key words: methodology, top-down approach, bottom-up approach, listening, communication, foreign language learning

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Armine MANUKYAN
Universidad Estatal de Ereván

«EL NECIO BIEN AFORTUNADO» DE SALAS BARBADILLO. RASGOS GENÉRICOS

El presente artículo, tal como reza el título, examina los rasgos genéricos de «El necio bien afortunado» del ingenioso escritor áureo Alonso Jerónimo de Salas Barbadillo. Tras un análisis detallado se revela que en muchas obras de Salas Barbadillo, en general, y en la novela «El necio bien afortunado», en particular, se mezclan con singular maestría los elementos picarescos y cortesanos originando un mundo híbrido de compuestos.

Palabras clave: Alonso Jerónimo de Salas Barbadillo, Siglo de Oro de la literatura española, escritor áureo, «El necio bien afortunado», pertenencia genérica, fusión de géneros, novela picaresca, novela cortesana

Alonso Jerónimo de Salas Barbadillo (1581-1635) es un escritor prolífico del siglo XVII y sus obras constituyen una manifestación típica de las formas narrativas del Barroco español. Sus escritos son de variado contenido, extensión y forma que no se estriñen a un género determinado. Conviven en ellos distintas fórmulas narrativas y tonos posibles. Son una especie de mezcla de elementos picaresco-costumbristas y satírico-burlescos. En realidad, el escritor madrileño espiga en dichos géneros sin elaborar especialmente ninguno, en rigor. De hecho, esta idea, no es nada nueva, en ella de una u otra manera, han hecho hincapié varios estudiosos de su obra. Así por ejemplo, Place dice al respecto que «innova el campo de la novelística española uniendo el cuento picaresco con la novela corta italianizante, en un marco de sátira costumbrista» /citado por Valbuena Prat, 1966: 887/. Berenguer /1994: 302/ también subraya que sus novelas, sin plan de conjunto determinado, «son mezcla apenas hilvanada de sátiras, cuadros de costumbres, novelas a estilo italiano, episodios picarescos, poesías festivas, anécdotas, epigramas y dichos ingeniosos, entre los cuales se pierde la trama principal de la narración». En opinión de Berenguer, dicha característica se debe, ante todo, al deseo de Barbadillo de ofrecer variedad al lector. Precisamente, con esa variedad, disparidad y desfragmentación se relaciona la dificultad de clasificación de su legado literario. Pese a las dificultades, en la crítica literaria hay varios intentos de parcelarlo. En primer término, cabe destacar la clasificación de García Valdés /García Valdés, 2005: 140-142/. La estudiosa divide los multiformes escritos salasianos en dos grupos:

1) Obras serias: *El caballero perfecto*, las novelas cortas *Atanarico* y *El gallardo montañés*, los poemas hagiográficos *La patrona de Madrid restituída* y *Los triunfos de la beata soror Juana de la Cruz*, las novelas versificadas interpoladas en *El subtil cordobés Pedro de Urdemalas*, las comedias caballerescas *Victoria de España y Francia* y *Los prodigios del amor*, algunas novelas o relatos cortos, así como los poemas amorosos serios.

2) Obras en las que predomina el registro cómico, que son novelas dialogadas, entremeses, el resto de sus comedias, poemas satíricos, jocosos, burlescos y las novelas *Corrección de vicios*, *El caballero puntual*, *La casa del placer honesto*, *El subtil cordobés Pedro de Urdemalas*, *Don Diego de noche*, *El necio bien afortunado*, etc.

Como se observa la división de García Valdés se basa, fundamentalmente, en el criterio de tonalidad. En ello hace hincapié también Vitse a la hora de matizar la clasificación que había hecho Émile Arnaud del legado salasiano. Recordemos que Arnaud había ordenado en tres fases de desigual importancia la herencia de Salas Barbadillo: «la juventud (hasta 1615, ...) en que predomina la reutilización de los procedimientos característicos de algunas de las grandes obras contemporáneas (la de Cervantes principalmente); la madurez (1619-1624; ...) como época de la producción más personal, aunque menos conocida por la crítica tradicional algo desprevenida ante ella; la supervivencia (1624-1635; ...) con escasa aportación original» / Vitse, 1980: 6/. Vitse propone la siguiente división:

1) Obras de registro patético: *El caballero perfecto*, *Atanarico* y *El gallardo montañés*, *La patrona de Madrid restituída*, *Los triunfos de la beata soror Juana de la Cruz*, las 44 octavas mitológicas del *Trofeo de la piedad*, *Victoria de España y Francia*, *Los prodigios del amor*, *El pescador venturoso* en *La casa del placer honesto*, *La mayor acción del hombre* en *Fiestas de la boda de la incasable mal casada*, la vida del cura de la octava aventura de *Don Diego*, *Las hazañas del amor: Recaredo y Rosimunda*, *Polidoro y Aurelia* (las últimas dos están interpoladas en *El subtil cordobés*, *Pedro de Urdemalas*).

2) Obras de registro cómico: *Corrección de vicios*, *La casa del placer honesto*, *El subtil cordobés*, *El caballero puntual*, *El necio bien afortunado*, *Don Diego de noche*.

Rey Hazas /1986/, en su edición a *La hija de Celestina*, en *Picaresca femenina*, ya procura parcelar la copiosa obra salasiana en tres grupos:

1) Textos serios (*El caballero perfecto*, la novela *Atanarico*, intercalada en *El caballero puntual*, *El gallardo montañés* en *La casa del placer honesto*).

2) Textos hagiográficos (*La patrona de Madrid restituída*, *Los triunfos de la beata soror Juana de la Cruz*).

3) Textos de creación narrativa y dramática entre la picaresca y el costumbrismo. Abarca el resto de su legado literario.

Como se nota fácilmente según el criterio de la tonalidad *El necio bien afortunado* forma parte del grupo del registro cómico y según la división de Rey Hazas formaría parte del grupo de textos entre la picaresca y el costumbrismo. Realmente, en el caso de *El necio bien afortunado* estamos ante un género híbrido.

Por un lado, presenta características del género picaresco (capítulos II y IV) y, por otro lado, formas de la novela corta italianizante con mezclas genuinas de elementos cortesanos con alta dosis de salpicaduras satíricas, hecho que dificulta la tarea de constreñirla a una fórmula única. Las distintas interpolaciones de los episodios, el desorden y la complejidad, a su vez, agrandan el abanico de posibilidades clasificadorias de la presente obra.

Amén de todo, son evidentes ciertas características que acercan *El necio bien afortunado* a la picaresca. Lo atestigua, ante todo, el carácter de su antihéroe, una especie de mezcla entre pícaro y filósofo. Es verdad que la obra comienza *in medias res* (dos jóvenes visitan a un raro doctor estimado en el mundo de las letras, cuyo sobrenombre es Ceñudo), pero a partir del segundo capítulo adopta la forma pseudo-autobiográfica propia de las novelas picarescas, en particular desde el momento en que Ceñudo comienza a contar su vida a don Félix de Vargas subrayando su origen y sus infortunios:

Yo, amigo, fui concebido en necesidad original y puedo decir que soy necio de todos cuatro costados, porque siendo mi padre un hombre bien nacido y graduado de licenciado por Alcalá, ya con el pie en el estribo para un muy honrado cargo, se enamoró de mi madre, siendo una doncella mal nacida, pues nació de padres pobres y necia por su persona. Estaba el bueno de mi padre perdigado en los rayos de sus ojuelos, perdiase por ella, dio en pensar que podría engañarla. Diola palabra de casamiento con intención de dejarla con la media carta. Creyole ella fácilmente, ambos anduvieron necios: porque él quedó después casado por justicia y ella tuvo casi en trances últimos su honor. Desta necesidad de ambos nací yo... /Manukyan, 2012: 271-272/.

Esta creación está sazonada también de otros elementos picarescos. Como otros pícaros Ceñudo también pasa su infancia entre gente rústica. Si procuramos hacer una brevíssima disección, enseguida, observamos cómo *El necio bien afortunado* participa de la tipología del subgénero picaresco:

- 1) Autobiografía del protagonista.
- 2) Mozo de varios amos.
- 3) Carácter satírico, realista de la obra.
- 4) Ambiente social no muy alto.
- 5) Infancia y adolescencia del protagonista en ambientes más o menos humildes.
- 6) Cambios de fortuna que hacen que el protagonista sea en ocasiones títere de las circunstancias.
- 7) La necesidad ingeniosa como arma para escapar de los condicionamientos sociales.
- 8) La individualidad y el carácter del protagonista a pesar de los diversos roles que interpreta a lo largo de su vida.
- 9) Objetivo crítico social-moralizante de la obra.
- 10) Presencia de escenas escatológicas.
- 11) Estructura abierta.

En suma, el fondo realista y moralizante de la literatura de gusto picaresco palpita en la ingeniosa novela de *El necio bien afortunado*. Aún más, con especial maestría se demuestra que el éxito lo consiguen los necios y que es una de las únicas vías de llegar a conseguir bienestar en aquella sociedad. Para ello, se traza la viva imagen del doctor Ceñudo, el cual desde la niñez pasa por tonto, hecho que no vacila en aprovechar para salir siempre seco del agua y digerir fácilmente sus ardides y trapacerías.

Francisco Cauz /1977/ también subraya que *El necio bien afortunado*, es de factura híbrida y representa la fusión del género picaresco y el cortesano. Elementos cortesanos advertimos, por ejemplo, en el hecho de que la novela tiene por escenario la corte y ciudades bulliciosas (Madrid, por ejemplo). El pícaro vive ociosamente, aprovechando de la diversidad de la gran ciudad. Respecto a lo picaresco, Cauz observa el proceso evolutivo social del protagonista, recordando su humilde origen y su paulatino encubrimiento en la sociedad cortesana y el desarrollo progresivo de la maldad, en la primera fase de la vida de Ceñudo reflejada a través de sus pequeñas tretas y hurtos, y en la fase más avanzada, el progreso ascendente de dichos gérmenes en acción y conducta mucho más graves. Para Cauz /1977: 95/ *El necio bien afortunado* «se acerca más al prototipo del género picaresco que *La hija de Celestina* de Salas Barbadillo», el crítico trae a primer plano muchos entronques de corte lazariellos presentes en esa obra. Observa huellas lazariellosas, sobre todo, hasta el momento de la llegada del protagonista, Pedro Ceñudo, a la corte, Madrid. El doctor Ceñudo, al igual que Lázaro, se ve obligado a tejer trapacerías graciosas, es igual amante del vino, y como él “hace la salva” al jarro, la avaricia del tío es comparable con el del ciego amo de Lazarillo, la única diferencia que a Ceñudo no le castigan, mientras se muestra tonto. El episodio de las longanizas y golosinas gracias a las cuales “sacaba el vientre del mal año”, según Cauz, recuerda el episodio de la llave del arca-despensa del clérigo en Lazarillo. Aquí el erudito introduce una pequeña apostilla que acerca aún más *El necio bien afortunado* al subgénero picaresco: el tema del hambre, la clásica preocupación de la novela picaresca, elemento que falta en muchas obras salasianas, incluso en *La hija de Celestina*. Otros episodios análogos a los de *Lazarillo* son, por ejemplo, los de quejas sobre los supuestos ratones que hacen incursiones y como solución, la propuesta de conseguir un gato, mientras en realidad el mismo ejercía el oficio de gatos: el de hurtar. Rastros lazariellos se observan también en el carácter del primer amo de Ceñudo, caballero ostentoso, pretendiente de un título noble. Al igual que él, le gusta lucirse y pasear por las calles de Madrid acompañado de pajés, lacayos y criados.

Como era pretendiente mi amo, no paraba un punto en casa, pasábalo yo muy mal, porque no quería que se quedase pajé ni lacayo alguno pensando que perdía su nobleza en perdiendo de vista a cualquiera de nosotros. Ved cuáles son las honras del mundo y las ostentaciones que acreditan méritos, pues las dan unos viles lacayos y sucios pajecillos /Manukyan, 2012: 289/.

En *El necio bien afortunado* tampoco falta otro núcleo obsesivo de la novela picaresca: el tema de la honra. Ceñudo no puede permanecer callado y, en línea de Lázaro, denuncia la aparente falsedad y disimulación del fenómeno.

No obstante, se observan elementos que distancian *El necio bien afortunado* del picaresco. Uno de ellos es la paulatina transformación espiritual de la mentalidad de Ceñudo que le aleja del tradicional pícaro. En este aspecto hace hincapié también Cauz a la hora de observar que el personaje con el roce de la sociedad cortesana, sufre una transformación, pierde su gracia de pícaro y se convierte en un cínico misántropo que abusa de las mujeres y del poder. Es ahí donde la obra adquiere características propias de la novela cortesana.

En la crítica literaria circulan muchas opiniones respecto a la pertenencia genérica de *El necio bien afortunado* que interesa detallar. Así, por ejemplo, para Francisco Rico /1970: 132/ dicha obra es «una narración con pícaro, pero en línea recta contra el diseño constitutivo de la novela picaresca». García Santo-Tomás /2008: 191/ considera que estamos ante «una narración en prosa con elementos picarescos». Según Place *El necio bien afortunado* es puramente una novela picaresca» /citado por Andrade en su edición a *El subtil cordobés* de Salas Barbadillo, 1974: 17/. Amezúa y Mayo dicha obra la califica de cortesana. Valbuena Prat constata que «tiene la obra entronques con la picaresca, pero pertenece más bien en su conjunto a la novela cortesana y satírica, en la que hay una buena parte de elementos exclusivamente literarios». Y añade que «es típico de ciertas formas del siglo XVII el carácter híbrido del diálogo y narración, o el de realismo picaresco o idealización cortesana o fantasía de apólogo. Salas Barbadillo es uno de los autores que más cabida dan en sus obras a esta doble posición» /Valbuena Prat, 1966: 22/.

Nosotros, en línea de Salcedo y Ruiz /1916: 430/, consideramos que, un simple análisis estadístico comprobaría que «las novelas picarescas y las imitaciones de *La Celestina* constituían en el Siglo de Oro el grueso del surtido de novelas españolas. Muchos autores combinaban los géneros ofreciendo a sus lectores el doble aliciente de la picardía y de la lujuria» y Alonso Jerónimo de Salas Barbadillo no puede quedar a la zaga.

BIBLIOGRAFÍA

1. Arellano Ayuso I., Mata C. (eds.) *Comedias burlescas del Siglo de Oro*, II. Madrid / Frankfurt am Main: Iberoamericana, Vervuert, 2001.
2. Arnaud É. *La vie et l'oeuvre de Alonso Jerónimo de Salas Barbadillo: Contribution à l'étude du roman en Espagne au début du XVIIe siècle*. Tesis doctoral. Toulouse: Université de Toulouse, 1979, 3 vols.
3. Berenguer Á. *Madrid en el teatro. Siglos de Oro*. Madrid: Imprenta de la Comunidad de Madrid, 1994.
4. Cauz F. *La narrativa de Salas Barbadillo*. Ediciones Colmegna, 1977.

5. García Santo-Tomás E. Modernidad bajo sospecha: Salas Barbadillo y la cultura material del siglo XVII. Madrid: CSIC / Instituto de Lengua, Literatura y Antropología, 2008.
6. García Valdés C. C. Entremesistas y entremeses barrocos. Madrid: Cátedra, 2005.
7. Lasperas J. M. La nouvelle en Espagne au Siècle d'Or. Montpellier / Perpignan: Editions du Castillet, 1987.
8. López Martínez J. E. Edición y estudio de la novela «El caballero puntual» de Alonso Jerónimo de Salas Barbadillo, 2 vols. Tesis doctoral, dir. F. Rico, Bellaterra: Universidad Autónoma de Barcelona, 2011.
9. Manukyan A. Estudio y edición crítica de dos obras de Alonso Jerónimo de Salas Barbadillo «El necio bien afortunado» y «El sagaz Estacio, marido examinado». Tesis doctoral, dir. C. Mata, Pamplona: Universidad de Navarra, 2012.
10. Pastor Sanz C., Aguilar Piñal (eds.) Lazarillo de Tormes. La hija de Celestina. Madrid: Magisterio Español, 1967.
11. Place E. B. Manual elemental de la novelística española: bosquejo histórico de la novela corta y el cuento durante el Siglo de Oro. Madrid: Victoriano Suárez, 1926.
12. Place E. Salas Barbadillo, satirist // *Romanic Review*, 1926, N°17.
13. Peyton M. A. Alonso Jerónimo de Salas Barbadillo. New York: Twayne Publishers, 1973.
14. Rey Hazas A. Picaresca femenina. Barcelona: Plaza y Janés, 1986.
15. Rico F. Novela picaresca y el punto de vista. Barcelona: Seix Barral, 1970.
16. Rojas F. La Celestina. Ed. E. Borrego, Madrid; Cooperación Editorial, 2002.
17. Salas Barbadillo A. J. El subtil cordobés Pedro de Urdemalas y El gallardo Escarramán. Ed. M. Ch. Andrade, University of North Carolina, Madrid: Castalia, Dept. of Romances Languages, 1974.
18. Salas Barbadillo A. J. La hija de Celestina. Ed. E. García Santo-Tomás. Madrid: Cátedra, 2008.
19. Salas Barbadillo A. J. La sabia Flora, malsabidilla. Ed. D. Flaskerud. Newark: Juan de la Cuesta, 2007.
20. Salcedo y Ruiz Á. La literatura española: El Siglo de Oro, t. 2. Calleja, 1916.
21. Sánchez Escribano F. J. (ed.) Picaresca española en traducción inglesa (ss. XVI y XVII): Antología y estudios. Zaragoza: Universidad de Zaragoza, 1998.
22. Valbuena Prat Á. Novela picaresca española. Madrid: Aguilar, 1966.
23. Vitse M. Salas Barbadillo y Góngora: burla e ideario de la Castilla de Felipe III // *Criticón*, N°11, 1980.

Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ – Սալաս Բարբադիլյոյի «Հաջողակ հիմարք» վեպի ժամանակակիրությունների շուրջ. – Սույն հոդվածում դիտարկվում են 17-րդ դարի իսպանացի հանճարեղ գրող Ալոնս Խերոնիմոն դե Սալաս Բարբադիլյոյի «Հաջողակ հիմարք» ստեղծագործության ժամանակակիրությունները: Դիտարկման արդյունքում ակնհայտ է դառնում, որ Սալաս Բարբադիլյոյի «Փիթրիդ» գործերում, ընդհանրապես, և «Հաջողակ հիմարք» վեպում, մասնավորապես, վարպետորեն միահյուսված են պիկարոյական և կուրտիզանական վեպերին բնորոշ գծերը:

Բանալի քառեր. Ալոնս Խերոնիմոն դե Սալաս Բարբադիլյո, իսպանական ուկեղարյան գրականություն, «Հաջողակ հիմարք» ստեղծագործությունը, ժամանակին պատկանելիություն, ժանրերի միաձուլում, պիկարոյական վեպ, կուրտիզանական վեպ

Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ – *O жанровых особенностях романа Саласа Барбадильо «Удачливый глупец».* – В данной статье рассматриваются жанровые особенности романа «Удачливый глупец» знаменитого испанского писателя 17-го века Алонсо Херонимо де Саласа Барбадильо. В результате анализа становится ясно, что в «гибридных» работах Саласа Барбадильо вообще и в романе «Удачливый глупец», в частности, мастерски объединяются жанровые особенности, характерные для плутовского и куртизанского романов.

Ключевые слова: Алонсо Херонимо де Салас Барбадильо, Золотой век Испании, произведение «Удачливый глупец», жанровая принадлежность, объединение жанров, куртизанский роман, плутовской роман

Նարինե ԶԱԶԱՐՅԱՆ
Երևանի պետական համալսարան

**ՔԵՐՈԼ ՄԻԼՖՈՐԴԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ
ԲԱԽՈՒՏԸ ՄԻՆՔԼԵՐ ԼՈՒԻՍԻ «ԳԼԽԱՎՈՐ ՓՈՂՈՑԸ»
ՎԵՊՈՒՄ**

Հոդվածում ուսումնասիրվում է քասմերորդ դարի ամերիկացի գրող, ռեալիզմի ներկայացուցիչ Սինքլեր Լուիսի «Գլխավոր փողոց» վեպը: Քննվում է այն մեծ բախումը, որ ծագել էր վեսպի հերոսուհու՝ Քերոլ Սիլֆորդի և նրան շրջապատող հասարակության միջև: Համոզիչ կերպով և օրինակներով ներկայացվում են թե՛ հերոսուհու պայքարի էությունը և թե՛ նրա աճխուսափելի պարտությունը: Սյայնակ պայքարերով համբնդիանուր տղիտության դեմ՝ հերոսուհին ի վերջո հասկանում է, որ ամենարող է ի կատար ածել իր երազանքը՝ բարեկինիւել որևէ զավառական քաղաք:

Բանալի բառեր. Սինքլեր Լուիս, «Գլխավոր փողոց» վեպը, քննադատական ռեալիզմ, ամերիկյան հասարակություն, ըմբուստ կերպար, զավառական քաղաք, համատարած տղիտություն

Բոլոր ժամանակներում և բոլոր դարերում մարդու ուսումնասիրության առանցքային խնդիրներից մեկը եղել ու մնում է հենց ինքը՝ մարդը: Եվ թեպետ մարդը մի չնշին էակ է տիեզերքում՝ աննշան իր մեծությամբ և կարճատև իր գոյությամբ, բայցն մարդու էության ու անէության, գոյի և ոչ գոյի, կյանքի, մահվան, ժամանակավոր և հավիտենական ներկայության խնդիրների շուրջ ծավալվող վեճերն այնքան բուռն են դարձել վերջերս, որ երբեմն հարց է առաջանում, թե որն է ավելի մեծ՝ տիեզե՞րքը, որի հիբրավի տի՝ մեծ եզերքն անգամ նորագույն սարքավորումներով անհնար է որոշել, թե նարդը, ում հոգին չի ճանաչում տարածություն ու ժամանակ: Եվ, ո՞վ գիտե, գուցե իրականում մարդու աներևույթ և հետմահու գոյությունը թերևս ավելի հսկայածավալ ու երկարակյաց գտնվի, քան հենց ինքը՝ մեծն տիեզերքը:

Ինչեւ, վերոնշյալ խնդիրների վիճարկումն ու պարզաբանումը թողնելով աստղագետների և աստվածաբանների դասին՝ մենք կփորձենք խնդրին տալ գրականագիտական մոտեցում և լուծում: Բանն այն է, որ իբրև տիեզերքի ամենաբանական հյուկե՝ մարդն աշխարհում կառուցում է իր ուրույն աշխարհը, որտեղ ապրում և արարում է, կամքջում սեփական կյանքն իր նմանների կյանքին: Լինելով հասարակական էակ՝ մարդը ոչ միայն ապրում է իր նմանների միջավայրում, այլև մեծապես կախված է այդ միջավայրի կարծիքից: Եվ որքան էլ ցանկանա խուսափել հասարակական կարծիքից ու ազդեցությունից, մարդ արարածը չի կարող հասնել ամբողջական ազատության: Հասարակության այդ ազդեցիկ ու ճնշող կարծիքն էլ շատ հաճախ պայմանավորում է մարդու ձևավորումն իբրև անհատ և վարքագիծն այս կամ այն իրավիճակում:

Ուեալիստ Սինքլեր Լուիսը կերտել է կերպարներ, որոնք ավելի քան խոսուն են և համոզիչ: Անդրադառնալով իր հերոսների մարդկային արժանիքներին կամ թերություններին՝ Լուիսը նաև հիմնավորում է այդ ամենը: Լուիսյան հերոսներն այն հասարակության ու միջավայրի ծնունդն են, որտեղ ապրում և արարում են: Սա է պատճառը, որ որքան էլ քննադատի իր հերոսներին, Լուիսը մինչև վերջ չի մեղադրում նրանց, զիշման տեղ է բողնում: Գլխավոր մեղավորը, ըստ հեղինակի, այն արատավորված միջավայրն է, որ պայմանավորում է նրա հերոսների գործողությունները:

Փաստորեն, տարօրինակ չպետք է քվա այն հանգամանքը, որ իր ստեղծագործություննում Լուիսը մարդկային կերպարներին զուգահեռ ստեղծում է նաև ամերիկյան հասարակության ու միջավայրի «կերպարը»: Գրողն իր նպատակին հասնում է և՛ ուղիղ, և՛ անուղղակի եղանակներով: Մի դեպքում նա նկարագրում է այդ միջավայրը, ինչպես իր հերոսներին կնկարագրեր, մեկ այլ դեպքում բույլ է տալիս, որ հերոսներն իրենց խոսքով ու գործողություններով հասնեն միջավայրի պատկերմանը, իրենց ծնունդ տված հասարակության քողազերձմանը:

Մաքառող անհատի և հետաղեմ հասարակության անխուսափելի քախումը լավագույնս պատկերված է Լուիսի «Գլխավոր փողոցը» վեպում, որ նրա ստեղծագործական ժառանգության լավագույն էջերից է: «Մեր հարյուրամյակի մեծագույն սատիրիկը ամերիկյան գրականության մեջ» /Гиленсон, 1985: 3/, ինչպես Գիլենսոնն է Լուիսին անվանում, կարողացել է մեծագույն վարպետությամբ գծել այն անշրջետը, որ բաժանում է Քերոլ Սիլֆորդին՝ մի կողմից, և Գոֆեր Պրերիի անկիրը հասարակությանը՝ մյուս կողմից:

«Ընդհանուր առմամբ, լուիսյան հերոսներին կարելի է բաժանել երկու խմբի՝ քաղքենիների և ըմբոստների», – նշում է գրականագետ Հոնեն /Lewis, Babbit, 1962: 9/: Հիրավի, վեպի հենց ամենասկզբից ընթերցողի առջև հառնում է Քերոլի «Ընթացու» կերպարը, որ պատրաստ է սեփական կյանքն ու ապագան զոհել՝ ի շահ և ի բարօրություն իր հայրենակիցների: Քերոլը կենսախիճնդ է և կյանքով լի, քանզի «նրա մարմնի յուրաքանչյուր քիչը կենդանի է՝ նիհար դաստակները, սերկելի երանգ ունեցող մաշկը, անկեղծ աշքերը, սև մազերը: Ինչ էլ որ դառնար, նա երբեք չէր կարող անշարժ լինել» /Lewis, 2002: 2/:

Ավարտելով քոլեջը՝ Քերոլն անխախտ որոշում է կայացնում. «Ահա՝ թե ինչ եմ անելու քոլեջն ավարտելուց հետո: Ես ձեռքիս տակ եմ առնելու այս գյուղաքաղաքներից մեկն ու այն գեղեցիկ դարձնելու» /Lewis, 2002: 5/: Ի՞նչ իմանար հերոսուիին, որ սեփական ազնիվ նպատակադրումներն անազնիվ արձագանք են զունելու գավառական քաղաքի բնակիչների սրտերում: Վարպետի իր գրչով զուգահեռներ անցկացնելով անշունչ քաղաքի ու նրա բնակիչների միջև՝ Լուիսը փաստում է, որ Գոֆեր Պրերին մի վայր է, որի բնակիչները նույնքան դատարկ են ու ողորկ, որքան իրենց տները: Եվ հիրավի, «դա ապրելու վայր չէր, ո՛չ հավանականորեն, ո՛չ էլ հասկանալիորեն: Մարդիկ... Նրանք նույնքան անշուր էին, որքան իրենց տները, նույնքան տափակ, որքան իրենց դաշտերը» /Lewis, 2002: 20/:

Բայց ի՞նչն է ստիպում Քերոլին նման անձնազոհ քայլի գնալ: Նա կարող էր ընտանիք կազմել, ապրել սովորական կյանքով և երջանիկ լինել, ինչպես շատուշատ կանայք: Բայց ոչ: Հերոսուիխն նրանցից չեն, ովքեր վախենում են կյանքի մատուցած դժվարություններից և դրանց դիմակայելու անկարողության մտքից: Նա մեկը չէ այն շատերից, ովքեր փորձում են ապրել ընդհանուրի սահմանած օրենքներով ու կարգուկանոնով՝ միշտ քայլել անհանգիստ ու անկանգ ամբոխի ամենախիստ հատվածով, որպեսզի եթե ճակատագիրը որոշի չար կատակ խաղալ ու արձակել իր սև նետը, հանկարծ իրեն չփառչի: Քերոլը ոչ միայն թաքնվող չէ, այլև աղաղակող է ու ըմբոստացող: Սերժելով իրեն սիրահարված համակուրսեցու առաջարկը՝ նա ասում է. «Անկեղծ ասած, ես երեխաներ սիրում եմ: Բայց կամ շատուշատ կանայք, որ կարող են տնային տնտեսուիի լինել, իսկ ես... դե, եթե դու ՈՒՆԵՍԿՕ համալսարանական կրթություն, դու պետք է օգտագործես այն ի շահ աշհարիի» /Lewis, 2002: 7/: Սա հերոսուիու սոսկ անձնական և անհատական բողոքը չէ: Ի սկզբանե ունակ լինելով մտածելու ոչ միայն իր մասին՝ Քերոլ Սիլֆորդը բողոքում է նաև նրանց անունից, ովքեր, թերագնահատելով սեփական արժանիքները, ապրում են մի կյանքով, որ իրենց հարիր չէ: Արդեն իսկ ժողովրդավարության անխախս ուղին բռնած քաններորդ դարասկզբի ամերիկյան հասարակության մեջ կինը կարող էր ոչ միայն հոգատար մայր ու բանինաց տնտեսուիի լինել, այլև, եթե դա թույլ էր տալիս նրա կրթական բազան, լինել բարձրակարգ մասնագետ՝ ի բարօրություն իր ազգի: Հերոսուիխն գիտակցարար թե ենթագիտակցարար հասկանում էր, որ ուժեղ է այն երկիրը, որի ամեն մի բնակիչը զբաղվում է իր գործով, ծավալում իր ունակություններին առավելագույնս համապատասխան գործունեություն՝ անկախ սեռային ու տարիքային պատկանելությունից:

Կյանքը կապելով սառն ու անկյանք բժիշկ Ուիլ Քենիքորի հետ՝ Քերոլը փաստորեն զոհում է իր անձը մշտապես մտքում դեգերող հայրենանվեր մտայնությունն իրագործելու համար: Սերը չէ, որ հերոսուիուն նդում է ամուսնության, այլ գավառական Գոփեր Պրերի ընկնելու և այն բարի կախարդուիու իր ձեռքերով բարեկարգելու հեռանկարը: Սակայն մեծ է Քերոլի հիասքափությունը տեղ հասնելու հենց առաջին պահից: Ամեն բան վկայում է այն մասին, որ նրան չի հաջողվելու այնքան արագ ավարտելու իր առաքելությունը, որքան նախապես պլանավորել էր: Շուրջը սառնություն է ու անտարբերություն: Հիշնք թեկուց այն դրվագը, երբ «ճան զննեց իրենց ննջասենյակը, և դրա տաղտկությունը սողոսկեց իր հոգին...» /Lewis, 2002: 24/:

Փաստորեն, հենց սկզբից հեղինակը համենասուրթյան մեջ է դնում Գոփեր Պրերիի բնակիչների ու Քերոլի անհամատելելի և քենուացված կերպարները: Այն աշխարհը, որտեղ ապրում է հերոսուիխն, և այն մյուսը, որ տիրում է նրա հոգում, կարծես հակապատկերներ լինեն: Քանիզի «հաստատականությունը, որով տղամարդիկ թերանն էին առել իրենց սիզարները, դարձնում էր նրանց դեմքերի ստորին մասը արտահայտչականությունից զուրկ, ծանր անկոչ: Նրանք նման էին քաղաքական գործիչների՝ ցինիկ կերպով քվեները բաժանելիս: Ինչպես կարող էին նրանք հասկանալ իրեն» /Lewis, 2002: 255/: Վերջին հոետորական հարցն ավելի է խտացնում խնդրի՝ առանց այն ել մռայլ

գույները: Հիասքափությունը կատարյալ էր, բայց պետք չէր նահանջել ու կոտրվել: Քայլ առ քայլ, դրվագ առ դրվագ քողազերծվում է ամերիկյան հասարակության՝ առաջին հայացքից անկեղծ դեմքը:

Բայց որևէ անձի կամ երևույթի մասին ամբողջական կարծիք կազմելու համար հարկ է այն ուսումնասիրել բազմակողմանիորեն: Հենց այդպես էլ վարդում է հեղինակը, երբ կառուցում է ամերիկյան հասարակության «կերպարը»: Լուիսը երբեք մի ամբողջական էց կամ գլուխ չի նվիրում ճահճի նման դեպի իրեն ձգող հասարակության ամբողջական դիմակազերծնանը: Պարզապես մերթընդերք, որտեղից որտեղ մի դիպուկ արտահայտությամբ հեղինակը քողազերծում է քանի երրորդ դարի սկզբի ամերիկացու նտածելակերպը մի նոր դիտանկյունից: Սի դեպքում առաջ է քաշվում հասարակության շողորորք, քծնող պատկերը՝ փաստելով, որ «քոլորը խոնարհվում էին նրան (Քերոլին – Ն. Զ.)՝ անձանոթերք և ամենքը, և ստիպում նրան զգալու, որ իրենք ուզում էին նրան, որ նա պատկանում էր այդ միջավայրին» /Lewis, 2002: 49/: Մեկ այլ դրվագում երևան է գալիս ամերիկյան հասարակության անձաշակ ու անկուչտ բնույթը, հասարակություն, որ սեղանից անգամ օգտվել չի կարողանում: Խրախճանքների ու քեֆերի ժամանակ ուսում են ոնց պատահի, իսկ վերջացնելուց հետո նրանց առաքելությունն ավարտված է համարվում, կարող են տուն գնալ: Մեջքերենք դրվագն ամբողջությամբ. «Ուտելիքները՝ – նրանք սկսեցին փափսալ: Նրանք անելու բան ունեին: Նրանք կարող էին փախչել իրենք իրենցից: Ընկան ուտելիքի վրա՝ ճիփ սենդվիչներ, թխուն տորք, դեղատան պաղպաղակ: Նույնիսկ, երբ ուտելիքը տարան, նրանք շարունակում էին կենսախինդ մնալ: Նրանք կարող էին գնալ տուն այժմ արդեն ցանկացած պահի և ընել» /Lewis, 2002: 41/:

Գալիս է կասկածի ու երկմտության պահը: Ծի՞շտ է արդյոք վարվել հերոսուիին՝ նման կերպ դասավորելով իր կյանքը: Արժե՞ր իր անձը նվիրաբերել հանուն այն մարդկանց կենսակերպի բարեփոխման, ովքեր իրենք չեն կամենում փոխվել, ընդդիմանում են Քերոլի մեջ տեսնելու այն մարդասիրական և անձնութաց զիդը, ինչպես ժամանակին հրեաներն էին մերժում Քրիստոսին: Եթե գոնե ընտանիքում երջանիկ լիներ, հերոսուիին գուցե միսիքարվեր, սփոփանք գտներ ընտանեկան զերմության մեջ: Բայց Ուիլլը այն նույն հասարակության մանրակերտն է, որի ծնունդն է ինքը: Օդի մեջ կախվում է լինել- չլինելու հարցը. «Արդյոք մեծագույն սիա՞լ էր իմ ամուսնանալը նրա հետ» /Lewis, 2002: 83/: Կասկածի տեղիք է տալիս նաև հասարակության վերաբերմունքը Քերոլի նկատմամբ, ինչը հերոսուիին շատ լավ է գիտակցում, որովհետև «հասկանում է, որ իմքը չգիտեր՝ արդյո՞ք մարդիկ սիրում էին իրեն: Տղամարդիկ ժպտում էին, բայց արդյոք սիրու՞մ էին: Նա սիրելի էր կանանց միջավայրում, բայց արդյոք մե՞ն էր նրանցից» /Lewis, 2002: 67/: Ո՛չ, պատասխանը միանշանակ բացասական էր:

Առաջ գնալով նախապես պլանավորած իր սիրեմայով՝ Լուիսը մի կողմ է քողնում երկմտանքն ու հեռվից հեռու գուգադրումը և մի քայլ առաջ անցնում՝ ուղղակիորեն համեմատության մեջ դնելով ուսայլ հերոսուին և զավառական քաղաքի հոգևոր սնանկությունը: Հասարակությունն այս դեպքում խտացվում և

մարմնավորվում է Դեյվ Դայերի կերպարում: Դեյվի և նրա կնոջ գրույցից պարզ է դառնում այն յուրօրինակ ճորտատիրական մորեցումը, որ տղամարդը դրսւորում էր դեպի կինը: Քաղաքակրության և քաղաքավարության հետք անգամ չի կարող լինել այնտեղ, որտեղ տղամարդը հասարակության առաջ նվաստացնում է իր կնջը, ծաղրում նրան և նվաստում մյուսների պատասխան ծաղրին: Խոսքը խնդրու առարկա վեպի այն հարվածի մասին է, որտեղ «Դեյվ Դայերը վրա է տալիս. «Ինչքա՞ն ես ուզում: Մի դոլարը հերի՞ք է»: «Ո՛չ, հերիք չէ: Ես պետք է գիշերազգեստներ գնեմ երեխաների համար»: Ջերոլլ հասկանում է, որ տիկին Դայերը սովոր էր այս ստորացմանը: Նա գիտակցում է, որ տղամարդիկ, մասնավորապես Դեյվը, դա հրաշալի ժեստ էին համարում: Նա սպասեց. ինքը գիտեր, թե ինչ էր ապասվում, և դա պատահեց: Դեյվը ճշաց. «Որտե՞ղ է այն տաս դոլարը, որ քեզ տվեցի անցած տարի, - և նայում է մյուսներին՝ սպասելով նրանց ծաղրին: Նրանք ծաղրում են» /Lewis, 2002: 56/:

Հատվածն առավել քան խոսուն է և ավելորդ մեկնարաննան կարիք չունի: Սիայն ներկայացնենք Ջերոլի պատասխան մոտեցումն այս խնդրին: «Սառը և հավասարակշռված՝ Ջերոլլ քայլում է դեպի Ջենիքորն ու հրամայում. «Ես այժմ համեստորեն խնդրում եմ տալ ինձ այն փողը, որով պետք է ուտելիք գնեմ քեզ համար: Եվ այսուհետ հիշիք: Հաջորդ անգամ չեմ խնդրելու: Պարզապես սովամահ կլինեմ: Հասկացա՞ր ինձ: Ես չեմ կարող շարունակել ճորտ լինել»: Նա 50 դոլար մեկնում է նրան և դրանից հետո հիշում էր նրան կանոնավոր փող տալ... երբեմն» /Lewis, 2002: 57/:

Հատկանշական է, որ Սինքլեր Լուիսի արվեստի տասնյակ գրաբննադատներից մեկը՝ Սենկենը, շեշտը դնելով «Գլխավոր փողոցը» վեպում արծարծվող այսուժետային թեմաներից մեկի՝ Ջենիքոր ամուսինների փոխհարաբերությունների վրա, հենց դա է համարում վեպում առաջնայինը: Սենկենի համոզմամբ՝ այս վեպը «ամերիկյան ընտանիքի տիպիկ պատմություն է, ընտանիքի, որ գտնվում է իր կազմավորման առաջին փուլում, նախքան ամուսինն ու կինը իրենց տեղը կզիշեն հորը և մորը» /Lewis, 1962: 18/: Ավելի ուշ միևնույն Սենկենը նաև հավելում է, որ «պարուն Լուիսը պատկերում է համազոր պայքարը մեծագոյն խորաքափանցությամբ: Նա չափազանց խելացի է որևէ մեկի կողմն անցնելու, հարցը պարզապես մեկի դեմ ուղղված ճառի վերածելու համար: Ամենից առաջ նա չափազանց խելացի է, որպեսզի անցնի Ջերոլի կողմը, ինչպես տաս վիպասաններից ինը կվարվեին» /Lewis, 1962: 18/: Փաստորեն, Սենկենի համոզմամբ վեպի առանցքը կազմում է տիպիկ ամերիկյան ընտանիքներից մեկի պատմությունը՝ իբրև դասական օրինակ նմանատիպ բազմաթիվ ընտանիքների:

Կարելի է համաձայնել վերոբերյալ տեսակետի հետ, քայլ մասամբ: Սեր համոզմամբ՝ այստեղ գոյություն ունի մասի և ամբողջի հարաբերակցության խնդիր, որտեղ մասը ընտանիքն է, ամբողջը՝ հասարակությունը: Այո՛, ընտանիքի, տղամարդ – կին փոխհարաբերությունների խնդիրը վեպի առանցքային հարցերից է, քայլ խնդրին ավելի խորն է արմատացած: Ջենիքորների ընտանիքը թերի է, անլիարժեք, քանի որ անլիարժեք է այն հասարակությունը, որ ծնունդ է տվել նրան: Եթե հասարակությունը ոչ թե հրճվեր Դայերի

խոսքերից, այլ պահարակեր նրա ստոր քայլը, հաջորդ անգամ նա կխուսափեր սեփական կնատյացությունն ի ցույց դնելուց:

Ինչեւ: Վերադառնալով Քերոլ – հասարակություն կոնֆլիկտին՝ նշենք, որ նմանատիպ դեպքերում արդյունքը երեք ուղղությամբ կարող է զարգանալ: Կամ հերոսը պարտվում է ու վայր դնում զենքերը, կամ հաղթանակ տոնում՝ հաջողությամբ ի կատար ածելով իր (ազնիվ կամ անազնիվ) նկրտումները, կամ ել միջավայրն է հաղթանակ տոնում՝ ի դեմս հերոսի հերթական զոհին իր ամենավոլ ճահճուտը ներքաշելով: Քերոլը պարտություն է կրում: Արատավորված, բայց և տասնամյակների ու դարերի ընթացքում խոր արմատներ գցած հասարակական կարգն այժման էլ դյուրին չէ փոխելը: Եվ «իր անմեղության մեջ նա չփառեր, որ ամբողջ քաղաքը կարող էր քննարկել իր ցնցոտիները, իր մարմինը: Նրա մեջ այնպիսի զգացողություն էր, կարծես իրեն մերկ քարշ են տալիս Գլխավոր փողոցով» /Lewis, 2002: 82/: Շրայի օղակներն ավելի են սեղմվում, օղը սկսում է չքաղաքարել Քերոլին: Եվ «նա չեր կարող հանդուժել քարնված ծաղրանքը: Նա ուզում էր փախչել: Ուզում էր քարնվել քաղաքների մեծահոգի անտարբերության մեջ: Բարեփոխե՞լ քաղաքը: Ամբողջը, որ նա ուզում էր, այն էր, որ իրեն հանդուժեն» /Lewis, 2002: 77/:

Լուխսը սիրելի հերոսուհուն նահանջի երեք ուղի է առաջարկում, երեք հնարավոր լուծումներ, որ կօգնեն նրան կտրվել այն անհանդուժող միջավայրից, որում հայտնվել է:

Առաջինը որդին է՝ Հյուջը, ով լուսավոր կետ է դառնում Քերոլի կյանքում: Ի դեպ, հասարակությունն այստեղ էլ է իր սև գործն անում՝ փորձելով ապագա մորք տրամադրել զավակի դեմ: Հասարակությունը մի մեծ շարժիչ ուժ է, մի հսկա սիրտ և ուղեղ, որ ամեն ինչ զգում է ու գիտակցում: Նա զիսի հերոսուհու թոյլ կողմերը, հասցրել է նրան ճանաչել և այժմ էլ փորձում է թունավորել այս ուժեղ անհատականության ուղեղը՝ զգուշացնելով. «Այժմ, երբ դու պատրաստվում ես մայր դառնալ, սիրելի կու, դու կզրկվես քո այս բոլոր գաղափարներից ու կիանդարտվես»: Նա զգում է, որ ուզած- չուզած ինքն ընդգրկվում է տնային տնտեսուհիների ասամբլեայի մեջ. այժմ նա սուրճ կիսմի, երեխային կօրորի և կիսուի բարություներից» /Lewis, 2002: 187/: Բայց մարդը, ով սրտացավ ու հոգատար է մի ամբողջ քաղաքի բնակչության համար, չի կարող չսիրել իր իսկ զավակին: Ավելին, ի հեճուկս իրեն շրջապատող շաղակրատների մի ամբողջ քանակի՝ «Հյուջը դառնում է նրա ապրելու իմաստը, ապագայի բարեկարգության երաշխիքը, երկրպագության տաճարը» /Lewis, 2002: 188/: Երեխան լցնում է Քերոլի հոգում գնալով խորացող դատարկությունը, մայրական բերկրանքը լցնում նրա նուրբ սիրտը, բայց փախուստային տրամադրվածությունը մոռացնել չի տալիս:

Եվ Քերոլը փախչում է, այս անգամ արդեն ֆիզիկապես: Մի քանի ամիս նա ապրում է մեծ քաղաքում՝ Վաշինգտոնում՝ հեռու Գոֆեր Պրերիից և Ուիլլից: Փախուստի այս երկրորդ փորձին շատ շանցած հաջորդում է երրորդը, երբ հերոսուհին փորձում է իրականությունը խեղդել սիրեկանի գրկում: «Նրա մեջ նա (Քերոլ – Ն.Զ.) հայտնաբերեց և երիտասարդության իր կարիքը, և այն փաստը, որ երիտասարդությունը կողցունի իրեն: Երիկը չէ, որի մոտ նա պետք

փախչեր, այլ համընդիանուր և առույգ երիտասարդությունը դասարաններում, ստուդիաներում, օֆիսներում, Ընդհանուր հարցերի դեմ ուղղված բոլոր հանդիպումներում» /Lewis, 2002: 278/: Բայց իզուր: Ամեն ինչ ապարդյուն է լինում: Ո՞չ երեխան, ո՞չ փախուստը, ո՞չ էլ սիրեկանը Քերոլ Սիլֆորդին չեն կտրում դառը և անխուսափելի իրականությունից: Հերոսուհին մի նոր՝ հերթական հիասքափությունն է ապրում, որ սառը ցնցուղ է լինում երիտասարդական նրա կրակոտ ավյունի համար:

Ավելորդ չի լինի նշել, որ Սինքրել Լուիսի գրական ժառանգության բազմաթիվ քննադասները միանգամայն իրարամերժ ու բոլոր դեպքերում հետաքրքիր տեղեկություն են մեզ հաղորդում: Հայտնի լուսագետ Գիլենսոնը, օրինակ, ավելի քան վաստակ է, որ Լուիսը, «վարպետանալով ամերիկացու առօրյան և նրա հավաքական կերպարը կառուցելու մեջ, թերանում էր իր հերոսների ներաշխարհն ու հոգևոր հարաբերությունները պատկերելու գործում՝ դա բողնելով իր գործընկերներին, ինչպես, օրինակ, Ֆոլքներին ու Հեմինգուեյին» /Гиленсон, 1972: 8/: Ի դեպ, Գիլենսոնը միակը չէ, ով այդպես է կարծում: Լուիսի՝ մեծ հոգեբան լինելը, հերոսների հոգևոր աշխարհի և ընդհանուր հոգեկերտվածքի բացահայտման ունակությունը շատերի մոտ է կասկածի տեղիք տալիս: Դրա փոխարեն Շերվուդ Անդերսոնը հարցին մոտենում է որոշակի վերապահումներով՝ փաստելով, որ «այս մարդը՝ մեր կյանքի արտաքին մակերևույթին հայտնված նորությունների ընկալման լրագրողի իր սուր հոտառությամբ, շատ քան է հայտնաբերել մեր մասին և նրա, թե ինչ ձևով ենք ապրում մեր մեծ ու փոքր քաղաքներում, քայլ ես համոզված եմ, որ զյուղում ապրող յուրաքանչյուր տղամարդու, կնոջ և երեխայի կյանքում կան գործող ուժեր, որ բվում է՝ վրիպել են պարոն Լուիսի աշքից» /Lewis, 1962: 27/:

Ինչեւ չկասկածելով լրջմիտ գրականագետների կարծիքների արժանահավատությանը և դրանով հանդերձ շվախենալով սույն հարցի առնչությամբ մեր ուրույն տեսակետի հնարավոր սխալականության մտքից, փաստենք, որ անկախ ամեն ինչից, «Գլխավոր փողոցն» անկասկած Լուիսի ամենահաջողված վեպերից է, իսկ Քերոլ Սիլֆորդը հեղինակի լավագույն կերպարներից է: Լուիսը երկնում, միանգամայն համոզիչ կերպով զարգացնում և իր տրամարանական հանգուցալուծմանն է հասցնում Քերոլի ուժեղ կերպարը: Հեղինակը սիրում է հերոսուհուն, քայլու իբրև ռեալիստ գրող՝ գիտակցում է, որ նրա պարտությունն անխուսափելի է: Քերոլը ոչ թե պարզապես պարտվում է, այլև կատարելապես ջախջախվում: Եվ դա տեղի է ունենում այն պահին, եթք նա գիտակցում է, որ ինքը փախչելու տեղ չունի: Տգիտությունը, կեղծիքն ու անտարբերությունը սորոսկել է նաև մեծ քաղաք կամ այնտեղ էլ է եղել ի սկզբանե. արատն ամենուր է. «Նա հայտնաբերում է, որ կառավարական բյուրոներում կանանց մեծամասնությունը ապրում էր անառողջ կյանքով՝ ճաշելով մի քանի բոպենվ իրենց խցկված բնակարաններում: Բայց նա նաև հայտնաբերում է, որ գործարար կանայք կարող են ստեղծել ընկերական և թշնամական հարաբերություններ նույնքան անկեղծորեն, որքան տղամարդիկ, և կարող են հաճույք ստանալ երանությունից, որին ոչ մի տնային տնտեսութիւն չի հասնի. ազատ կիրակի» /Lewis, 2002: 327/: Եվ հերոսուհին կատարում է

նահանջի վերջին քայլը՝ վերադառնալով այնտեղ, որտեղից փախել էր: Պարտությունը կատարյալ էր, բայց սպասելի և տրամաբանված: Իմաստ չկար մնալու այնտեղ, այն նոր միջավայրում, որ նույնքան արատավորված էր, որքան Գոֆեր Պրերին: Եվ Քերոլը վերադառնում է ընտանիք՝ դառնալով մեկն այն բազմահազար տնային տնտեսություններից, որոնց կյանքն ամենասովորական առօրյա է: Գոֆեր Պրերին իր Գլխավոր փողոցով հաղթանակ է տոնում:

Ի դեպ, խոսելով Լուիսի ոճի յուրահատկությունների մասին, ոռոս գրականագետ Մուլյարչիկը գրողի ոճի յուրահատուկ գիծը համարում է «հակասական յուրօրինակությունը»: Ըստ նրա՝ Լուիսը սիրում է անսպասելի հանգուցալուծումներ տալ իր վեպերին: Մուլյարչիկը անբացատրելիորեն արագացված է համարում «Գլխավոր փողոց» վեպի վերջնամասը, որտեղ հերոսությն մի քանի ամիս անցկացնում է Վաշինգտոնում՝ բացեիրաց հակադրվելով «Գլխավոր փողոցին» /Մուլյրիկ, 1968: 21/: Սենք մեզ թույլ ենք տայիս չհամաձայնել այս տեսակետի հետ:

Իրքն ամփոփում՝ ևս մեկ անգամ փաստենք, որ ամերիկյան ռեալիզմի ականավոր ներկայացուցիչ Սինքլեր Լուիսը իր արվեստով կարողացել է ստեղծել մեկը մյուսից հետաքրքրիր և խոսուն կերպարներ, որոնք դառնում են ընդհանրական և տիպիկ ներկայացուցիչը մարդու իրենց տեսակի: Այդ կերպարները միասին դառնում են հասարակագիտական ու գրական իսկական շտեմարան քաններու դարի սկզբի ամերիկյան կենսակերպի, ամերիկացու տեսակի բացահայտման գործում: Լինելով տղամարդ գրող՝ Լուիսին այդուհանդերձ հաջողվել է ստեղծել Քերոլ Սիլֆորդի ուժեղ և համոզիչ կերպարը, որ անկասկած հեղինակի ամնահաջողված հերոսներից է: Համարձակ ու ինքնամոռաց դեմ դուրս գալով քաղքենի աշխարհի տգիտության դեմ՝ հերոսությն ի վերջո պարտություն է կրում՝ հասկանալով, որ միայնակ ի զորու չէ պայքարել մի արատի դեմ, որ արմատացած է ոչ միայն Գոֆեր Պրերիում, այլև նրա Գլխավոր փողոցով տարածվում է ամբողջ երկրով մեկ...

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Lewis S. A collection of critical essays. N. J.: Englewood Cliffs, 1962.
2. Lewis S. Babbitt. Moscow: Foreign Languages Publishing House, 1962.
3. Lewis S. Main Street. New York: New American Library, 2002.
4. Гиленсон Б. А. Америка Синклера Льюиса. Москва: Наука, 1972.
5. Гиленсон Б. А. Синклер Льюис (100 лет со дня рождения). Москва: Знание, 1985.
6. Мулярчик А. С. Американский роман в 20-е годы XX века. М.: МГУ, 1968.

Н. ЗАКАРЯН – *Столкновение Кэрол Милфорд и общества в романе «Главная улица» Синклера Льюиса.* – В статье исследуется роман выдающегося представителя критического реализма Синклера Льюиса «Главная улица». Исследуется возникший конфликт между героиней романа Кэрол Милфорд и обществом, окружающим ее. На примерах убедительно показана суть борьбы героини и неизбежность ее поражения. Одна, сражаясь против всеобщего невежества, героиня в конце понимает, что не сможет осуществить свою мечту – увидеть хотя бы один провинциальный городок преображенным: благоустроенным и раскрепощенным.

Ключевые слова: Синклер Льюис, роман «Главная улица», критический реализм, американское общество, провинциальный город, всеобщее невежество

N. ZAKARYAN – *The Clash between Carol Milford and the Society in the Novel “Main Street” by Sinclair Lewis.* – The paper studies the novel “Main Street” by Sinclair Lewis, a great American novelist of the 20th century, a prominent representative of critical realism. It studies the serious conflict between the heroine, Carol Milford and the society surrounding her. Both the essence of the struggle of the heroes and the inevitability of her defense are presented convincingly and with examples. Struggling alone against overall stupidity and ignorance Carol Milford eventually understands that she can't realize her dream – to make yet one provincial town better.

Key words: Sinclair Lewis, the novel “Main Street”, critical realism, rebel figure, American society, provincial town, overall ignorance

Տարեկան ՀԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ
ՀՀ ԳԱՍՏ Ա. Արեդյանի անվան գրականության ինստիտուտ

**ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ «ԱԲՈՒ-ԼԱԼԱ ՄԱՀԱՐԻ»
ՊՈԵՄԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԾԵՐՏԸ**

Հողմածի նպատակն է ուսումնասիրել Ավետիք Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» պոեմի առնչությունն Արևելքի հետ: Միևնույն ժամանակ ուսումնասիրվել են արարական ծագում ունեցող բառերը, արտահայտությունները, որոնք հեղինակն օգտագործել է արևելյան շոնչն արտահայտելու համար և իր հարուստ նկարագրությամբ ստեղծել արևելյան հասկացությունների և պատկերների մի յուրօրինակ շորջապար: Բացի այդ քննության են առնվել արևելքին բնորոշ տեսարանները, այդ թվում՝ ուղտերի բարականի, անապատի նկարագրությունները:

Բանալի բառեր. «Աբու-Լալա Մահարի» պոեմ, Արևելք, արևելյան հասկացություններ, արարական ծագում ունեցող բառեր և արտահայտություններ, արևելյան շոնչ, բարական, անապատ

Հայ անվանի բանաստեղծ Ավետիք Իսահակյանը նշանավոր «Աբու-Լալա Մահարի» պոեմի ստեղծման վերաբերյալ հետևյալ գրառումն է կատարել. «Գրված 1909թ. 30-ն օգոստոսի մինչև 2-ն սեպտեմբերի և 1910թ. 27-ն մարտի մինչև 4-ն ապրիլի Ղազարապատում» /Իսահակյան, 2007: 89/: Առաջին անգամ պոեմից մի հատված տպագրվել է 1909-ին «Գեղարվեստ» ամսագրում, իսկ հետագայում այն տպագրվել է ամբողջությամբ: Իսահակյանի նախորդ տարիների ստեղծագործությունները վկայում են այն մասին, որ նախապատրաստվում էր հոյակապ ստեղծագործության ծնունդը: Օրինակ՝ կարելի է նշել Իսահակյանի «Օտար ամայի ճամփերի վրա» բանաստեղծությունը, որը լի է թափառումների տրամադրություններով: Ներկայացվում են դրանցող բարականի և անծայր անապատի պատկերները, կյանքի անարդարություններից դառնացած մարդու ցավերը: Այս բանաստեղծության, ինչպես և «Աբու-Լալա Մահարի» պոեմի մեջ անարդար կյանքից հեռանալու և անապատին ապավինելու պատկերներում կարելի է ընդհանրություններ նկատել:

«Աբու-Լալա Մահարի» պոեմը բաղկացած է նախերգանքից, յոթ սուրահներից և վերջաբանից: Պոեմի վերնագիրն արար հայտնի պոետ Աբու-Լ Ալա ալ Մաարիի (Աբ(ու)- արաբերենից բարգմանաբար նշանակում է հայր, իսկ ա'լա՝ բարձրություն, վեհություն) անվան կրծատ ձևն է: Թեպետ շատերի կարծիքով պոեմում տեղի ունեցող փաստերը կապված են արար բանաստեղծի կյանքի հետ, այնուամենայնիվ, Պողոս Մակինցյանի կարծիքով՝ «...Ավետիք Իսահակյանի քահանը պատմական գործ չէ. պոեմի վերնագիրը Աբու Լալայի անվան փոխարեն կարող էր լինել և Աբու Ֆիրաս, և Աբու Սոհամմադ, և դրանից ոչինչ չէր փոխվի»...

«...Դա ավելի շուտ Շիրակի բանաստեղծի ապրումների պատմությունն է, քանի թե պատմական «Բաղդադի» բանաստեղծի կյանքի վեպը» /Մակինցյան, 1980: 106/:

Իսահակյանը, պոեմը բաժանելով գլուխների, յուրաքանչյուրն անվանում է արարական ծագում ունեցող «սուրահ» բառով, որը թարգմանաբար նշանակում է գլուխ, մաս, բաժին: Այսպես անվանելով՝ նա ևս մեկ անգամ մատնանշել է պոեմի կապվածությունն Արևելքի հետ: Հայտնի է, որ մուսուլմանների «Սուրբ Ղուրան» գիրը ևս բաժանված է 114 սուրահների՝ գլուխների: Այս առիթով ռուս հայտնի արարագետ Ի. Յու. Կրաչկովսկին նշել է, որ «սուրահ»-ն արաբների մոտ հատուկ նշանակություն ունի՝ նկատի ունենալով Սուրբ Ղուրանի սուրահները: Գրականացետ Կարեն Սիրայելյանին ուղղված նամակում Իսահակյանը նշում է. «... բայց ես ուզեցել եմ նոր «Ղուրան» գրել. (մանիա գրանդիոզա մեծամտություն)» /Իսահակյան, 2007: 35/: Այս խոսքերից կարելի է հասկանալ պոեմի էությունը, որ Իսահակյանը գրում էր ոչ միայն գեղարվեստական ստեղծագործություն, այլև փիլիսոփայական երկ: Եթե նա ասել է, որ ցանկանում է նոր «Ղուրան» գրել, ապա դա պետք է լիներ «Ազատության Ղուրան», և միայն ազատության իշխելու դեպքում ամեն ինչ կյանքում իր տեղում կլիներ:

Իսահակյանի «խոհերի քարավանի» թերի առանց ընդհատվելու ձգվում է և կազմում ամբողջական խոսք: Բացի նախարանից՝ մնացած բոլոր սուրահներն սկսվում են «և» շաղկապով: «Եվ»-ը սուրահներն իրար միավորելու, կապակցելու, մտքերի ընթացքը շարունակական դարձնելու գորեղ դեր է կատարում: Միգուցե Իսահակյանը «և» շաղկապի գործածությամբ ստեղծագործությանը ևս մեկ անգամ արևելյան շունչ է տվել. չէ որ արարական ստեղծագործություններին և, առհասարակ, արարական խոսքին բնորոշ է «և» շաղկապի հաճախակի գործածությունը:

Պոեմում խորհրդանշներ են արևը, անձայրածիր հեռուները, անապատը, ուղտը:

Պոեմն աշքի է ընկնում իր հարուստ բառապաշտով, պատկերավորման միջոցներով, ինչպես նաև մակդիրներով՝ նիրհած գիշեր, անուշ դողանջ, մեղկ փափկություն, անուշ գանձեր, պայծառ աղամանդեղեն ծիծաղ, գոհար աստղեր, շրեղ, անշեղ դաշնակ, անուշ քուն, սեղ քարավան:

Ու. Դալլարյանը, պոեմը ենթարկելով լեզվաբանական վերլուծության, նշում է. «Հմտորեն օգտագործելով հայոց լեզվի հարուստ բառազնաձը, պատկերավորման ու արտահայտչական բազմազան միջոցները՝ ինչպես նաև արարական քասիդի ձևը, որ բանաստեղծական խոսքին հաղորդում է մի առանձին վեհություն ու հանդիսավորություն, բանաստեղծն ուժեղացրել է ելեկջավորումն ու հնչերանգը: Երկի բոլոր տները բաղկացած են երկուական տողերից, բացի սկիզբ-նախարանի տողերի: Դրանցից յուրաքանչյուր տողը, կազմված է քանի վանկից և երեք հատվածներով բաժանվում է չորս անդամի: Եվ կիրառված քառանդամ քանիվանկանի չափը ներդաշնակում է ուղտերի քարավանի շարժման ընթացքին: Պոեմի երաժշտայնությանը, հուզականությանը նպաստում են ներդաշնակ ոիթմը, կանոնավոր հանգերը: Պոեմում

լնդգծված կարևորություն են ներկայացնում ոիբմավորումն ու հանգավորումը» /Դալլաքյան, 2004: 21/: Ուսումնասիրելով արարերենի տաղաչափական ընդհանուր հիմունքները՝ կարելի է նշել, որ Խսահակյանն իր պոեմը գրել է «մուրակարիբ» կամ «մուրադարրիբ» չափերով, այսինքն՝ պոեմի յուրաքանչյուր տող բաղկացած է չորս անդամից, որոնք բաժանվում են հինգ վանկերի /Արարերենի տաղաչափության առանձնահատկությունները տե՛ս՝ Սամվել Կարարեկյանի «Արաբական տաղաչափության հիմունքներ» գրքում/:

Օրինակ՝ ...Եվ քարավանը // Արու Լալայի// աղբյուրի մման// մեղմ կարկաչելով//

Պոեմի նախերգանքում, յոթ սուրահներում և վերջաբանում հաճախակի հանդիպում են Արևելքին բնորոշ տեսարաններ, ինչպես նաև արարական ծագում ունեցող բառեր, բառակապակցություններ և հասկացություններ, որոնցից են խալիֆա-արար տիրակալ, սուրահ-գլուխ, մաս, բաժին, զեննաքրդախտ, բլրուկ-սխսակ, գյուլստան-դաշտ, պարտեզ, զագել-արարական բանաստեղծության ձև, քյոշք-պալատ, իրիս-սատանա, բալասան-դեղ, սպեղանի, զեհնեմ-դժոխք, զիններ-բարի և չար ոգիների անվանումը արարական և պարսկական դիցարանության մեջ, բաշեր-գլուխ, շեյքան-սատանա, Ալ Կորան-Սուրք Ղուրան, շեմս-արև, սալամ-խաղաղություն, բարև, ողջույնի ձև, շյուր-փառք, շնորհակալություն, բերքին-բափառական, քասիդա-արևելյան բանաստեղծության ձև, սերար-պատրանքների, հրապույրների տեսիլ, զագել-արևելյան ոտանավորի տեսակ, բաղիե անապատ:

Պոեմի հետագա տպագրություններում կարելի է տեսնել «Արու-Լալա Մահարի» պոեմ-քասիդ անվանումը, իսկ որոշ տպագրություններում «քասիդ» բառը հանված է, պարզապես անվանված «Արու-Լալա Մահարի»: «Քասիդա» բառն արաբերենից բարգմանաբար նշանակում է պոեմ: Հավանաբար, այսպես վերնագրելով, Խսահակյանը կրկին ընդգծել է պոեմի արևելյան շունչը:

Պոեմի հակիրճ նախերգանքից հետո, որտեղ նկարագրվում է Բաղդադի բանաստեղծի շքեղ կյանքը, վայելքները, ապա հիասքափությունները, Բաղդադից գիշերով հեռանալու նրա քայլը և մեծ կյանքի ճանապարհը, առաջին սուրահում նկարագրվում է Արու Լալայի քարավանը, որ հանգիստ, հավասար քայլով անցնում էր ոլոր-մոլոր ճանապարհով: Իր հեռանալու պահին Բաղդադը նիրիում էր զենների շքեղ, վառ երազներով: Այստեղ Խսահակյանն օգտագործել է «զեննաք» բառը, որն արարերենից բարգմանաբար նշանակում է դրախտ: Ապա նկարագրվում է, թե ինչպես են դաշտերում սոխակներն անուշ երգում, իսկ շատրվանները քրքջում են պայծառ ծիծաղով, թե ինչպես է հովը շնչում հազար ու մի գիշերվա հեքիաթները, իսկ խալիֆաների պալատից բույր ու համբույր է խնկարկվում: Արևելյան պալատի, հարեմի տեսարանները շատրվաններով, սոխակներով և վարդերով, ասես արևելյան մանրանկար են ստեղծել.

Մեղմ փափկության մեջ Բաղդադն էր նիրիում զեննաքի շքեղ, վառ երազներով,

*Գյուլստաններում բլրուկն էր երգում զագելներն անուշ՝ սիրո արցունքով:
Շատրվանները քրքջում էին պայծառ ծիծաղով աղամանդեղեն,*

*Բույր և համբույր էր խնկարկվում չորս կողմ խալիքաների քյոշքից
լուսեղեն /Խսահակյան Ավետիք, 1950: 60/:*

Բանաստեղծը նկարագրում է իր քարավանը, Արևելքին բնորոշ անապատը, ինչպես նաև ուղարձությունը: Զարավանն անվանում է սեզ քարավան, ծիզ քարավան, որոր-շորոր քարավան, անապատը՝ վայրի ու բոցու, նկարագրում է անապատի դեղին շեղերը, որ հորձանքներ են տալիս ալիքների պես, ապա անդրադառնում է ուղտի բավ պարանոցին և վճիտ աչքերին:

Արևելյան պատկերներին գրովանելու նա ցույց է տալիս իր ատելությունը մարդկանց հանդեպ և նախընտրում է օձերի և կարիճների ընկերությունը, քան կեղծ ընկերների: Արու Լալայի կարծիքով ավելի լավ է ճաշի նստել գազան-ների հետ, քան իր կեղծ ընկերներին տեսնել:

Երկրորդ սուրահում ուժեղամում են կեղծիքի և պատրաճի պատկերները. այստեղ նկարագրվում է խորամանկ, խարող կինը, նրան համեմատում է սատանայի հետ.

Եվ կիմն իմշ է որ... խորամանկ, խարող, առնախանձ մի սարդ, հավերժ նամրամիտ,

Որ հացդ է սիրում, համբույրի մեջ սուս և քո գրկի մեջ գրկում ուրիշիմ:

Խարխուկ մակույկով հանձնվի քովին, քան թե հավատա կնոջ երդումին:

...Նա՝ կավատ, վարար, մի չքնաղ դժոխը, նրա բերանով Իրիսն է խոսում /Խսահակյան Ավետիք, 1950: 62-63/:

Խսահակյանն արարական ծագում ունեցող «փրլիս» բառն է օգտագործում, որ նշանակում է սատանա: «Փրլիս» բառը, որպես սատանա, կիրառված է նաև «Ծահ Նամե» ստեղծագործության մեջ: Ապա ավելի մեծ ատելությամբ անհծոնք է կնոջ ծնունդը:

Նա ատում է հավիտյան այրող, խոցող սերը՝ համարելով այն մահի պես անգութ, հավիտյան այրող, զաղտնաբար խոցող, ինչպես նաև քաղցր թույն: Այս ամենի հետ ցավ և դառնություն է զգացվում: Սիրո նկատմամբ այս մեծ ատելության դրսնորումը կարելի է կապել Խսահակյանի անձնական կյանքի՝ Ծուշանիկ Մատակյանի հետ առնչվող սիրո տիսուր պատմության հետ:

Երկրորդ սուրահի վերջում նա մեջբերում է անում արաբ բանաստեղծից.

Սրիկա է նա, ով հայր է լինում, ով երանավետ ծոցից ոչնչի՝

Գոյուրյան կոշում թշվար հյուկեն և զիսին վառում գեհենն այս կյանքի:

«Իմ հայրը իմ դեմ մեղանչեց, սակայն՝ չմեղանչեցի ես ոչ ոքի դեմ» (Այս խոսքերը գրված են արաբ բանաստեղծի շիրիմի վրա):

Այս իմ կտակը թող գրվի շիրիմիս, եթե լուսնի տակ մի խորշ պիտի գտնեմ /Խսահակյան Ավետիք, 1950: 64/:

Երրորդ սուրահում նույնպես զգացվում է Արևելքի շունչը: Որպես բանաստեղծական պատկերներ՝ նպատակային ձևով ընտրված են արևելյան ոճավորմամբ և արևելքին բնորոշ հասկացությունները: Պոեմն ունի երկու առանցք՝ որպես սկիզբ՝ վերջ. սկիզբը՝ արևելյան քաղաքը և պալատը կամ պարտեզն է, իսկ վերջը՝ արևելյան անապատը և արևը: Նկարագրվում է Արու Լալայի քարավանը, որ քայլում էր հեզ լուսնկայի շողերի միջով, լուսինը

համեմատում է զենների՝ դրախտի երիտասարդ փերիի կրծքի հետ, իսկ աշխարհը՝ անսկիզբ, անվերջ, հրաշք հերիարի հետ.

Եվ լուսինն, ինչպես զենների մատաղ փերիի կուծքը՝ չքնաղ լուսավառ՝

Սերք ամաշելով պահպում էր ամպում և մերք թրթում փայլում էր պայծառ
/Իսահակյան Ավետիք, 1950: 65/:

Այս տեսարանին հաջորդում է կույր ու գուլ մարդկանց նկարագրությունը, ովքեր իրար կոկորդ են պատռում և աշխարհը դժոխք դարձնում: ‘Դրախտի պարտեզի և հրաշեկ անապատի կողքին նշում է դժոխք-զեննեմը:

Չորրորդ սուրահում Մահարին մտնում է պոռքկացող հակասությունների մեջ: Նկարագրվում են մոլեզնող մրրիկներ, թանձր խավար: Անտուն և մենակ հերոսը հետևում է մարդկային հարաբերություններին և մարդկության ճակատագրին: Նա մոայլվում է և սրանչանում, նզովում և օրինում է միաժամանակ, նկարագրում իր մենությունը.

Սենակությունն է իմ սերք հիմա, երկինքն աստղաբիր-վրանս հայրական,

Եվ քարավանն է ընկերս հիմա, և իմ հանգիստը՝ ուղիս անկայան
/Իսահակյան Ավետիք, 1950: 69/:

Հինգերորդ սուրահում Արու Լալայի քարավանը վայրագ զինների, այսինքն, քաջքերի մրրկապարը ճեղքելով, առաջ է ընթանում և արագացնում քարավանի ընթացքը՝ հորդորելով նրան հեռանալ բոլորից: Ոգինները՝ զինները, դարձյալ արևելյան ծագում ունեն:

Վեցերորդ սուրահում արևելյան շերտը նկատելի է դառնում, երբ խոսվում է, թե ինչպես են արևի բարկ ճառագայթների տակ բուրում նարծիսը (նարգիզ) և զարարը (արարական համեմունք), կրկին նկարագրվում է անապատը: Ապա զգացվում է զայրույթը համայն աշխարհի, մարդկանց նկատմամբ, և այս անգամ նրանց համարում է շեյքանի՝ սատանայի վիժվածք: Այսպիսով՝ Իսահակյանն իր հարուստ նկարագրությամբ ստեղծել է արևելյան հասկացությունների և պատկերների մի յուրօրինակ շուրջպար:

Սուլ շահի համար, շահին միշտ գերի, աստվածացնող թաթը եղեռնի,

Ռիա մարդը միշտ-պատկերն աստծու, սակայն իրապես վիժվածք
շեյքանի /Իսահակյան Ավետիք, 1950: 75/:

Յոթերորդ սուրահում Արու Լալայի քարավանը հոգնած հասնում է Արարական մեծ անապատ: Հեռվում ամայի հորիզոններն են, մութը հավաքել է իր թափշյա փեշերը, իսկ երկինքը ծփում է բոստը բոցերով: Գլուխը հենելով ժայռին՝ Արու Լալան կարծես հանգստություն և ազատություն է զգում մարդկանցից հեռու:

Ազատությունը, ինչպես նաև անապատը և արևելյան հանդերձավորումը համեմատում է դրախտային վարդերի բումունքի հետ, նաև համեմատում է անմահ սուրբ ‘Նուրանի հետ’ կոչ անելով դեկապարել համայն աշխարհը: Ապա պատկերվում է արևը՝ անվանելով այն շեմս-արև՝ շքեղ, լուսավառ, և ողջունում է արևի զալուստը.

- Սապամ քեզ, արև՝, շյուրքը բյուրաբյուր, դու աստծուց հզոր, դու կյանքի աղբյուր,

Դու, իմ անմահ մայր, մայրական դու զիրկ, դու միակ բարի, դու միակ սուրբ, սուրբ /Խսահակյան Ավետիք, 1950: 78/:

Ողջույն ձեր բնորոշ է Արևելքին, «սալամ» բառացի նշանակում է խաղաղություն, նաև ողջույնի ձև է և ծիսական արտահայտություն, իսկ «շյուքը» փառք:

Վերջին սուրահում արդեն Արու Լալայի բոհչքն է նկարագրվում դեպի արև: Այստեղ ուղտերը համեմատվում են ոսկե մակույկների հետ, իսկ անապատը՝ ծովի հուր ալիքների: Մակույկները պանում էին հրաշունչ թևով, և ոչ չէր կարող հասնել նրանց, անգամ վայրի բեղվինի նետը: Այստեղ ևս Խսահակյանը շեշտել է, որ արարական պատկերը համարժեք է օգտագործված միջավայրին: Ինչպես Թումանյանն իր «Թմկաբերդի առումը» ստեղծագործության մեջ նշում է «Քաջ որսկանի զյուլի պես» արտահայտությունն իր ստեղծագործության միջավայրին համապատասխան, այնպես էլ Խսահակյանը միջավայրին համապատասխան օգտագործել է «քեղվինի նետ» արտահայտությունը:

Ալեկոծ տրամադրությունների մթնոլորտում օրիներգության միջից որոշ դադարներով կրկնվում է սուրբ, սուրբ արտահայտությունը: Կրկնակ արտահայտությունը բանաստեղծական կիզակետին է հասցնում խոսքի մեղեդային-ոիքմիկ շարժումը, ստեղծում վեհացման անկրկնելի պահեր /Հայնոր գրականության պատմություն, 1979: 369/:

Պոեմի հարուստ բառապաշարի վերաբերյալ Ռ. Դալլաքյանը նշել է. «Խսահակյանի ըմբռնմամբ բառը մի ձև է, մի կերպարանք, որ անզոր է արտահայտելու լիովին կամ որոշակի այն միտքը, այն զգացումը, որ տվյալ վայրկյանում ունի հոգին: Մենք բառերի տակ պիտի հասկանանք շատ բան, պիտի երևակայենք, պիտի գլխի ընկնենք, պիտի վերապրենք, ամեն բառը տակը մի աշխարհ ունի» /Դալլաքյան, 2004: 38/:

Այսպիսով պոեմում օգտագործված արարական ծագում ունեցող բառերը, արևելքին բնորոշ ուղտի, ինչպես նաև քարավանի, անապատի հարուստ նկարագրությունները, մահմեդականների սուրբ գրքի՝ Ղուրանի հետ արված համեմատությունները կազմել են «Արու Լալա Մահարի» պոեմի արևելյան շերտը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Դալլաքյան Ռ. Հ. Արու-Լալա Մահարի պոեմի լեզվաբանական վերլուծություն, Երևան, 2004:
2. Խսահակյան Ավետիք, Հայ նոր գրականության պատմություն, 5-րդ հատոր, Երևան, 1979:
3. Մակինցյան Պ. Դիմագծեր, Ավետիք Խսահակյան, Երևան, 1980:
4. Կարաբեկյան Ս. Արարական տաղաշափության հիմունքներ, Երևան, 2002:

5. Իսահակյան Ավիկ, Ավետիք Իսահակյանի պոեմները, Արու-Լալա Սահարի պոեմի հերոսը և հեղինակը, Երևան, 2007:
6. Իսահակյան Ավետիք, Երկերի ժողովածու, 2-րդ հատորից (Պոեմներ, լեզվներ, և բալադներ, առակներ և բարգմանություններ), Երևան, 1950:
7. Իսահակյան Ավետիք, Ընտիր Երկեր, բանաստեղծություններ, պոեմներ, լեզվներ և բալադներ, Երևան, 2007:
8. Крачковский И. Ю. Аль-Мутанабби и Абу-л-Ала. Избранные сочинения, т. 2., М.-Л., 1956.

Т. АРУТЮНЯН – Восточный пласт поэмы Аветика Исаакяна «Абу-Лала Маари». – Целью данной статьи является изучение связи поэмы Аветика Исаакяна «Абу-Лала Маари» с Востоком. Выявлены и исследованы слова и выражения арабского происхождения, которые автор использовал, чтобы выразить дух Востока и своими богатыми описаниями создать своеобразную поэму с уникальными восточными понятиями. Рассмотрены сцены, типичные для Востока, среди которых особое место занимают описания караван верблюдов и пустыни.

Ключевые слова: поэма «Абу-Лала Маари», Восток, слова и выражения арабского происхождения, дух Востока, караваны, пустыня

T. HARUTYUNYAN – Eastern Layer of the Poem “Abu-Lala Mahari” by Avetik Isahakyan. – The aim of the present paper is to explore the connection of the poem “Abu-Lala Mahari” by Avetik Isahakyan with the East. The paper focuses on words and expressions of Arabic origin used by the author to describe the eastern spirit. With his picturesque descriptions Avetik Isahakyan creates a unique roundelay of the eastern concepts and images. The descriptions of the caravan of camels and the desert are worth mentioning.

Key words: “Abu-Lala Mahari”, words and phrases of Arabic origin, the East, the eastern spirit, caravan, desert

**ԱՅՆ ՊԱՊՈՅԱՆ
ԻՐԻՆԱ ԲՈՒՌՆԱԶՅԱՆ
Երևանի պետական համալսարան**

**ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԹԵՄԱՅԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆԸ
Կ. ՎՈՆԵԳՈՒՏԻ «ՍՊԱՆԴԱՆՈՅ ՀԱՄԱՐ ՀԻՆգ ԿԱՄ
ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽԱԶԱԿՐԱՅ ԱՐԾԱՎԱՆՔԸ» ՎԵՊՈՒՄ**

Սույն հոդվածը նվիրված է պատերազմական թեմայի մատուցման յորահատկությանը Կ. Վոնեգուտի «Սպանդանոց համար հինգ...» վեպում։ Պատերազմական իրադարձությունների նկարագրությունը երկրորդական է տոտախտար ուսմունքի ներքո մարդու անհատականության ոչնչացման նկատմամբ։ Կ. Վոնեգուտի և իր ժամանակակիցների համար աշխարհը արսուր է և գոնվում է մարդկային «ես»-ից դուրս, և այս վեպը այդ գաղափարի հեգճական արտացոլումն է։ Հեղինակը կարծում է, որ անհնար է ստեղծել պատերազմի համապարփակ պատկեր, քանի որ դա հավասար է տրամարանության որոնմանը արսուրի աշխարհում։ Փաստորեն, այս վեպում հեղինակը փորձում է բացատրել ընթերցողին, թե ինչու հնարավոր չէ գրել վեպ պատերազմի մասին։ Կ. Վոնեգուտը վստահ է, որ պատերազմը անկարող է վերականգնել արդարությունը, քանզի այն գոյություն չի ունեցել ի սկզբանե։

Բանալի բառեր. պատերազմ, պատերազմական գործողությունների պատկերման մոտեցում, մեկ այլ պատկերացում պատերազմի մասին, գաղափարի հեգճական արտացոլում, պատերազմական իրողություն, արսուրի աշխարհ

Ամերիկացի անվանի վիպասան Կուրտ Վոնեգուտի ստեղծագործության մեջ առանձնակի տեղ է գրավում «Սպանդանոց համար հինգ...» վեպը։ ԱՄՆ-ում բազմիցս է փոխվել մտավորականների մոտեցումը Երկրորդ աշխարհամարտի և, ընդհանրապես, «պատերազմ» հասկացության հանդեպ։ Փոխվել է նաև գրողների մոտեցումը այդ խնդրին։ Երկրորդ աշխարհամարտը դարձավ մի յուրօինակ հայելի, և հետպատերազմյան սերունդները բախվում են նոր խնդրիների։ Միևնույն ժամանակ պատերազմը դարձավ նաև շատ հաջող ու հարմար միջոց արվեստագետի՝ սեփական աշխարհընկալումը առավել համարժեք փոխանցելու համար։ Այս առումով կարելի է հիշատակել հետպատերազմյան ամերիկյան արձակի այնպիսի գործեր, ինչպիսիք են Նորման Սեյլերի «Աներկերը և մեջյաները» (1948) և Ջեյմս Ջոնսի «Այժմ և հավիտյան» (1951) վեպերը։ Պատերազմը այս ստեղծագործություններում թեև առկա է, այնուամենայնիվ այն ներկայանում է որպես խորապատկեր, որի վրա ծավալվում են բուն գործողությունները։ Այսինքն՝ պատերազմը, այս վեպերի բուն գործողությունների համեմատ, երկրորդական է. այն մի իրավիճակ է, որն ի հայտ է բերում հետպատերազմյան Ամերիկայի սոցիալական խնդրիները։ Առաջին հերթին՝ լիարժեք անհատականության վերացումն է տոտախտար ուսմունքների ճնշման ներքո։ Պատերազմի նկարագրությունը Սեյլերը և Ջոնսը ավանդական կերպով

համատեղում են սոցիալական խնդիրների պատկերման հետ: Այս առումով նրանք շարունակում են Հեմինգուեյի և Դու Պասոսի ավանդույթները:

1960-ականներին ձևավորվում է Երկրորդ աշխարհամարտի պատկերման բոլորովին այլ մոտեցում: Թեման շարունակում է մնալ արդիական, սակայն գնահատականները դառնում են արդեն ոչ միանշանակ: Պատերազմի մասնակիցների հուշերի հրապարակումները, մահվան ճամբարների նախկին կալանավորների վկայությունները նոր լույս էին սփռում ստվերում մնացած փաստերի վրա: Հասարակության համար պարզ է դառնում, որ պատերազմը եղել է շատ ավելի հրեշտակոր և անիմաստ, քան թվում էր նախկինում: Մրան ավելանում է նաև Ամերիկայի պատերազմը Վիետնամում, որը ամերիկացիների մեծ մասին թվում էր անհերեք և անհեռանկար: Հենց այս ժամանակաշրջանում է լույս տեսնում Կ.Վոնեգուտի «Սպանդանոց համար հինգ...» վեպը (1969), որը լայն ճանաչում գտավ ոչ միայն Ամերիկայում, այլև նրա սահմաններից դուրս: Չի կարելի ասել, որ այս վեար սկզբունքորեն փոխեց ամերիկացիների պատկերացումը պատերազմի մասին. ավելի ճիշտ կլինի ասել, որ հեղինակը գտավ զգացումի այն օբյեկտիվ համարժեքը, որը Ամերիկայում կիսում էին բոլորը: Վոնեգուտից հետո պատերազմի մասին խոսելը այնպես, ինչպես դա անում էին Հեմինգուեյը, Մելերը և Ջոնսը, դարձավ անհնարին: Հարկ է նշել, որ Հոլիվուդի ամենահայտնի ռեժիսորները Երկրորդ աշխարհամարտին և Վիետնամի հետ պատերազմին նվիրված ֆիլմերում, ի տարբերություն Վոնեգուտի, խուսափում էին հեգնական ոճից և նատուրալիստորեն էին պատկերում պատերազմը վանող ճանրամասնություններով: Այդ միտումը ակնհայտ է Ս.Կուրբիկի, Ֆ.Կոպոլայի, Օ.Սրոունի ֆիլմերում: Պատերազմող մարդու պատկերման հարցում, սակայն, ակնհայտ է նաև Վոնեգուտի ստեղծագործության ազնեցությունը: Զինվորն այսուեղ սուկ ֆիզիկական էակ է, որը ենթարկվում է բռնության. նա գերծ է ռոմանտիկական և հերոսական պարուսից: Ներքաշված լինելով պատերազմի արսուրդային իրողության մեջ՝ նա դառնում է կամազորկ մի էակ թշնամու ձեռքերում:

Կ.Վոնեգուտի և իր ժամանակակից մտավորականների համար աշխարհը, որը գտնվում է մարդկային «ես»-ից այն կողմ, արտուրդային է և անհայտ: Այն ոչ մի կերպ կապված չէ մարդու հետ և բոլորովին անտարեր է նրա հանդեպ /Harriss, 1971: 74-75/: Այդ աշխարհը ենթակա չէ համակարգման և հեռու է այն բոլոր մարդակենտրոն լրույթներից, որոնց մեջ փորձում է նրան «առեղավորել» ժամանակակից մշակույթը: Այդ գաղափարի հեգնական արտացոլումը գտնում ենք «Սպանդանոց համար հինգ...» վեպում: Այն ուժերը, որոնք դեկավարում ու կարգավորում են իրականությունը և մարդկային վարթելակերպը, անիմանալի են ու արտուրդային: Մինչդեռ մշակույթը փորձում է համակարգել դա՝ պայքարելով քառու դեմ և փորձելով գտնել այդ քառու մեջ իմաստ և կապել այն մարդկային «ես»-ի հետ:

Պատերազմը և նրա հետ կապված բռնությունն ու սպանությունը հակասում են քանականությանը, քանի որ վերջինիս գործառույթը արարելն է, մինչդեռ վերոնշվածը միայն կործանում է բերում: Կ.Վոնեգուտը իր «Սպանդանոց համար հինգ...» վեպում փորձում է մի քանի տարբերակներով

հիմնավորել կամ արդարացնել ռազմական գործողությունների անհրաժեշտությունը: Տեսառում երբեմն դժվար է լինում տարանշատել, թե երբ է հեղինակը խոսում հեգնանքով և երբ լուրջ: Եթե նա խոսեր միայն նացիստական ռազմատենչության մասին, դա կիմներ չափազանց պարզունակ և կստվերեր խնդրի բուն էությունը: Վոնեգուտը միտունավոր խոսում է բացառապես այն գործողությունների մասին, որոնք նախաձեռնում են դաշնակից զորքերը. այլ կերպ ասած՝ խոսում է հակամարտող կողմերից այն մեկի մասին, որը, թվում է, պաշտպանում է ճշմարտությունն ու արդարությունը /Klinkowitz, 1973: 118/:

Հեղինակի ուշադրության կենտրոնում դաշնակից ռազմաօդային ուժերի կողմից Դրեգենի ոմբակոծումն է, որի արդյունքում զոհվեց ավելի քան 135 հազար մարդ, իսկ քաղաքը գրեթե ամբողջովին հավասարվեց գետնին: Վոնեգուտը ընթերցողին առաջարկում է մի քանի միատիպ փորձեր դրեգենյան կոտորածը արդարացնելու համար՝ ներկայացնելով այն որպես մի իրադարձություն, որն աշխարհին իմաստ վերադարձրեց: Գեներալ Ա.Իրերի համար դրեգենյան օպերացիան արդար հատուցման ակտ էր Եվրոպայում գերմանացիների ռազմական հանցագործությունների դիմաց (օրինակ՝ Լոնդոնի ոմբակոծումը): Նոյն կերպ է տրամաբանում Չիկագոյի պրոֆեսորը, ով հիշեցնում է Վոնեգուտին Հոլոքոստի սարսափների մասին: Պատկերելով տեղի ունեցած սարսափները՝ հեղինակը գրում է. «Եվ նա սկսեց ինձ պատմել համակենտրոնացման ճամբարների մասին և այն մասին, որ ֆաշիստները օճառ և մոռ էին պատրաստում սպանված հրեաների ճարպերից, և նման այլ քաներ: Ինձ մնում էր միայն կրկնել՝ գիտեմ: Գիտեմ: Գիտեմ» /Vonnegut, 1969: 19/:

Վոնեգուտը չի կարող կիսել պրոֆեսորի համոզմունքը, որ Դրեգենի ոմբակոծումը արդարացված և նապատակահարմար էր: Արդարությունը և ճշմարտությունը աշխարհում վերականգնել հնարավոր չէ, քանի որ դրանք, ըստ հեղինակի, գոյություն չունեն ի սկզբանե: Իսկ ննան կերպով արդարություն վերականգնելու փորձը ոչ այլ ինչ է, քան կյանքից վեր կանգնած սուրյեկտի ձգտումը կիրառել սեփական իշխանությունը: Եվ այստեղ դաշնակից ուժերը քիչ քանով են տարրերվում նացիստներից. իդեալները և ճշմարտությունները շինձու են և երկու դեպքում էլ՝ կեղծ: Դրեգենյան օպերացիան միայն մի մասնավոր դեպք է, որը հաստատում է ընդհանուր կանոնը: «Սպանդանոց համար...» վեպում դա հաստատվում է Խաչակրած արշավանքների և Հիրոսիմայի ոմբակոծման հիշատակություններով: Ի դեպք, նշված գործողություններից յուրաքանչյուրը անվերապահորեն ուղեկցվում է դրա նպատակահարմարության ապացույցով:

Պատերազմական իրողությունը, պատերազմում տեսածը հնարավոր չէ արտահայտել ինչ-որ գաղափարով, հնարավոր չէ արտահայտել մեկ ընդհանուր պատկերով. այդ ամենը մնում է անորոշ ու դրվագային տպավորությունների մակարդակի վրա: Վոնեգուտը և նրա ընկեր Օ'Հեյրը փորձեր են կատարում վերականգնել իրենց հիշողության մեջ տեղի ունեցածի ամբողջական պատկերը, սակայն դա նրանց չի հաջողվում. բոլոր մտարերված իրադարձություններում նրանք չեն գտնում այն գիշավորը, որն իմաստ կիաղորդեր մնացած հիշողություններին ու կիամակարգեր դրանք: Վոնեգուտը գրում է. «Եվ մենք ժպտում ենք, կարծես ինչ-որ քան էինք հիշել, քայց ո՛չ նա, ո՛չ

Ես ոչ մի արժեքավոր բան չկարողացանք մտարերել: Օ՛Հեյրը հանկարծ հիշեց մի երիտասարդի, ով հարձակում գործեց Դրեզդենի գինու պահեստի վրա ոմբակոծությունից առաջ, և մենք ստիպված եղանք նրան տուն հասցնել սայլի վրա: Ես հիշեցի երկու ոռու զինվորների, որոնք տանում էին զարքուցիչներով լի սայլ. նրանք ուրախ էին և գոր: Ահա թերևս այն ամենը, ինչ մենք մտարերեցինք: Բայց այս ամենը քիչ է զիրք ստեղծելու համար» /Vonnegut, 1969: 23/:

Հեղինակը խոստովանում է, որ չի կարող ստեղծել արձակ գործ պատերազմի մասին, այլապես նա ստիպված պետք է լինի գրել արսուրի մասին՝ օգտագործելով ավանդական վիպական ձևը, որի օրենքները ենթադրում են որոշակի տրամարանություն, իրադարձությունների շարադրման հաջորդականություն, պատճառահետևանքային կապ: Պատերազմի մասին գրելիս այս ամենը չի գործում: Վոնեգուտը կարծում էր, որ վերադառնալով տուն՝ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո նա շատ արագ և շատ հեշտ կգրի Դրեզդենի կործանման մասին, քանի որ դրա ականատեսն է եղել: Սակայն, ինչպես պարզվում է, հնարավոր չէ ստեղծել պատերազմի համակարգված պատկեր, ինչպես հնարավոր չէ տրամարանություն և կանոնակարգվածություն վիճակը արսուրի աշխարհում: Վոնեգուտը «Սպանդանոց համար հինգ...» վեպում բազմից ակնարկում է, որ գեղանկարիչների կողմից աշխարհ բերվող գեղեցիկը շինծու է և ոչ տեղին: Ըմբռչխնել գեղեցիկը մի ժամանակաշրջանում, երբ շուրջբռորդ տիրում է քառու և ավերում, նույնպես կարող է դիտվել որպես արսուրի մի մաս: Վեպում հեղինակը մի տեսարան է պատկերում, որտեղ ատամները կորցրած և վիրավոր անզիացին կրակու ու աշխույժ աշքերով շարադրող հեղինակի ուշադրությունն է իրավիրում իր պարկի մեջ գտնվող Էյֆելյան աշտարակի զիպսե մանրակերտի վրա և հիացմունքով հարցնում: «Տեսնում ես, չէ, ինչ գեղեցկություն է» /Vonnegut, 1969: 15/:

Փաստորեն, ամբողջ վեպի ընթացքում, բացառությամբ մի քանի փոքր տեսարանների, Վոնեգուտը, պատերազմը նկարագրելու փոխարեն, մանրակրկիտ հիմնավորում է, թե ինչու հնարավոր չէ գրել վեպ պատերազմի մասին: Նա անգամ փորձում է մշակել շարադրանքի մի նոր ձև, որը հնարավորություն կտա պատկերել արսուրդային իրականությունը: Հեղինակը հաճախ միայն ֆիքսում է իրականությունը, սակայն չի փորձում մեկնաբանել. նա իրեն իրավունք չի վերապահում ամփոփելու, ի մի բերելու այն ամենը, ինչը ենթակա չէ պարզաբանման: Հեղինակը «տարրալուծվում է» տեքստի մեջ, դառնում անդեմ, ընդամենը վեպի բազմաթիվ գործող անձանցից մեկը:

Ընթերցողի մոտ կարող է տպավորություն ստեղծվել, որ պատերազմի ու արսուրի մասին խոսելու նոր ձևը, որին ձգտում էր հեղինակը, հայտնվում է այն դրվագում, երբ Վոնեգուտը պատմում է, թե ինչպես են գրքեր կարդում ու գրում Տրալֆամադոր մոլորակի բնակիչները. «Մենք՝ տրալֆամադորցիներս, երբեք չենք կարդում գրքերը միանգամմից: Այդ բոլոր դրվագների միջև չկա առանձնակի կապ. պարզապես հեղինակը ընտրում է այնպիսի հատվածներ, որոնք միասին վերցված տալիս են կյանքի ընդհանուր պատկերը՝ չքնաղ, անսպասելի և խոր: Այդտեղ չկա ո՛չ սկիզբ, ո՛չ վերջ, չկա այումեի լարվածություն, չկա

բարոյախտսություն, չկա պատճառ և հետևանք: Մենք սիրում ենք մեր գրքերի բազմաթիվ հրաշալի պահերի խորությունը, ինչը տեսնում ես միանգամից և միևնույն ժամանակ» /Vonnegut, 1969: 105/:

Սակայն վեպի հաջորդ հատվածը արդեն հուշում է, որ սա ոչ թե հեղինակի կողմից ընտրված նոր շարադրամն է, այլ խարութիկություն և սարդանք, քանի որ այդ բվացյալ գեղեցկության մասին խոհերը և այդ աշխարհընկալումը փաստացի հերքվում են հենց այդ նույն այլմոլորակայինների կողմից: Նեղ և խոր ձորի եզրին կանգնած փոքրիկ Քիվին, ուշադիր դիտելով գեղատեսիլ բնապատկերը, մահացու վախ է ապրում՝ գեղեցկության փոխարեն տեսնելով անդունդը: Տրալֆամադորցիների աշխարհը հավերժ ներկա է: Չկա ո՛չ անցյալ և ո՛չ էլ ապագա. ամենը տեղի է ունենում այստեղ և հիմա: Վոնեգրութի աշխարհում, ընդհակառակը, իրադարձությունները վերաբերում են կա մ անցյալին, կա մ ապագային: Իսկ ներկայի տեղը գրավում է դատարկությունը: Պատերազմը այլմոլորակայինների համար պատմության մի դրվագ է, մի վիճակ, որն ընդհանուր առմամբ բնորոշ չէ տիեզերքին, և այս պատճառով դրա վրա կարելի է ուշադրություն շդարձնել: Վոնեգրութիւնը հրեն շրջապատող աշխարհում գտնում է միայն դատարկություն. իրականությունը նրան ներկայանում է որպես արտորդային, մշտապես պատերազմի մեջ գտնվող, անգամ եթե արտաքնապես ամենուր տիրում է խաղաղություն: Եթե տրալֆամադորցիները խոսում են կյանքի, նրա ներքին բովանդակության մասին, ապա Վոնեգրութիւնը ստիպված է նկարագրել պատերազմ և մահ, այսինքն՝ դատարկություն: Սիակ միջոցը գրել այդ մասին, ըստ հեղինակի, պատերազմի նկարագրությունը շրջանցելն է, դատարկություն պատկերելը: «Սպանդանոց համար իինգ...» վեպում պատերազմը հենց այդ դատարկությունն է. Վոնեգրութիւնը այդպես էլ ցույց չի տալիս դրեզդենյան ոճքակոծությունը. մենք միայն տեսնում ենք այն, ինչ տեղի է ունենում դրանից առաջ և դրանից հետո, իսկ մնացյալը, ինչպես շեքսպիրյան «Համլետ»-ում, լրություն է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Brooks V.W. The Writer in America. New York: Dutton, 1953.
2. Clicksberg Ch. I. The Self in Modern Literature. The Pennsylvania State University Press, 1963.
3. Harriss Ch. Contemporary American Novelists of the Absurd. New Haven: Simon & Co., 1971.
4. Klinkowitz J., Somer J. The Vonnegut Statement. New York: Delta Books, 1973.
5. Muecke D.C. The Compass of Irony. London: Methuen, 1969.
6. Olderman R. Beyond the Wasteland. The American Novel since World War II. New Haven and L., 1972.
7. Vonnegut Kurt Jr. Slaughterhouse-Five, or, the Children's Crusade. New York: Delacorte, 1969.

А. ПАПОЯН, И. БУРНАЗЯН – Особенность представления темы войны в романе К. Воннегута «Бойня номер пять, или Крестовый поход детей». – В данной статье рассматриваются особенности авторского подхода к теме войны в романе К. Воннегута «Бойня номер пять...». Автор считает, что описание военных действий является второстепенным по отношению к полному уничтожению личности под давлением тоталитарной идеологии, и уверен, что невозможно создать всеобъемлющую картину о войне, поскольку это равносильно поиску логики в мире абсурда. В этом произведении, вместо описания военных действий, автор пытается объяснить читателю «невозможность» написания романа о войне. Для К. Воннегута и его современников мир абсурден и находится вне человеческого «я», а роман является саркастическим отражением этой идеи. К. Воннегут уверен, что война не способна восстановить справедливость, которой не было изначально.

Ключевые слова: война, подход к описанию войны, новая идея о войне, саркастическое отражение идеи, реалии войны, мир абсурда

A. PAPOYAN, I. BURNAZYAN – The Peculiarity of the Approach to the Issue of War in K. Vonnegut's Novel “Slaughterhouse - Five, or, the Children's Crusade”. – The present paper is an attempt to discuss some peculiarities of an approach to the issue of war in K. Vonnegut's ‘Slaughterhouse - Five, or the Children's Crusade’. The description of the war itself is not of primary importance as compared to the suppression of individuality under totalitarian ideology. For K. Vonnegut and his contemporaries the world is absurd and is excluded from human 'I' and the novel itself is the sarcastic reflection of the idea. The author considers it impossible to give a comprehensible picture of the war the way it is impossible to find logic in absurdity and he actually tries to explain the reader why it is impossible to write about war. K. Vonnegut believes that war is not the way to restore justice as it never existed.

Key words: warfare, approach to war description, a new attitude to war, sarcastic reflection of the idea, war reality, the world of absurdity

**Աճնա ՊԵՏՐՈՍՅԱՆ
Աստղիկ ՍՈՂՄՈՅԱՆ
Երևանի պետական համալսարան**

**ՍՈՐ ԿԵՐՊԱՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ
ՅՈՒՐԱՀԱՏՈՒԿ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՍԱՉԻԱՐՀԱՅԻՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ**

«Մոր» կերպարը գրականության կենտրոնական թեմաներից է եղել դեռևս անտիկ ժամանակներից սկսած։ Յուրաքանչյուր ժամանակաշրջան և յուրաքանչյուր հասարակություն ինքն է կերտել իր հերոսին՝ տաղով նրան յուրահատուկ զժեր։ Անտարբեր մոր կերպար է կերտել անզիական լուսավորչական ռեալիզմի ներկայացուցիչ Դանիել Դեֆոն, անձնազո՞ն մոր կերպար՝ ֆրանսիացի ռոմանտիկ Վիկոնտ Հյուզոն։

Յուրահատուկ են նաև ռեալիստ Նար-Դոսի պատկերած մայրերը՝ Սառան և Շոշանը, ովքեր գործում են աշխարհի մեծագույն մեղքը՝ որդեսպանությունը։

Քանակի բառեր. Մայր, անզիական ռեալիզմ, Մոլ Ֆլենդերս, ֆրանսիական ռոմանտիզմ, Ֆանտազիա, Պարետ Շանտըֆլորի, հայկական ռեալիզմ, «Սպանված աղավնին», «Աղամամութին»

Յուրաքանչյուր ժամանակ և յուրաքանչյուր հասարակություն ինքն է կերտում իր մեջ ապրող անհատին, օժտում նրան բնավորության որոշ զժերով, տանում փրկության ճանապարհով կամ էլ լուս կործանում։ Ինչպես իրական կյանքում, այնպես էլ գեղարվեստական գրականության մեջ անհատը իր հասարակության և ժամանակաշրջանի մի մասնիկն է, ազգային հոգերանության կրողը։ Ուստի կերպարակերտման ժամանակ այս երկու գործոններն իրենց կարևոր դերն են կատարում։

Ամեն ժամանակն ունի իր հերոսը, իր հիեալը, բայց կան կերպարներ, քենաներ, որոնք հավերժական են, հավերժ են ինչպես կյանքում, այնպես էլ կյանքն արտացոլող գրական երկում։

Եվ այդ հավերժի մարմնացումներից մեկն էլ մայրն է՝ անհուն սիրո կրողը, ում կերպարը հանդիպում է բոլոր ազգերի մշակույթներում և բոլոր ժամանակներում։ Իր երեխայի եգոն իր սեփական ես-ից շառանձնացնող այս կինը միշտ էլ գրական տարբեր երկերի կենտրոնական հերոսուհին է եղել, նրա սերը չունի սկիզբ, վերջ, չի ճանաչում ո՛չ ժամանակակ և ո՛չ էլ ազգային մշակույթ։

Դեռևս անտիկ աշխարհում Հոմերոսը պատկերել է մայրական սիրո բարձրագույն արտահայտություններից մեկը։ Անկարող լինելով ապրել առանց իր որդու՝ Անտիկեան՝ Ողիսևսի մայրը, ինքնակամ հեռանում է Հաղեսի թագավորություն։ Մայրն առհասարակ իր երեխային չի առանձնացնում իրենից, այլ համարում է նրան իր գոյի մի մասը, իր իսկ եռթյունը, և իր մի մասնիկի նահվանից հետո մահանում է և ինքը։

Հավերժական այս կերպարի կողքին, սակայն, կան նաև հասարակության և ժամանակաշրջանի հոգեբանությունը կրող, շատ անգամ էլ այդ երկու գործոնների զոհը դարձած մայրեր: Այդ տարրերությունը ավելի ակնհայտ երևում է ժողովրդական բանահյուսության մեջ, որտեղ չկա կոնկրետ հեղինակ. հեղինակը ողջ ժողովուրդն է: Ուստմանամբելով տարրեր ազգերի առասպելներն ու էպոսները՝ կարելի է գալ այն եզրահանգման, որ նաև մոր կերպարն է իր ժամանակաշրջանի և ազգային հոգեբանության կրողը. ամեն ժողովուրդ տալիս է իր կերպարին որույն գունավորում, որույն բնավորություն:

Հունական դիցաբանության մեջ կարևորվում էր ճակատագիրը: Շակատագիրի աստվածութիներ Մորիխաններն էին կանխավ որոշում ամեն բան, Զևս աստվածն անգամ այդ ճակատագրի գերին էր: Եվ հունական առասպելներից մեկում Իոկաստրան, դառնալով այդ նույն ճակատագրի անխուսափելիության գործ, ամուսնանում է իր հարազատ որդու՝ Էղիայի հետ:

Ըումերական էպոս «Գիլգամեշում» կարևորվում էր կախարդանքը, նրա հզոր ուժը, և Գիլգամեշ արքայի մայրն էլ կախարդ էր, միշտ օգնում էր իր որդուն հմայություններով:

Հայկական էպոսում ժողովուրդը կարևորում էր ազգի հարատելությունը, և Արմաղանն էլ տալիս է իր կյանքը՝ Սասնա տան վերջին ճրագը փրկելու համար: Էպոսում հայ ժողովուրդը մայրական սիրո հզոր ուժով է օժտում նաև թշնամու մորը՝ Խամիլ Խարունին, ով հարազատ որդուց բացի հարազատի պես սիրում էր նաև փոքրիկ Դավթին:

Եգիպտական դիցաբանության մեջ կարևորվում էր իշխանությունը, փառքը. աստվածութի Խսիդան իր որդի Գոռին (Հոր) դաստիարակում է հոր սպանողի հանդեպ վրիժառության ոգով, և ոչինչ չի խնայում նրան տիրակալի գահը վերադարձնելու համար /Լեզենդներ, առասպելներ, ավանդագրույցներ, 2010: 99/:

Հարավային Ամերիկայի հնդկացիներից ինկերի առասպելներից մեկն էլ պատմում է՝ ինչպես է աղքատ գեղեցկութի Կաուիլլական իրեն և իր երեխայի նետում ծովը, երբ իմանում է, որ որդու հայրը նույնպես աղքատ է /Լեզենդներ, առասպելներ, ավանդագրույցներ, 201; 157/:

Ժողովրդական բանահյուսության մեջ կերպարները ժամանակի և ազգային հոգեբանության կրողն են, իսկ գրականության մեջ այդ երկու գործոններին է միանում նաև գրողի հոգեբանությունը և այն գրական ուղղությունը, որի ներկայացուցիչն է եղել հեղինակը:

18-րդ դարում՝ լուսավորության դարաշրջանում, ընթերցողի առջև է դրվում «անգիլիական վեպում ռեալիզմի հայր» Դանիել Դեֆորի «Մոլ Ֆլենդերս» վեպը, որում իիշատակարանային վեպի սկզբունքով ներկայացվում է լոնդոնյան կյանքի հատակում գտնվող մի անքարոյական կնոջ կյանքի ողիսականը /Hugh, 1952: 133/: Տասներկու երեխա լույս աշխարհ բերած «մայրը» և ոչ մի անգամ չի զգում մայրական սեր, նրա սրտում իշխում են լոկ լրությունն ու անտարբերությունը:

19-րդ դարում ֆրանսիական ռոմանտիզմի ներկայացուցիչ Վիկտոր Հյուգոյի տարրեր ստեղծագործությունների կողքին հրատարակվում են նաև

նրա «Փարիզի Աստվածամոր տաճարը» և «Թշվառները» վեպերը, որտեղ հեղինակը ոռմանատիկ գրողին բնորոշ ոճով կերտում է երկու անձնազոհ մայրերի կերպարներ՝ Պարետ Շանտըֆլյորիին և Ֆանտինին:

19-րդ դարում արդեն արևելահայ իրականության մեջ ունալիստ Նար-Դոսը իր «Սայանված աղավնի» վիպակում և «Մեր քաղը» նովելաշարի «Աղամամութին» նովելում ստեղծում է համապատասխանաբար Սառայի և Շուշանի կերպարները: Այս երկու հայ մայրերն ել գործում են աշխարհի մեծագույն մեղքը՝ աններելի մի ոճիր՝ որդեսպանությունը. մայրը գրկում է կյանքից իր իսկ նորածին մանկանը:

20-րդ դարում արևմտահայ իրականության մեջ ոռմանտիկ բանաստեղծ Միհամանթոն իր «Խեղբամահ» փոքրածավալ չափած բանաստեղծության մեջ նույնպես կերտում է մի կնոջ կերպար, ով հայկական ջարդի արյունոտ օրերին սպանում է իր նորածին:

Վերոհիշյալ բոլոր մայրերի կերպարներն ել հեղինակները կերտել են յուրովի, յուրաքանչյուրը կրում է իր մեջ հեղինակի գոյը, աշխարհընկալումը, ժամանակը: Տարբեր են հեղինակների և' գրական մերոդները, և' ազգային մշակույթը, և' ժամանակաշրջանը, տարբեր են անգամ ստեղծագործությունների ժանրերը՝ վեպ, պատմվածք, բանաստեղծություն:

Առաջին հայացքից մինյանցից այսրան տարբեր այս հերոսուհիները, սակայն, ունեն ընդհանուր գծեր, և այդ ընդհանուր գծերը, կերպարների նուրբ հոգեբանական շատ խնդիրները ամբողջությամբ կարելի է երևան հանել միայն համեմատական վերլուծության շնորհիվ:

Ունալիստ հեղինակի հերոսուհին՝ Մոլ Ֆլենդերսը, հինգ ամուսնություններից և մի անօրինական սիրավեպից լույս աշխարհ է բերում տասներկու երեխա: Յուրաքանչյուր ամուսնության սկզբնական շրջանում նա խնամում է երեխաներին, բայց ամուսնու մահից կամ բաժանումից հետո լրում է նրանց, քողնում ամուսինների, բարեկամների խնամակալությանը, կամ էլ՝ բախտի բնահաճույքին՝ մոռանալով նրանց գոյության մասին: Ապրելով կյանքի դժվարին մի ճանապարհ՝ ամենաբարդ վայրկյաններին անգամ, երբ հասարակության հատակում գտնվող կործանված կինը իր ապաշխարական աղոքքն է հղում Ամենազորին՝ ներում աղերսելով կատարած անթիվ հանցանքների համար, իր հարազատ զավակների հանդեպ կարոտի կամ հիշողության նշույլ անգամ չի առկայօտում նրա ապականված հոգում: Մոլ Ֆլենդերսը չի հիշում անորոշության մատնված իր զավակներին անգամ այն հազվագյուտ ակնթարթներին, երբ ծնկաչոր ներում է աղերսում Բարձրյալից: Միայն ինքն է իր հոգածության առարկան: Անբարոյականության ճանապարհին կանգնած կինը այդ ուղին է ընտրել իր գոյությունը պահպանելու, անհոգ ապրելու համար, և ողջ աշխարհը, նույնիսկ իր հարազատ երեխաներն են մոռացվում, երբ Մոլի առջև չորում է քաղցից մեռնելու վտանգը:

Իր սեփական կաշին փրկելու համար ամեն ինչի պատրաստ այս կերպարին չի կարելի կոչել մայր: Նա մայր է միայն անքանով, որ լույս աշխարհ է բերել իր երեխաներին, իսկ հոգով, էությամբ սուկ մի մորթապաշտ արարած է՝ իր ժամանակի ծնունդը:

Անբարոյական «մոր» այս կերպարին հակադրվում են ռումանտիկ Հյուգոյի երկու վեպերի հերոսուիկները:

14-րդ դարի Փարիզի բնակչութիւն Պաքետ Շանտրֆլյորին նույնապես այդ ապականված ճանապարհին էր կանգնել ծանր պայմաններից դրդված՝ իր գոյությունը պահպանելու, փորդ-ինչ լավ ապրելու համար:

«Ամենից առաջ գլխահան արեց նրան երիտասարդ դերկոմս դը Կոնմոնտրոյը, որի հայրենական կալվածքը Ռեյմսից երեք-քառորդ լիյո է հեռու, հետո անցավ արքայական ձիավար տյար Անրի դը Տրիանվուրին, ապա ավելի ստորադաս՝ բանակի սերժանտ Շիար դը Բոլինին... » /Հյուգո, 2012: 277/:

Ավելի ու ավելի ընկերներով այդ կեղսի մեջ՝ Պաքետ Շանտրֆլյորին դասնում է «քոլորի սեփականությունը» /Հյուգո, 2012: 278/:

Ժպտերես աղջկա ժայռը լացի է փոխվում: Հասարակությունից մերժված այդ կինը կանգնած էր կործանման ճանապարհին, երբ սկսում է աղոքել Աստծուն: Բայց, ի տարրերություն իր կյանքի համար դողացող Մոլ Ֆլենդերսի, վերջինս չի աղոքում իր համար, այլ Բարձրյալից խնդրում է մեկին, ում կսիրի իր ողջ սրտով, խնդրում է հոգու փրկության լույս, ապրելու հույս: Եվ Աստծո նվերը չի ուշանում: Շանտրֆլյորին շատ գեղեցիկ աղջկկ է ունենում, և վերջինիս կյանքը հիմնահատակ շրջվում է: Անբարոյականության ախտի մեջ խեղդվող այդ կինը սկսում է ապրել լոկ իր փոքրիկի համար: Նա շարունակում է վաճառել իր մարմինը՝ փրկելով հոգին, իսկ իր հոգին փոքրիկ Ազնեսն էր (Էսմերալդա): Ամբողջությամբ մերժելով իր անձը՝ մայրը սկսում է ապրել հանուն երեխայի՝ տալով նրան հնարավոր ու անհնար ամեն բան, իսկ որ ամենակարևորն է՝ իր սերը:

Անբարոյական աշխարհի ամենախսավար, ամենակեղսուտ խորշերում հայտնված կինը հանկարծ ամբողջությամբ վերափոխվում է, մերժում իր անձը, մերժում շրջակա աշխարհը՝ նվիրելով իր հոգին հարազատ երեխային: Եթե Մոլ Ֆլենդերսի պարագայում երեխաները ոչ մի դեռ չեին խաղում, և իր հարազատ երեխաների մասին գքրում Մոլի տված միակ գնահատականը մեկ կցկոտոր նախադասություն էր՝ «հիանալի տղա, իսկապես շքնաղ մի երեխա» /Դեֆո, 1991: 40/, ապա Շանտրֆլյորի պարագայում Էսմերալդան այն փրկիչ օղակն էր, որը նորից կապեց նրան կյանքին, բժշկեց ապականված մարմինն ու փրկեց կործանվող հոգին:

Սակայն երջանկությունը նոր գտած մորը կյանքը տախս է երկրորդ հարվածն ու խլում նրանից Էսմերալդային: Կատարվում է վշտից խելագարված կնոջ վերջնական հեռացումը հանցավոր կյանքից:

Հյուգոն իր երկերում միտումնավոր պատկերում է բոլորի կողմից մերժված, հանցավոր մարդու բարեփոխման ողջ ուղին, որի վերջում կերպարն ամբողջությամբ փոխվում է: Հիշենք սույն հեղինակի «Թշվառները», որը ամբողջությամբ պատկերում է գլխավոր հերոս Ժան Վալժանի բարեփոխումը՝ լավը դառնալու ուղին: Նույն կերպ էլ «Փարիզի Աստվածանոր տաճարը» վեպում հեղինակը ներկայացնում է Պաքետ Շանտրֆլյորի վերափոխման ճանապարհը: Այդ վերափոխումը ի ցույց չի դրվում ողջ ստեղծագործության ընթացքում, կերպարը որպես գործող անձ հանդիս է գախս գրքի հատ ու կենտ

հատվածներում, անգամ նրա պատմոթյուն է տրվում վերիուշի տեսքով, բայց վեպի տողակատկերում անընդմեջ զգացվում է աշխարհից մենացած, «Սկան ծակում» իրեն Աստծուն և ապաշխարությանը նվիրած տարարախտ մոր շունչը:

Չանտըֆլյորիի կերպարում յուրահատուկ սիմվոլ է դառնում Էսմերալդայի մաշիկը, որը հանդիսանում է մոր ապրելու իմաստը, աղոթքների հանգիվանը, երազի և իրականության ուրույն միաձուլումը, մի յուրահատուկ ուսուպիա: Գալիքի անիրական երազը Չանտըֆլյորիին կապում է միակ առարկայի հետ, որը որպես փրկարար հուշ մնացել էր այն երանելի ժամանակներից, երբ իր կյանքն էլ իմաստ ու նպատակ, իր կյանքն էլ գույն ուներ:

Մաշիկը սիմվոլ էր նաև Էսմերալդայի կերպարի համար, ով իր կյանքի տասնվեց տարիների ընթացքում պահում էր այն սրբազն մասունքի պես՝ սպասելով գալիք հրաշքին: Եթե մաշիկներից մեկը մոր համար խորհրդանշում էր իր երեխային, ապա որք աղջկա համար մյուս մաշիկը դարձել էր մայրական սիրո կրողը, մի հեռավոր ու անձանոք կերպար էր մարմնավորում այդ անշունչ առարկան:

Մաշիկը դարձել էր մի ուրույն սիմվոլ՝ մայրական անմար սիրո կնիքը, որի առջև ծննդարում և աղոթում էր վշտից խելագարված Պաքետ Չանտըֆլյորին:

Սոր և դստեր՝ տարիներ անց կայացող հանդիպումը Հյուգոն պատկերում է իրեն բնորոշ ռոմանտիկ ոճով. միմյանց նոր գտած հարազատները նորից կորցնում են իրար կախաղան տանող մահվան աստիճանների առջև: Աղջկա մահը սպասում է և նվիրված մորը:

«Փարիզի Աստրածամոր տաճարը» վեպի հերոսուհու կերպարում Հյուգոն նրբորեն պատկերում է անձնազոհ մորը, ով իրեն և իր երեխային պատկերացնում էր մի ամբողջություն՝ նոյն գոյի երկու մարմնացում, մի անբաժան էություն:

Այստեղ, ի տարբերություն «Մոլ Ֆլենդերսի», մայրը զոհում է իրեն հանուն փոքրիկի և բարձրանում իր ապականված միջավայրից՝ ձգտելով դառնալ երեխային արժանի:

Էսմերալդայի ծնունդը անբարոյականության կործանարար ուղուց հեռացնում է Պաքետ Չանտըֆլյորիին, իսկ Վիկտոր Հյուգոյի «Թշվառներ» վեպում Ֆանտինը այդ ուղին ընտրում է իր երեխային փրկելու համար:

Բախստ որոնելու համար Փարիզ է գալիս երիտասարդ Ֆանտինը, ով, սիրահարվելով «քորշոնած զվարճաներ» Թոլոնիեսին, երեխա է ունենում /Հյուգո, 1987: 132/: Շուտով զվարճաները, ում համար դա սոսկ վաղանցիկ սեր էր, լրում է Ֆանտինին, ու որք աղջիկը միայնակ կանգնում է դաժան իրականության առջև:

Հեղինակը միտումնավոր չի ներկայացնում նրանց սիրո և Կողեսի ծննդյան պատմությունը, այլ, դիպուկ բնորոշելով անորիսածություն խորհրդանշող Ֆանտինին, գրում է. «Սերը հանցանք է՝ ասում են, թող այդպես լինի: Ֆանտինը հանցանքի երեսին լողացող ամորիսածություն էր» /Հյուգո, 1987: 138/:

Երեխայի հետ միայնակ մնացած որք կինը, ում առջև նույնպես ծառացած էր օրվա ապրուստը հայթայթելու դժվարին խնդիրը, չի ընտրում հեշտ ուղին ու

չի լրում երեխային, այլ փորձում է կառշել առաքինի կյանքից ու իր արդար աշխատանքով վաստակել օրվա ապրուստը: 18-րդ դարի ֆրանսիական իրականությունում, սակայն, գրեթե անհնար էր ապօրինի երեխան գրկին աշխատանք գտնել, ուստի երիտասարդ մայրը որոշում է որոշ ժամանակով բաժանվել Կողեսից. այդ որոշումը սպանում է հենց Ֆանտինին: Սիրող մոր համար անհնար էր ապրել իր երեխայից հեռու, բայց հանուն նրա «քարեկեցիկ» կյանքի մայրը գնում է այդ քայլին՝ բողնելով փոքրիկին «հուսալի ձեռքերում»:

Օր ու գիշեր աշխատում է Ֆանտինը, փորձում առաքինի ճանապարհով գումար վաստակել, պահել երեխային, բայց դաժան հասարակությունը երիտասարդ մորը չի թողնում չշեղվել ծշմարիտ ուղուց:

Երեխայի հիվանդության լուրը կոտրում է Ֆանտինին, փոքրիկի կյանքը փրկելու համար նա զրկում է իրեն ամենաքանիչից՝ վաճառում է մազերն ու ատամները, ապա և իրեն: Դառնալով Փարիզի ամենաստորադաս անբարոյական կանաչության մեջ՝ կամաց-կամաց սպանում է ինքն իրեն՝ հուսալով, որ այդպես փրկում է իր փոքրիկի կյանքը: Ֆանտինը կործանում է իրեն՝ ապրեցնելով երեխային:

«Օժիտի համար նա ուներ ոսկի և մարգարիտ, բայց նրա ոսկին գլխի վրա էր, իսկ մարգարիտը՝ բերանի մեջ» /Հյուգը, 1987: 132/: Արտաքինի այս դիպուկ նկարագիրն է տալիս Վ. Հյուգոն դեռատի Ֆանտինին: Վերջինիս գեղեցկության սիմվոլներն են դառնում ոսկի մազերն ու մարգարիտ ատամները, և հատկանշանական են, որ վերջում երեխային փրկելու համար նա վաճառում է իր «հարստությունը»:

Վ. Հյուգոն կերտում է անձնազոհ մոր կերպարը, ով մերժում, կործանում է իրեն՝ փրկելու համար իր ապականված մարմնի մի մաքուր մասնիկը՝ իր Կողետին:

Այս երկու «անձնազոհ մայրերի» կերպարների կողքին պարզապես նսեմանում է Մոլ Ֆլենդերսը որպես մայր, ով, սակայն, Նար-Դոսի «Սպանված աղավնի» վիպակի Սառայի հետ համեմատության մեջ պատկերվում է այլ լույսի ներքո:

Խորհրդահայ գրաքննադատությունը ներկայացնում է Սառային որպես ժամանակաշրջանի, հասարակության զոհը՝ «սպանված աղավնին»: Սիսակյանի և Թուսյանի կերպարների կողքին նրա կերպարը ստանում է վառ գունավորում, դառնում «հեղինակի իդեալի կրողը», «միակը, որ պահպանել է հոգու անարատությունը»:

«Սունանացած, ոչ մեկին օգնության չկանչելով, լրելայն դառնություններ է կրում և երբեք չի կորցնում սեփական ուժերի գիտակցությունը, թոյլ չի տալիս իրեն խոնարհվել փառքի ու փայլի առջև, շահի, օգուտի համար նսեմացնել արժանապատվությունը» /Հայ գրականության պատմություն, 1972: 276/:

Սառային ներկայացնելով որպես Թուսյանի զոհը, որպես «Նար-Դոսի ստեղծագործության հիմնական, առաջատար գաղափարներից մեկի կրողը»՝ խորհրդային գրաքննադատությունը մշուշում է բողնում կամ առհասարակ չի ընում կերպարը որպես մայր:

Ինչ-ինչ պատճառներով Սառան, Երեխան գրկին, միայնակ մնում է տասնիններորդ դարի հայկական իրականության առջև: Չամուսնացած աղջիկը ապօրինի Երեխայի էր սպասում, և այդ Երեխան կարող էր դառնալ նրա կործանման պատճառը: Անողոք հասարակությունը այդ լուրն իմանալուն պես հրեշի նման կիոշութեր նրան, նզովյալների նման կվտարեր և դժոխք կդարձներ մոր և մանկան կյանքը:

Եվ աշխարհի դեմ բարկացած, իր մոտալուտ կործանման պատճառը դարձած Ռուբեն Թուսյանի հանդեպ շարացած՝ Սառան իր զայրույթը, անզորությունը խեղդում է աշխարհի մեծագույն մեղքի մեջ՝ սպանելով իրական անմեղ աղավնուն:

Դեռևս Դանտե Ալիգիերին իր «Աստվածային կատակերգություն» գրքում՝ «Դժոխքի» ամենավերջին՝ իններորդ գալարում, ներկայացնում է ամենասուլայի մեղքից տանջվողներին՝ որդեսպաններին, ովքեր ոչ թե այրվում են, այլ, հակառակը, սառչում, և նրանց զղջման արցունքները անզամ քարանում են հենց աչքերի մեջ:

Սոսկալի է պատկերում մեծ հանճարը մեղքի պատիժը, և Սառան գործում է այդ մեղքը՝ իր գրկում սպանելով նորածին մանկանը:

Կանգնելով անողոք հասարակության, հանրության առջև՝ մայրը խլում է զավակի կյանքը, ինչը չի անում անգամ Մոլ Ֆլենդերսը:

Վերջինս իր հերթական և անհաջող ամուսնությունից հետո նույնպես կանգնում հասարակական դաժան կարծիքի առջև: Ապօրինի Երեխայի սպասող Մոլ Ֆլենդերսը մենակ է մնում հասարակություն կոչվող անգութ հրեշի մոտ:

Բարեպաշտ և դժբախտ երիտասարդ այրու իր անունը շարտավորելու և ևս մեկ անգամ ամուսնանալու համար ամենահեշտ տարբերակը կլիներ դեռևս լույս աշխարհ չեկած մանկան սպանությունը, բայց Մոլը, ով, ինչպես արդեն զիտենք՝ մայր չէր եղել իր Երեխաներից և ոչ մեկի համար, իրաժարվում է սպանել իր միսն ու արյունը.

«Երբեք մտքովս չանցավ մի այնպիսի միջոցի դիմել, որ վիժում առաջացնի. մտքով իսկ անցկացնելը նողկալի էր ինձ համար» /Դեֆոն, 1991: 192/:

Համեմատելով երկու ռեալիստ հեղինակների կերտած կերպարները՝ տեսնում ենք Երեխա լույս աշխարհ բերած երկու կանանց, ովքեր, սակայն, իրավունք չունեն մայր կոչվելու:

Կերպարներից երկուսն էլ մայր չեն, չունեն նրան հատուկ սերն ու քնքությունը. մեկը սովորական ընտանիքից դուրս եկած աղջիկ է, ով սպասում է իր Երեխային, իսկ մյուսը՝ ամենավերջին ծախու կանանցից է, բայց այդպես էլ չի գործում այդ ոճիրը:

Իր նորածնին է խեղդում նաև Նար-Դոսի «Աղամամութին» նովելի հերոսուիին՝ Շուշանը, ում կերպարով հեղինակը, սակայն, իրական մոր է պատկերում՝ ունակ սիրելու և պաշտպանելու իր փոքրիկներին:

Այս կերպարը մենք տեսնում ենք ծայրահեղ աղքատության մեջ, եթք խրճիքի նմանվող գոնում պատուհանի ապակիներին անզամ փոխարինում են թղթի կտորները, իսկ աշնան ցրտին հղի կնոջ միակ հագուստը իին լաքերն են ու

ցեցակեր շալը: Հազիվ երեսուն տարեկան Շուշանը իր չորս երեխաների հետ ապրում է անմարդկային կյանքով: Ընտանիքի և փոքրիկ քոյր-եղբայրների միակ կերակրող ձեռքն էլ 7-8 տարեկան Սոնեն է, ով, որիշների տանը աշխատելով, հայ ու պանրի փշուրներ է տուն քերում:

Շուշանը անելանելի դրության մեջ էր. չորս փոքր էակներ իր հույսին էին, ամուսինը շաբաթներով տուն չէր գալիս, և իր երեխաների կյանքի գոյատևման կոփվը ինքը պիտի տաներ:

«Հազիվ երեսուն տարեկան, արդեն չորս որդի ուներ և մեկն էլ շուտով լույս աշխարհ պիտի գար: Ո՞ւմ համար, ինչի՞ համար: Ի՞նչ օրումն էին արդեն եղածները, որ մեկն էլ պիտի ավելանար» /Նար-Դոս, 1977: 87/:

Երեխաների կյանքը վտանգի տակ էր: Հազիվ էին օրվա հացը վաստակում, և հիմա ևս մեկը պետք է ծնվեր, ևս մեկը, ում կերակրել էր պետք: Բայց ինչպե՞ս:

Սիրո՞ մոր ուսերին ծանրացել էր իր երեխաների գոյության, ապրելու խնդիրը: Անկարելի կյանքը հինգ երեխաներին կերակրելը. կա՞մ պետք է սովոր մեռնեին հինգն էլ, կա՞մ պետք է այդպես էլ այդ հինգերորդը լույս աշխարհ չգար:

Եվ սիրո՞ մայրը որոշում է փրկել փոքրիկներին՝ սպանելով նորածին մանկանը:

«Ի՞նչ եմ անում... ի՞նչ եմ անում... քիչ ունե՞մ... քե՞զ ոնց պահեմ... քե՞զ ոնց պահեմ... » /Նար-Դոս, 1977: 95/:

Աներելի է որդեսպանությունը, բայց այդ քայլով Շուշանը փրկում է իր մյուս երեխաների կյանքը: Ինչ-որ տեղ ներփում է նրա հանցանքը. սիրո՞ մայրը, կյանքից զրկելով իր մանկանը, սպանում է իր մեջ նաև իրեն:

Նար-Դոսը ռեալիստորեն պատկերում է այն միջավայրը և պայմանները, որոնք պատճառ են դառնում այդ ոճիրի կատարմանը, իսկ պատճառը ծայրահեղ աղքատությունն է, անմարդկային կյանքը, երեխային կերակրելու անզորությունը:

Եթե համեմատության մեթոդով ներկայացնենք Մոլ Ֆլենիերսին, Սառային և Շուշանին, կտեսնենք, որ նրանցից առաջինը մայր չէր, բայց չսպանեց իր մանկանը, երկրորդը նույնպես մայր չէր, բայց սպանեց, իսկ երրորդը, սպանելով իր նորածնին, փորձեց անխուսափելի մահվանից փրկել մյուս երեխաներին. Շուշանը մայր էր:

Որդեսպանության աններելի մեղքը գործելով՝ մայր է մնում նաև Սիամանթոյի հերոսուիհն:

Դարասկզբին տեղի ունեցած հայոց ցեղասպանության անմարդկային ջարդերը իրենց արձագանքն են գտնում մոնոքեմա գրող Սիամանթոյի քնարերգության մեջ: Հայկական կոտորածին ժամանակակից և հետագայում նրա զոհը դարձած բանաստեղծը իր «Կարմիր լուրեր բարեկամես» շարքում պատկերում է Աղանայի ջարդերը և ողբում մարդկանց արյունոտ ցավը:

Այդ շարքի «Խեղդամա» բանաստեղծության մեջ ոռմանտիկ հեղինակը ներկայացնում է գետնափոր նկուղում կոտորածից թաքնված բառասուն հայերի արմաշաղախ օրը:

Լոռությունը ապառաժի նման ծանրացել էր տարաքախստ հայերի գլխին.

«Այսպես անձայն ու անոքի, զերեզմանի քարերուն պես՝

Մենք մեր մարմնույն վրա մեր սարսափը երկարեցինք... »:

/Սիամանքո, 1979: 153/:

Սարսափն անքամ քարացել էր այդ վայրում, ժամանակը կանգ էր առել, և մարդիկ շուշները պահած սպասում էին մոտավոր մահվանը. մարդակեր բուրքը նրանց թաքսոնցն էր փնտրում: Մահաբեր լրությունը խախտում է հանկարծ նորածնի լացի ձայնը.

«Բայց նորածին մը նորեն սուր ճիշով մը սկսավ լալ,

Մեր դավաճանն անտարակույս այդ անմեղը պիտի ըլլար... »:

/Սիամանքո, 1979: 154/:

Կամ բոլոր հայերը պետք է մեռնեին բուրքի յաթաղանից, կամ մանկանը պետք է խեղդեին: Եվ մքության մեջ երկու ձեռքեր օձերի պես երկարեցին ու բռնեցին բարակ վիզը:

Երեխայի մահով փրկվեցին քառասուն հոգի, բայց բոլորը նույն վայրկյանին բարոյապես մահացան: «Փրկիչը» երեխայի մայրն էր, ով իր ձեռքերով խեղդեց անմեղին՝ հանուն բոլորի փրկության, իսկ իր փրկությունը խենքությունն էր: Կատարած ոճիրից խելազարված՝ մայրը բոլոր անցորդներից մահ էր աղերսում, խնդրում էր անզութ մարդկանց սպանել այն ձեռքերը, որոնք գրկեցին կյանքից նորածնին:

«Ես էի որ նորածինն նկուղին մեջ բոլոր ուժովս խեղդեցի...»

Սիրտ չունի՞ք դուք, խեղդեցեք զիս, իմ ձեռքերս ա'լ ուժ չունին... »:

/Սիամանքո, 1979: 155/:

Երեխայի սպանությունը խենքացրել էր մորը, այդ կերպ նա փրկել էր շատերին: Ստորադասելով իր և իր երեխայի ես-ը ընդհանուրին՝ կինը իր իսկ ձեռքերով սպանել էր իր հոգին՝ իր նորածնին:

Սիամանքոն կերտում է անձնազոհ մոր կերպարը, ով հանուն հայրենակիցների կյանքի զոհում է աշխարհում ամենաքանին իր համար՝ պահպանելով երեսունինը կյանք, բայց սպանում է նաև իրեն:

Մայրերի վերոհիշյալ բոլոր կերպարները նման են, բայց միևնույն ժամանակ նաև խիստ տարբեր. մեկը կործանում է իրեն հանուն իր մանկանը, մյուսը՝ սպանում երեխային, մեկը վաճառում է ինքն իրեն հանուն փոքրիկի, մյուսը՝ հացի համար լրում նրան:

Ո՞րն է այս էական տարբերությունների պատաճառը, ինչո՞ւ է մայրական սերը ունենում այսքան տարբեր դրսեորումներ և ինչո՞ւ առհասարակ չի արքնանում մոր սրտում:

Այս բարդ հարցերի պատասխանները կարելի է որոնել նախ և առաջ այդ կերպարների մանկության մեջ՝ նրանց միջավայրի ու դաստիարակության, նրանց մայրերի կերպարներում: Ներկայացնենք վերոհիշյալ բոլոր կանանց մանկությունները:

Մոլ Ֆլենդերսը ծնվել էր բանտում, վեց ամսեկան հասակում մայրը լրել էր նրան, երեխան մնացել էր հասարակության խնամքին, իսկ ինչպե՞ս էր վարվել

հասարակությունը նրա հետ: Իր կործանման պատճառը Մոլլ բացատրում է այսպես.

«...մեզ հարևան մի ժողովրդում, չգիտեմ՝ Ֆրանսիայում թե մի որևէ ուրիշ երկրում, քաջավորական իրաման ունի այն մասին, որ երբ որևէ հանցագործ դատապարտվում է կամ մահապատժի, կամ թիապարտության, կամ աքսորի, եթե նա երեխաներ ունի, որոնք միջոցներից գրկվում են՝ իրենց ծնողների ինչքի բռնագրավման պատճառով, այդ երեխաներին կառավարությունը անմիջապես վերցնում է իր խնամքի տակ և տեղափորում որբանոցում, որտեղ նրանց դաստիարակում են, հազենում, կերակրում, կրթություն տալիս, և երբ ընդունակ են դառնում որբանոցից դուրս գալու, նրանց տեղափորում են որևէ արհեստանոցում կամ ծառայության տալիս, այնպես որ նրանք լրիվ հնարավորություն են ունենում ազնիվ ճանապարհով, ջանասեր վարքագծով իրենց ապրուստը հայրայթելու:

Եթե մեր երկրում էլ այդ օրենքը գործեր, ես չեմ լինի աղքատ ու լրված մի աղջիկ՝ առանց բարեկամների, առանց հազուստ-կապուստի, առանց օգնության կամ օգնողի, այն ինչը ինձ վիճակվեց, որի հետևանքով ոչ միայն մեծ թշվառություն ապրեցի, նախքան կկարողանայի ընբռնել կամ բարեկավել վիճակս, այև ներքաշվեցի ապականված կյանքի ոլորտը, որն իր բնական ընթացքով արագորեն քայլայում է և հոգին, և մարմինը» /Դեֆո, 1991: 11/:

Դեֆոն ուսախտորեն պատկերում է այն բոլոր գործոնները, որոնք պատճառ են դառնում Մոլլ Ֆլենդերսի կործանման համար՝ միջավայրը, հասարակությունը, էական է նաև այն, որ Մոլլ մեծացել էր առանց մոր. ինչպիսի՞ մայր կարող էր լինել ինքը:

Այլ մանկություն է տալիս ոռմանտիկ Վիկտոր Հյուգոն իր հերոսներին: Պարետ Շանտըֆլյորիի մանկությունը, հակառակ Մոլլ Ֆլենդերսի, անցել էր ընտանիքի գրկում: Զրկված լինելով հորից՝ վերջինս մեծացել էր մոր մոտ՝ ծայրահեղ աղքատության մեջ: Շանտըֆլյորին կանգնել էր անբարոյականության ուղու վրա աղքատությունից դրդված:

Ֆանտինը հասակ էր առել առանց ծնողների, նրա հարազատ քաղաքում անգամ ոչ ոք չգիտեր՝ ովքեր են նրանք: Աղջիկը անգամ ազգանուն չուներ, իսկ անունը տվել էր նրան պատահական մի անցորդ, պատահական մի անուն: Ֆանտինը նույնպես որք էր, բայց դա չխանգարեց նրան լավ և նվիրված մայր դառնալ:

Մայր չէր տեսել նաև Նար-Դոսի հերոսուիին: Երբ Սառան դեռ փոքր էր, մայրն ամուսնացել էր երկրորդ անգամ և կարճ ժամանակ անց մահացել: Այդ դժբախտությունից հետո խորթ հայրը նորից կին էր բերել, ով էլ մայրություն էր արել Սառային: Փաստորեն վեցինս հարզատ զավակը չէր այն ընտանիքի, որում ապրում էր:

Հայրը սիրում էր աղջկան գորովագոր սիրով, բայց խորթ մոր և դստեր հարաբերությունները նախանձելի չեն: Հարազատ մայր չունեալու և նրա սերը զգալու հանգամանքն էլ նաև հետագայում անդրադառնում է նրա երեխայի ճակատագրի վրա:

Փոքրածավալ ստեղծագործություններից Նար-Դոսի «Աղամամութին» նովելում և Սիամանթոյի «Խեղբամահ» բանաստեղծության մեջ չի ներկայացվում կերպարների կյանքի պատմությունը, այլ պատկերվում կոնկրետ օրը կամ դեպքը:

Տարբեր ժամանակաշրջանների և տարբեր հասարակությունների կնիքը կրող այս բոլոր կին կերպարները նման են լոկ նրանով, որ երեխա են լույս աշխարհ բերել, աշխարհին նոր կյանք են տվել: Նրացից ոմանք այդ կյանքը փայփայում են, սիրում, ոմանք էլ՝ անտեսում կամ կործանում: Եվ մայր կոչվող այս բոլոր կերպարների էական տարբերությունն էլ կյանքի, ապրելու նպատակի յուրահատուկ ըմբռնումն է: Նրանցից ոմանք իրենց անձը ավելի վեր են դասում, ոմանք էլ երեխայի անձն են զերազմահատում: Եվ այս առանցքային տարբերությունն էլ պատճառ է դառնում կնոջ՝ մայր լինել-չլինելուն: Ովքեր իրենց ես-ից չեն առանձնացնում երեխայի ես-ը և նրան ավելի վեր են դասում, մայր են, իսկ ովքեր նախ և առաջ իրենք իրենց մասին են մտածում, իրավունք չունեն կրելու այդ վեհ անունը:

Չննելով համաշխարհային գրականության մեջ տարբեր հեղինակների կողմից կերտված տարբեր մայրերի կերպարներ՝ գալիս ենք այն եզրահանգման, որ յուրաքանչյուր ժամանակաշրջան ինքն է ստեղծում իր կերպարը, իսկ հասարակությունը մեծ դեր է խաղում այդ կերպարի գարգացման գործում, սակայն «մոր» կերպարը ունի իր յուրահատուկ և նման գծերը բոլոր ժամանակներում և բոլոր ազգերի գրողների ստեղծագործությունների մեջ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Դեֆո Դ. Մոլ Ֆլենդերս, Երևան, Նախի, 1991:
2. Լեգենդներ, առասպելներ, ավանդագրույցներ, Երևան, Անտարես, 2010:
3. Հայ գրականության պատմություն, հատոր չորրորդ, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ, 1972:
4. Հյուզոն Վ. Թշվառներ, Առաջին մաս, Երևան, Սովետական գրող, 1987:
5. Հյուզոն Վ. Փարիզի Աստվածամոր տաճարը, Երևան, Անտարես, 2012:
6. Hugh W. P. Daniel Defoe, the father of realism in English novel. Ottawa, Canada, 1952.
7. Նար-Դոս Երկեր, Երևան, Սովետական գրող, 1977:
8. Սիամանթո, Վարուժան Դ. Երկեր, Երևան, Սովետական գրող, 1979:

А. ПЕТРОСЯН, А. СОГОЯН – Особенности и своеобразные проявления персонажа матери в мировой литературе. – Образ матери был одним из центральных и основных тем в литературе, начиная еще с античной эпохи. Каждый период и каждое общество само создавало своего героя, давая ему особенные черты. Английский реалист Просвещения Даниэль Дефо создал образ

равнодушной матери. Французский романтик Виктор Гюго создал образ самоотверженной матери.

Примечательны также созданные реалистом Нар-Досом образы матерей, Сары и Шушан, которые совершают величайший грех человечества – детоубийство.

Ключевые слова: мать, английский реализм, Мол Флендерс, французский романтизм, Фантин, Пакетта Щантфлери, армянский реализм, «Убитый голубь», «Во мгле»

A. PETROSYAN, A. SOGHOYAN – *Features and Unique Manifestations of Image of “Mother” in World Literature.* – Since ancient times the image of “mother” has occupied the central role in literature. Every society created its own hero attributing her unique features. Daniel Defoe, a representative of English realism, created an “indifferent mother”, French romantic Victor Hugo created an image of a sacrificial mother, and Nar Dos created Sarah and Shushan, who committed the worst of the sins – the infanticide.

Key words: mother, English Realism, Mol Flenders, French Romanticism, Fantin, Paquette Chantefleurie, Armenian Realism, “Killed Dove”, “In the Gloom”

Ուղաննա ՊԵՏՐՈՍՅԱՆ
Երևանի պետական համալսարան

**ՄԻԳԵԼ ԴԵ ՈՒՆԱՍՈՒՆՈՅԻ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԵՎ
ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՆՑԵՊԻՑԻԱՆԵՐԸ**

Հոդվածում դիտարկվում է իսպանացի գրող, փիլիսոփա Միգել դե Ունամունոյի փիլիսոփայական և գեղագիտական մտածողության առանձնահատկություններն ու խնդիրները։ Ունամունոն որպես դասական արձակի վարպետ, մի կողմից շարունակում է ելլուստական փիլիսոփայական արձակի ավանդույթները, մյուս կողմից, սակայն, փորձում է վերստեղծել վերը նշված վեպի կատացման սկզբունքները՝ առաջարկելով արձակի նոր տեսակ՝ նիվոլա, որն այլ կերպ կարելի է անվանել փիլիսոփայական արձակ։

Բանափառն. գրականություն, փիլիսոփայություն, էքֆիստենցիալիզմ, կրոն, արվեստի և անհատի փոխհարաբերություններ, գեղագիտությանը վերաբերող խնդիրներ, ժանրային առանձնահատկություններ

Իսպանիայում էքֆիստենցիալիզմի հիմնադիրն է Միգել դե Ունամունոն, որի մտածողության վրա մեծապես ազդել է դանիացի փիլիսոփա Սյորեն Կյերկեգորը, ըստ գրականագետների, ընթերցանության շրջանակներում Ունամունո-Կյերկեգորը հանդիպումը տեղի է ունենում 1900 թվականին, Ունամունոն որոշում է սովորել դանիերեն, որպեսզի բնագրով կարդա նրա աշխատությունները։ Այս երկու էքֆիստենցիալիզմներին միավորում են այնպիսի բննաներ, ինչպիսիք են՝ էքֆիստենցիան, Աստված, մեղքը, անձկությունը կամ հոգը, աննահության, հավատի և ճշմարտության մասին գաղափարները /Félix García, 1970: 412/։

Ունամունոն փիլիսոփայությունը մեկնաբանում է որպես կենսական անհրաժեշտ գործառույթ, որովհետև մարդուն պետք է հիմնավորել սեփական գոյությունը։ Մարդը չի կարող հենց այնպես ապրել, նա պետք է իմաստ, նայատակ փնտրի։ Եթե մարդը փիլիսոփայում է ապրելու համար, իսկ փիլիսոփայության օրյեկտը և բարձրագույն սուբյեկտը մարդն է, նշանակում է՝ մարդը փիլիսոփայում է իր մասին և իր խնդիրների շուրջ, հետևաբար փիլիսոփայության մեջ ոչ մի դեպքում չի կարելի խոսել վերացական մարդու մասին։ Փիլիսոփայությունը չպետք է լինի օրյեկտիվ կամ գիտական, այլ պետք է մարդուն սովորեցնի, թե ինչպես ապրել, ճշմարիտ փիլիսոփայությունը, ըստ Ունամունոյի կիխուսյան փիլիսոփայությունն է, որի վերլուծության համար պետք չեն սիլլոգիզմներ, լաբորատորիաներ, այդ փիլիսոփայությունը պետք է բխի սրտից և հավատից, որի բարձրագույն ձևը՝ կիխոտիզմն է։

Ունամունոն փորձում է փիլիսոփայությունը մոտեցնել այլ բնագավառների գրականությանը, բարոյագիտությանը և միստիկային, մյուս կողմից, սակայն, այդ նույն փիլիսոփայությունը թշնամական հակադրության մեջ է դնում կրոնի հետ, չնայած՝ երկուսն էլ անհրաժեշտ է համարում։ Իմացարանության համար առավել ընդունելի է համարում փիլիսոփայական ճանաչողությունը, քան գի-

տականը, նման վերաբերմունքի պատճառը թերևս բանականության հանդեպ հավատի պակասն էր, իսկ փիլիսոփայության «գործը»՝ կյանքը՝ ուսցինականացնելու և միաժամանակ բանականությունը կենսական դարձնելը, ըստ նրա գիտության ուսումնասիրության առարկան կյանքն է, իսկ փիլիսոփայությունը ենթադրում է իմացություն՝ մահվան մասին, որը, ըստ Ունամունոյի անհրաժեշտ է ապրելու համար, սրա համեմատ գիտությունը համարվում է ժամանակավոր և անրավարար: «Մարդկանց և ժողովուրդների՝ կյանքի հանդեպ ողբերգական զգացումը» էսսեում գրում է. «Փիլիսոփայությունը պատասխանում է մեր հարցին այն մասով, որ մասով որ անդրադառնում է կյանքի և աշխարհի ամբողջական կամ միասնական կոնցեպցիա կազմելու անհրաժեշտությանը: Այսինքն՝ մարդք փիլիսոփայում է ապրելու համար /Սոստո, 1912: 320/:

Երգիստենցիայի գաղափարը Ունամունո-Կյերկեզոր մտածողների հիմնական թեման է, թերևս այդ է պատճառը, որ գրաբնադատները վերջիններիս համարում են նախակըզիստենցիալիստ մտածողներ: Կյերկեզորի համար էր գիտենցիան հիմնավորվում, իմաստավորվում է կրոնական էրգիստենցիայով, այսինքն՝ լինել գրյություն ունենալ Աստծու առաջ, որը նշանակում է՝ անմիջական կապի մեջ լինել Աստծու հետ, նրան մոտ լինել՝ սրտով, հոգով, մտքով: Ունամունուն նույնպես իր ստեղծագործական գործունեության ընթացքում մշտապես անդրադառնում է էրգիստենցիայի խնդրին, քանի որ նրա ստեղծագործության հիմքում կոնկրետ մարդն է, որն իմաստավորում է էրգիստենցիայի հասկացությունը: Գրականության մեջ Ունամունուն ստեղծում է մտացածին, երևակայական կերպարներ, ինչպիսին «Մառախուղ»-ի Ավգուստ Պերեսն է, որին կյանք է պարզեցում, շունչ և կենդանություն տալիս, այնուհետև՝ հետ առնում, նաև Դոն Կիխոտը, որի հարության համար միախառնում է երազն ու հորինվածքը՝ դրանք ներկայացնելով որպես իրականության տարրեր: Սակայն ամենից առաջ անհրաժեշտ է կատարել հետևյալ հարցադրումը. «Ի՞նչն է իրական Ունամունոյի համար», կամ առհասարակ, ի՞նչ է իրականությունը, Ունամունուն առաջարկում է իրականության խնդիրը լուծել հակադրության միջոցով, ինչպես «Խաղաղություն պատերազմում» վեպում, որտեղ խաղաղություն գտնելու համար գրողն ընթերցողին հորդորում է պատրաստվել պատերազմի, քանի որ միայն պատերազմում կարելի է խաղաղություն գտնել, նման հակադրությունը մարդու մոտ առաջ է բերում տարրեր զգացումներ, մի կողմից՝ սարսափ և հուսահատություն, քանի որ մարդու միաբը միշտ կասկածող է և նույնիսկ իսկական հավատի դեպքում նա կարող է չհավատալ անմահության գաղափարին, մյուս կողմից՝ հույս և ցանկություն, որովհետև մարդն ի վերջո ուզում է անմահ լինել: Ունամունոյի դեպքում գոյաբանական հոգսն առավել խորքային բնույթ է կրում, չի սահմանափակվում պարզապես հավերժի և ժամանակավորի կոնֆլիկտով, նա հոգսը համարում է մարդկային եռթյան անբաժանելի մաս, հոգսն անբաժան է մարդուց, կապվում է զոյի, էրգիստենցիայի հետ, վերջինս իմաստավորվում է մարդու կրած տառապանքով, ցավով: Մարդը որպես բանական էակ պետք է գիտակցի, որ իրեն տրված ժամանակը և գոյությունը երկրի վրա ժամանակավոր է, վերջավոր: Մարդը ծնվում է գիտակցությամբ, բայց նաև որոշակի պահանջմունքներով, որոնք

պետք է բավարարվեն, ժամանակի հետ նա սկսում է հարցադրումներ անել իր գոյության, աշխարհ գալու, կյանքի՝ իմաստավոր և անիմաստ լինելու մասին, թե ինչո՞ւ է աշխարհ եկել, որն է իր գոյության նպատակը, ինչո՞ւ և ինչի համար է գտնվում այստեղ, քանի որ նման հարցադրումների միջոցով նա փորձում է հասկանալ իր երգիստենցիայի, այսինքն՝ գոյության իմաստը, նպատակը, որոնց համար կամ որոնց պատճառով նա ապրում է շարունական անհանգստության, տագնապի մեջ: Պետք է հրաժարվել մտածել, որպեսզի կարողանաս ապրել, այսինքն՝ մոռանալ, որ մահկանացու ես, կամ հրաժարվել մեռնել, որպեսզի իրավունք և հնարավորություն ունենաս մտածելու: «Ասում են, թե մարդը բանական էակ է և որ հենց դրանով է տարրերվում կենդանուց: Զգիտեմ, թե ինչո՞ւ ոչ ոք չի ասել, որ մարդը զգայական կամ զգացմունքային էակ է և կենդանուց տարրերվում է իր զգացմունքայնությամբ: Ես հազար անգամ նայել եմ կատվին և նրան տեսել մտածելիս, սակայն երբեք չեմ տեսել ծիծաղելիս կամ արտավելիս», - գրում է Ունամունո /Unamuno, 1912: 14/:

Ըստ Ունամունոյի հավատն այն քանի հանդեպ, որ մեր միտքը, հիշողությունները, հավատալիքները, անձնական փորձը հաղթում են մահին և նրանից հետո ապրում, շարունակություն գտնում, դրա համար պետք է, որ մարդը կարողանա ապրի, հեշտ չէ այդպիսի անմահության հասնելը, միայն քրիստոնեությունը կարող է հավիտենականություն պարզել մեզ, ընդ որում՝ նույնը վերաբերում է նաև մարմնի հարության գաղափարին, սակայն ոչ հավատացյալը, ոչ հոգևորականը, ոչ էլ առավել ևս՝ արեխատը չեն կարող պարզել մեզ այդ հավիտենությունը /Unamuno, 1930: 31/:

Ունամունոն իսկապե՞ս հավատում էր. դժվար է ասել, քանի որ նրա հավատը հակասական է, նա հավատում էր՝ կասկածելով, քանի որ, ըստ նրա, հավատը, որ կասկածի տակ չի դրվում, հավատ չէ: Հավատո՞ւմ էր Քրիստոսի աստվածային լինելուն՝ հստակ չէ, սակայն հաստատ է մի քան. Ունամունոյի Քրիստոսն իսպանացի է՝ պատմական Քրիստոսը, նրա քրիստոնությունը պոետիկական է. Ունամունոն խոսում է իսպանացի Քրիստոսի մասին, քանի որ նրա քրիստոնեությունն իսպանական է, այս առիթով «Սառախուղը» վեպում գրում է. «Խսպանականությունը կամ իսպանացի լինելն իմ կրոնն է, Աստվածը, որին ցանկանում եմ հավատալ՝ Երկնային Հավերժական Իսպանիան է, հետևաբար՝ իմ Աստվածն իսպանացի է, նա Դոն Կիխոտի Աստվածն է, Աստված, որ մտածում է իսպաներեն, և հենց իսպաներեն էր, որ ասաց. «Թող լինի լրյաք, Բանը նույնպես իսպաներեն եղավ» /Ունամունո, 2013: 2-3/:

Ունամունոն հաստատում է, որ երգիստենցիան հնարավոր չէ բացատրել, ինչպես հնարավոր չէ բացատրել, թե ինչո՞ւ գոյություն ունի աշխարհը կամ չկա ոչինչը, աշխարհը գոյություն ունի, որովհետև Բարձրագույն Տերն է այդպես որոշել, գոյություն ունի, որովհետև գոյություն ունի աշխարհը, սակայն ո՞րն է աշխարհի կամ Աստծու գոյության անհրաժեշտությունը, այս հարցի պատասխանը Ունամունոն տանում է դեպի արտուրով՝ երբեմն հաստատելով շոպենհաուերյան կամքը, ըստ որի՝ աշխարհը գոյություն ունի, որպեսզի գոյություն ունենամ ես, կամ ես գոյություն ունեմ, որպեսզի գոյություն ունենա աշխարհը, Տոլստոյն այս

ամենի մեջ կարևորում է միայն հավատը, քանի որ հավատալ, նշանակում է՝ ցանկանալ հավատալ, հավատալ Աստծուն ամենից առաջ նշանակում է՝ ցանկանալ, որ նա լինի, իսկ Ունամունուն ավելացնում է, որ թերևս հենց սա է Դոն Կիխոտի և Սանչո Պանսայի հերոսական հավատը, որը հիմնված է անորոշության, անհավատության վրա, այստեղից էլ Ունամունոյի հետևյալ ձևակերպումը. «Հավատում եմ, որովհետև կասկածում եմ», կամ «Հավատում եմ, Տեր, օգնիր հաղթել անհավատության» /Unamuno, 1930: 31/:

Ունամունոյի արձակին հասող է կրկնությունը, թեմաները բազմազան չեն, հակառակը, առավել հստակ, ինչը վերաբերում է կրկնությանը, ապա, ըստ նրա ցանկացած գրող, ով շատ է գրում, շատ է կրկնվում, որքան էլ որ վերջինս օժտված լինի ստեղծագործական հարուստ երևակայությամբ և ինքնատիպությամբ, միևնույն է, անհնար է խուսափել կրկնությունից, սակայն կարևոր այն է, որ արվեստագետը, գրողը կարողանա ի ցույց դնել սեփական ողբերգությունը, և ուրեմն՝ ուրիշ ի՞նչ կերպ նա կարող է անել այդ, եթե ոչ արվեստի միջոցով, ինչու ողբերգություն, որովհետև ողբերգական է յուրաքանչյուրիս կյանքը, մեզնից յուրաքանչյուրն առանձին ողբերգություն է: Ինչպես փիլիսոփայության մեջ, այնպես էլ՝ արվեստում, Ունամունոյին հետաքրքրում է միայն տառապող մարդը, արվեստն օգնում է մարդուն գիտակցել և ընդունել դիմացինի ողբերգությունը, ցավը, քանի որ միայն արվեստը կարող է մարդու մեջ կարեկցանք և գրասրտություն առաջացնել դիմացինի նկատմամբ: Արվեստների մեջ՝ ամենաշատը, որ հետաքրքրում է Ունամունոյին՝ գրականությունն է: Երբ հարկ է լինում անդրադառնալ գեղագիտությանը, խոսում է գրականության մասին՝ որպես գեղեցկության գեղարվեստական արտահայտություն, որը հաճախ հոմանշվում է պոեզիայի հետ: Ունամունոյին անհանգստացնում են լեզվի և գրելառնի խնդիրները, սակայն երեք չի անդրադառնում ոչ գրականության, ոչ էլ արվեստի մյուս ձևերում՝ ձևի և կառուցվածքի խնդիրներին՝ դրանք համարելով ավելորդություն: Չափազանց կարևոր է լեզուն, ըստ Ունամունոյի, լեզուն ժողովրդի փորձայնության, նրա մտածողության պատկերումն է բառերի միջոցով: Լեզուն հետք է բողել ժողովրդի հավաքական հիշողության վրա, մինչև ավետարանական խոաք մարդն հավատում էր աստվածային հրաշքին:

Խոսելով գրական ժանրերի մասին՝ Ունամունուն նշում է, որ ամենագեղեցիկը, անշուշտ, պոեզիան է, սակայն առավել երիտասարդ տարիքում ամենաբարձրը համարում է թատրոնը. «Թատրոնը՝ ժողովրդի հավաքական գիտակցության ամենամարուր արտահայտությունն է, այն ծնվում է էպիկական պոեմի և ժողովրդական քննարերգության հետ, այն բեմահարթակ է բարձրացնում ժողովրդի ողբերգական կյանքը, նրա ավանդույթները և պատմության փառքը» /Ferrerres, 1943: 9-18/:

Թատրոնի հանդեպ ունեցած նման վերաբերմունքն Ունամունուն մոտեցնում է պեյզաժին, որը, ըստ նրա ծնվում է դիտողի, Աստծու և պատմության արարշական համագործակցության արդյունքում: Թատրոնում գրողը բոլոր ժանրերից վեր է դասում ողբերգությունը, սրանով է բացատրվում նաև Ունամունոյի պիեսների ուղղվածությունը դեպի անտիկ ողբերգություն՝

«Ֆեղրա», «Սեղեա»: Զարմանալի է այն, որ այդքան կարևորելով թատրոնը՝ Ունամունոն գրում է քիչ թվով պիեսներ, որոնք իրենց գաղափարական և սյուժետային զծերով այնքան էլ չեն հեռանում նրա էստեերից և վեպերից: Ունամունոն հիացմունքը է խոսում Շեքսպիրի մասին, նրա մեջ գնահատում է դրամատորգիական այն կենդանությունն ու արդիականությունը, որոնցով լի են նրա բոլոր պիեսները, ըստ նրա՝ Շեքսպիրն օժտված է արարշական շնորհով, հետևաբար իր սիրելի դրամատորգն է, գովեստի խոսքերի է արժանանում նաև Լույս դե Վեգան, չնայած չի ընդունում վերջինի՝ հանդիսատեսի ճաշակին տուրք տալու հնազանդությունը:

Ունամունոյի գեղագիտական մտածողության հիմնական ասպեկտներից մեկը վեպի մասին նրա դատողություններն են, չնայած, որպես այդպիսին, հնարավոր չեն գտնել որևէ կոնկրետ սահմանում, թե Ունամունոյի համար ի՞նչ է նովելը կամ նիվոլան, հավանաբար, որպեսզի հնարավոր լինի որևէ կերպ բացատրել, լուսաբանել նովելի հասկացությունը, ճիշտ կինհի սկզբում բնորոշել, թե ինչ է նիվոլան, որի հիմնադիրը անձամբ Ունամունոն է:

Ժանրային առումով նովելը սովորական վեպն է, նիվոլան նույնպես վեպ է, միայն թե այս տեսակի վեպում միախառնվում են իրականությունն ու երևակայությունը, հորինվածքը և երազը, այլ կերպ ասած՝ նիվոլան փիլիսոփայական վեպ է: Չնայած, ըստ Ունամունոյի գրական ժանրերի մեջ ամենագեղեցիկն ու գգայականը պոեզիան է, այնուամենայնիվ, գրականության մեջ նրա ինքնարտահայտման ժանրը, հիրավի, կարելի է համարել՝ նիվոլան:

Նիվոլային գրատեխնիկայի առանձնահատկություններից մեկը երկխոսության շեշտադրումն է, դրանով հեղինակն ընթերցողի ուշադրությունը կենտրոնացնում է ոչ թե գրքությունների, սյուժեի վրա, ինչը հատուկ է սովորական վեպին, այլ կերպարների ապրումների, մտայնության, առավել խորը՝ գոյաբանական խնդիրների ուսումնասիրության վրա: Եթե շատ գրողների, հատկապես դրամատորգների համար երկխոսությունն ամեն ինչից վեր է թատրոնում, ապա Ունամունոյի համար այն չափազանց կարևոր է նիվոլայում, քանի որ նրանում առաջադրված հարցադրումները կարող են ստանալ իրենց պատասխանները միայն երկխոսության միջոցով, չնայած մյուս կողմից, պակաս կարևոր չեն նաև մենախոսությունները, կարելի է ենթադրել, որ «Մառախուղ»-ում Ավգուստո Պերեսի և նրա շնիկի՝ Օրփեոսի հետ երկխոսությունները, որոնք իրականում մենախոսություններ են, քանի որ շնիկը չի խոսում, միայն լսում է իր տիրոջը, հենց դրանք են բացահայտում նիվոլայում առաջադրված գոյաբանական և փիլիսոփայական պրոբլեմները:

Ունամունոյի արձակին հատուկ է նաև իրականության և հորինվածքի միախառնումը, որը երբեմն ներկայացնում է «երազ»-ի մետաֆորի միջոցով: Խսպանական գրականության մեջ «երազի» մետաֆորին կամ սիմվոլին առաջինն անդրադարձում է Կալդերոն դե լու Բարկան իր «Կյանքը երազ է» ստեղծագործության մեջ, «երազային» կյանքը պատկերելու համար Ունամունոն առաջ է քաշում մառախուղի մետաֆորը, իսկ իր հերոսներին անվանում՝ հորինված կամ մտացածին էակներ, կարելի է ասել, որ վեպն ընկալելի է դառնում հենց այդպիսի՝ հորինվածքից և իրականությունից ծնունդ առած

հերոսների շնորհիվ, քանի որ գործողությունները չեն, որ առաջ են տանում այն: Մտացածին հերոսն ունի բացառիկ իրականություն, «Սառախուղ»-ի Ավգուստ Պերեսն իրական է, երբ վերջինս ընկալվում է որպես վեպի կերպար, նա ունի իր կյանքը, թեև վերջավոր, սակայն երբ նրան ընկալում են որպես նիվոլային մտացածին էակի, ապա նա ոչ այլ ինչ է, եթե ոչ հերինակի, այսինքն՝ իրեն ստեղծողի երազը, նա չունի իրական եքջիստենցիա, այդ է պատճառը, որ նա ընկնում է դատարկության մեջ, նույնիսկ չի կարող ինքնասպան լինել կամ երազել անմահության մասին: Այդպիսին է բոլորին կյանքը, մեր կյանքը նույնպես Աստծո երևակայության արդյունքն է, նրա երազը, մենք մեռնում ենք, երբ վերջինս դադարում է մեզ տեսնել իր երազում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ունամոն դե Սիգել. Սառախուղը, թարգմ. Ռուզաննա Պետրոսյանի, Երևան, Անտարես, 2013:
2. García F. Miguel de Unamuno. Madrid: Diario íntimo, 1970.
3. Marías, J. La significación de Unamuno // *Artículo periodístico*, v. 5, № 13, 2002.
4. Unamuno de M. Del sentimiento trágico de la vida en los hombres y en los pueblos. Madrid: Salamanca, 1912.
5. Unamuno de M. La agonía del cristianismo. Madrid: Renacimiento, 1930.
6. Pérez Q. El pensamiento religioso de Unamuno frente al de la Iglesia. Valladolid: Casa Martín, 1946.
7. Ferreres R. El existencialismo como filosofía // *Artículo periodístico*, v.2, № 7, 1943.

Р. ПЕТРОСЯН – Философские и эстетические концепции Мигеля де Унамуно. – В статье представлены философские и эстетические взгляды испанского писателя, философа-экзистенциалиста Мигеля де Унамуно. Он, как мастер классической прозы, с одной стороны, продолжает традиции философской прозы, с другой, пытается создать новые принципы философского романа – *Nivola*.

Ключевые слова: литература, философия, экзистенциализм, религия, искусство, вопросы, касающиеся эстетики, особенности жанра

